

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

1 (10)

ARMENOLOGICAL ISSUES

BULLETIN

ԵՐԵՎԱՆ – YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS
2017

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ **Միմոնյան Ա. Հ.**

Խմբագրական խորհուրդ՝

Ավագյան Ա. Ա.

Ավետիսյան Լ. Վ. (գլխավոր
խմբագրի տեղակալ)

Ավետիսյան Հ. Գ.

Ավետիսյան Յու. Ս.

Բայրամյան Հ. Ս.

Բարդակչյան Գ. (ՄՄՆ)

Դեղեյան Ժ. (Ֆրանսիա)

Դրոսթ-Աբգարյան Ա. Գ.
(Գերմանիա)

Ջաքարյան Ս. Ա.

Հայրունի Ա. Ն.

Հովհաննիսյան Մ. Ս.

Հովսեփյան Լ. Ս.

Ղարիբյան Ա. Ա.

Մարգարյան Հ. Գ.

Մինասյան Է. Գ.

Մուրադյան Ս. Պ.

Պողոսյան Վ. Ա. (պատասխա-
նատու քարտուղար)

Սայադով Ս. Ս. (Ռուսաստան)

Սաֆարյան Ա. Վ.

Տազեայան Ա. (Լիբանան)

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

Avagyan A.

Avetisyan H.

Avetisyan L. (Deputy editor-in-
chief)

Avetisyan Y.

Bardakchian G. (USA)

Bayramyan H.

Dakessian A. (Lebanon)

Dedeyan G. (France)

Drost-Abgaryan A. (Germany)

Gharibyan A.

Hayruni A.

Hovhannisyan M.

Hovsepyan L.

Margaryan H.

Minasyan E.

Muradyan S.

Poghosyan V. (Executive
Secretary)

Safaryan A.

Sayadov S. (Russia)

Zakaryan S.

Հ Ո Ղ Վ Ա Ծ Ն Ե Ր

ԱՐԾՐՈՒՆԻ ՄԱՀԱԿՅԱՆ

ՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՈՒԴԱՅԱԿԱՆ ԱԿՈՒՆՔԸ ՆՈՅԻ ՏԱՊԱՆՈՎ ՍՐԲԱՑՎԱԾ ԼԵՌԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ*

Բանայի բառեր – Նոյան տապան, Արարատ-Մասիս, Կորդուք, հուղայական համայնք, Նախճուան-Նախիջևան, Հովսեպոս Փլավիոս

Արդեն, իբրև հավաստի գիտելիք, պետք է արձանագրել, որ Սուրբ գրքում նշված Արարատի լեռները, երկիրն ու թագավորությունը համապատասխանում են Հայաստանին, և որ Միջագետքի սրբազան ասքերի տապանակիր լեռը (Կորդվագ լեռներ) Ուրարտու-Արմենիա-Հայաստանում է¹:

Հարկ է մեկնաբանել, թե ինչու և ինչպես հայկական լեռնաշխարհից իբրև տապանակիր լեռներ ընտրվեցին Ջուղի լեռը՝ միջագետքյան (շումերա-աքքադա-բաբելոնյան) վիպական ավանդույթում, Մասիս-Արարատը՝ եբրայական ավանդույթում, իսկ հետագայում, երբ քրիստոնեության և իսլամի շնորհիվ տիրապետող դարձավ միայն Նոյան տապանի առասպելը, Նոյի տապանակիրը դարձավ մի դեպքում Ջուղի լեռը, մյուս դեպքում՝ Մասիս-Արարատը: Իսկ ցայսօր այնուհետև, հաղթող դարձավ Մասիս-Արարատը քրիստոնեական աշխարհում, իսկ Ջուղի լեռը՝ իսլամական աշխարհում:

XIX դ. վերջերից Ջ. Ֆրեզերի շնորհիվ հայտնի դարձավ, որ Սուրբ գրքում և Գիլգամեշի էպոսում վկայված աշխարհակործան ջրհեղեղը համաշխարհային բանահյուսական մոտիվներից է²: Թե այդ մոտիվով միջերկրածովյան ավազանում և Մերձավոր Արևելքում որքան պատումներ ու տարբերակներ են ստեղծվել, անհայտ է, բայց դրանցից պահպանվել և գրավոր շրջանառության մեջ են դրվել վերոնշյալ երկու վիպասքերը. միջագետքյանը՝ Ջիուսուդրա (=երկարատև կյանք)-Ուտնափիշտիմի (=շունչ գտավ) և եբրայականը՝ Նոյի (=հանգստություն, մխիթարություն) մասին: Դատելով հերոսների

* Հոդվածի հիմքում ընկած է 2014 թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտաժողովի զեկուցումը նվիրված նախիջևանցի պատմաբան Ստեփան Մելիք-Բախշյանի ծննդյան 90-ամյակին:

¹ Վերջին հոդվածները՝ մատենագիտական տեղեկատվությամբ, տե՛ս **Սարգսյան Դ.**, Բիբլիական Արարատի լեռները ըստ սեպագիր արձանագրությունների // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 2001, թիվ 2, էջ 268-276, **Սուշեդյան Ա.**, Ո՞ր լեռն է վրա է իջել Նոյան տապանը // «ՊԲՀ», 2003, թիվ 1, էջ 3-39:

² Տե՛ս **Փրեզեր Ժ. Ժ.**, Фольклор в ветхом завете, М., 2003, с. 77-102:

անունների իմաստներից¹ և նրանց գործառույթներից՝ կարելի է ասել, որ դրանք վիպական ծագում ունեն, ինչպես նաև՝ արքայական տարբերակում տապանակիր լեռան անունը՝ Նիսիր (=փրկություն): Մյուս դեպքերում տապանին ապաստան տված լեռն անորոշ է, բայց երկիրը, որտեղ այն գտնվում է, Հայաստանն է: Առայժմ այդ միակ կոնկրետ-պատմական ընդհանրության հիման վրա, աստիճանաբար իրար ձգելով, նմանվում են երկու ավանդավեպերի այլ մասեր ևս և վերջապես ստեղծում մի խառնիխուռն վիճակ, որտեղ դեռևս ամբողջությամբ չեն կողմնորոշվել անգամ գիտնականները: Նրանք դեռ վիճում են, թե որտեղ է իջել Նոյան տապանը՝ կարծես «տրամաբանելով», որ դա միայն մեկ վայրում կարող էր լինել: Հաշվի չեն առնում, որ Պաղեստինում կամ Միջագետքում հյուսվող լեգենդներում տապանակիր երկիրը կարող է կոնկրետ լինել, ինչպես և է, բայց այդ օտար երկրի լեռներից մեկը գատել և համարել տապանակիր պարտադիր չէ, որովհետև տվյալ երկրի տեղանքն անծանոթ է՝ անծանոթ անուններով: Սա՛ է վեպի և վիպասացի տրամաբանությունը: Մի խոսքով, կամ հարկ է տալ գործառական վիպական անվանում, ինչպիսին է՝ Նիսիր, և դա նույնպես բխում է բանավոր վեպի պոետիկայից, կամ անորոշ թողնել «Հայաստանի լեռներ» բնորոշումը: Վեպը հյուսողի տեսակետից կարող է սխալ կամ սուտ դուրս գալ կոնկրետ լեռնանուն նշելը, որովհետև չգիտես, թե այդ լեռնանունը կամ լեռն ինքնին որևիցե նշան կրում է՝ ցույց տալու, որ իրոք տապանակիր է: Իսկ երբ վիպասքը դառնում է հեղինակավոր ու սրբազան ճշմարտություն, այդ ժամանակ վերջինիս ազդեցությամբ հայտնվում են կոնկրետ տապանակիր լեռներ՝ արդեն տեղաբնիկների ջանքերով: Եվ իրոք, եթե սրբազան վիպասքի նպատակը մեղքի և փրկության հակադրումն է, կյանքի պահպանման կամ մեկ այլ վեհ գաղափար, ապա տեղաբնիկի նպատակը երկրորդային ու ածանցյալ է, այն է՝ տվյալ լեռան կամ ապրելատեղի, իբրև սրբազան վայրի, պանծացումը:

Սրբազան վիպական ավանդույթին ուղեկցող այս վարքագծային կանոնը կարելի է արտածել նաև ջրհեղեղյան երկու վիպասքի օրինակներից, եթե ճիշտ պատմական հենքի վրա դիտարկենք գրավոր ու բանավոր պահպանված վաղնջական կցկտուր տեղեկությունները:

Ամենից առաջ պետք է ամրագրել, որ եթե միջագետքյան վեպում ջրհեղեղից փրկվում են ոչ միայն հերոսները, այլև այն մարդիկ, ովքեր, ինքնուրույն բարձրանալով, ապավինել են լեռանը, ապա սուրբգրային ասքում միայն Նոյն է փրկվում՝ իր հետ տապանում տեղ տալով իր ընտանիքին և կյանքի շարունակման համար անհրաժեշտ կենդանական զույգերին: Հետևաբար իզուր չէ, որ միջագետքյան տապանակիր լեռը, որն այլ մարդկանց ևս ապաստան է տվել, ավելի մատչելի է, ինչ-որ տեղ կենցաղայնացված և նավի կուպրային մնացորդներով օժտված:

¹ См. у Мифы народов мира, М., 1980, т. 1, с. 467, т. 2, с. 224:

Բաբելոնի Բելի տաճարի քրմապետ և պատմիչ Բերոսոս Քաղդեացին մ. թ. ա. III դարի I կեսին գրում է (մեջբերումը՝ ըստ Հովսեփոս Փլավիոսի քաղվածքի), որ «մինչև հիմա էլ նավի մի մասը գտնվում է Հայաստանում՝ Կորդվաց լեռների մոտ, և որ ոմանք (նրա վրայից) պոկելով կուպրի կտորներ են բերում, և մարդիկ դրանք կրում են իրենց վրա՝ իբրև հուռուրթ»¹: Հասկանալի է, որ առաջին անգամ տապանակիր լեռան գրավոր կոնկրետացումը Հայաստանի տվյալ գավառում, տվյալ լեռան տվյալ հատկանիշով, թեկուզ առանց անվանելու, թույլ է տալիս շատ գիտնականների (Հ. Գեյցեր, Մ. Աբեդյան, Ս. Երեմյան, Ի. Դյակոնով և այլք) նման լեռ համարել Ջուղի-Դաղը, որ արաբերեն (Ջաբալ Ջուղի) նշանակում է «բարձր», «մեծ», «խոշոր» և այն նույնացնել Ասորեստանի թագավոր Աշշուրնաձիբապալ II-ի (884/3-859) սեպագիր արձանագրություններից մեկի մեջ նշված Նիբուր լեռնանվան հետ: Դատելով այն բանից, որ Ջուղի անունը կարող էր Նիբուր-ի հետագա թարգմանությունը լինել, կարելի է ասել, որ այդ լեռը իր անունը ստացել է տվյալ միջավայրում ամենամեծը լինելու հատկանիշի հիման վրա (2089 մ): Սակայն, արդյո՞ք մեծ լինելու հատկանիշն է միակ իրական հիմքը եղել այն տապանակիր կոչելու համար: Չէ՞ որ հայոց լեռնաշխարհում շատ կան բարձր գագաթներ, որոնք իրենց տարածաշրջաններում համարվում են ամենաբարձրը: Ուրեմն դա անհրաժեշտ, բայց բավարար հատկանիշ չէ: Հարկավոր է նշան, և այդ նշանը կուպրն է՝ ձյուրթ, որը, իբրև նավթային գոյացություն, բնականից հատուկ է Ջուղիին: Եվ պատահական չէ, որ այդ լեռը զուգահեռաբար կոչվել է նաև Գուդրուն, որը բնական այդ հատկանիշի հիման վրա ընդգծվել է իբրև հատուկ անուն, հայերեն կլինի Կուպրի սար: Այստեղից կարող է հարց ծագել, թե արդյո՞ք Ջուղի անունը ևս բխում է դրանից...

Ինչևէ, մի բան պարզ է, որ բուն Միջագետքի վիպաստեղծ կենտրոնում չեն նախատեսել նման նշանակիր լեռ, նրանց բավարարել է «Արմենիայի լեռները» բնորոշումը, բայց այն տեղաբնիկները, ովքեր կրողն են այդ սրբազան ավանդույթի, շահագրգռված են իրենց տեղանքում տեսնելու այդ փրկարար լեռը:

Հայտնի է, որ Հայաստանի սահմանային շրջաններում մշտապես գոյություն ուներ էթնիկապես խառը բնակչություն: Տվյալ դեպքում հայոց հարավային գավառներում և հարևան հյուսիսային Միջագետքում հայերը գիրկընդխառն ապրում էին սեմական ժողովուրդների հետ (սքքադական, ասուրա-բաբելոնական, արամեա-ասորական և այլ էթնիկ տարրեր): Առաջին հերթին հենց սրանք են ջանում տապանակիր լեռան նշաններ հայտնաբերել իրենց բնակավայրում, սրանց հետևողությամբ՝ նաև տեղաբնիկ հայերը, որոնք յուրացնում էին այդ վիպական ավանդույթը, ինչի արդյունքում տա-

¹ **Հովսեփոս Փլավիոս**, Հրեական հնախոսություն, «Օտար աղբյուրները հայերի և Հայաստանի մասին», հ. 9, աշխատ. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 55:

րածվում և ընդհանուր ճանաչում էր գտնում փրկարար լեռան համբավը: Նույն Հովսեփոս Փլավիոսի վկայությամբ՝ այդ մասին գրել են վաղ հեղինակներ Հերոնիմոս Եգիպտացին, Մնեսիասը և այլք, որոնցից, սակայն, Հովսեփոս Փլավիոսը միայն մ. թ. ա. I դարի հեղինակ Նիկողայոս Դամասկացու խոսքն է մեջբերել. «Մինիասից վերև Հայաստանում կա մի խոշոր լեռ՝ Բարիս անունով, որտեղ, պատմության համաձայն, շատերը, ապաստանելով, փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը, տապանի վրա տարվելով, իջել է գագաթին և տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանվել են: Սա հավանաբար այն մարդն է, որի մասին գրել է Մովսեսը՝ հրեաների օրենսդիրը»¹: Այստեղ կուպրի փոխարեն տախտակի մնացորդներն են նշան ծառայում: Կարող է թվալ, թե Նիկողայոս Դամասկացու ասածը հարում է ոչ թե Բերոսոսի պատումին, որի հերոսը Քսիստոթրոսն է, այլ Սուրբ գրքին, որի հերոսը Նոյն է, որովհետև կուպրի փոխարեն նշանի դեր են կատարում տախտակի մնացորդները: Բայց ոչ, քանի որ հեղինակը, նկատելով իր պատումի նմանությունը Նոյի պատումին, պարզ սահմանազատում է՝ ասելով, որ սա, հավանաբար, այն մարդն է, որի մասին գրել է Մովսեսը: Բացի այդ, նավի մնացորդներից են ոչ միայն կուպրի կտորները, այլ նաև տախտակները, որոնք, ենթադրվում է, պիտի ձյութապատ լինեն: Կարևոր է նաև լեռան բնորոշումը՝ խոշոր, որ հիշեցնում է Ջուդի լեռան իմաստը, թեկուզ վերջինիս ճշգրտությունը կասկածի տակ է: Կա ևս մի ոչ պակաս կարևոր տարբերություն:

Այս պատումի մեջ տապանի հերոսից բացի նաև այլ մարդիկ են փրկվում առանց տապանի: Վերջապես ամենակարևորը. լեռն այստեղ կոչվում է Բարիս, որը առաջ է բերել շատ հետազոտողների հետաքրքրությունը: Ոչ մի այլ տեղ վկայված չէ այդ անունը՝ Բարիս: Դամասկացու գործը մեզ չի հասել, և թվում է, որ այն աղավաղվել է Հովսեփոսի «Հնախոսության» գրչական վերարտադրության ընթացքում, որովհետև մեզ են հասել երկու այլ վկայություններ «Հոբելյանների գրքից» և Եպիփան Կիպրացուց, որոնցում լեռը կոչվում է Լուբար²: Հավանաբար այս երկու վկայության աղբյուրը ևս Նիկողայոս Դամասկացին է, որի մեզ չհասած գրվածքում եղել է հունարենաձև Լուբարիս լեռնանունը³, ինչից հետագայում Հովսեփոս Փլավիոսի օրինակում ընկել է առաջին վանկը, և մնացել է Բարիս: Քանի որ բոլոր դիտարկումները հանգեցնում են Դամասկացու և Բերոսոսի պատումների նույնա-

¹ Նույն տեղում:

² **Մուշեղյան Ա.**, նշվ. աշխ., էջ 11:

³ Բարիսը Մասիսի հետ նույնացնողներին կարող է թվալ, թե Լուբարիս-ը Մասիսի մյուս անվան՝ Ազատ-ի աղավաղված լատիներեն թարգմանությունն է ժողովրդական միջավայրում՝ փոխանակ լիբերիս-ի, բայց դա խաբուսիկ է: Մասիսի և Բարիսի նույնացման մի այլ հիմնավորում է տվել պ.գ.դ. Արտակ Մովսիսյանը՝ ելնելով բառի սեպագրային ընթերցումից: Տե՛ս **Մովսիսյան Ա.**, Սրբազան լեռնաշխարհը, Երևան, 2000, էջ 50-52:

կանացմանը, մեզ մնում է համարել, որ Լուբար լեռը նույն Նիբուր և նույն Ջուդի-Դադն է: Կարելի է անգամ կռահել այն ուղին, որով լեռնանվան սկզբնաձևի աղավաղումից ծնվել են Նիբուրը և Լուբարը, եթե հաշվի առնենք, որ Նիբուր-ը հունարեն վկայված է նաև Նիբարիս¹ ձևով, իսկ Ն>Լ ձայնորդային փոխարկումը դյուրին ձևով կարող է լինել բանավոր արտասանության եղանակով. Նիբուր<Նիբուրիս<(Նիբարի ս)<Նուբարիս>Լուբարիս>Լուբար: Այն է՝ ամենավաղ հիմքը ներկայացնում է Նուբար(իս) ձևը, որն ստացվում է վերականգնումով:

Այսպիսով, վկայակոչվել են նույն փրկարար լեռան մի քանի անուններ՝ Նիբուր, Լուբար, Ջուդի, Գուդրուն, որոնցից առաջին երեքը նշում են բարձր լինելու հատկանիշը, վերջինը՝ կույրի հանք ունենալը, և կամ բոլորն են բխում վերջինիս իմաստային դաշտից:

Վերջին հատկանիշն է շեշտում նաև Ալեքսանդր Բազմավեպը Բերոսոսի հիման վրա՝ Եվսեբիոս Կեսարացու քաղվածքի համաձայն. «Եւ ի նաւէն, որ չոգաւ դադարեաց ի Հայս, և ցայժմ սակաւ ինչ մասն ի Կորդուացոց լերինն ի Հայոց աշխարհին մնալ ասեն, և ոմանց քերել բերել ի ծեփածոյ նաւին նաւթոյ ի բժշկութիւն և ի ջնջոց ցաւոց ինչ բժժանաց»²: Իսկ փայտի մնացորդաց վրա է ուշադրություն դարձնում Աբյուդենոսը. «Եւ անդէն վաղվաղակի դիքն գնա (գՍիսիթոս) ի մարդկանէ հետակորոյս առնէին, և նաւն երթեալ յաշխարհն Հայոց դադարէր և ի փայտիցն դէղ օգնականութեան բնակչաց աշխարհին պարզներ»³:

Այսպիսով, հատկապես հելլենիզմի դարաշրջանում սեմական ժողովուրդների հետ (հուդայականներից զատ) միջազգետքյան լեզենդի կրող ու տարածող է դառնում նաև հունահռոմեական աշխարհը:

* * *

Այժմ անդրադառնանք ջրհեղեղի եբրայական ավանդույթին, որի կրողն ու տարածողը հիմնականում հրեաներն են հայրենիքում ու սփյուռքում և ընդհանրապես հուդայականները: Եթե միջազգետքյան լեզենդը տարածվում էր հունահռոմեական աշխարհում՝ իբրև ճանաչողական գիտելիք, ապա Նոյի առասպելը հուդայական սփյուռքում՝ իբրև կրոնական սուրբգրային գիտելիք: Հետևաբար, դրանց տարածման գոտիները մինչև քրիստոնեությունը անհամեմատելի էին հոգուտ միջազգետքյանի, եթե անգամ հաշվի առնենք, որ նույն այդ հելլենիզմի շրջանում եբրայերենից կտրված հրեաները կրոնական սրբազան տեղեկատվություն քաղում էին իրենց իսկ կողմից հունարեն

¹ **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 39:

² Եւսեբի Պամփիլեյ Կեսարացու ժամանակականք....., Մասն Ա, ի Վենետիկ, 1818, էջ 36-37:

³ Նույն տեղում, էջ 49-50:

թարգմանված Սուրբ գրքից (Մեպտուազինտա = Յոթանասնից - մ. թ. ա. III-I դդ.): Կարելի է կարծել, որ հենց այս ժամանակներից է սկիզբ առնում հետագայի քրիստոնյաների մեջ շատ տարածված մի երևույթ՝ աշխարհը «բիրլիականացնելու» կամ այլ կերպ ասած՝ համաշխարհային պատմությունը Սուրբ գրքի հետ հարմարեցնելու միտումը: Հասկանալի է, որ այդ միտումը որոշակիորեն պետք է հենվեր սուրբգրային տվյալների, հատկապես՝ Ծննդոց գրքի ու մարգարեությունների յուրովի մեկնաբանումների վրա: Վերոնշյալ միտումը, բնականաբար, դրսևորվում էր սփյուռքի այն բնակավայրերում, որտեղ հրեաները համայնքով էին ապրում:

Հայտնի է, որ մ. թ. ա. I դ. I քառորդում Հայոց արքա Տիգրան Մեծը Հայաստանի քաղաքներում բնակեցրեց մեծաքանակ հուդայականների, որոնց թվում կային կապադովկացիներ, կիլիկեցիներ, հույներ և հրեաներ: Վերջիններս Հայաստանում մինչ այդ եղել են բնական, ցաքուցրիվ տարագրման (միգրացիայի) եղանակով¹, ուստի և հայ իրականության մեջ որևէ զգալի հետք չեն թողել, բայց ահա մ. թ. ա. I դ. II կեսին, երբ հուդայական գաղթականները, որոնք V դ. հայ իրականության մեջ հրեա են կոչվում, զանգվածորեն տեղավորվել ու ինտեգրվել էին նոր սոցիալ-տնտեսական ու մշակութային միջավայրում, սկսում է գործել վերոնշյալ միտումը՝ Հայաստանի բիրլիականացումը կամ, կրոնական տեսակետից, յուրայնացումը (ոչ թե յուրացումը): Դժվար չէ պատկերացնել, որ այս առումով «Հայահրեից» գաղութի բախտը բերել էր, որովհետև Սուրբ գիրքն առատորեն հնարավորություն էր ընձեռում հուդայականներին՝ պանծացնելու իրենց նոր բնակավայրը՝ որպես «դրախտավայր» ու փրկարար Նոյան տապանի հանգրվան: Դեռ ավելին, սուրբգրային հիշատակումների և աշխարհագրական ու տեղանվանական տվյալների «բարենպաստ» համադրումները առիթ էին տալիս որոշ առավելություններով զերգանցելու ոչ միայն տարաշխարհի հուդայական գաղութներին, այլև հյուրընկալ երկրի այլ հուդայական համայնքներին: Ավելորդ է ասել, որ իրենց գաղութի ու երկրի գովազդը Հայաստանի հուդայականները հասցնում էին տարբեր առևտրական կենտրոններ, իսկ ուխտավորները Երուսաղեմ, ի լուր համայն հրեության: Փաստորեն, եթե դարեր առաջ Արարատի երկիր-Հայաստանն էր հայտնվել Սուրբ գրքում², այդուհետև՝ մ. թ. ա. I-մ. թ. I դդ. Սուրբ գիրքն է հայտնվում Հայաստանում, որովհետև հուդայական համայնքների միջոցով հայերը յուրացնում էին ոչ միայն Սուրբ գրքի ինչ-ինչ տեղեկություններ, այլև դրանց հարասող նորաստեղծ համայնքային ավանդություններ ու մեկնություններ:

Փավստոս Բուզանդի «Պատմությունից» հայտնի է, որ «հրեական» համայնք է եղել նաև Գողթնի Նախճուան քաղաքում, որին բոլոր մյուս հա-

¹ Մ. թ. ա. I դ. Հայաստանում եղած դեմոգրաֆիկ շարժերի մասին տե՛ս **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 156-166:

² **Ինգլիզեան Վ.**, Հայաստանը Սուրբ գրքին մեջ, Վիեննա, 1947:

մայնքների հետ IV դ. 60-ական թթ. գերեվարել է պարսից Շապուհ II-ը: Շուրջ չորս հարյուր տարի գոյություն է ունեցել Մեծ Հայքի Հուդայահրեից գաղութը, և այդքան մեծ ժամանակաշրջանում կարող էր լայն տարածում գտնել Նախճուանի գաղութի այն կարծիքը, թե իբր Նոյի տապանը նստել է Մասիս-Արարատի գագաթին, կամ Տարոնի հուդայականների կարծիքը, թե իրենց նահապետ Մեմը նախ բնակվել է Միմ լեռան ստորոտին, և որ տարբեր ուղղություններով սկսել են ցրվել Ցրոնքից և այլն: Հետաքրքիր է, որ Միմ-Ցրոնքի կեղծ ստուգաբանական ավանդապատումին հետևող հուդայականները Նոյան տապանի հանգրվան են համարել Կորդուքի Ջուդի լեռը, որովհետև վերջինս իրենց ավելի մոտ ու տվյալ տարածքում ևս հանրայնորեն ընդունված էր: Իսկ դրան գուցահեռ հնարավոր էր, որ Գողթնի բնակիչները իրենց գավառի անունը ընկալեին իբրև «գաղթ» բառի փոփոխված ձև, որովհետև Նոյի սերունդների գաղթը սկսվել է այնտեղից և այլն:

Կասկած չկա, որ շատ հուդայական համայնքներ իրենց բնակավայրերի ամենաբարձր լեռները դիտել են իբրև հնարավոր հավակնորդներ Նոյան տապանի հանգրվանի, որովհետև նրանք բոլորը լավ էին հասկանում, որ իրենց Սուրբ գիրքը տեղը որոշակի չի անվանում («ի լեռինս Արարատայ»), ուստի պետք էր այն գտնել: Դրա համար, ինչպես ասվեց, միջավայրում բարձր գագաթ լինելը բավարար չէ, հարկավոր է լրացուցիչ կովան, որը գտան Նախճուանի «հրեաները». նրանք ուշադրություն դարձրին այն հանգամանքի վրա, որ բարձրագույն Ավագ-Ազատ-Մասիսի (5165 մ) ստորոտին գտնվող քաղաքը կոչվում է... Նախիջևան: Դա իբր քիչ է, լեռան լանջին թառած գյուղն էլ կոչվում է... Ակոռի (Արկուռի): Ահա քեզ հզոր կովաններ ի հիմնավորումն տապանակիր լեռան և ի լուր աշխարհի ու տեղաբնիկ հայերի, ում համար Ազատ-Մասիսը առասպելապատ ու խավարչտին լեռ է հանգրվան քաջքերի ու դևերի:

Փորձենք այս դիտարկումները համապատասխան փաստերով տեղավորել պատմական հենքի վրա:

Արևելյան Հայաստանում պատմական Գողթն գավառի նշանավոր կենտրոնը՝ Նախճուանը, որ հայերեն գրավոր հիշատակվել է սկսած V դարից, ժողովրդախոսակցական լեզվով մինչև օրս կոչվում է Նախիջևան: Տեղանվան նախնական և վերջնական նշված տարբերակների միջև, պետք է ենթադրել, որ կապող օղակ է եղել «Նախճուան»/«Նախճեւան» ձևը, ինչպես երևում է ոչ միայն քաղաքի և գավառի անվան թուրքերեն արտասանությունից, այլև հայ ժողովրդական բարբառներից և խոսակցական լեզվից:

Դատելով ժողովրդական մի տարբերակից («Մթամ քիչ ին Շիրվանա, հրմել էկան Նախճեվանա»), որ XIX-XX դդ. տարածված էր Ելիզավետպոլի

* Ասույթը (= Իբր քիչ էին Շիրվանից, հիմա էլ եկան Նախիջևանից) հաճախ կիրառել են XX դարասկզբին ծնված պապիս ծնողները, որոնցից լսել է հայրս՝ Սամվել-Անդրանիկ Սա-

նահանգի Ղազախի գավառում, Նախիջևանին զուգահեռ այդ անվանաձևը կիրառվել է նաև նախորդ դարում: Թե որքան հին է Նախձուան>Նախիջևան անցման միջնորդ տարբերակը, կարելի է կռահել Նախիջևան ձևի հնությունը որոշելու միջոցով:

Մինչ այդ պետք է հիշեցնել, որ Նախձուան անունը հայերենում իրանական փոխառություն է, հավանաբար մինչարշակունյան ժամանակաշրջանից: Համոզիչ չեն, իհարկե, տեղանվան ստուգաբանության եղած փոքրերը, որոնք անունը բխեցնում են Կովկասյան «նախ» ցեղանունից, կամ էլ նախձիր (=սպանդ, որս) իմաստից: Տողերիս գրողը դեռևս ասպիրանտական տարիներին տեղանվան մասին հարցրել է ամերիկացի իրանագետ Ջեյմս Ռասսելին, երբ վերջինս Երևանում մասնակցում էր հայագիտական միջազգային առաջին սիմպոզիումին: Ի պատասխան, նա կասկածելով, հայտնել է ենթադրություն, որ «նախձուան» կարող է նշանակել՝ կարևորը, գլխավորը, առաջինը: Այդ կասկածը, սակայն, կարելի է փարատել, եթե նման տեղանունը կիրառվի իշխանական նստավայրի նկատմամբ: Օրինակ, որնիցե իշխանական տարածքում այդ անունը լիովին կարդարացվեր, եթե դրանով ընդգծվեր տվյալ գյուղի կամ քաղաքի իշխանանիստ լինելը, ինչպես թագավորական ընտանիքի և արքունիքի կեցավայրը ոստան կոչելը: Եվ իրոք, այդ իմաստի դեպքում հնարավոր է, որ նույն տեղանունը կրկնվի տարբեր տարածքներում՝ Գողթն, Շիրակ և այլն: Տեղանունների այդ շարքին է դասվում նաև Մամիկոնյանների՝ Տայքից հայտնի մի գյուղի անուն՝ Իշխան (հիշենք Ներսես Տայեցի կամ Իշխանցի կաթողիկոսին), որ պետք է հասկանալ իշխանական, իշխանանիստ իմաստով: Օրինակ, Արշակունիների օրոք Կամսարական իշխանների կեցավայր եղած ավանը՝ Շիրակի Նախձուանը, ըստ պատմահայր Մովսես Խորենացու (III գ., ԼԲ), իրոք, իշխանանիստ էր ոչ միայն անվամբ, այլև մյուս հատկանիշներով (Կամսարական տոհմի մարդկանց բնակատեղի, ստորգետնյա մթերանոց և այլն): Երբվանի՞ց է Նախձուանը հայերենում հնչել Նախիջևան: Առողջ տրամաբանությունը կարող է հուշել այն ժամանակից, երբ այդ փոխառյալ անունը հոլովվեց ժողովրդախոսակցական լեզվում: Այսինքն, եթե փոխառումը եղել է Երվանդյանների օրոք, ուրեմն ամենաուշը մ. թ. ա. III դ. կունենայինք Նախիջևան ձևը: Բարեբախտաբար այս հարցում միայն տրամաբանությամբ չենք կողմնորոշվում: Ունենք մ.թ. I դ. մի վկայություն, որի հեղինակը Հովսեպոս Փլավիոսն է: Նա իր «Հրեական հնախոսություն» գրքում ջրհեղեղի սյուժեի առիթով գրում է. «Երբ տապանը կանգ առավ Հայաստանում գտնվող մի լեռան վրա, Նոքոսը (=Նոյ)...մնաց այնտեղ:ևս յոթ օր սպասելուց հետո նա բաց թողեց տապանի անասուններին, ինքն էլ իր գերդաստանով դուրս գալով՝ Աստծուն

հակյանը (1930-2013): Վերջինիս բացատրելով՝ ասույթն օգտագործվում էր այն դեպքում, երբ տարբեր տեղերից անսպասելի հյուրեր էին գալիս տուն, իսկ հյուրասիրելու բան չկար:

գոհեր մատուցեց և խնջույք արեց ընտանիքի անդամների հետ: Հայերը մինչև օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ (*Αποβατήριο* – *Ա. Մ.*), քանի որ այնտեղ է փրկվել տապանը, և մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս բեկորները¹: Գիտնականները գրեթե միաձայն ընդունում են, որ հունարեն *Αποβατήριο* բառը հայկական Նախիջևան տեղանվան թարգմանական պատճենն է²: Հետագայում, Հովսեպոս Փլավիոսից առնելով, «ապոբաստերիոն»-ը իբրև տեղանուն է օգտագործել Եվստատիոս Անտիոքացին (*IV դ.*)³, իսկ Հիերոնիմոսը, այն թարգմանելով լատիներեն, գրում է. «Այս վայրը հայերն անվանում են *Exitus* կամ *Egressus*» (ելման կամ իջման տեղի)⁴:

Այն, որ հայերը մինչև օրս այդ տեղը կոչում են Նախիջևան, հասկանալի է: Իսկ ովքե՞ր որոշեցին, որ դա կապ ունի Նոյի հետ և այդ մասին հաղորդեցին Հովսեպոս Փլավիոսին: Միանշանակ՝ Նախիջևանի հուդայական համայնքի ներկայացուցիչները, ովքեր ուխտի են գնացել Երուսաղեմ: Հովսեպոս Փլավիոսի հաղորդած այս տեղեկությունն անգին է այլ առումներով ևս: Նախ՝ հաստատվում է «Նախիջևան» ձևի վաղ գոյությունը, երկրորդ՝ Հայաստանի «հրեաները», արագ յուրացնելով ժողովրդախոսակցական հայերենը, կեղծ կամ ժողովրդական կոչված ստուգաբանությունների միջոցով Մուրբ գրքին հարասող լեզենդներ էին հորինում, իսկ Նախիջևանը որպես Նոյի առաջին հանգրվան է ընկալվել մ. թ. ա. I դ. II կեսից սկսյալ, երրորդն ամենակարևորն է, ըստ որի՝ նրանք հետագայի քրիստոնյա հայ ժողովրդի համար ակամայից ստեղծեցին նրա ազգային ինքնությունը սնուցող տապանակիր Մասիս-Արարատի խորհրդանիշը:

Բայց ասվեց, որ տապանակիր լեռան ավանդապատումի համար իրական հիմք է ծառայել ոչ միայն Նախիջևան, այլև Ակոռի անունը: Թեկուզ Ակոռի անունը չի նշվում, բայց Աստվածաշնչում Նոյի կողմից լեռան լանջին այգի տնկելուց անուղղակիորեն ենթադրվում է Ակոռիի ավանդապատումը: Համենայն դեպս, վերջինս ածանցված է առաջինից, ուստի կամ հուդայականներն են դրանով ևս ամրացրել Մասիսի տապանակիր լինելը, կամ, ինչն ավելի հավանական է, տեղաբնիկ հայերը Նոյի ու Նախիջևանի լեզենդի ազդեցությամբ հարասել են հարևան հուդայականներին: Փաստն այն է, որ խաղողի որթի մասին եղած պարականոն տեղեկությունները դարձյալ հին են (*I դ.*), վկայվել են Հովսեպոս Փլավիոսի երկում, որը, սակայն, հայերեն թարգմանության մեջ, ցավոք, տեղ չի գտել և Հոբեյանների գրքում⁵: Մակայն

¹ **Հովսեպոս Փլավիոս**, նշվ. աշխ., էջ 54:

² **Murad F.**, *Ararat und Masis*, Heidelberg, 1901, **Մարգայան Դ.**, նշվ. աշխ., էջ 274 և այլք:

³ **Migne**, *Patrologia Graeca*, t. 18, col. 753.

⁴ **Hieronimus**, *Opera omnia*, Ed. Vallarsi, t. III, p. 125. Հղումն ըստ Ա. Մուշեղյանի նշված աշխատության (նույն տեղում):

⁵ Հմմ. **Հովսեպոս Փլավիոս**, նշվ. աշխ., **Դիոն Կասիոս**, նշվ. աշխ., հմմտ. **Josephus Flavius**, *Antiq. Jud.*, (163): Հղումն ըստ Ա. Մուշեղյանի նշված աշխատության (էջ 35):

դրանք՝ որպես ս. Գրքից անմիջապես բխող բանավոր հարասություններ, կապ չունեն հայերի կամ Հայաստանի հուղայականների հետ: Ինչ վերաբերում է Հոբեյանների գրքին, պետք է ասել, որ խնդրո առարկա որթատունկի ավանդապատումը այնտեղ մտել է նույն բանավոր ավանդույթից՝ միայն թե ասված Կորդուքի համար, որովհետև վերաբերում է Լուրսար լեռանը¹:

Կարելի է ենթադրել, որ եթե Մասիս լեռան ստորոտի քաղաքի անունը Նախիջևան չլիներ, Մասիսը չէր լինի տապանակիր լեռ, կամ այլ ավանդապատում կհորինվեր: Կամ, եթե Շիրակի Նախիջևան ավանում կամ Վանանդի Իջավան գյուղում հուղայական կամ հրեից համայնք լիներ, գուցե և տապանակիր լեռան հավակնորդ դառնար Արագածը և այլն: Սա ավանդապատումի ժանրի պոետիկայից բխող եզրահանգում է, ոչ թե գուշակություն:

Հնարավոր է, որ Նախիջևան անվան «ապացուցողական» ուժն այնքան մեծ է եղել, որ նրա ազդեցությամբ «իջման ավան» նշանակությամբ մի տեղանուն հետագայում հայտնվել է Կորճայք նահանգում՝ արդեն իսկ քրիստոնեական կամ իսլամական միջավայրում: Փաստորեն, այսու ի չիք են դառնում բոլոր այն վեճերը, որոնք արվել են այն հարցի շուրջ, թե Մասիսը երբևից է տապանակիր լեռ ճանաչվել, որովհետև այդ ավանդույթը մ. թ. ա. I դարից մինչև օրս անընդմեջ գոյություն է ունեցել: Համեմատելու համար հիշենք, որ հայոց Կորճայք կամ Կորդուք գավառի տապանակիր Ջուղի լեռան ավանդույթը սկիզբ է առնում ավելի հնուց, գուցե և մ. թ. ա. II հազարամյակից, որովհետև այն ժամանակ, երբ միջագետքյան ջրհեղեղի վիպասքը հյուսվում էր, տարատեսակ սեմական էթնիկ տարրեր արդեն ապրում էին Արարատ-Ուրարտու-Հայաստանի հարավային շրջաններում: Դրա համար Կորդվաց լեռների բարձր գագաթին տրված բոլոր անունները սեմական ծագում ունեն², ուստի Արարադ և Կարդու անունները՝ հնարանքի, իսկ Մարարադը գրչական թյուրիմացության արդյունք պետք է համարել, ինչպես ժամանակին նկատել են Մ. Էմինը, Ստ. Մալխասյանցը, Ֆրիդրիխը և այլք:

Ըստ մշակութային ավանդույթների ժառանգորդման և փոխներթափանցման օրենքների՝ միանգամայն սպասելի էր, որ միջագետքյան ավանդապատումի և նրա տապանակիր լեռան օրինակով Կորդուքում տեղայնացվեր նաև Նոյան տապանի ավանդապատումը, ինչպես որ, իրոք, դա գուցե առաջինը փորձել է կռահել Նիկողայոս Դամասկացին, և լիովին արձանագրել է «Հոբեյանների գիրքը» (I դ.): Մակայն այս բնական մշակութային երևույթի մեջ շեղում մտցրին Հայքի կենտրոնում բնակված հուղայական-

¹ Книга Юбилеев, Введ. и русс. пер. проф. А. Смирнова, Казань, 1895, с. 9.

² Արդյո՞ք նման ծագում չունի նաև Կորդու(+ք) տեղանունը: Հարցն իրավասու է, եթե հաշվենք, որ նրա նմանությունը Գուդրոն-ին պատահական չէ, իսկ եթե ոչ՝ հարցն ավելորդ է, մի խոսքով, պատմահամեմատական հնչյունաբանության խնդիր է:

ները, ովքեր ի լուր աշխարհի հայտնաբերեցին Ազատ-Մասիսն իբր տապանակիր լեռ՝ ցույց տալով Նոյ նահապետի էջքի և Նախիջևանի միջև եղած կապը: Այս նորությունը դեռևս հայտնի չէ «Հոբելյանների գրքի» հեղինակին, բայց նրան զուգահեռ արդեն հայտնի է Հովսեպոս Փլավիոսին: Վերջինս այն բազմիմաց հեղինակն է, ով գիտի թե՛ միջագետքյան տապանակիր լեռը և թե՛ եբրայական վեպի նոր տապանակիր լեռը, ուստի և ինքը կապող դեր է ստանձնում երկու ավանդույթի միջև:

Վերոբերյալ դրույթներից բխում է մի խնդիր. ի՞նչ էր մտածում Հովսեպոս Փլավիոսը՝ ակնհայտորեն նկատելով, որ Նոյի մասին պատումը երբեմն չի համընկնում միջագետքյան պատումը ներկայացնող հեղինակների հաղորդագրությանը: Նա, համարելով, որ երկու պատումները վերաբերում են Նոյին՝ միայն թե անվան փոփոխմամբ, աշխատում էր դրանք հաշտեցնել ու համապատասխանեցնել միմյանց: Եվ դա լավ երևում է այն բանից, որ Հովսեպոս Փլավիոսը սկզբից պատմում է Նոթոսի մասին, հետո թվարկում միջագետքյան ավանդությունը պատմողների կարծիքները՝ կարծես ցույց տալու, որ նույն ջրհեղեղի մասին է խոսքը:

Այս ամենի մասին է վկայում այն իրողությունը, որ Հովսեպոս Փլավիոսը միջագետքյան պատումի որոշ տարրեր ներմուծեց եբրայական պատումի մեջ: Նշենք, օրինակ, որ նա գրում է, թե ջրհեղեղից «մարդկանց մեծ մասը չկարողացավ փրկվել՝ փախուստի ապավեն չունենալու պատճառով»¹, կամ «մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս դրա (տապանի) բեկորները»²: Դեռ ավելին, Հովսեպոս Փլավիոսին թվում էր, որ իր նախորդ հեղինակներից կարելի էր որոշ մանրամասներ իմանալ, ասենք, նշվածների կամ տապանի իջման վայրի մասին և այլն: Իզուր չէ, որ «Հոբելյանների գրքի» հեղինակը Նոյան տապանի իջման վայր է կարծել Լուբար լեռը, որը, իրականում, միջագետքյան վիպական տարրերից է: Ահա այս երկու վիպական ասքերի ի մի բերումը և դրանց տարբերությունների հաշտեցումը, որ սաղմնային վիճակում տեսանք «Հրեական հնախոսություն» և «Հոբելյանների գիրք» կոչված աղբյուրներում, մոտ ապագայում ընդօրինակվելու և ոճական հնարք են դառնալու քրիստոնյա պատմիչների երկերում (Եվսեբիոս Կեսարացի, Մովսես Խորենացի և այլք):

Քրիստոնեության տարածման հետ հրեական ավանդույթի հետևորդները շատացան, բայց նրանց մեծ մասը վաղ դարերում դեռևս հակված էր տապանակիր լեռը ցույց տալու Կորդոքում, ինչպես վկայում են Փավստոս Բուզանդը, Մովսես Խորենացին և այլք: Աստիճանաբար, սակայն, ավելի է արմատավորվում ու տարածվում կենտրոնական Հայաստանի հուդայականների ու տեղացի քրիստոնյա հայության կարծիքը, թե Մասիսն է տապա-

¹ Հովսեպոս Փլավիոս, նշվ. աշխ., էջ 54:

² Նույն տեղում:

նակիր լեռը: Մրցակցային մշակույթի այս հետաքրքիր դրսևորումը ծնել է աշխարհագրական նոր անուն երկու լեռների համար. Ջուղի լեռան դեպքում՝ Արարադ, Մասիսի դեպքում՝ Արարատ, որովհետև ս. Գիրքը երբ տեղացի քրիստոնյաների կողմից յուրացվեց նախ մի քանի լեզվով (ասորերեն, հունարեն), ապա թարգմանվեց նաև հայերեն, սուրբգրային «ի լերինս Արարատա» արտահայտությունը ընկալվեց ոչ թե բառացի՝ Արարատի լեռներում, իբրև երկրանուն, այլ սկսեցին հասկանալ, ավելի ճիշտ, իմաստավորել իբրև լեռնանուն՝ Արարատ լեռներում: Այս համոզմունքը աստիճանաբար ավելի ամրացավ վիպական գրավոր շրջանառմամբ՝ զուգահեռաբար, բայց ավելի վաղ վկայությունները պահպանվել են Կորդուքից, ինչպես երևում է նրա շուրջ եղած հիշատակումներից (Եփրեմ Ասորի, Հակոբ Մծբնացի, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի): Հետաքրքիր է, որ Հակոբ Մծբնացու վարքում եղած հրաշապատում վիպական տարրերը, որոնք պատմվել են Կորդուքի լեռան շուրջ (ասորական Կարդու լեռ, որը հորինվել է գավառանունից և Ջուղի-Գուղի անվան փոխանորդն է), հետագայում փոխանցվել են Մասիսին, ուստի մինչև օրս Մասսա լանջին է նշվում ս. Հակոբա աղբյուրը: Մակայն Մասիսի համար Արարատ անվան կիրառումը հավանաբար ուշ է եղել, որովհետև վաղագույն վկայություններից մեկը գտնում ենք Գրիգոր Նարեկացու Մատյանում (X դ.), որտեղ Արարատ լեռը ոչ թե փոխաբերաբար առնված է իբրև կշռաքար, ինչպես սխալմամբ թարգմանում են, այլ իբրև բարձրության չափանիշ՝ բարձրակետ¹: Թեկուզ, եթե Վարդան Արևելցու վկայությունը համարենք Եղիշեից բխող, կունենանք ոչ միայն V դ. հիշատակում, այլև երկու զուգահեռ անվանումների փաստարկում. «Արարատու լեռոն ոմանք զԿորդուաց ասեն, այլ ճշմարտու ճշմարտութիւն հայտնի առնէ զնա ի Մասիս գոլ»²: Բնչու՞ է Մասիսը, որովհետև, ըստ հեղինակի, նահանգի անունը Այրարատ է, որից ծագում է Արարատ լեռնանունը³: Ահա սա հիմք է տալիս պնդելու, որ նահանգանունից լեռնանուն ստանալու օրինակը վերցրել են Այրարատից՝ կիրառելով Կորդուքում (հմմ. Այրարատ>Արարատ, Կորդուք>Կորդու>Կարդու), իսկ մինչ այդ երկուսն էլ զուգահեռաբար երկրանվան հիման վրա ստացել են նույն լեռնանունը՝ Արարատ/Արարադ: Հետագայում աստիճանաբար տապանակիր լեռը Այրարատ նահանգի հետ կապվելու է ավելի շատ, քան Կորդուքի հետ, մինչև վերջինիս դուրս մղվելը: Հնագույն վկայություններից հայտնի է Հիերոնիմոսի հիշատակումը (IV դ.), որում, սակայն, լեռնանունը չի նշվում⁴, բայց որը մեծ դեր է խաղալու տա-

¹ **Գրիգոր Նարեկացի**, Մատեան Ողբերգութեան, աշխատասիրությանը Պ. Մ. Խաչատրյան, Ա. Ա. Ղազինյան, Երևան, 1985, էջ 127:

² **Խաչիկյան Լ.**, Եղիշեի «Արարածոց մեկնությունը», Երևան, 1992, էջ 245:

³ Նույն տեղում:

⁴ Այս փաստի և լեռնանունների գործածման հետաքրքիր վերլուծություն է տվել Ա. Մուշեղյանը: Տե՛ս **Մուշեղյան Ա.**, նշվ. աշխ., էջ 31-33, 11-16:

սանակիր Մասիս-Արարատը քրիստոնյա Եվրոպայի հանրային գիտակցութեան մէջ արմատավորելու հարցում:

Արշրունի Տաակյան – *Иудейские истоки формирования одного мирового символа: миф о горе, сакрализованной Ноевым Ковчегом*

В качестве достоверного сведения уже можно отметить следующее: во-первых, упомянутые в Св. Писании горы, страна и царство Арарата соответствуют Армении, во-вторых, гора ковчега священных сказаний Месопотамии (горы Кордук) находится в стране Урарту-Армения-Айастан. В статье показано, почему и каким образом из Армянского нагорья в роли горы-пристанища ковчега в шумеро-аккадско-вавилонской эпической традиции Месопотамии была выбрана гора Джуди, в еврейской традиции – Масис-Арарат, а позже, когда посредством христианства и ислама господствующим стал лишь миф о Ноевом ковчеге, в одном случае пристанищем ковчега стала гора Джуди, в другом – Масис-Арарат. И затем, вплоть до наших дней, ведущей горой в христианском мире стал Масис-Арарат, а в исламском мире – гора Джуди.

Artsruni Sahakyan – *The Jewish Source of the Formation of a Global Symbol: the Myth of the Mountain Sanctified by Noah's Ark*

The article provides reliable information stating that first, Mount Ararat, as well as the country and Kingdom of Ararat mentioned in The Holy Scripture, are identical to Armenia. Second, it states that the ark-carrying mountain of the sacred legends of Mesopotamia (the Korduk Mountains) is located in the country of Urartu-Armenia-Hayastan. The article reveals why and how in the Mesopotamian (Sumerian-Akkadian-Babylonian) epic tradition Mount Judy was singled out from the Armenian Highlands as the ark-carrying mountain, whereas in the Hebrew epic tradition it was Masis-Ararat, and later, when Noah's Ark myth became dominant due to Christianity and Islam, the only Noah's ark-carrying mountain became Mount Judy in one case, and Masis-Ararat in the other. Later on, to the present day Masis-Ararat has become the winning mountain in the Christian world and Mount Judy – in the Islamic world.

ՄԱՍԻԿՈՆՅԱՆՆԵՐԸ 774-775 ԹԹ. ՀԱԿԱԱՐԱԲԱԿԱՆ
ՀԱՍՏԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

*Բանալի բառեր – Մամիկոնյաններ, Բագրատունիներ, Մուշեղ Մամիկոնյան, Աշոտ
Բագրատունի, Արաբական խալիֆայություն, ճակատամարտ*

Բնական է, որ հայագիտությունը միշտ մեծ հետաքրքրություն է ցուցաբերել հայ ազատագրական շարժումների նկատմամբ, որոնցից է Մամիկոնյան իշխանների գլխավորությամբ 774-775 թթ. համաժողովրդական ապստամբությունը: Ինչպես իրավացիորեն նշում են հետազոտողները¹, այս երևույթն իրավամբ դիտվում է իբրև Հայաստանում օտար լծի դեմ երկրորդ հուժկու ընդվզումը՝ 450-451 թթ. ապստամբությունից հետո: Սկսած IV դարի առաջին քառորդից, երբ Հայոց թագավոր Տրդատ Գ-ն (298-330) ապստամբ Սյլկունի նախարարական տոհմին հնազանդեցրած Մամիկոնյաններին որպես փոխհատուցում շնորհեց մեծ տիրույթներ², նրանք առաջատար դիրքեր գրավեցին Հայաստանի քաղաքական ասպարեզում: Մինչև 775 թ. ապրիլյան ճակատամարտերը, երբ զոհվեցին այդ տոհմի նշանավոր գործիչներից շատերը, Հայաստանի քաղաքական կյանքում չի եղել քիչ թե շատ նշանավոր մի իրադարձություն, որին այդ տոհմն իր ներդրումը ունեցած չլինի հայրենիքի պաշտպանության գործին: Այդպես եղավ նաև VIII դարի երկրորդ կեսին ծավալված համաժողովրդական ապստամբության ժամանակ:

VIII դարի կեսերին Արաբական խալիֆայությունը հասել էր հզորության գագաթնակետին: 750 թ. խալիֆայության դինաստիան փոփոխվեց: Երկա-

¹ Տե՛ս **Ալիշան Ղ.**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 525, **Մելիք-Բախշյան Ս.**, Հայաստանը VII-IX դարերում, Երևան, 1968, **Գրիգորյան Գ.**, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը IX-X դարերում, Երևան, 1983, էջ 45:

² Տե՛ս **Սովսեա Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբելեանի եւ Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 227-229: Ականավոր հայագետ Ն. Արոնցը, հավատ չընծայելով Պատմահոր տեղեկությանը Տարոնում Մամիկոնյանների հաստատվելու ժամանակի վերաբերյալ, գտնում է, որ գավառը Մամիկոնյանները ձեռք են բերել Տրդատի որդու՝ Խոսրովի օրոք: Տե՛ս **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 345: Նա այս տեսակետին է հանգել այն պատճառով, որ Սանեսանին հաղթելու համար Խոսրով Կոտակը Վաչե Մամիկոնյանին պարզևատրել է հողատարածքներով (տե՛ս Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, բնագիրը Բ. Պատկանյանի, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 32), սակայն այստեղ Տարոնը չի հիշատակվում. նրանք դա ստացել են ավելի վաղ:

րատն գահակալական կոիվներից հետո Օմանյան վերջին խալիֆ Մրվանը գահընկեց արվեց Աբբասյան դինաստիայի ներկայացուցիչ, համամահմեդական պետության հիմնադիր Աբու Աբասի (750-754) կողմից¹: Այս գործընթացը ավելի ծանրացրեց հպատակ ժողովուրդների, մասնավորապես հայ ժողովրդի վիճակը, թեպետ Աբբասյանները խոստանում էին իշխանությանը տիրանալու դեպքում թեթևացնել քրիստոնյաների հարկերը²: Արմինիայի փոխարքա նշանակված Աբու Ջաֆարն իրեն վստահված գորամասերով նախ ավերածություններ է սկսում համայն երկրում, կողոպտում ժողովրդին, ավելացնում հարկերի չափը, ապա պահանջում անցյալ տարիների չմուծված հարկերը³: Արաբները այս նոր քաղաքականությամբ փորձում էին վերացնել Օմանյանների ժամանակ հայ նախարարներին տրված արտոնությունները: Խալիֆի հրամանով հայկական հեծելազորի աշխատավարձը պետք է վճարեին հայ նախարարները, այլ ոչ թե խալիֆայությունը, ինչպես սահմանված էր նախորդների օրոք⁴:

Ստեղծված իրավիճակում հայ ժողովուրդը միակ ելքը համարում էր ապստամբությունը: Հուսահատությունից ապստամբները նույնիսկ հաշվի չառան այն հանգամանքը, որ Արաբական խալիֆությունը հզորացման գագաթնակետին էր հասել, ուստի ամենևին նպատակահարմար չէր նման հանդուգն շարժման ձեռնարկումը⁵: Սակայն նախարարները, այլ ելք չգտնելով, ապստամբության դրոշ պարզեցին, ինչը, հետագայում վերաճելով, ընդունեց համազգային բնույթ: Այդ մասին Ղևոնդը նշում է. «Յայսմ վայրի ճառեցից զվայրենամիտ ազգին Իսմայելի զխստասիրտ դառնութիւնն ի գլուխ ելեալ. քանզի իբրև տեսին նախարարք Հայոց զվտանգ տարակուսանացն հասեալ ի վերայ ինքեանց՝ եղին զոգի ի ձեռին իւրեանց և ձեռնամուխ եղեն յիրս, զոր ոչ կարէին վրճարել, վասն զի նուազունք էին: Այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ, քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս ապստամբութեան, և ի բաց կացին ի հնազանդութենէն Իսմայելի»⁶:

Ըստ պատմիչի վկայության՝ չհանդուրժելով հարկային ծանր բեռը՝ բնակչությունը հեռանում էր հայրենիքից: Տրդատ Վանանդեցի կաթողիկոսը և հայոց իշխան Սահակ Բագրատունին դիմեցին Արմինիայի ոստիկանին՝ հարկային չարաշահումները թեթևացնելու համար, սակայն Հասան ոստի-

¹ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 11, «Արաբական աղբյուրներ», Բ, Իբն ալ Ասիր, թագմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 92-93, **Hitti P.**, History of Arabs, London, 1946, p. 289:

² Տե՛ս **Петрушевский И.**, Ислам в Иране, Л., 1966, с. 97:

³ Տե՛ս Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց (այսուհետև՝ **Ղևոնդ**), Ս. Պետերբուրգ, 1887, էջ 127:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 128-129:

⁵ Տե՛ս **Тер-Гевондян А.**, Армения и Арабский халифат, Ереван, 1977, с. 105, Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 338:

⁶ **Ղևոնդ**, էջ 137-138:

կանը (771-775) ավելի խստացրեց հարկային քաղաքականությունը՝ օգնության կանչելով արաբական զորամիավորումները¹:

Կարծում ենք, որ արաբներն իրենց քայլերով նպաստում էին Հայաստանում խժոժությունների հրահրմանը՝ նպատակ ունենալով երկրի քաղաքական կյանքից հեռացնել իրենց հետ հաշվի չնստող և իրենց շահերը չսպասարկող նախարարական տներին և Հայաստանում իշխանության բերել իրենց հլու հնազանդ կամակատարներին: Սակայն շաժումը անսպասելիորեն դարձավ համաժողովրդական²:

VIII դարի երկրորդ կեսի այս համազգային ապստամբության ղեկավար դերը, ինչպես նախորդ դեպքերում, այս անգամ ևս ստանձնեցին Մամիկոնյանները, որոնք ի հակադրություն հարմարվողական տրամադրություններ ունեցող և ամեն գնով արաբների հետ լեզու գտնելու ջանքեր գործադրող Բագրատունիների, չէին կարող տանել նրանց այդչափ և օրեցօրե ահագնացող վայրագությունները:

774 թ. Հմայակ Մամիկոնյանի որդի Արտավազդ Մամիկոնյանը, իրեն ձևացնելով արաբներին նվիրված, նրանց թշնամիների դեմ պատերազմելու պատրվակով Դվինի արաբական զորակայանից ստանում է սպառազինություն՝ իր զորաջոկատը զինելու համար³: Դրանից հետո Մամիկոնյան իշխանը գնում է Շիրակի Կումայրի գյուղը, որտեղ դառնում է արաբ հարկահանների վայրագությունների ականատեսը: Չհանդուրժելով վերջիններիս կամայականությունները՝ նա հրամայում է սրի քաշել արաբ հարկահաններին և նրանց հրամանատարին: Ջգալով, որ ինքը միայնակ չի կարող հաղթել Հայաստանում գտնվող արաբական զորամիավորումներին՝ Արտավազդ Մամիկոնյանը հուսահատությունից դրդված, վերցնելով իր ընտանիքը և

¹ **Ղևոնդ**, էջ 137-138, **Տեր-Ղևոնդյան Ա.**, Արմինիայի ոստիկանների ժամանակագրությունը, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 389:

² Վերջերս, վաղ միջնադարյան Հայաստանի պատմությունն իր «հայտնագործություններով» լրացնող Համլետ Դավթյանը իր «Հայոց պատմական հնարավորությունները VI-VIII դարերում» (Երևան, 2010) աշխատությունում, կոծկելով պատմական փաստերը, ինչպես նաև զանց առնելով անաչառ քննությունը, համաժողովրդական այս շարժումը որակում է իբր Բյուզանդիայի կողմից՝ արաբական հարձակումները Կ. Պոլսի վրա թուլացնելու նպատակով հրահրված և պնդում այն անհիմն տեսակետը, թե իբր Մամիկոնյանները, խրախուսված բյուզանդական կայսրի կողմից, ձգտում էին ասպարեզից հեռացնել Բագրատունիների հզորացող տոհմը և կրկին գերիշխող դիրք գրավել Հայաստանում: Շարունակելով Հ. Դավթյանը նշում է. «Նրանց (Մամիկոնյաններին – Ա. Վ.) չէր հետաքրքրում, թե իրենց հավակնությունների պատճառով ինչ աղետներ կարող է թափվել երկրի գլխին»: Տե՛ս **Դավթյան Հ.**, նշվ. աշխ., էջ 214, *նույնի՛*՝ Մամիկոնյաններ. առասպել և իրականություն, Երևան, 2015, էջ 251: Ի դեպ, վերը նշվածները Հ. Դավթյանի հեղինակությամբ առաջին աշխատանքները չեն, որտեղ նա փորձում է նսեմացնել Մամիկոնյան տոհմի դերը հայոց պատմության մեջ:

³ Տե՛ս **Ղևոնդ**, էջ 138:

կողմնակից նախարարներին, հեռանում է բյուզանդական իշխանության ներքո գտնվող Մամցխե¹:

Իմանալով կատարվածի մասին՝ արաբ ոստիկանը պատժիչ զորաջուկատ է ուղարկում՝ հայ զորականներին հետապնդելու: Արաբներին հաճությանալու համար մի քանի արաբամետ նախարարների հետ հետապնդողներին է միանում նաև սպարապետ Սմբատ Բագրատունին², ակնկալելով արաբների հաղթանակի դեպքում արժանանալ նրանց բարեհաճ վերաբերմունքին: Արաբա-հայկական զորաջուկատը հասնում է ապստամբներին Մամցխե գավառում (ներկայիս՝ Ախալցխա) և կովի բռնվում մի կիրճում: Արաբներին հաջողվում է վերադարձնել ավարի մի մասը միայն, իսկ ապստամբության ղեկավարներին հաջողվում է անվնաս հեռանալ:

Հետագայում բյուզանդացիները Արտավազդ Մամիկոնյանին ընդունում են մեծ պատվով և նշանակում Անատոլիկոն թեմի կառավարիչ, ինչպես նաև զորքերի հրամանատար: 778 թ. նա իր հայրենակիցներ Տաճատ Անձևացու, Վարազտիոցի (որը, կարծում ենք, Բագրատունյաց տոհմից էր) և Գրիգորիսի հետ Կոմագենի Գերմանիկա քաղաքի մոտ ջախջախում է արաբական զորաբանակը³: Հայ զորականների այս հաջողությունից հետո արաբ ոստիկանն ավելի է սաստկացնում հարկային քաղաքականությունը, ինչը նոր դժգոհությունների առիթ է տալիս:

Առաջին քայլն արված էր Արտավազդ Մամիկոնյանի կողմից, և երկրով մեկ սկսվում է հակաարաբական շարժման մի նոր հուժկու ալիք: Ապստամբությունը գլխավորում էր Հրահատ Մամիկոնյանի որդի Մուշեղը, որն այժի էր ընկնում իր տոհմին բնորոշ քաջությամբ, խիզախությամբ և նախարարների շրջանում վայելում էր մեծ հեղինակություն:

Նախ նշենք, որ Մուշեղ Մամիկոնյանի ելույթին ինչ-որ չափով նպաստեցին նաև արաբները, որոնք, չկարողանալով վրեժ լուծել Արտավազդ Մամիկոնյանից, ոստիկանի հրամանով ժամանեցին Մուշեղ Մամիկոնյանի տոհմական կավվածքը՝ պահանջելով, որ վերջինս հատուցի Արտավազդ Մամիկոնյանի կողմից սպանված արաբների արյան գինը⁴: Արաբների այս քայլը հիմք է տալիս ենթադրելու, որ Արտավազդ և Մուշեղ Մամիկոնյանները ոչ թե հեռավոր ազգականներ էին, այլ մերձավոր հարազատներ: Չհանդուրժելով արաբների նման քայլը՝ Մամիկոնյան իշխանը հրամայում է սրի

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 138-139:

² Սմբատ Բագրատունին նախկինում՝ 732-748 թթ., հայոց իշխանի պաշտոնը զբաղեցրած Աշոտ Բագրատունու որդին էր, որը մեղադրվեց դասալքության համար և կուրացվեց Գրիգոր Մամիկոնյանի հրամանով (տե՛ս նույն տեղում, էջ 123-124):

³ Տե՛ս նույն տեղում, էջ 155, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 13, «Բյուզանդական աղբյուրներ», Դ, Թեոփանես Խոստովանոզ, Թարգմանություն բնագրից. առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 162-163, **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 555:

⁴ Տե՛ս **Ղևոնդ**, էջ 139:

քաշել նրանց: Վերցնելով իր ընտանիքը և կողմնակիցներին ևս՝ նա Տարոնից հեռանում է և բնակություն հաստատում Արշարունյանց գավառի Արտագերս անառիկ ամրոցում՝ դրանով մարտահրավեր նետելով Դվինում և Կարինում գտնվող արաբական զորամիավորումներին: Արտագերս անառիկ ամրոցը զորակայան դարձնելը ուներ նաև ռազմավարական կարևոր նշանակություն, քանի որ այն գտնվում էր Հայաստանի կենտրոնական մասում, և ապստամբների այստեղ ապաստանելը հույս կներշնչեր տատանվող նախարարներին ու ռամիկ ժողովրդին, որ նրանք վճռական են տրամադրված, ինչը հետագայում կնպաստեր նրանց շարքերի համալրմանը:

Կարծելով, որ սա հերթական ընդվզում է, ոստիկանի հրամանով 200 հոգուց բաղկացած արաբական զորաջոկատը շարժվեց ապստամբներին ընդառաջ, սակայն Խարս գյուղի այգիներում հայ զորականները կարողացան գիշերային հարձակումով ներխուժել թշնամու ճամբար և լիակատար հաղթանակ տանել²: Նույնը կրկնվում է նաև Բագրևանդում: Համոզվելով, որ փոքրաթիվ ուժերով արաբները չեն կարողանալու հաղթել, արաբ զորապետ Ապունճիպը Հասան ոստիկանի հրամանով ոտքի է հանում Դվինի ամրոց կայազորն ու արաբական մյուս զորամիավորումները, որոնց թիվը անցնում էր 4000-ից, և շարժվում Մուշեղ Մամիկոնյանին ընդառաջ: Երկու կողմերը միմյանց հանդիպեցին Բագրևանդ գավառի Բագավան գյուղում³: Օգտվելով թվական գերակշռությունից՝ արաբները փորձեցին արագորեն վճռել մարտի ելքը, սակայն Մամիկոնյան իշխանին օգնության եկան նոր զորամիավորումներ, և արաբները դիմեցին փախուստի: Լինելով հեռատես ռազմական գործիչ՝ Մուշեղ Մամիկոնյանը, օգտվելով այդ հաղթանակից, թույլ չտվեց, որ արաբները ուշքի գան: Հետապնդելով հակառակորդի մնացորդներին՝ հայերը նրանց հասան Կոզովիտ գավառի Արուճ ավանում, և ինչպես Ղևոնդն է նշում, «...զբազումս ճոռքաղ առնէին, մինչև գնոյն ինքն զգորագլուխն հարեալ սատակէին: Եւ մեծաւ յաղթութեամբ դարձեալ ի հետոց նոցա՝ լնուին բազում աւարաւ յաւարէ թշնամեացն»⁴:

Ինչպես իրավամբ նկատել է Ս. Մելիք-Բախշյանը, «Բագրևանդի ու Արուճի ճակատամարտերը ապստամբների շարքերը խտացնելու և ազատագրական պայքարի մասնակիցների մարտական տրամադրությունները բարձրացնելու տեսակետից հսկայական նշանակություն ունեցան»⁵:

¹ Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 524: Արտագերս ամրոցը գտնվում է Կաղզվան գյուղաքաղաքից հյուսիս-արևելք, Արաքսի ձախ ափին, Ախուրյանի գետաբերանից արևմուտք. տե՛ս **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, 1986, էջ 489:

² Տե՛ս **Ղևոնդ**, էջ 139:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 140:

⁴ Նույն տեղում, էջ 140-141:

⁵ **Մելիք-Բախշյան Ս.**, նշվ. աշխ., էջ 325:

Մուշեղ Մամիկոնյանի հաղթանակները մեծ ոգևորություն առաջացրին ամբողջ երկրում, և քանի որ 774 թ. ավարտին և 775 թ. սկզբին ապստամբներն արդեն իրենցից լուրջ ուժ էին ներկայացնում, ամբողջ Արմինիա վարչական շրջանում գտնվող արաբական կայագորներն ի վիճակի չէին առանց դրսի օգնության վերականգնելու արաբների գերիշխանությունը Հայաստանում: Հայերի հաղթանակների արձագանքները այնքան մեծ էին, որ դրանց անդրադարձել են արաբ հեղինակները: Ըստ Բալագուրիի՝ «Հայաստանի ժողովուրդն ապստամբեց Հասան իբն-Կահթաբա ալ-Թաիի կառավարչության շրջանում: Նրանց պետն էր հայազգի Մուշեղը (Մուշայիլ ալ-Արմանի)»¹:

Ապստամբներին իրենց զորակցությունը հայտնեց հայ նախարարների մեծամասնությունը: Հարկային և այլ բնույթի կեղեքումները ոտքի էին հանել նաև Հարավային Հայաստանի նախարարներին և նրանց ենթակա ռամիկներին²: Այստեղ ապստամբությունը գլխավորում էին Համագասպ և Սահակ Արծրունիները: Ըստ Ղևոնդ պատմիչի՝ Արծրունիներին միացան նաև Վասակը՝ Աշոտի որդին, որը Բագրատունյան տոհմից էր, ինչպես նաև Ամատունյաց և Տրունյաց նախարարները³: Ցավոք ապստամբներին մի շարք պատճառներով չհաջողվեց միավորվել և ստեղծել մի ընդհանուր զորաբանակ: Ապստամբական գլխավոր ուժերը Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարությամբ գործում էին միայն Այրարատում և շրջակա գավառներում: Նշված նախարարները գործում էին Կոզովիտ գավառում և Մակուի շրջակայքում, իսկ Արծրունիները պարփակվեցին իրենց տոհմական կալվածքներում: Ինչպես իրավացիորեն նկատել է Բ. Հարությունյանը, «ապստամբների տարանջատվածությունն ի վերջո ապստամբությունը տարավ դեպի պարտություն»⁴: Ապստամբների տարանջատ գործելուն նպաստեցին նաև երկրի ներսում գործող հակաապստամբական ուժերը, մասնավորապես հայոց իշխան Աշոտ Բագրատունին, որն իր տոհմին հատուկ զգուշավորությամբ ապստամբներին խորհուրդ էր տալիս չոգևորվել քարոզիչների անխոհեմ կոչերով, քանի որ Արաբական խալիֆայությունն իր հզորացման գագաթնակետին էր հասել, և նրա ռազմական ուժի դեմ անգոր էր նույնիսկ հզոր Բյուզանդիան⁵: Ինչպես նշում է Ն. Ադոնցը, «Բագրատունի իշխանները անմաս էին մնացել երկրի պաշտպանության այդպիսի ճգնաժամին... երկդիմի դիրք

¹ Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», 16, «Արաբական աղբյուրներ», Գ, Արաբ մատենագիրներ, ԹԺ դարեր, ներածությունը և բնագրերից թարգմանությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 281:

² Վարդանյան Վ., Հայաստանի ավատատիրական համակարգը // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ «ԼՀԳ»), 2016, թիվ 1, էջ 48:

³ Տե՛ս Ղևոնդ, էջ 144:

⁴ Հարությունյան Բ., Արծրունիների իշխանական ընտանիքը հայոց պատմության մեջ, Երևան, 2016, էջ 120:

⁵ Տե՛ս Ղևոնդ, էջ 142-145, Հայ ժողովրդի պատմություն, էջ 340:

էին բռնել ապստամբության հանդէպ»¹: Կարծում ենք՝ հայոց իշխանի այս քաղաքականության պատճառով էր, որ նախարարների մի մասն ընդհանրապէս չմիացավ ապստամբներին, իսկ մի քանիսը գործեցին ընդհանուր հրամանատարությունից անջատ: Սակայն ապստամբների գլխավոր զորակայանում խանդավառությունն այնքան մեծ էր, որ նրանք վճռեցին առանց Հարավային Հայաստանի զինուժի օգնության ռազմական գործողություններ սկսել և նախահարձակ լինել: Դրա համար կային նախադրյալներ, քանի որ վերջին պահին ժողովրդի ճնշման շնորհիվ իր հեծելազորով ապստամբներին էր միացել հայոց սպարապետ Սմբատ Բագրատունին, ինչպէս նաև ռամիկ ժողովրդի մի քանի հազար ներկայացուցիչներ²: 774 թ. աշնանը և ձմռան սկզբին, քանի որ ապստամբների դրոշի ներքո հավաքվում էին նորանոր ռազմական ուժեր, ապստամբությունը կարճ ժամանակ անց համաժողովրդական բնույթ ընդունեց³:

Ռազմական խորհուրդը որոշում է գրավել Կարինը՝ արաբա-բյուզանդական սահմանագլխի այդ խոշոր քաղաք ամրոցը, որի անկումը մեծ հարված կլինէր արաբների համար, իսկ ապստամբ նախարարները կարող էին կապ հաստատել բյուզանդական հրամանատարության հետ և ստանալ վերջիններիս օժանդակությունը: 774-775 թթ. ձմռանը հայկական ուժերը պաշարել էին Կարինը և անընդհատ զրոհում էին քաղաքը: Ղևոնդը այսպէս է նկարագրում քաղաքի պաշարումը. «... և համբարձեալ գնացին ի կողմանցն այնոցիկ պաշարել զքաղաքն Թէոդուպոլիս որ է Կարնոյ քաղաք: Եւ պաշարեին գնա պատնիշօք, և զամենայն ժամանակս ձմերայնոյն մարտ եղեալ կռուէին ընդ նմա, կանգնեալ զնովաւ մահարձան, և հատանէին վէտս ծակուց արտաքուստ ի քաղաքն. այլ ոչ ինչ կարացին ստնանել, բայց որչափ սակաւ ինչ ի քարէ մեքենայիցն, որովք սատակէին ի քաղաքէն»⁴:

Հայաստանում իր կորսված տիրապետությունը վերականգնելու համար արաբական խալիֆայությունը 775 թ. գարնանը 30 հազար հեծյալներից բաղկացած զորաբանակը ուղարկեց Հայաստան՝ Ամր իբն Իսմայիլ զորավարի հրամանատարությամբ⁵: Արաբական բանակը, մտնելով Հայաստան, կանգ առավ Խլաթում՝ նպատակ ունենալով տեղեկություններ հավաքել ապստամբների թվաքանակի և առաջիկա գործողությունների վերաբերյալ: Խլաթում արաբ զորավարին ներկայացավ նաև հայոց իշխան Աշոտ Բագրատունին: Ղևոնդ պատմիչը, որ անթաքույց համակրանք ունի Բագրատունիների

¹ Ադոնց Ն., Երկեր, Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ, հ. Բ, Երևան, 2006, էջ 344:

² Տե՛ս Ղևոնդ, էջ 142:

³ Տե՛ս Մելիքսեթ-Բեկ Լ., Չորրորդ Հայքի 774-775 թթ. գյուղացիական ապստամբության պատմության շուրջը // ՀՄՄՀ ԳԱ «Տեղեկագիր», 1948, թիվ 2, էջ 50:

⁴ Ղևոնդ, էջ 142:

⁵ Տե՛ս Բալազուրի, Книга завоевания стран, текст и перевод, П. Жузе, Баку, 1927, с. 20:

նկատմամբ, նշում է, որ հայոց իշխանն ապստամբներին հորդորեց զգուշանալ հակառակորդից և գործել միասնական ուժերով¹: Ինչպես նկատել է Ն. Ադոնցը, Ղևոնդը «... մարգարեական աչք է տալիս Բագրատունի իշխանի իրապես տարտամ և երերուն խոհեմությանը»²: Կարծում ենք, որ Աշոտ Բագրատունին վերը նշված քայլով ցանկանում էր երկու խնդիր լուծել: Արաբ զորավարին ներկայանալով և հակառակորդի հաղթանակի պարագայում նա ապագայում պահպանելու էր իր պաշտոնը և, ինչու չէ, հավելյալ կալվածքներ էր ստանալու՝ ի հաշիվ մահու և կենաց կովի դուրս եկած նախարարների: Ինչպես իրավացիորեն նկատել է նշանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը, «մրցակից ու հավակնոտ նախարարական հին տոհմերին Բագրատունիները ոչնչացնում էին (արաբների օգնությամբ – Մ. Վ.) առաջ քաշելով նրանց տեղը իրենց ընդառաջող նոր ազնվականություն»³: Երկրորդ՝ նախարարներին զգուշացնելով՝ Աշոտ Բագրատունին փորձում էր հետին թվով ի չիք դարձնել այն կասկածները, որոնք նրա նկատմամբ առաջացել էին ապստամբության ընթացքում: Ուստի, այդ իսկ պատճառով, Հարավային Հայաստանում ապստամբությունը գլխավորող Համազասպ Արծրունին, ըմբռնելով հայոց իշխանի երկդիմի խաղը, շրջանցեց նրա զգուշացումը:

Արաբ զորավարը, իր գործակալներից տեղեկացված լինելով ապստամբների շրջանում տիրող իրավիճակին, ամեն ինչ արեց, որպեսզի նրանց հանդիպի անջատ-անջատ: Փորձելով տիրանալ Արճեշ քաղաքին՝ Համազասպ Արծրունու գլխավորած զորաբանակը շարժվեց արաբներին ընդառաջ՝ չսպասելով բոլոր ուժերի կենտրոնացմանը: Արծրունիների գլխավորությամբ տեղի ունեցած դեպքերը բազմիցս լուսաբանվել են հատկապես վերջին տասնամյակներին, ուստի այդ խնդրին չենք անդրադառնա⁴: Նշենք միայն, որ ապստամբները թույլ տվեցին ռազմավարական սխալ, առանց հետախուզման մարտի նետվեցին թշնամուն ընդառաջ այն դեպքում, երբ արաբներն իրենց ուժերի մի մասը թաքցրել էին քաղաքի շրջակայքում:

775 թ. ապրիլի 15-ին գրոհելով Արճեշը՝ հայկական ուժերը ի սկզբանե ընկան անելանելի վիճակի մեջ, քանի որ փաստորեն հայտնվելով Ամր իբն Իսմայիլի և քաղաքում գտնվող զորքերի միջև՝ հարձակման ենթարկվեցին մի քանի կողմից⁵: Ճակատամարտն ավարտվեց հայերի պարտությամբ, և ինչպես պատմիչն է նշում, «... կոտորեցին զմեծ մասն հետևակ զորուն որ

¹ Տե՛ս Ղևոնդ, էջ 145-146:

² Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 344:

³ Հովհաննիսյան Աշ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 104:

⁴ Տե՛ս Վարդանյան Վ., Արծրունիները հայոց պատմության մեջ, Երևան, 2002, էջ 60-65, Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 119-125:

⁵ Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 332-333:

յաշխարհաբնակ մարդկանէն էին. քանզի էին մերկք և առանց զինուց և անհմուտք պատերազմի»¹: Ճակատամարտում զոհվեցին չորս նախարար և 1500 մարտիկ: Արաբ զորավարը, օգտվելով Արճեշի հաղթանակից, շարունակում է արշավանքը ու հասնում Բագրևանդ՝ նպատակ ունենալով օգնության հասնել Կարինում պաշարված արաբական կայազորին: Արաբները, որոնք արդեն սովի սպառնալիքի տակ պատրաստվում էին Կարինը հանձնել հայերի ապստամբական գլխավոր բանակի ողորմաձությանը, որն ամբողջ ձմեռ պաշարել էր քաղաքը, լսելով Արճեշի ճակատամարտի լուրը, հրաժարվեցին բացել դարպասները: Մուշեղ Մամիկոնյանի գլխավորած բանակը, որի թիվը հասնում էր հինգ հազարի, թողնելով Կարինի պաշարումը, առաջ շարժվեց՝ թշնամուն հակահարված տալու: Մամիկոնյան իշխանը և իր զինակիցները, ինչպես նշում է Լեոն, «կարող էին իրենց անձի ազատության մասին մտածել, բռնելով մի որևէ ուղղություն, որ հեռացներ նրանց արաբներից կամ հենց տաներ Բյուզանդիա, ուր ամենքն էլ լավ պաշտպանված կլինեին»², սակայն հայ ռազմիկներն ընտրեցին երկրորդ ճանապարհը և որոշեցին ճակատամարտ տալ իրենց հինգ-վեց անգամ գերազանցող թշնամուն: Դա տեղի ունեցավ 775 թ. ապրիլի 24-ին Բագրևանդի Արձն գյուղի մոտակայքում: Ճակատամարտի սկիզբը բարենպաստ էր հայերի համար, սակայն արաբները, օգտագործելով իրենց թվային գերակշռությունը, ընդհանուր հարձակման անցան, ինչը և վճռեց մարտի ելքը: Տեսնելով ճակատամարտի անբարենպաստ ավարտը՝ հայ զորականները, պատմիչի խոսքով, մեկը մյուսին քաջալերում էին. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց զսրբարանս մեր և զտեղի փառատրութեան Աստուծոյ մերոյ. այլ նախ՝ ընդդէմ մեր լիցի սուր թշնամեացն. և ապա լիցի զոր կամիցին. փոխանակեցին անձինք մեր ընդ ճշմարտութեան հաւատոյս և մի ընդ երկրաւոր զբաղմանս. զի մահ՝ ժամանակեան և կեանքն՝ յաւիտենական»³: Ի վերջոյ այն ավարտվեց հայերի պարտությամբ: Հայոց զորաբանակի կազմում ընդգրկված 5000 զինվորներից մարտի դաշտում նահատակվեցին մոտավորապես 3000-ը: Հերոսաբար ընկան նաև զորավար Մուշեղ Մամիկոնյանը, Սամվել Մամիկոնյանը, Վահան Գնունին, Սմբատ և Սահակ Բագրատունիները⁴:

Համաժողովրդական ապստամբությունը պարտվեց մի քանի պատճառներով: Դրանցից առաջինն ավատատիրական տարանջատվածությունն էր: Ինչպես տեսանք, Հարավային Հայաստանի նախարարները չմիացան, թե

¹ Ղևոնդ, էջ 147:

² Լեոն, Հայոց պատմություն // Լեոն, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1967, էջ 393:

³ Ղևոնդ, էջ 149:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 150-151: Մուշեղ Մամիկոնյանի մահը հիշատակում են նաև արաբ հեղինակները. տե՛ս **Балазурн**, նշվ. աշխ., էջ 20:

չկարողացան միանալ Մամիկոնյանների գորաբանակին և գործունեություն ծավալեցին իրենց տիրույթների սահմաններում, ինչը դարձավ նրանց պարտության պատճառներից մեկը: Ինչպես նշում է Բ. Հարությունյանը, «ինչ-որ հրաշքով Արձնում հայտնվեցին Գնունյաց գորամասերը և մասնակցեցին ճակատամարտին: Միայն թե պարզ չէ, թե նրանք գտնվում էին Կարինը պաշարողների շարքում, թե այնուամենայնիվ, նրանց հաջողվեց Ադիովտից հասնել Բագրևանդի Արձն գյուղ»¹: Երկրորդը հայոց իշխան Աշոտ Բագրատունու վարած երկդիմի քաղաքականությունն էր, ինչին անդրադարձանք, սակայն նշենք, որ որոշ նախարարներ, ենթարկվելով նրա ազդեցությանը, չեզոք դիրք գրավեցին ապստամբության նկատմամբ՝ ապագայում արարների հետ հաշտվելու մտադրությամբ: Հետագայում ուսումնասիրողների մի մեծ խումբ Աշոտ Բագրատունու տատանվողական քաղաքականությունը, վերջին պահին հաղթողի կողքին կանգնելը, անկախ այն հանգամանքից՝ կհաղթեին արարները, թե հայերը, համարում են շրջահայացություն: Կարծում ենք, որ դա թյուր տեսակետ է: Ինչպես նախորդ ապստամբությունների ժամանակ, Բագրատունիները այժմ ևս այն համարեցին իրենց շահերին չհամընկնող, և ինչպես նշում է Աշ. Հովհաննիսյանը, «մեծապես վարձահատույց եղան Մամիկոնյան կալվածատիրության հաշվին, նախադրյալներ ստեղծելով իրեց հետագա վերելքի համար»²: Ապստամբության պարտության մյուս պատճառը, ինչպես իրավացիորեն նշում է Ս. Մելիք-Բախշյանը, այն է, որ «արարները փաստորեն վեց անգամ գերազանցում էին հայերին: Նույնը պետք է ասել նաև գործերի սպառազինության և մարզվածության աստիճանի մասին»³:

Ապստամբությունը մի շարք բացթողումներ ուներ նաև դիվանագիտական ասպարեզում: Մենք տեղեկություն չունենք, թե արդյոք Կարինի պաշարման ժամանակ Մուշեղ Մամիկոնյանին հաջողվել է կապ հաստատել բյուզանդացիների հետ, դիմել մյուս հարևանների օգնությանը: Այսպիսի տեղեկություններ պատմիչները չեն հաղորդում:

Համաժողովրդական ապստամբությունը թեև պարտվեց մի շարք պատճառներով, սակայն այն հայկական պետականության կորստից հետո, ինչպես վերը նշել ենք, երկրորդ զանգվածային ապստամբությունն էր, որը միաժամանակ ցնցեց խալիֆայության դիրքերն Արմինիա վարչական շրջանում և հետագայում հիմքեր ստեղծեց հայկական անկախ պետականության վերականգնման համար: Բագրևանդի ճակատամարտը նաև արմատական փոփոխությունների սկիզբ դրեց Հայաստանի քաղաքական կյանքում: 774-775 թթ. ապստամբությունից հետո մի շարք նախարարական տներ խիստ թուլացան, իսկ Մամիկոնյան նախարարական տան անդամների մի մասը հեռա-

¹ Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 121:

² Հովհաննիսյան Աշ., նշվ. աշխ., էջ 104:

³ Մելիք-Բախշյան Ս., նշվ. աշխ., էջ 339:

ցավ հայրենիքից՝ գաղթելով Բյուզանդիա կամ Վրաստան¹: Մակայն նրանց մի մասը մնաց հայրենիքում, ինչը դարձավ նրանց կործանման պատճառը: Ապստամբության ճնշումից հետո, երբ արաբները վերագրավեցին ամբողջ Հայաստանը, նրանք խաբեությամբ իրենց մոտ հրավիրեցին հայ նախարարներին: Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիները, գիտենալով, իրենց ինչ է սպասվում ոստիկանին ներկայանալուց հետո, ճակատագրական սխալ թույլ տվեցին: Նրանք չփորձեցին ապավինել Տայքի՝ թեկուզ այլևս իրենց չպատկանող և Բագրատունիներին անցած անառիկ ամրություններում², այլ Համագասպ և Սահակ Արծրունիների կամքով ապաստանեցին Վասպուրականում՝ այն համարելով ապստամբության կենտրոններից մեկը³, բնականաբար, իրենց ապահով զգալով համախոհների շրջապատում:

Դվին ներկայացած նախարարներին արաբները ենթարկեցին աներևակայելի տանջանքների: Ապստամբության մասնակից նախարարների մեծ մասը նախընտրեց մահը, հավատտուրացությունից⁴, սակայն եղան նաև այնպիսիք, որոնք, ընդունելով մուսուլմանություն, պետք է կատարեին արաբների հանձնարարությունները, մասնավորապես ոստիկանի կարգադրությունները և այդ ճանապարհով վստահություն ձեռք բերեին⁵: Այդպիսի վիճակում հայտնվեց Մերուժան Արծրունին: Նա, IV դարի իր նախորդի նման միջոցների առջև կանգ չառնելով, իր նվիրվածությունն արաբներին ցույց տալու և ապստամբության ամբողջ մեղքը Մամիկոնյանների վրա բարդելու համար սպանել տվեց զորավար Մուշեղ Մամիկոնյանի երկու որդիներին, որոնցից մեկի անունը Շապուհ էր: Մամիկոնյան իշխաններն իրենց անձի ապահովումը, ինչպես վերը նշեցինք, վստահել էին Հարավային Հայաստանի ապստամբության ղեկավար Համագասպ Արծրունուն, իսկ վերջինիս նահատակությունից հետո Մերուժանը կատարեց այդ քստմնելի եղեռնագործությունը⁶: Վարդան պատմիչը, փորձելով հետին թվով արդարացնել Մերուժան Արծրունու արարքը, նշում է. «... որպես թե ի պատճառս հորն նոցա եղև աղեան մեծ...»⁷, նկատի ունենալով Մուշեղ Մամիկոնյանի

¹ Տե՛ս **Ղևոնդ**, էջ 138-139, **Tomanaff C.**, The Mamikonids and the Liparitids, Armeniaca, Melanges d'Études arméniennes, Ile de Saint Lazare-Venise, 1969, p. 125-137, **Գրիգորյան Գ.**, նշվ. աշխ., էջ 50:

² Տե՛ս **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 123: Բագրատունիները, օգտվելով արաբների ընձեռնած հնարավորությունից, արդեն հափշտակել էին Մամիկոնյանների տոհմական կալվածքները Տայքում:

³ Տե՛ս **Վարդանյան Վ.**, նշվ. աշխ., էջ 64:

⁴ Տե՛ս **Ղևոնդ**, էջ 164-165:

⁵ **Հարությունյան Բ.**, նշվ. աշխ., էջ 123:

⁶ Մերուժան Արծրունու արարքն անհետևանք չմնաց: Դավիթ Մամիկոնյանը վրեժխնդիր եղավ իր տոհմակիցների համար՝ սպանելով հավատուրաց դավաճանին: Տե՛ս «Սուփերք Հայկական», ԺԲ, Վենետիկ, 1854, էջ 65-68:

⁷ «Հաւարքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ», Վենետիկ, 1862, էջ 76:

գլխավորությամբ տեղի ուեցած համաժողովրդական ապստամբությունը: Մամիկոնյան երկու իշխանագունների մահով, որը, կարծում ենք, տեղի է ունեցել 786 թ. հետո, քանզի մինչ այդ կենդանի էին Համագասպ և Սահակ Արծրունիները¹, և նրանց եղբայրը չէր կարող նման քայլի դիմել, Մամիկոնյանները Հայաստանում մի քանի հարյուրամյա բարեբեր գործունեությունից հետո արաբների և նրանց շահերը սպասարկող հայ նախարարների ձեռքով դուրս մղվեցին Հայաստանի քաղաքական կյանքից:

Այսպիսով, թեպետ 774-775 թթ. ապստամբությունը պարտություն կրեց, սակայն այն խարխիլեց արաբական տիրապետության հիմքերը Հայաստանում, և այդ համաժողովրդական շարժումն իրավամբ կարելի է համարել միջնադարյան Հայաստանի ազատագրական պայքարի ամենափառալուրդ վազներից մեկը:

Аргишти Варданян – Мамиконяны в период антиарабского общенародного восстания 774-775 гг.

В середине VIII в. Арабский халифат достиг вершины своего могущества. Династию Омейядов сменили Аббасиды. Это еще более усугубило тяжелое положение армянского народа: не только были увеличены налоги, но и требовались не выплаченные за прошлые годы. Не находя другого выхода из создавшегося положения, нахарары подняли флаг восстания, которое, в дальнейшем разрастаясь, приобрело общенародный характер. Руководство восстанием взяли на себя Мамиконяны, которые, в отличие от Багратидов, имеющих приспособленческие настроения, не могли терпеть растущие день ото дня варварства арабов. В 774 г. силы повстанцев под командованием Мушега Мамиконяна нанесли по арабам серьезные удары, одержав победу на нескольких фронтах. Зимой того же года армянские военные захватили находившийся на арабо-византийской границе город Карин и всю зиму удерживали его в осаде. Для того чтобы восстановить потерянную власть над Арменией, весной 775 г. арабское войско, состоящее из 30 тысяч конников, было отправлено в Армению для подавления восстания. Армия южной Армении под руководством Амазаспа Арцруни, не дождавшись централизации всех сил, двинулась навстречу врагу, однако 15 апреля 775 г. в результате неожиданной атаки противника потерпела поражение. Главная повстанческая армия под руководством Мушега Мамиконяна, прекратив осаду Карина, двинулась навстречу арабам, превосходившим ее в 5-6 раз. 24 апреля 775 г. во время битвы у села Ардзн Багревада общенародная армия сражалась с исключительной храбростью, однако арабы, использовав свое численное превосходство, одержали победу. Несмотря на поражение, это общенародное восстание было вторым массовым восстанием, поколебавшим позиции халифата в административном районе Арминия, и заложило основу для восстановления в дальнейшем армянской независимой государственности.

¹ Համագասպ և Սահակ Արծրունիների նահատակման թվականի վերաբերյալ տե՛ս Ադոնց Ն., Պատմական ուսումնասիրություններ, Փարիզ, 1948, էջ 69, 99, Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 63: Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 123-124:

Argishti Vardanyan – *The Mamikonians During Anti Arab National Uprising of 774-775 Years*

By the middle of the VIII century the Arab caliphate had reached the height of its power. The overthrow of the Umayyad dynasty and the usurpation of the Abbasids made the matters worse for the Armenians. According to the new tax policy introduced by the Abbasids the Armenians were forced to pay not only the increased taxes, but also the taxes levied for the previous years, thus greatly increasing the fiscal burden on the people. Under such circumstances, the “naxarars” had no choice but to resort to a rebellion which, in a short while, developed into full-scale nation-wide war of liberation. The uprising was led by the Mamikonians who, unlike the conformist Bagratides, could not tolerate the escalating Arab savageness and cruelty. In the year of 774, the rebels headed by Mushegh Mamikonyan struck serious blows on the Arabs winning victories in some battles. In the winter of the same year Armenian troops occupied the town of Karin, which was on the Arab-Byzantine border and held it under siege all winter. In the following year (775) the Arabs sent out a cavalry of 30000 horsemen to Armenia to suppress the rebellion and regain control of the lost territory. In the southern part of Armenia the army, headed by Hamazasp Artsruni, moved on toward the enemy without waiting for the rest of the rebelling forces. However, on April 15, 775 they were unexpectedly besieged and defeated by the Arabs. In the meantime, the main rebelling army, headed by Mushegh Mamikonyan, abandoned the siege of Karin town, and hastened back towards the enemy, who outnumbered Armenians 5-6 times. Although Armenians fought with extraordinary courage near the village of Artsni in the district of Bagrevand, on April 24, 775 the Arabs defeated them taking advantage of their superior forces. Although the nationwide great revolt was brutally suppressed, it shook the caliphate’s position in the administrative district of Armenia and paved the way to the future reestablishment of a free and independent Armenian state.

**ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՅԸ ՏՐԱՊԻԶՈՆԻ
ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ (1918 Թ. ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ)**

Բանալի բառեր – Թուրքիայի պատվիրակություն, Անդրկովկասի խաղաղարար պատվիրակություն, Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիր, տարածքային զիջումներ, թուրքական վերջնագիր, թուրք-անդրկովկասյան պատերազմ

Մեր նախորդ հոդվածում¹ ներկայացրել էինք Տրապիզոնի հաշտության խորհրդածոդովում Հայկական հարցի վերաբերյալ քննարկումները: Այդ դիվանագիտական բանակցային գործընթացներում առանցքային տեղ էին գրավում նաև սահմանային խնդիրները:

Թուրքիայի տարածքային նոր զավթումները և դիվանագիտական աճող ճնշումը Տրապիզոնում գտնվող Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանը հարկադրեցին վերանայելու նաև սեյմի 1918 թ. փետրվարի 16-ի (մարտի 1) հաստատած 3-րդ հիմնադրույթը, որում ամրագրված էր՝ կնքվելիք հաշտության դաշնագրում պետք է դրվի ռուս-թուրքական պետական այն սահմանների վերահաստատումը, որոնք գոյություն ունեին մինչև Առաջին աշխարհամարտը²: Սակայն ստեղծված ծանր և աննպաստ պայմաններում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը դիվանագիտական փակուղուց դուրս գալու համար հարկադրված էր Թուրքիային տարածքային որոշ զիջումներ անել:

1918 թ. մարտի 19-ին (ապրիլի 1) Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նույն օրվա երկու ընդհանուր նիստերում քննարկվեց սեյմի 3-րդ հիմնադրույթը վերանայելու և Թուրքիային տարածքային զիջումներ անելու հարցը: Այստեղ բախվում էին երկրամասի երեք գլխավոր ազգությունների պատվիրակության անդամների շահերը. վրացիները չէին ուզում Թուրքիային զիջել Բաթումը, իսկ հայերը՝ Կարսը: Վրաց և թաթար պատվիրակության անդամները ընդհանուր նիստերում դնում էին ոչ թե տարածքների փոխզիջումների հարցը, այլ ընդամենը փորձում էին իրենց տարածքները պահպանելու հաշվին միակողմանիորեն թուրքերին զիջել հայկական հողե-

¹ Տե՛ս **Պետրոսյան Գ.**, 1918 թ. Տրապիզոնի հաշտության խորհրդածոդովը. Հայկական հարցի արձարձումները // «Հայագիտության հարցեր» (այսուհետև՝ «ՀՀ»), 2016, թիվ 3, էջ 46-67:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 43: Տե՛ս նաև *Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 84:*

րը: «Վրացիների համար,– գրում է Լեոն,– շատ պարզ էր խնդիրը, պետք էր տալ Կարսը և պահել Բաթումը: Թուրքերն էլ (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) միացան այդ առաջարկության: Բայց ի՞նչ անել Կարսի շրջանի 100 հազար հայությունը, ի՞նչպես պաշտպանել Յերևանի նահանգը և մանավանդ նրա հաղորդակցության միակ ճանապարհը, յերկաթուղին, վոր բավական յերկար տեղ քերում է Արփաչայի ափը և այսպիսով կրնկներ թյուրքերի վոչ թե թնդանոթային կամ հրացանային կրակի տակ, այլ ատրճանակների գնդակների տակ: Այս նկատառումները, վորոնց պաշտպանողը յես էյի խորհրդակցական ժողովներում, բերին այն եզրակացության, վոր, յեթե կարելի յե սակարկություններ անել, պետք է ընդունվի դրա համար այն սկզբունքը, վոր Թյուրքիային զիջվեն միայն թուրքաբնակ յերկրները: Բաթումը և Կարսը վորոշվում էր չզիջել»¹: Այդ առաջարկությունների հիման վրա սահմանային տեղագրություն կազմելու նպատակով Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ստեղծեց երեք անձից բաղկացած հանձնախումբ, որի մեջ մտան Հայկական հարցի գծով պատվիրակության խորհրդական Լեոն, վրացի պատմագետ Յ. Ինգորավան և կովկասյան ռազմաճակատի շտաբի մի ռուս սպա, որը լավատեղյակ էր սահմանների տեղագրությանը²: «Սկսեցինք աշխատել,– գրում է Լեոն:– Բայց առաջին իսկ քայլերից դժվարություններ հարուցանում էր վրացական տենդենցիան – որքան կարելի յե շատ բան տալ Կարսի շրջանից՝ Արդահանի և Բաթումի շրջաններում զիջողություն քիչ անելու համար: ... Բայց և այնպես, «իմ ու քո»-ի խիստ հարցեր էյին բարձրանում: Այսպե՞ս պիտի յերեք ազգերն ընդհանուր ույժերով յերկիրը պաշտպանելին: Յես չէյի ծածկում իմ զարմանքն ու դիմադրում էյի չափազանց անդեն մանր-մունր ազգայնական սակարկություններին: Այս մասին, ի հարկե, իմաց տրվեց Չխենկելիին, վոր ինձանից բացատրություն պահանջեց և ստացավ սպանիչ մանրամասնություններով»³:

Ինչպես վերը նշվեց, Թուրքիային տարածքային զիջումների հարցը դարձավ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության անդամների տարածայնությունների ու բուռն վիճաբանությունների թեման: Պատվիրակության նախագահ Ա. Չխենկելին, հիմք ընդունելով պատվիրակության ընդհանուր նիստերում հնչած կարծիքները, կազմեց Թուրքիային տարածքային զիջումների իր նախագիծը, որն էլ հրապարակեց մարտի 21-ի (ապրիլի 3) ընդհանուր նիստում: Ըստ Ա. Չխենկելու ներկայացրած նախագծի՝ Թուրքիային էր հանձնվելու Օլթիի ամբողջ գավառը, Արդահանի գավառի կեսից ավելին և Կարսի ու Կաղզվանի շրջանների զգալի մասը⁴: Նախագծին դեմ

¹ Լեոն, Անցյալից, Հուշեր, Թղթեր, Դատումներ. Հայոց հարց.- Հայ հեղափոխական դաշնակցություն. Համաշխարհային պատերազմ. - Հեղափոխություն, Թիֆլիս, 1925, էջ 386:

² Տե՛ս նույն տեղում:

³ Նույն տեղում, էջ 386-387:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:

արտահայտվեցին խաղաղարար պատվիրակության հայ անդամներ Հ. Քաջազունին և Ալ. Խատիսյանը: Վերջինս գրում է. «Մա մեր բողոքի պատճառն է դառնում: Երեկոյան կողմ կազմվում է վերջնական նախագիծը, ըստ որի 34 հազար վերստից հանձնվում է 8 հազարը: Մենք դժգոհ ենք մնում, որովհետև այն ամենը, ինչ տրվում է (Թուրքիային – Գ. Պ.), տրվում է մեր (հայերի – Գ. Պ.) հաշվին և ոչինչ՝ Բաթումի շրջանի հաշվին»¹:

Մարտի 23-ին (ապրիլի 5) Տրապիզոնի հաշտության խորհրդատու Վի 6-րդ նիստում Ա. Չխենկելին հրապարակեց Թուրքիային տարածքային զիջումների ծրագիրը, որն էլ ուղարկվեց Կոստանդնուպոլիս²: Մինչև այնտեղից պատասխան ստանալը հայտարարվեց ընդմիջում, սակայն շարունակվեցին թուրք-անդրկովկասյան պատվիրակությունների փոխայցելությունները և մասնավոր գրույցները վիճելի մի քանի հարցերի շուրջ: Այդ հանդիպումների ժամանակ թուրքական պատվիրակության նախագահ Հուսեյն Ռաուֆ-բեյը, անդրադառնալով Հայկական հարցին, հայտնել է. «Եթե Անդրկովկասի կառավարությունը ցանկանում է Թուրքիայի հետ բարեկամություն հաստատել և խաղաղություն կնքել, նա պետք է տարածքներ զոհաբերի և մի կողմ դնի Հայկական հարցը: ... Ճիշտ է, հայերը խոսում են Թուրքիայի սահմաններում Հայաստանի ինքնավարության մասին, բայց դա ինքնիշխանության վաղուց հայտնի նախաբանն է. այդպես եղավ Բալկաններում թուրքական գավառների հետ: Այժմ էլ Թուրքիայում կա արքայազն Սաբահ Էդդինի՝ «Թուրքիայի այդ դավաճանի» կուսակցությունը: Այդ պատճառով կարծում եմ, որ Անդրկովկասի հայերը պետք է ընդհանրապես հանեն 4-րդ կետը»³ (խոսքը Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի այն հոդվածի մասին է, որի համաձայն՝ Կարսի մարզում պետք է կայանար հանրաքվե): Հաջորդ օրը՝ մարտի 24-ի (ապրիլի 6) ուշ երեկոյան, Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության տարածքային զիջումների ծրագրի պատասխանը տրվեց Հուսեյն Ռաուֆ-բեյի վերջնագրով. «Պարո՛ն նախագահ, օսմանյան կայսրության կառավարությունը պնդում է 1918 թ. մարտի 21-ի իր արած հայտարարությունը և խնդրում է Անդրկովկասի հարգելի պատվիրակությանը վերջնական պատասխան տալ իրեն այդ մասին 48 ժամվա ընթացքում»⁴: Վերջ-

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 188:

* Աբդուլ Համիդի քրոջ որդին: 1900 թ. տեղափոխվելով Եվրոպա՝ ստեղծեց «Ապակենտրոնացման և անհատական նախաձեռնության լիգա» կազմակերպությունը, սկսեց հրատարակել «Առաջադիմություն» թերթը: Նա դարձավ Թուրքիայի բազմաթիվ ազգությունների կենտրոնախույս ձգտումների գաղափարախոսը: 1908 թ. հեղաշրջումից հետո վերադառնալով Թուրքիա՝ իր շուրջը համախմբեց երիտթուրքերից դժգոհ տարրերին: Տե՛ս **Խաչատրյան Ա.**, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, էջ 263:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 152: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 155-156:

նագրից երևում է, որ թուրքական կողմին չէր բավարարել Անդրկովկասյան պատվիրակության տարածքային զիջումների ծրագիրը:

Փաստորեն թուրքերը վերջնագրով պահանջում էին անվերապահորեն ճանաչել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և անհապաղ ազատել Թուրքիային տրվելիք բոլոր շրջանները: Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության թաթար անդամները պահանջեցին ընդունել թուրքական վերջնագիրը և կատարել նրանց բոլոր պահանջները: Այդ առնչությամբ պատվիրակության Հայկական հարցի գծով խորհրդական Լեոն գրում է. «Մեր թուրք (կովկասյան թաթարներ – Գ. Պ.) ընկերակիցները, վորոնք փրփուրը բերանին ապացուցում էին, թե Թուրքիան հենց այժմ իսկ իրավունք ունի գրավել ստացած յերկրները, թե չպետք է առհասարակ անհաճոբան անել նրան, այլ խոսել հաշտ ու քաղցր լեզվով»¹:

Վրաց պատվիրակության անդամներն Ա. Չխենկելիի գլխավորությամբ հայ պատվիրակներից գաղտնի դիվանագիտական բանակցություններ էին վարում թուրքերի հետ Բաթումը չհանձնելու համար: Հուսեյն Ռաուֆ-բեյը Ալ. Խատիսյանի հետ մասնավոր գրույցի ժամանակ հայտնել էր, որ վրացիները վեց անգամ խնդրել են Բաթումը զիջել վրացիներին, սակայն իրենք չեն համաձայնվել, իսկ աջարներն էլ ուղղակի հայտարարել են, որ Բաթումի խնդիրը իրենց գործն է, և իրենք չեն թույլատրի տնօրինել իրենց քաղաքը²: Սակայն Հուսեյն Ռաուֆ-բեյը Ալ. Խատիսյանին հայտնեց նաև, որ իրենք ոչ մի զիջում չեն անի և Բաթումից ոչ մի պայմանով չեն հրաժարվի:

Թուրքական վերջնագիրը ծանր իրավիճակ էր ստեղծել. այն չընդունելու պարագայում պատերազմական գործողությունները ավելի էին սաստկանալու, և Թուրքիան զավթելու էր Անդրկովկասը: Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը իր ընդհանուր նիստում որոշեց առավելագույն տարածքներ զիջել Թուրքիային: Մարտի 25-ին (ապրիլի 7) Ա. Չխենկելին հեռագիր հղեց Թիֆլիս իր կառավարությանը՝ նշելով, որ անհրաժեշտ է առավելագույն տարածքային զիջումներ անել Թուրքիային: Պետք է թուրքերին հանձնել ամբողջ Կարսի նահանգը, Արդահանի շրջանի հյուսիսային մասերը և Բաթումի նահանգի Արդվինի շրջանը: Ա. Չխենկելին, եզրափակելով հեռագիրը, նշում էր. «Ես համոզված եմ, որ թուրքերը չեն զիջիր ե՛ւ Պաթումը: Վեհիպ փաշան որոշապէս ըսաւ այդ, բայց տարբերութիւնը այն է, որ անոնք գոնէ կը սակարկեն անոր շուրջ: Գալով Կարսին՝ զայն պահպանել դիւանագիտական ճամբով բացարձակապէս անկարելի է: Կարսի մասին թուրքերը խօսիլ անգամ չեն ուզեր: Ես գիտեմ, որ հարցին այս կերպ դուիլը կը սպառնայ Անդրկովկասի եւ Սէյմի միութեան, բայց դժբախտաբար, ուրիշ էլք

¹ Լեոն, նշվ. աշխ., էջ 390:

² Տե՛ս ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 108:

չկայ: Թուրքերը շատ լուրջ կերպով սկսած են պատերազմ մղել»¹:

Թուրքերն իրենց վերջնագիրն ամրագրեցին Անդրկովկասյան ռազմա-ճակատում իրենց գորքերի տարածքային նոր գավթումներով: Դեռ մարտի 23-ին (ապրիլի 5), խախտելով Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, նրանք ներխուժել էին Անդրկովկասի սահմանները, գրավել Սարիղամիշը, Արդահանը և Բաթումի գավառի որոշ մասեր²: Փաստորեն թուրքական գորքերը գրավել էին այն տարածքների մի մասը, որոնք Անդրկովկասյան կառավարությունը համաձայնել էր զիջել Թուրքիային: Նրանք, շարունակելով իրենց որդեգրած ռազմաքաղաքական մարտավարությունը, մի կողմից բանակցում էին Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հետ, իսկ մյուս կողմից կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի գլխավորած զորաբանակով նոր տարածքներ գավթելով՝ ճնշում էին գործադրում դիվանագիտական բանակցային գործընթացների վրա և պարտադրում իրենց անարդար պահանջները վերջնագրի լեզվով: Ա. Չխենկելիի հետ մասնավոր գրույցի ժամանակ Վեհիբ փաշան սպառնացել էր, որ ամենակարճ ժամանակահատվածում պետք է ավարտվեն թուրք-անդրկովկասյան բանակցությունները, այլապես թուրքական գորքերն արյունոտ բախումներ կունենան Անդրկովկասում, և այդ ժամանակ դժվար կլինի որևէ բանակցություն վարել³: Այս իրավիճակում Անդրկովկասյան կառավարությունը խաղաղարար պատվիրակությանը հեռագրով հրահանգեց, որ «պետք է յայտնել թուրք պատուիրակութեան, թե քանի որ թուրք գորքերը մտած են Անդրկովկասի սահմանները, հաշտութեան բանակցութիւնները պետք է դադրին եւ այս մասին պիտի հաղորդի Անդրկովկասի ժողովուրդներուն»⁴: Նույն օրը երեկոյան Անդրկովկասյան կառավարությունը երկրորդ հրահանգը հղեց խաղաղարար պատվիրակությանը, որ համաձայն է զիջելու Կարսի նահանգը և Արդվինի շրջանը, սակայն հայերը դիմադրում են և չեն ուզում Կարս քաղաքը հանձնել թուրքերին⁵:

Ստեղծված չափազանց բարդ ու լարված ռազմաքաղաքական նոր իրադրության պայմաններում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունն առաջին անգամ իր ընդհանուր նիստում բարձրացրեց՝ «ավելի լավ է շատ արագ ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը»⁶: Պատվիրակության անդամները, բացառությամբ թաթարների, երկյուղում էին, որ

¹ **Խատիսեան Ա.**, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Աթէնք, 1930, էջ 34:

² Տե՛ս նաև ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ **Խատիսեան Ա.**, նշվ. աշխ., էջ 35:

⁵ Տե՛ս նույն տեղում:

⁶ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 105:

թուրքական գորքերն առաջ են շարժվում և վիճելի ողջ տարածքները կգրավեն պատերազմի իրավունքով և հաշվի չեն առնի Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը: Ա. Չխենկելին ակտիվորեն շարունակում էր ուղիներ որոնել դիվանագիտական բանակցությունների միջոցով կանխելու Բաթումից ութ կիլոմետր հեռու գտնվող թուրքական գորքերի ռազմական գործողությունները:

Մոտենում էր Թիֆլիսից թուրքական վերջնագրին պատասխանելու վերջին ժամկետը (մարտի 26-ին (ապրիլի 8)), որով վերջնականապես որոշվելու էր «պատերազմի կամ խաղաղության» հարցը¹: Այդ առնչությամբ Ալ. Խատիսյանը գրում է. «Ընդհանրապես տրամադրությունը շատ ծանր էր ու մռայլ. զգացվում էր, որ մենք միասնական չենք և թույլ ենք, որ բանակը չի կարող մեզ սատարել, և դրա համար էլ մենք կարծես հանձնվում ենք «հաղթողների ողորմածությանը»²:

Այս չափազանց ծանր ու աննպաստ պայմաններում Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը կանգնած էր երկընտրանքի առաջ. կա՛մ ընդունել Թուրքիայի վերջնագիրը, կա՛մ խզել դիվանագիտական բանակցությունները և վերադառնալ Թիֆլիս: Ընդհանուր նիստերում երկար ու բուռն քննարկումների և վիճաբանությունների արդյունքում խաղաղարար պատվիրակությունը որոշեց ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, և մարտի 26-ին (ապրիլի 8) Ա. Չխենկելին հեռագրեց Թիֆլիս՝ Անդրկովկասյան սեյմին և կառավարությանը. «Արդահանը վերցված է, Կարսի ճակատագիրը կլուծվի մոտ օրերս, Բաթումի երկաթուղագիծը հավանաբար կկտրեն. թուրքերը գտնվում են Բաթումից ութ վերստի վրա: Մեր տակտիկական՝ չշտապել, մինչև որ պատրաստվենք, չարդարացավ. մեր գորքերն ու նրանց առաջնորդները իրենց բարձրության վրա չեն կանգնած: Երկիրն առանց իշխանության ու կարգապահության չի կարող պատերազմել: **Անհրաժեշտ էմ գտնում իսկույն նեթ լիազորություն ստանալ՝ ընդունելու Բրեստ-Լիտովսկու հաշտության դաշնագիրը**»³ (ընդգծումը մերն է – Գ. Պ.): Փաստորեն Ա. Չխենկելին դարձավ Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ընդունելու համոզված կողմնակիցը: Այդ մասին հայ պատվիրակներ Ալ. Խատիսյանը և Հ. Քաջազնունին հեռագրով տեղեկացրին Անդրկովկասյան սեյմի հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության խմբակցությանը. «Մեր պարտքն ենք համարում դաշնակցություն կուսակցության ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ ստեղծված իրավիճակում Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի ճանաչումը չարյաց փոքրագույնն է»⁴:

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 106:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 104:

³ ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 223, թ. 3:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 107:

Սակայն մինչև սեյմի և կառավարության կողմից հարցի քննարկումը Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանը հայտնի դարձավ, որ դրանց անդամները հակված չեն ընդունելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը: Ա. Չխենկելին Ի. Օերեթելիից, Ն. Ժորդանիայից, Ն. Ռամիշվիլիից և Ե. Գեգեչկորիից ստացել էր հեռագրեր, որոնցում նրանք հայտարարում էին, «թե Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը ճանաչելու առաջարկությունը բացարձակապես անընդունելի են համարում. կարծում են, որ այդ արարքը քաղաքական և ազգային ինքնասպանություն է Վրաստանի և մենջևիկների կուսակցության համար, և որ իրենք գերադասում են նվաճված լինել, և այդ պատճառով էլ ոչ մի կերպ չեն կարող համաձայն լինել Ա. Չխենկելիի և խաղաղարար պատվիրակության առաջարկությանը»¹:

Հաջորդ օրը Ա. Չխենկելին Հուսեյն Ռաուֆ-բեյին տեղեկացրեց, որ պատրաստ է Կարսը հանձնել թուրքերին և անձամբ համաձայն է ու պնդում է ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, սակայն ինքը պետք է ստանա Անդրկովկասյան սեյմի և կառավարության համաձայնությունը, որից հետո թուրքական կողմին կտեղեկացնի իրենց որոշման մասին մինչև մարտի 28-ի (ապրիլի 10) երեկոյան ժամը 7-ը²: Սակայն, Թիֆլիսից սեյմի և կառավարության վերջնական պատասխանը նշված ժամանակին չստանալով, Ա. Չխենկելին, օգտվելով իր արտակարգ լիազորություններից, մարտի 28-ին (ապրիլի 10) ընդունեց թուրքական վերջնագրի պայմանները և գրավոր պատասխանեց պատվիրակության նախագահ Հուսեյն Ռաուֆ-բեյին. «Անդրկովկասյան հաշտության պատվիրակությունը, ի պատասխան օսմանյան պատվիրակության նախագահի 1918 թ. ապրիլի 6-ի նամակի, պատիվ ունի հայտարարելու, որ ինքը ընդունում է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը և պատրաստ է դրա հիման վրա շարունակելու հետագա բանակցությունները»³:

Մարտի 31-ին (ապրիլի 13) թուրքական պատվիրակության նախագահը Ա. Չխենկելուն հաղորդեց, որ իր կառավարությունը, տեղեկանալով, որ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ճանաչել է Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագիրը, անհրաժեշտ է համարում իր դաշնակիցներ Գերմանիայի, Ավստրիայի և Բուլղարիայի մասնակցությունը թուրք-անդրկովկասյան բանակցություններին և միաժամանակ գտնում է, որ Անդրկովկասը նախևառաջ հռչակի իր անկախությունը⁴: Թուրքական կողմը դրանով իհարկե փորձում էր դյուրացնել նաև Անդրկովկասի գրավումը:

¹ Նույն տեղում:

² Տե՛ս նույն տեղում, թ. 106:

³ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 152: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 160:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 152: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 162:

Հենց նույն օրը հայտնի դարձավ, որ Վեհիբ փաշան մարտի 30-ին (ապրիլի 12) վերջնագիր էր ներկայացրել Բաթումի պարետ, գեներալ Գեղևանովին, որ կոմբակոծի և գրոհով կվերցնի Բաթումը, եթե նրանք կամովին չհանձնեն քաղաքի ռազմական ամրոցը զինամթերքով հանդերձ և դուրս չբերեն իրենց զորքերը մինչև մարտի 31-ի (ապրիլի 13) ժամը 16-ը¹:

Ա. Չխենկելին երկու բանախոս էր գործուղել՝ Վեհիբ փաշային խնդրելու հետաձգել Բաթումի ռմբակոծումը մինչև Անդրկովկասյան սեյմից պատասխան ստանալը, սակայն Վեհիբը մերժել էր: Այդ մասին Ա. Չխենկելին հեռագրեց Բաթում՝ Մոլիվանիին և խորհուրդ տվեց առանց դիմադրության թուրքերին հանձնել Բաթումի ողջ ռազմական ամրոցը: Այդ որոշմանը խստորեն հակադրվեց Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության հայ անդամ Ալ. Խատիսյանը, որն էլ այդ առնչությամբ գրում է. «Ես կտրուկ, անվերապահ հայտարարեցի, որ նա (Ա. Չխենկելի – Գ. Պ.) իրավունք չունի դա անելու, որ դա կառավարության իրավունքն է, ոչ թե նրա: Ներկա էր Քաջագնունին: Այս առիթով Ա. Չխենկելին ինձ հայտնեց, որ ինքը մասնավոր խորհուրդ է տվել: Ես հայտարարեցի. խաղաղարար պատվիրակությանը տրվող մասնավոր խորհուրդները բացարձակապես անընդունելի են: Չխենկելին նաև ասաց, որ ինքը հեռագրել է Բաթումից ուղարկել վրացի սպաներ և Բաթումի քաղաքային ինքնավարությունից մեկ ներկայացուցիչ ... ամրոցը և քաղաքը հանձնելու պայմանները պարզելու համար: Այս ամենին Վեհիբ փաշան պատասխանել է, որ ինքը որպես զիջում կարող է ... իր զորքերը չմտցնել քաղաք: Չխենկելին հեռագրում ընդհանրապես հիմնավորում էր իրադրությունը որպես «անելանելի իրադրություն» ներկայացնող ինչ-որ պառակտիչ նամակով, մատնանշում էր Գեգեչկորիին՝ որպես իր տեղեկատվության աղբյուրի: Այս վիճակում մենք ստիպված էինք միայն տեղեկանալ նրա տված ցուցումների մասին, որոնք թուրքերին ցույց էին տալիս մեր անօգնականությունը»²:

Մարտի 31-ի (ապրիլի 13) կեսօրին Ն. Չխեիձեի ղեկավարությամբ Թիֆլիսում հրավիրվեց Անդրկովկասյան սեյմի նախագահության, կառավարության և կուսակցությունների խմբակցությունների ներկայացուցիչների միացյալ ժողով, որտեղ քննարկվեցին թուրքական վերջնագրի պայմանները, այսինքն՝ պատերազմի կամ խաղաղության հարցը: Ե. Գեգեչկորիին Անդրկովկասյան կառավարության անունից միացյալ ժողովում հայտարարեց, որ ռազմական հրամանատարության համոզմամբ բանակը հուսալի վիճակում է և կարող է թուրքերի հարձակումից պաշտպանել Բաթումը³: Իսկ Ի. Ծերեթելին հայտնել էր, «որ ավելի լավ է մեռնել ռազմի դաշտում, քան մա-

¹ Տե՛ս շՄԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 107:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Դոկուменты и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 163-164:

հացու հարված հասցնեն մեզ»¹: Երկար ու բուռն քննարկումների արդյունքում միացյալ ժողովը միաձայն ընդունեց հետևյալ որոշումների նախագիծը.

1. Պատերազմ հայտարարել Թուրքիային՝ հանուն Անդրկովկասի սահմանների պաշտպանության,
2. Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը ետ կանչել Տրապիզոնից,
3. Ջենքի տակ առնել երկրի բոլոր զենք կրելու կարող մարդկանց,
4. Արտակարգ մի կոչ ուղղել ժողովրդին՝ բացատրելով հաշտության բանակցությունների ամբողջ ընթացքը, շեշտելով պատերազմի հրամայականությունը,
5. Մեյմի հաստատմանը ներկայացնել այս որոշումների նախագիծը²:

Նույն օրը երեկոյան հրավիրվեց Անդրկովկասյան սեյմի նիստ, որտեղ հնչեցին բազմաթիվ կրակոտ, ռազմաշունչ, հուզիչ և սուր քննադատական ելույթներ Թուրքիայի և նրա վերջնագրի պայմանների և միացյալ ժողովի ընդունած որոշումների նախագծի հաստատման մասին: Անհրաժեշտ ենք համարում ներկայացնել Անդրկովկասյան ողջ ազգաբնակչությանն ուղղված կոչից մի հատված. «Մեզնից պահանջում էին ընդունել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, որ կնքուած է առանց Անդրկովկասի ժողովուրդների գիտութեան ու հաւանութեան: Պահանջում էին իրենց հանձնելու մեր լաւագոյն նաւահանգիստը՝ Բաթումը: Մենք ամեն բան արինք բանակցութիւնների ու խաղաղ ճանապարհի միջոցով համոզելու համար թիւրք կառավարութեանը, որ նա հրաժարուի Բաթումից: Յանուն խաղաղութեան մենք բազմաթիւ զիջումներ արինք. բայց չէինք կարող հրաժարուել Բաթումից, որը մեր միակ ելքն է դէպի ծովը և միակ ճանապարհը քաղաքակիրթ Եւրոպայի հետ հաղորդակցելու: Մեր բոլոր ջանքերն ի դերեւ ելան, հանդիպելով Թիւրքիայի յամառութեանը: Յաւիտենական ստրկութեան օղակն է ձգուած մեր բոլոր ժողովուրդների վզին:

Թո՛ղ ուրեմն ջախջախուի թշնամու յառաջխաղացումը՝ բախուելով մեր վճռականութեանը – մինչեւ մեր վերջին շունչը պաշտպանելու այնքան սերունդների արինով ներկուած մեր երկիրը: Ամենքն ի զէն: Ամենքն ի պաշտպանութիւն ազատութեան ու հայրենիքի»³:

Մակայն հետագա իրադարձությունները եկան մեկ անգամ ևս փաստելու, որ այդ հուզիչ և ռազմաշունչ կոչը, մեղմ ասած, անկեղծ չէր ոչ միայն վրացիների, այլ մանավանդ կովկասյան թաթարների կողմից: Նիստում մուսուլմանական խմբակցությունը հայտարարեց, թե մուսուլմանական ազգա-

¹ Նույն տեղում, էջ 164:

² Տե՛ս **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 76: Տե՛ս նաև Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, с. 163-166:

³ **Իրազեկ Յ.**, Մօտիկ անցեալից, Պատմական դեպքեր եւ ապրումներ 1917-1922, Պէրյութ, 1956, էջ 18:

բնակչությունը, կրոնական կապերով կապված լինելով թուրքերի հետ, հրաժարվում է նրանց դեմ հայտարարված պատերազմին մասնակցելուց¹: Անժխտելի իրողություն է. թե Անդրկովկասյան սեյմը և թե կառավարությունը ծանոթ էին մուսուլմանականների այդ մտայնությանը, բայց և այնպես սեյմում նրանց «յայտարարութիւնը սառ ջուր մը կը լեցնէր ոգևորուած տրամադրութեան վրայ»²: Մեյմի անդամ Ի. Օերեթելին «դիմում է ֆրակցիային (մուսուլմանական - Գ. Պ.) և շարտում է նրա դեմքին «դավաճաններ» անունը»³:

Կառավարության նախագահ Ե. Գեզեչկորին իր կրակոտ ելույթում հայտարարեց. «Կառավարությունը կարծում է, որ չի մարել Անդրկովկասյան դեմոկրատիայի ազատության ոգին, որ «վառողամանում դեռ վառող կա», որ եթե մենք թույլ ենք, ապա ոչ այնքան, որպեսզի մեզ ստրուկներ դարձնեն: Այդ պատճառով էլ մենք մտածում ենք, սեյմի քաղաքացի անդամներ, որ Բրեստ-Լիտովսկի դաշնագրի ընդունումը կնշանակեր, որ Արդրկովկասը՝ որպես անկախ հանրապետություն, կդադարի գոյություն ունենալուց և կդառնա թուրքական ինպերիայի գավառը: Կառավարությունը նման խայտառակություն չի կարող թույլ տալ: Կառավարությունը կհավաքի իր բոլոր ուժերը, իր ամբողջ հզորությունը, որպեսզի անհրաժեշտ հակահարված տա թուրքական կառավարության բռնի շահախնդրությանը»⁴:

Ուշագրավ է՝ Անդրկովկասյան սեյմի հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության խմբակցության անդամ Ս. Հարությունյանի ելույթը. «Նախ իբրև հայ և իբրև դաշնակցական ... մենք հավատացած ենք, որ Թուրքիան չի բավարարվի այն պայմաններով, որոնք նա պահանջում է Բրեստ-Լիտովսկի դաշնագրի համաձայն: Նա ավելի առաջ կգնա: Նա վստահ է ներքին հայտնի տարրերի աջակցության վրա: Եվ հենվելով այդ տարրերի և իր կազմակերպված ուժերի վրա, դիմացն ունենալով կազմալուծված գորամասեր՝ նա մտածում է հասնել Բաքու և մեկընդմիջտ իրականացնել Կոստանդինուպոլը Բաքվի հետ մուսուլմանական հոծ զանգվածներով միացնելու իր հին ծրագիրը...

Մենք համոզված ենք, որ առաջին հերթին հայերն են դատապարտված մահվան, իսկ երկրորդ հերթին՝ վրացիները, այնպես որ մեզ համար ոչ մի փրկություն չկա: Ես լիազորված եմ դաշնակցության խմբակցության կողմից հայտարարելու, որ մենք կտանք ոչ միայն գորակոչային տարիքը, այլ, հավանաբար, մեր ամբողջ ժողովուրդը, որը ընդունակ է զենք կրել, կվերցնի և կգնա ռազմաճակատ՝ մեր հողերը պաշտպանելու: Պարտվելու և մեռնելու

¹ Տե՛ս **Լեռ**, նշվ. աշխ., էջ 392:

² **Խաչատրյան Ա.**, նշվ. աշխ., էջ 77:

³ **Լեռ**, նշվ. աշխ., էջ 392:

⁴ Տե՛ս **Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии**, с. 168:

դեպքում, մենք՝ հայերս, կմեռնենք զենքը ձեռքներին»¹:

Կրակոտ և սուր քննադատական ելույթներից հետո մարտի 31-ի (ապրիլի 13) երեկոյան սեյմը միաձայն հաստատեց միացյալ ժողովի որոշումների նախագիծը և հեռագրեց Տրապիզոն՝ Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակության նախագահ, արտաքին գործերի նախարար Ա. Չխենկելուն. «Այսօր երեկոյան, Անդրկովկասի սեյմի նիստում, միաձայն ընդունվեց հետևյալ բանաձևը. նկատի ունենալով այն, որ Անդրկովկասի սահմանների հարցի վերաբերյալ Թուրքիայի ու Անդրկովկասի միջև հաշտություն ձեռք չի բերված, Անդրկովկասյան պատվիրակությանն առաջարկվում է անհապաղ վերադառնալ Թիֆլիս»²: Փաստորեն սեյմը պատերազմ հայտարարեց Թուրքիային այն դեպքում, երբ իրականում վերջինս դեռ ակտիվորեն շարունակում էր իր ռազմական առաջխաղացումն Անդրկովկասի սահմաններում՝ զենքի ուժով լուծելու Բրեստ-Լիտովսկի հաշտության դաշնագրի պահանջները:

Սեյմի որոշման համաձայն՝ ամբողջ Անդրկովկասում պաշտոնապես հայտարարվեց ռազմական դրություն, իսկ պատերազմը վարելու համար ստեղծվեց արտակարգ լիազորություններով օժտված կոլեգիալ մարմին, որի մեջ մտնում էին կառավարության նախագահ, ռազմական նախարար Ե. Գեգեչկորին, ներքին գործերի նախարար Ն. Ռամիշվիլին և ֆինանսների նախարար Խ. Կարճիկյանը³:

Բայց և այնպես, երկրամասի երեք գլխավոր ազգությունների միջև առկա խոր հակասությունները և հակամարտությունները, որոնց գլխավոր պատճառը նրանց քաղաքական տարբեր կողմնորոշումներն էին ու ազգային-տարածքային սահմանների վեճերը, հնարավորություն չտվեցին Անդրկովկասում ստեղծելու միացյալ ճակատ թուրքական ռազմական սպառնալիքին դիմակայելու համար: Ինչպես վերը նշվեց, մուսուլմանականները սեյմի նիստում հայտարարել էին, որ չեն կռվելու թուրքերի դեմ: Թուրք-անդրկովկասյան պատերազմի հիմնական ծանրությունն ընկած էր հայկական ուժերի վրա (վրացիների մասնակցությունը չնչին էր, իսկ մուսուլմանական դիվիզիան ընդհանրապես չի մասնակցել): Ալ. Խատիսյանի վկայությամբ, հասարակական կարծիք էր ձևավորվել, որ «Վրացական զորամասերը, որպես կանոն, նահանջում են թուրքերի հարձակումների ժամանակ ... վրացիները բոլորովին պատրաստ չեն պատերազմին»⁴:

Նույն օրը՝ մարտի 31-ի (ապրիլի 13) երեկոյան, առանց վրացական զորքերի որևէ դիմադրության, Բաթումը հանձնվեց թուրքական զորամասերին:

¹ Նույն տեղում, էջ 174-177: Տե՛ս նաև **Ставроцкий А.**, Закавказье после октября, М.-Л., 1925, с. 25-26:

² Տե՛ս Կ. Կուրադի, *Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии*, с. 183-184:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 183:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 109:

Կամովին թուրքերին հանձնվեցին Բաթումի պարետը և վրացական առաջին դիվիզիայի հրամանատարը՝ իր շտաբով: Այնուհետև թուրքական զորքերը գրավեցին Աբասթումանը և շարունակեցին առաջխաղացումը Քութայիսի ու Թիֆլիսի նահանգներում: Այս առիթով Ա. Խաչատրյանը գրում է. «Կովկասի Հանրապետության այնքան մեծ աղմուկով յայտարարած պատերազմը կը վերջանար խայտառակ պարտությամբ մը: Վրաց ճակատի վրայ դիմադրութիւնն այնքան թոյլ եղաւ, որ 48 ժամէն Բաթումի պէս ուժեղ բերդաքաղաք մը իր բոլոր ռազմական հարստութեամբ աւար կը դառնար օսմանեան չնչին ուժով յարձակուող զօրքի ձեռքը և քանի մը օրուան մէջ օսմանեան զինուորներն արդէն Վրաստանի սիրտ՝ Քութայիսի նահանգումն էին»¹:

Կարսի շրջանում հայկական զորամասերը 10 օր շարունակեցին իրենց կատաղի դիմադրությունը թուրքերի դեմ: Բաթումի հանձնումից հետո Անդրկովկասյան սեյմը համոզվեց, որ այլևս ի վիճակի չեն համախմբելու երկրամասի բոլոր ուժերը և պատերազմը շարունակելու:

Ապրիլի 1-ին (14) կառավարության նախագահ Ե. Գեգեչկորին հեռագիր հղեց Ա. Չխենկելուն՝ հրահանգելով Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությանն անմիջապես վերադառնալ Թիֆլիս: Այդ մասին Ա. Չխենկելին անմիջապես հայտնեց թուրքական պատվիրակությանը. «Անդրկովկասյան պատվիրակությունը, նկատի ունենալով իր կառավարությունից ստացված հրահանգները, պատիվ ունի հայտնելու օսմանյան պատվիրակությանը, որ ինքն անհրաժեշտաբար պետք է այսօր մեկնի Թիֆլիս»²: Թուրքերը անշուշտ շատ լավ հասկացան, թե ինչու է Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը մեկնում Տրապիզոնից: Նույն օրը երեկոյան խաղաղարար պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս: Բաժանումից առաջ թուրքական պատվիրակության նախագահ Հուսեյն Ռաուֆ-բեյի առաջարկով Հայկական հարցի մասին մեկժամանոց առանձնազրույց ունեցավ խաղաղարար պատվիրակության հայ անդամ Ալ. Խատիսյանի հետ, ինչն առանձին հոդվածի նյութ է:

Այսպիսով, Ալ. Խատիսյանի գնահատմամբ՝ «հաշտության փոխարէն Տրապիզոնէն մենք (Անդրկովկասյան խաղաղարար պատվիրակությունը – Գ. Պ.) կը տանէինք մեր երկրին պատերազմ»³:

¹ Խաչատրյան Ա., նշվ. աշխ., էջ 78:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 152:

³ Խատիսեան Ալ., նշվ. աշխ., էջ 36:

Гегам Петросян – *Вопрос о территориальных уступках Турции на Трапезундской мирной конференции (март-апрель 1918 г.)*

В сложных и неблагоприятных условиях, сложившихся в регионе, закавказская миротворческая делегация, делая некоторые территориальные уступки Турции, была вынуждена выйти из дипломатического тупика. Однако в этом вопросе столкнулись интересы членов делегаций трех основных народов региона. Грузины не хотели уступать Турции Батум, а армяне – Карс. Турки, продолжая свою военно-политическую стратегию, с одной стороны, участвовали в переговорах с закавказской миротворческой делегацией, с другой – своими территориально-военными захватами оказывали давление на дипломатический процесс переговоров и навязывали свои несправедливые требования на языке ультиматума. Несогласие сделать территориальные уступки Турции переросло в турецко-закавказскую войну. Однако глубокие противоречия, имеющиеся между тремя основными народами региона, и конфликты, главная причина которых – различная политическая ориентация и споры о национально-территориальных границах, не дали возможности создать в Закавказье единый фронт для противостояния турецким угрозам. 1 (14) апреля Закавказское правительство отозвало миротворческую делегацию из Трапезунда, так как не была решена проблема границы Турции с Закавказьем и в регионе было введено военное положение.

Gegham Petrosyan - *The Issue of Territorial Concessions to Turkey in Trabzon Peace Conference (March-April of 1918)*

Under the severe and adverse conditions created in the region, the Transcaucasian peacemaking delegation had to come out of the diplomatic deadlock by ceding some territories to Turkey. However, there was a clash of internal interests between the members of the delegations of the three major nations of the region. Georgians did not want to concede Batumi, while Armenians did not want to concede Kars. The Turks pursuing their adopted military tactics negotiated with the Transcaucasian peacemaking delegation on the one hand, and on the other hand, exerted pressure on the diplomatic negotiations with territorial and military occupations and imposed their unjust demands in form of ultimatums. The disagreement of territorial concessions to Turkey was turned into Turkish-Caucasian war. But the deep contradictions and conflicts between the three main nations of the region, which were mainly because of their different political orientations and national-territorial disputes, did not allow to create a united front in Transcaucasia to confront the Turkish threat. On April 1 (14) the Transcaucasian Government called off the peacemaking delegation from Trabzon, as the border problem between Turkey and Transcaucasia was not resolved and a military situation was declared in the region.

**DIE ARMENISCHE FRAGE IN DER DEUTSCHEN
AUSSENPOLITIK IM KONTEXT DER DEUTSCH-TÜRKISCHEN
BEZIEHUNGEN VOM MÄRZ BIS JUNI 1918**

Schlüsselwörter – Brester Vertrag, Talaat Pascha, Völkermord an den Armeniern, Reichskanzler Graf von Hertling, Armenische Frage, Massaker, armenische Delegation, Staatssekretär von Kühlmann, Batumer Vertrag

Die Rolle der deutschen Politik im Kontext der Ereignisse, die sich nach Unterzeichnung des Vertrags von Brest-Litowsk und dem darauf folgenden Einmarsch der türkischen Armee in Westarmenien abgespielt haben, ist bislang nicht eingehend untersucht worden. Dabei bildet dies einen bestimmten Schwerpunkt sowohl bei der umfassenden Analyse der betreffenden Ereignisse als auch beim Verständnis der Beziehungen zwischen Deutschland und der ersten Armenischen Republik.

Es scheint wohl so zu sein, dass Deutschland Verantwortung für die Sicherheit der Armenier und der anderen Christen zukam, die in den vertraglich an die Türkei abgetretenen Gebieten ansässig waren¹. Denn einerseits war es als Verbündeter der Türkei in der Lage, auf sie Einfluss auszuüben, und andererseits war der Brester Vertrag durch die aktive Mitwirkung Deutschlands unterzeichnet und in Kraft gesetzt worden. Wie aus den deutschen diplomatischen Akten hervorgeht, war sich die kaiserlich deutsche Regierung der Gefahren, denen die friedliche armenische Bevölkerung durch den Vormarsch der türkischen Trupps ausgesetzt war, sowie ihrer sich daraus ergebenden Verpflichtungen sehr wohl bewusst. Wie kam dies aber praktisch zum Ausdruck, und welche Schritte sind von ihr diesbezüglich unternommen worden?

Die Frage bezüglich der Vorbeugung der beim Vormarsch der türkischen Kräfte möglichen Gewaltakte oder Massaker war vom offiziellen Deutschland noch vor Unterzeichnung des Brester Vertrags bzw. im Januar 1918 beim Treffen mit dem Außenminister und Finanzminister des Osmanischen Reichs zum Gegenstand eines Gesprächs gemacht worden. Wie bei diesen Gesprächen sowie auch während der späteren deutsch-türkischen Verhandlungen versäumte die türkische Seite nicht, ihre „friedlichen“ Absichten bezüglich der Armenier nachdrücklich zum Ausdruck zu bringen. „Als nach Abschluss des Waffenstillstands von Brest-Litowsk die Möglichkeit einer Räumung der damals von den Russen besetzten ostanatolischen Provinzen näher rückte“, so der Unterstaatssekretär Hilmar Freiherr von dem Busche-Haddenhausen während seiner Erklärung im Reichstag vom 21. März zu dieser Frage, „haben wir uns sofort mit den türkischen Staatsmännern wegen der Frage der Behandlung der Armenier in Verbindung gesetzt und ihnen gesagt, wie wichtig es im eigenen

¹ Für Ausführlicheres zum Brester Vertrag und den diesem vorangegangenen Verhandlungen s. Awetisjan Hrant, Die Armenische Frage im Jahre 1918, Jerewan, 1997, S. 41-108. Vgl. Asatjan Henrik, Schicksalhafte Verträge, Jerewan, 2002, S. 77-81.

deutscher Seite gegen die türkische Vernichtungspolitik für erforderlich hielt, das zu den türkischen Gewalttaten und Vernichtungsmaßnahmen zustimmend gesonnene Militär vertrat. Es ist daher verständlich, dass der Botschafter, dem es misslungen war, durch seine Vorstellungen die türkische Seite von ihrer Vernichtungspolitik abzubringen, sich der Verantwortung zu entledigen versuchte, indem er ebenfalls seine Übereinstimmung mit den Standpunkten des Generals von Seeckt erklärte¹.

Nach der Feststellung des Botschafters wäre die bestehende Situation nicht eingetreten, wenn die Kaukasier seinen Rat befolgt hätten, sofort Frieden zu schließen. Hierzu sei es jetzt seiner Überzeugung nach zu spät. Und er schlug vor, ein neues Geschäft mit der türkischen Regierung abzuschließen, nämlich, die türkische Kaukasus-Politik dauernd nur dann zu unterstützen, wenn diese den Deutschen wirtschaftliche Vorteile im Kaukasus gewährten. Die Erfüllung dieser Bedingung müsste dabei von den Türken schriftlich zugesichert werden².

Um die dulderische Haltung des Botschafters zu den türkischen Gräueltaten besser verständlich zu machen, sollte erwähnt werden, dass nachdem Ende Mai der Oberst (später General) Freiherr von Kreß in Tiflis ankam und sich, wie zahlreiche Berichtserstattungen belegen, dafür einsetzte, die deutsche Regierung zu einem wirksamen Eingreifen zur Verhinderung der weiteren türkischen Vernichtungspolitik zu bewegen, der Botschafter es für empfehlenswert hielt, ihn möglichst bald zur Rückkehr nach Konstantinopel zu bewegen, weil wenn er und General von Seeckt nicht Hand in Hand arbeiteten, dies „unabsehbare Folgen“ nach sich ziehen könnte. Zwischen den beiden müsste, so Bernstorff, Einvernehmen hergestellt werden³.

Wie aus den deutschen diplomatischen Aktenstücken hervorgeht, hielt tatsächlich ein gewisser Teil des deutschen hohen Militärs die türkische Überschreitung der durch den Brester Vertrag gezogenen Grenzen für unzulässig, und die oben erwähnte Bekanntmachung von Göppert keineswegs der Realität entsprach. Die deutsche offizielle Politik wurde jedoch in der Amtsstube des Reichskanzlers gemacht, der keineswegs dazu geneigt oder bereit war, die traditionell duldsame deutsche Politik zu den türkischen Gräueltaten zu revidieren bzw. eines zur Vernichtung preisgegebenen Volkes wegen Druck auf sie auszuüben. Die deutsche Regierung begnügte sich damit, sich den türkischen Gräueltaten mit „in freundlicher Weise“ ausgesprochenen offiziellen und inoffiziellen Warnungen zu widersetzen. Dies geschah eher nicht der Gerechtigkeit willen, sondern um mögliche Vorwürfe bezüglich der deutschen Mitverantwortung oder Mitschuld an der türkischen Vernichtungspolitik zurückweisen zu können. Als ein typisches Beispiel dafür könnte die nach der erwähnten Berichterstattung des Generals Lossow vom 26. Mai an den Botschafter Bernstorff gesandte Instruktion gelten, wodurch der letztere vom AA damit beauftragt wurde, „der Pforte in freundschaftlicher aber bestimmter Form mündlich“ zu erklären, dass die Kaiserliche Regierung sich gegenüber allen Geschehnissen im Kaukasus freie Hand bewahrte. Sie behielte vor allem bezüglich der innerhalb oder außerhalb der Bezirke Ardahan, Kars und Batum getroffenen Maßnahmen, die mit dem Friedensvertrag von Brest-Litowsk nicht im Einklang stünden, ihre Position. Ferner sollte der Pforte

¹ Ebd., S. 501.

² Ebd., S. 502.

³ Ebd., S. 511.

mitgeteilt werden, dass die deutsche Regierung einen weiteren Vormarsch türkischer Truppen im Kaukasus und eine türkische Propaganda außerhalb der genannten drei Bezirke weder billigen noch unterstützen könne. Die Kaiserliche Regierung erkannte die georgische Regierung als De-facto-Regierung an und erklärte sich, vorbehaltlich der Zustimmung der russischen Sowjet-Republik, grundsätzlich zur Anerkennung der Unabhängigkeit Georgiens bereit. Sie forderte die osmanische Regierung auf, ebenso zu verfahren und die Grenzen Georgiens zu achten. Die genaue Abgrenzung Georgiens würde unter Beteiligung Deutschlands zu vereinbaren sein.

Was Armenien anbetraf, ersuchte die Kaiserliche Regierung die türkische Regierung, die angemessene Behandlung der Armenier in den von der Türkei besetzten Gebieten sicher zu stellen, wobei sie sich auch nähere Vorschläge vorbehielt. Die Aufmerksamkeit der osmanischen Regierung sollte auch darauf gelenkt werden, dass die Türkei aus den bestehenden politischen Verträgen keine Ansprüche gegen Deutschland auf Schutz oder Beistand für solche militärische oder diplomatische Aktionen herleiten könne, die sie ohne Zustimmung Deutschlands oder auch gegen seinen Rat unternähme. Deutschland lehnte für derartige eigenmächtige Unternehmungen jede Verantwortung ab, die Konsequenzen müsse die Türkei tragen. Sollte sich durch willkürliche Zersplitterung der Kräfte die Gesamtlage der Türkei verschlechtern und die Erreichung der vertragsmäßig vereinbarten Ziele in Frage gestellt werden, so würde sich die Türkei damit abzufinden haben, da Deutschland sich „auf eine Mehrbelastung seines politischen Kontos“ ihr gegenüber nicht einlassen könne. Ebenso wenig könne es die Türkei decken, wenn von türkischer Seite zu Ausschreitungen gegen die christliche Bevölkerung des Kaukasus kommen würde.

Darüber hinaus empfahl das Auswärtige Amt dem Botschafter, im Einvernehmen mit General von Lossow Vorschläge zu den Grenzen Georgiens und den Sicherheiten für die angemessene Behandlung der Armenier zu unterbreiten, indem es zugleich darauf hinwies, dass die deutsche Seite sich in der Armenierfrage nicht mit türkischen Zusicherungen begnügen könne, und sie mindestens durch deutsche Offiziere oder Zivilbeamte unzensurierte Berichte erhalten müsse¹.

Es ist bemerkenswert, dass die deutsche Regierung einerseits nicht willens war, dies alles der Pforte schriftlich vorzulegen, indem sie sich nur mit einer „in freundschaftlicher aber bestimmter Form gemachten mündlichen Erklärung“ begnügen wollte, andererseits aber die gleiche Erklärung am 26. Mai an den deutschen Botschafter in Wien schickte. Dieser sollte der österreichisch-ungarischen Regierung vorschlagen, ebenso zu verfahren, damit sich die türkische Regierung einem einheitlichen Vorgehen der beiden verbündeten Großmächte gegenüberführe und nicht den Versuch unternähme, die eine gegen die andere auszuspielen. „Wir können es aber weder vor unserem eigenen Volke, noch vor der Welt verantworten“, hieß es in dem nach Wien geschickten Telegramm, „wenn wir es zuließen, dass die Bestimmungen des Brester Vertrages, die mit unserer Hilfe durchgesetzt worden sind, als Freibrief zur Verfolgung der Christen im Kaukasus missbraucht werden“².

Als Antwort auf diese Erklärungen, die Bernstorff schon am 27. Mai den türkischen Außen- und Kriegsministern übermittelt hatte, teilten diese dem Botschafter mit,

¹ Ebd., S. 502-504.

² Deutschland und Armenien 1914-1918..., S. 390-391.

dass ein weiterer Vormarsch türkischer Truppen durchaus nicht beabsichtigt sei. Die Behauptung des General von Lossows, Enver wolle den ganzen Kaukasus erobern, leugnete dieser „aufs bestimmteste“, indem er erklärte, dass er nichts Weiteres wolle als eine militärische Möglichkeit zu schaffen, die türkischen Truppen unbehelligt nach Persien und Mesopotamien zu senden. Die Minister erklärten sich bereit, die türkischen Truppen vollständig aus Georgien zurückzuziehen. Den Vormarsch der türkischen Truppen im Kaukasus aber versuchten sie durch den Umstand zu begründen, dass die Kaukasier niemals den Friedensvertrag von Brest anerkannt hätten, und gerade dadurch die Schwierigkeiten entstanden seien, worauf die Türken versucht hätten, sie zur Annahme dieses Vertrages zu bewegen. Was die Armenier anbetraf, teilte der Botschafter dem AA mit, dass die Wünsche der Deutschen leicht zu regeln lassen würden, sobald deutsche Offiziere im Kaukasus zur Verfügung stünden.

Bernstorff schlug ferner vor, ihn zu ermächtigen, möglichst bald „wirkliche Verhandlungen des Vierbundes über den Kaukasus“ in die Wege zu leiten. Sobald Oberst von Kreß im Kaukasus eingetroffen sei, so Bernstorff im Telegramm, würden in Konstantinopel wieder Nachrichten von dort eingehen, welche als Basis für Verhandlungen dienen könnten¹.

Das Auswärtige Amt erklärte sich noch am gleichen Tage mit dem genannten Vorschlag einverstanden, indem es gleichzeitig darauf hinwies, dass die Aktion das Ziel haben sollte, auf verständiger Basis eine Einigung der Türkei mit der transkaukasischen Konföderation oder, im Falle ihrer Auflösung, zunächst mit Georgien herbeizuführen. Bezüglich der armenischen Seite wurde dem Botschafter mitgeteilt, dass da die Armenierfrage bei der Aktion in Konstantinopel eine bedeutende Rolle spielen sollte, könnten die armenischen Delegierten ebenfalls bei den bevorstehenden Verhandlungen mit der Türkei ihrer Sache mehr nützen, als wenn sie nach Deutschland reisten².

Aus dieser Empfehlung geht es nochmals ganz deutlich hervor, wie nutzlos die Bemühungen der armenischen Delegierten in Berlin waren. Ohne irgend ein Resultat zu erzielen, hielten sie bald ihre Mission in Berlin für beendet und nach einem nochmaligen Appell, der am 30 Mai an das AA geschickt wurde, kehrten sie in die Heimat zurück. Im Appell wurde bekanntgegeben, dass die türkischen Truppen bereits in das Eriwaner Gouvernement vorgestoßen seien und sich auf dem Wege nach Jerewan und Etschmiadzin befänden, dem Zentrum des kaukasischen Armeniertums. Dann wurde verkündet, dass wenn die christlichen Verbündeten der Türkei ihnen keinen Einhalt geböten, würden sich die Armenier gezwungen sehen, ihren Kampf, der für sie die Bedeutung eines Existenzkampfes habe, fortzusetzen, und „wenn ihre verzweifelte Lage sie zu verzweifelten Mitteln drängte, die den ganzen Kaukasus in einen Brandherd verwandeln würden, so traffe nicht sie die Verantwortung dafür.“ Es wurde dabei festgestellt, dass nachdem die Türken ihre eben wieder der deutschen Regierung gemachte Zusicherung, die Grenzen des Kaukasus nicht überschreiten zu wollen, inmitten der Verhandlungen von Batum missachteten, könnten die Armenier kein Vertrauen mehr zu türkischen Versprechungen haben.

¹ Die Armenische Frage und der Genozid an den Armeniern..., S. 505. General von Lossow, der sich bis dahin in Batum aufhielt, war für einen kurzen Zeitraum nach Konstanza gefahren.

² Ebd., S. 506.

Die Delegation warnte auch davor, dass die armenische Seite, die bisher ihre Hoffnung vergeblich auf Deutschland gesetzt hätte, „vertrauensvoll auf seinen wohlwollenden Beistand rechnend“, würde gezwungen sein, sich jeder Möglichkeit einer Rettung zuzuwenden, fremden Einflüssen in die Arme werfen und in ihrer Not Hilfe annehmen, woher sie auch kommen möge. „Die Armenier“, so die Delegierten, „deren einziger Wunsch es ist, in Ruhe und Frieden zu leben, könnten durch das neuerliche Vorgehen der Türken zu einer Haltung gezwungen werden, die wir selber im Interesse einer unparteiischen Neutralität unserer Nation am meisten bedauern würden. Schweren Herzens kehren wir in die Heimat zurück, mit den sorgenvollsten Befürchtungen für die Zukunft unserer Nation. Doch wir können uns nicht mit dem Gedanken vertraut machen, dass es der türkischen Regierung erlaubt wird, den Bestimmungen eines Vertrags zuwider, der auch von Deutschland unterzeichnet worden ist, großes Unheil in dem Kaukasus heraufzubeschwören, und wir hegen gern die Hoffnung, dass es den Bemühungen der deutschen Regierung doch noch gelingen werde, die Türken im letzten Augenblick von einem Vorgehen abzuhalten, das so verhängnisvoll für die Armenier und den Kaukasus überhaupt, auch für die Türken selbst, nicht ohne bedenkliche Folgen bleiben kann“¹.

Mit welchen Möglichkeiten rechnete aber Deutschland oder eher sein Botschafter, um eine Regelung der kritischen Situation herbeizuführen? „Nachdem nun einmal die kaukasische Republik gesprengt ist“, so Bernstorff in seinem am 31. Mai an das AA geschickten Telegramm, „was hier durchaus nicht gewünscht wurde, bleibt meines Erachtens nichts anderes übrig, wie Anschluss Armeniens an Georgien unter Schutz deutscher Truppen und mit Organisation durch uns. Darüber muss aber Einvernehmen herrschen. Sonst wird es im Kaukasus Rassen- und Religionskriege geben, bis niemand mehr übrig ist. Der Gedanke eines selbständigen Armeniens wird von den Türken mit allen gerechten und ungerechten Mitteln bekämpft werden. Sie wollen nicht einen Todfeind an ihrer Grenze haben. Bei den gegenwärtigen Verhältnissen im Kaukasus ist anzunehmen, dass überall, wo die Armenier in der Überzahl sind, sie die Türken töteten und das Umgekehrte wird der Fall sein, wo die Türken über die Majorität gebieten“².

Diesem Standpunkt widersprechend, wollte die türkische Regierung Armeniens Anschluss an von Tataren bewohnte Gebiete und nicht an Georgien. Eine Absicht, deren Hintergrund natürlich keineswegs unklar sein dürfte. Wie Bernstorff in seinem vom 1. Juni datierten Bericht dem Auswärtigen Amt mitteilte, hätten ihm Enver Pascha und der Großwesir berichtet, dass Halil bereits mit Georgien und mit einer „Südkaukasischen Republik“, die aus Armeniern und Türken (Tataren) bestehen sollte, Frieden geschlossen habe³.

Wenn auch diese übereilte Nachricht der Wahrheit nicht entsprach, machte sie aber die Absicht der türkischen Seite deutlich, wonach die Armenier im Kaukasus vollständig ausgerottet und die armenischen Gebiete den Tataren zugeschlagen werden sollten. Durch diese Nachricht wurde aller Wahrscheinlichkeit nach nichts anderes bezweckt, als Deutschland die türkische Haltung in dieser Frage klarzumachen.

¹ Ebd., S. 510.

² Ebd., S. 511.

³ Ebd., S. 512.

Möglicherweise sollte ferner Deutschland sich mit dieser Idee anfreunden.

Deutschland aber, wie es aus dem vom 3. Juni datierten Schreiben des AA an Bernstorff hervorgeht, war mit einer solchen Regelung offensichtlich nicht einverstanden. „Die Friedensverträge, die die Türkei getrennt von ihren Bundesgenossen mit den Kaukasiern abschließt, können von uns nicht anerkannt werden, da sie mit dem in Artikel 3 des deutsch-türkischen Vertrags vom 28. September 1916 ausgesprochenen Verbot jedes Sonderfriedens im Widerspruch stehen würden. Wir können nur solche Verträge gelten lassen, die unter Mitwirkung der vier Verbündeten zustande kommen. Euere Exzellenz wollen dies der Pforte mitteilen. ... Von allen Seiten, vom König von Spanien, aus der Schweiz, sowie von den soeben hier eingetroffenen Delegierten des armenischen Nationalrats werden wir um Hilfe für die Armenier angerufen und für alles, was ihnen geschieht, verantwortlich gemacht. Wir können uns dieser Verantwortung als Mitunterzeichner des Brester Vertrags, der den Türken den Weg nach Ardahan, Kars und Batum geöffnet hat, nicht entziehen. Die Meldungen unserer unbedingt zuverlässigen Gewährsmänner und die Berichte der armenischen Abgesandten stimmen darin überein, dass die Türken in Nichtachtung aller ihrer Versprechungen die Vernichtung der Armenier im Kaukasus planmäßig vertreiben oder mit wohlwollender Passivität zulassen. Unter diesen Umständen müssen wir darauf bestehen, dass die türkische Regierung nicht nur ihrem Versprechen gemäß den weiteren Vormarsch alsbald und endgültig einstellt, sondern nunmehr auch ohne Verzug, wirksame Garantien schafft, um die Armenier in den bereits besetzten Gebieten gegen Übergriffe regulärer oder irregulärer Verbände zu schützen. ... Wie General Ludendorff an General von Seeckt telegraphiert hat, kann die Türkei nicht damit rechnen, dass wir ihr mit deutschem Blut oder auf deutsche Kosten türkisches Landgebiet wieder verschaffen, dessen Verteidigung oder Wiedergewinnung sie selbst vernachlässigt oder gefährdet. Eine solche Gefährdung ist auch in den Ausschreitungen gegen die Armenier zu erblicken, weil dadurch die gesamte gesittete Welt gegen die Türkei und ihre Verbündeten aufgebracht und so die Aussicht eines Rückerverbs der verlorenen Gebiete auf diplomatischem Wege erschwert wird“¹.

Der heroische Widerstand des armenischen Volkes gegen die im Mai auf Jerewan vorrückenden türkischen Militärs in Sardarapat, Aparan, Gharakilisa (heute: Vanadsor, zu sowjetischen Zeiten Kirowakan), der tatsächlich ein Existenzkampf war und bei dem die Türken in den genannten Orten mit Ausnahme von Gharakilisa eine schwere Niederlage erlitten, hat die türkische Regierung dazu gebracht, auf ihren Plan der Bildung einer Südkaukasischen Republik zu verzichten und in direkte Verhandlungen mit der armenischen Seite zu treten. Obwohl die Armenier, ohne dass ihnen von Deutschland geholfen wurde, sich genötigt sahen, am 4. Juni die schweren Friedensbedingungen der türkischen Seite anzunehmen und den Batumer Vertrag zu unterzeichnen, bewiesen sie durch ihren genannten Widerstand zugleich ihr unleugbares Existenzrecht.

¹ Ebd., S. 514-515. Zu dieser Mitteilung machte Kühlmann eine Randbemerkung darüber, dass er vorhätte, diese an den Botschafter zu Konstantinopel zu schicken. Ob sie tatsächlich verschickt worden ist oder nicht, kann nicht genau festgestellt werden. Davon ausgehend aber, dass im Archiv des AA keine Antwort des Botschafters vorliegt und dass schon am folgenden Tag der Batumer Vertrag unterzeichnet wurde, ist es anzunehmen, dass sie nicht verschickt worden ist.

Աշոտ Հայրունի – Հայկական հարցը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ գերմանա-թուրքական հարաբերությունների համատեքստում 1918 թ. մարտ-հունիս ժամանակահատվածում

Հոդվածում լուսաբանվում են Հայկական խնդրի վերաբերյալ կայսերական Գերմանիայի դիրքորոշումն ու քաղաքականությունը խնդրո առարկա ժամանակահատվածում, երբ Հայոց ցեղասպանությունը թևակոխում էր երրորդ փուլ: Գերմանա-թուրքական և հայ-գերմանական հարաբերությունների համատեքստում ներկայացվում են հարցի առնչությամբ տեղի ունեցած զարգացումներն ու դրանց պատճառահետևանքային կապերը: Պարզաբանվում և հիմնավորվում են այն համապատասխանատվությունն ու մեղսակցությունը, որ ունի Գերմանիայի ռազմաքաղաքական դեկավարությունը հայերի հանդեպ թուրքերի իրականացրած ռճագործությունների հարցում: Հոդվածը լույս է սփռում նաև հայերի պարբերական բնաջնջմանն առնչվող մի շարք հետևողական իրողությունների վրա՝ զուգահեռաբար պարզաբանելով գերմանացի առանձին բարձրաստիճան ռազմաքաղաքական գործիչների՝ հայկական խնդրի շուրջ ցուցաբերած դիրքորոշումը:

Ашот Айруни – *Армянский вопрос во внешней политике Германии в контексте немецко-турецких отношений в марте-июне 1918 г.*

В статье освещаются позиция и политика Германской империи по отношению к Армянскому вопросу в рассматриваемый период времени, когда Армянский геноцид вступил в свою третью фазу. В контексте немецко-турецких и армяно-немецких отношений представлены процессы, происходящие в связи с данным вопросом, и их причинно-следственные связи. Уясняются и обосновываются соучастие и совместная ответственность, которую несет военно-политическое руководство Германии за преступления, совершенные турками против армян. Статья также проливает свет на ряд закулисных событий, связанных с периодическим истреблением армян, и параллельно с этим проясняет позиции отдельных немецких высокопоставленных военно-политических деятелей в Армянском вопросе.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՄԱՆ ՄԱՅԻՍՅԱՆ ՓՈՐՁԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՈՒՐՁ**

Բանալի բառեր - խորհրդային իշխանություն, խորհրդայնացում, ապստամբություն, պատմագրություն, ուսումնասիրություն, բանակցություն, հայ բոլշևիկներ, խորհրդաքեմալական համագործակցություն

1920 թ. մայիսին խորհրդային իշխանություն հաստատելու նպատակով Հայաստանում հայ բոլշևիկների գործունեությունը մշտապես եղել է թե՛ խորհրդահայ և թե՛ սփյուռքահայ, մասամբ նաև հետխորհրդային շրջանի պատմաբանների ուշադրության կենտրոնում: Մայիսյան ապստամբությունը՝ որպես Հայաստանի առաջին Հանրապետության պատմության վիճահարույց իրադարձություններից մեկը, պատմագրության մեջ արժանացել է տարաբնույթ գնահատականների:

Խորհրդահայ պատմագրության մեջ մայիսյան ապստամբությունը որակվել է որպես «բանվորական, զինվորական և գյուղացիական լայն մի շարժում»¹, «սոցիալիստական շարժում»², «կիսակազմակերպ, տարերային, մասսայական ապստամբություն»³, «հայ աշխատավորների տարերային մի հոսանք, բնագրական մի ճիչ»⁴, ավելի ուշ՝ որպես «քաղաքացիական պատերազմի դպրոց»⁵, «մասսայական համաժողովրդական ապստամբություն»⁶, «համաժողովրդական զինված ապստամբություն»⁷, «Հայաստանում քաղա-

¹ **Հովհաննիսյան Ա.**, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը. Մայիսյան ապստամբությունը, Երևան, 1923, էջ 45:

² **Վանանդեցի Գ.**, Մայիսյան ապստամբության գնահատման փորձի առթիվ // «Գումունիստ», 1927, թիվ 6, էջ 61:

³ **Ամիրխանյան Շ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920 թ.). գնահատության փորձ, Մոսկվա, 1926, էջ 165:

⁴ **Գարինյան Ա.**, Հայ ազգայնականների ուղին, Մոսկվա, 1926, էջ 91:

⁵ **Ղարիբջանյան Գ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան, 1955, էջ 5, **Հարությունյան Շ.**, Հոկտեմբերյան ռոյտյուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1957, էջ 16, **Эльчибекян А.**, Установление советской власти в Армении, Ереван, 1954, с. 101, *նույնի՝* Великая октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении, Ереван, 1957, с. 156:

⁶ **Կարապետյան Հ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1961, էջ 278:

⁷ **Գալոյան Գ.**, Մայիսյան հերոսական ապստամբությունը, Երևան, 1960, էջ 3, *նույնի՝* Борьба за советскую власть в Армении, М., 1957, с. 175:

քական իշխանությունը գրավելու նախապայման»¹, «աշխատավորության ռևոլյուցիոն սխրագործություն»²: Իսկ սփյուռքահայ, մասնավորապես դաշնակցական պատմագրության մեջ այն դիտարկվել է իբրև «եղբայրասպան քաղաքացիական պատերազմի ու զինված ապստամբության միջոցով Հայաստանի անկախությունը խորտակելու և պետական իշխանությունը հափշտակելու փորձ»³, «հարված նոր կազմավորված և ամրապնդվող հանրապետության թիկունքին»⁴: Մայիսյան իրադարձությունների ականատես, դաշնակցական պետական գործիչ Կ. Սասունին, ներկայացնելով Կարսի, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի շրջաններում տեղի ունեցած մայիսյան իրադարձությունները, դրանք բնութագրում է ոչ թե իբրև «ապստամբություն», այլ՝ «շարժում», «խռովություն»⁵ և համանման այլ տերմիններով: Մեկ այլ սփյուռքահայ հեղինակ՝ հնչակյան գործիչ Ա. Կիտուրը, մայիսյան ապստամբությունը համարում է «բանվորագյուղացիական հեղափոխության նախընթաց»⁶: Ինչ վերաբերում է հետխորհրդային շրջանի պատմաբաններին, ապա վերջիններից ոմանք մայիսյան ապստամբությունը համարել են որպես «վաղաժամ, լավ չնախապատրաստված և չկազմակերպված ապստամբություն, արկածախնդրություն»⁷, «խռովություն»⁸, «քաղաքացիական պատերազմ»⁹ և այլն:

1920-1930-ական թթ., երբ տակավին խորհրդահայ պատմագրությունը գտնվում էր ձևավորման փուլում, մեկը մյուսի հետևից հրատարակվեցին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյանի¹⁰, Դիլիջանի ՌՀԿ-ի նախագահ Շ. Ամիրխանյանի¹¹, ապստամբության մասնակից Թ.

¹ Ավետիսյան Հ., Մայիսյան ապստամբությունը Կոմիտեերի նյութերում (1920 թ. մայիս-սեպտեմբեր), Երևան, 1981, էջ 17:

² Վարդանյան Հ., Անդրկովկասում նացիոնալիզմի դեմ բոլշևիկների մղած պայքարի պատմությունից 1903-1920 թթ., Երևան, 1962, էջ 197:

³ Վրացեան Ս., Հայաստանը բոլշևիկեան մուրճի և թուրքական սալի միջև, Պէյրուք, 1953, էջ 95, *նույնի*՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 441:

⁴ Փիրումյան Ռ., Հայաստանը ՀՅԴ-բոլշևիկ հարաբերությունների ոլորտում 1917-1921 թթ., Երևան, 1997, էջ 170:

⁵ Մասունի Կ., Մայիսեան խռովութիւնները և թաթարական ապստամբ շրջանները (Հայաստանը 1920ին), Պէյրուք, 1968, էջ 9-158:

⁶ Կիտուր Ա., Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան (1887-1962), Ա հատոր, Պէյրուք, 1962, էջ 488:

⁷ Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդայնացման հարցի շուրջ (1920 թ.) // «Դրօշակ», 2001, թիվ 2, էջ 136:

⁸ Շոխազարյան Ա., ՀՀ-ում 1920 թ. բոլշևիկների մայիսյան ելույթների և դրանց գնահատականի շուրջ // «Դրօշակ», 2009, թիվ 5, էջ 24:

⁹ Բարաջանյան Վ., Միջկուսակցական հարաբերությունները ՀՀ-ում բոլշևիկյան հակապետական ելույթների և դրանց հետևանքների հաղթահարման շրջանում (1920 թ. մայիս-օգոստոս), Երևան, 2006, էջ 3:

¹⁰ Տե՛ս Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ.:

¹¹ Տե՛ս Ամիրխանյան Շ., նշվ. աշխ.:

Մանդայանի¹, Ս. Խանոյանի², Ա. Մելիք-Շահնազարյանի³, Ա. Կարինյանի⁴ և այլոց ուսումնասիրությունները, որոնք հիմնականում քաղաքական նշանակություն ունեցող աշխատություններ էին և կրում էին կոնյունկտուրային բնույթ: Դրանք կարելի է համարել նաև հուշագրություններ, քանի որ ակնատեսի աչքերով ներկայացված է ապստամբության պատմությունը: Նշված հեղինակներից մայիսյան ապստամբությունը լուսաբանելու ուղղությամբ առաջին լուրջ փորձը 1920-ական թվականներին կատարել է Ա. Հովհաննիսյանը, ով հակիրճ ներկայացրել է մայիսյան ապստամբության ընթացքը և պարտության պատճառները, այն բնութագրել որպես «բանվորական, զինվորական և գյուղացիական լայն մի շարժում»: Ի դեմս դրա՝ նա տեսնում էր ապստամբության ուժը, միաժամանակ նաև թուլությունն ու պարտության պատճառները⁵՝ այն որակելով որպես «անառագաստ ու անդեկ ապստամբություն»⁶:

Այս շրջանում հրատարակված աշխատությունների շարքում հարկ է առանձնացնել Ս. Ներսիսյանի և Կ. Ղազարյանի կազմած փաստաթղթերի ժողովածուն⁷, որտեղ առանձին գլուխներով ներկայացված են մինչև մայիսյան ապստամբությունը ընկած ժամանակահատվածում գյուղացիության և բանվոր դասակարգի դրությունը, Դաշնակցության պետական և քաղաքական համակարգը, մայիսյան խռովությունները և դրանց ճնշումը: Ժողովածուի հարուստ առաջաբանը, որի հեղինակը Կ. Ղազարյանն է, 1920-1930-ական թվականներին մայիսյան ապստամբության վերաբերյալ գրված աշխատանքների շարքում կարելի է համարել ամենահաջողվածը:

Թվում էր, թե խորհրդահայ պատմագրության մեջ պետք է միաձայն գովերգվեր մայիսյան ապստամբությունը, բայց տեղի ունեցավ նաև հակառակը: 1927 թ. «Կոմմունիստ» թերթում հրատարակված՝ մայիսյան ապստամբությանը վերաբերող հոդվածներում Գ. Վանանդեցին և Հ. Դուրգերյանը քննադատում էին ոչ միայն այդ ապստամբությունը՝ այն համարելով «վաղաժամ ելույթ»⁸, այլև այն փառաբանող Ա. Հովհաննիսյանին և Շ. Ամիրխանյանին: Այս հոդվածներն անարձագանք չմնացին: Ի պատաս-

¹ Տե՛ս **Մանդայան Թ.**, Մայիսյան ապստամբությունը, Երևան, 1929:

² Տե՛ս **Խանոյան Ս.**, Մայիսյան ապստամբությունը (1920-1930), Երևան, 1930:

³ Տե՛ս **Մելիք-Շահնազարյան Ա.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1930:

⁴ Տե՛ս **Կարինյան Ա.**, նշվ. աշխ.:

⁵ Տե՛ս **Հովհաննիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 45:

⁶ Նույն տեղում, էջ 46:

⁷ Տե՛ս առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում, (Մայիսյան ապստամբությունը), նյութեր և փաստաթղթեր, կազմեցին՝ Կ. Ղազարյան և Ս. Ներսիսյան, խմբագրությունը՝ Կ. Ղազարյանի, Երևան, 1932:

⁸ Տե՛ս **Վանանդեցի Գ.**, նշվ. աշխ., **Դուրգերյան Հ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում // «Կոմմունիստ», 1927, թիվ 9-10:

խան Գ. Վանանդեցու և Հ. Դուրգերյանի քննադատությունների՝ 1928 թ. մամուլի էջերում հրատարակվեցին Շ. Ամիրխանյանի, Ա. Բերբերյանի և Մ. Գարագաշի հոդվածները¹: Հ. Դուրգերյանը իրավացիորեն կարծում էր, որ Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումը վաղաժամ էր, քանի որ մայիսյան ապստամբությանը կուսակցությունը դեռ պատրաստ չէր, իսկ հեղափոխական իրադրության համար օբյեկտիվ պայմանները երկրում դեռևս չէին հասունացել: Հեղինակի խորին համոզմամբ, եթե նույնիսկ մայիսյան ապստամբությունը հաջող էլք ունենար, միևնույն է՝ բոլշևիկները չէին կարող պահպանել իշխանությունը իրենց ձեռքում, քանի որ երկրի տնտեսական պայմանները ծանր էին²: Անշուշտ կարելի է համաձայնվել այս տեսակետի հետ, քանի որ երկիրը, իրոք, դեռևս պատրաստ չէր խորհրդայնացման:

1935 թ. մեկը մյուսի ետևից հրատարակվեցին Ա. Խանջյանի և Մ. Ներսիսյանի աշխատությունները: Ինչպես Ա. Հովհաննիսյանը, Ա. Խանջյանը ևս դարձյալ կուսակցական դիրքերից է մոտեցել հարցի գնահատմանը՝ մայիսյան ապստամբությունը համարելով «հերոսական ընդվզում խորհրդային սքանչելի այսօրվա և առավել սքանչելի վաղվա համար»: «Մայիսյան խիզախ պայքարն անհետ չանցավ, - գրում է նա, - որովհետև նա խարխուլեց իմպերիալիստների ու դաշնակցության տիրապետության հիմքերը Հայաստանում և այդպիսով հանդիսացավ Նոյեմբերյան հաղթանակի նախադուռ»³: Ինչ վերաբերում է Մ. Ներսիսյանի աշխատությանը, ապա նա իր նպատակը համարել է «ընդհանուր գծերով և հանրամատչելի ձևով պատկերել աշխատավոր մասսաների պայքարը»:

Հայաստանի առաջին Հանրապետության պատմության հիմնահարցերի համատեքստում Մ. Ներսիսյանը անդրադարձել է նաև մայիսյան ապստամբության նկարագրությանը: Նրա կարծիքով, աշխատավորական զանգվածներն ի դեմս դաշնակցության տեսնում էին իրենց ռիսերիմ, դասակարգային թշնամուն: Անընդունելի է հեղինակի այն կարծիքը, ըստ որի մայիսյան ցույցերը իբր պարզեցին, թե դաշնակցությունը երկրում չունեի որևէ լուրջ, ամուր պատվանդան, իսկ այդ ցույցերը ոչ միայն այնքան հուժկու, զանգվածային և մարտական էին, որ ցնցեցին դաշնակցական պետականության հիմքերը, այլև այնքան հեղափոխական բնույթ ունեին, որ դաշնակցությունը

¹ Տե՛ս **Ամիրխանյան Շ.**, Մեջանական դատողություն մայիսյան ապստամբության մասին // «Կոմունիստ», 1928, թիվ 3, **Բերբերյան Ա.**, Պատասխան ընկեր Հ. Դուրգերյանին // «Լենինյան ուղի», 1928, թիվ 1-2, **Գարագաշ Մ.**, Մայիսյան ապստամբության և դաշնակցության գնահատականի մի փորձի առթիվ // «Կոմունիստ», 1928, թիվ 1:

² «Կոմունիստ», 1927, թիվ 9-10, էջ 95-96:

³ **Խանջյան Ա.**, Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակ, Երևան, 1935, էջ 46:

մատնվեց սարսափի¹: Թեև հեղինակը քննադատում է Արմենկումի դիրքորոշումը և մայիսյան ապստամբության պարտությունը համարում նրա և ռազմհեղկումների թուլության և թույլ տված սխալների արդյունք, բայց ամենին չի քննադատում «անձնագոհ ընկերներին»²: «Փոխանակ մայիսի 1-ից հենց անմիջապես հետո սկսելու ապստամբական վճռական գործողությունները, Արմենկումը դեռևս հապադում էր վճռական գործողությունների անցնել, և ձգձգում՝ ապստամբության անցնելու գործը»³, – գրում է հեղինակը:

1940-ական թվականներին կարծես թե մարեց մայիսյան ապստամբության պատմության նկատմամբ հետաքրքրությունը, իսկ 1950-ական թվականներից սկսած՝ պատմաբանների «գրոհը» դարձյալ նոր թափով ստացավ:

Ի տարբերություն 1920-1930-ական թվականների, երբ ուղղակի ներկայացվում էր մայիսյան ապստամբության պատմությունը, իսկ թեմային առնչվող գրեթե բոլոր ուսումնասիրությունները հենց այդպես էին վերնագրված, ապա 1950-1960-ական թվականներին այն գլխավորապես ներկայացվում էր Հոկտեմբերյան հեղափոխության կամ Հայաստանի խորհրդայնացման գործընթացի համատեքստում: Սակայն հարկ է նշել, որ այժմ թեմայի ուսումնասիրության ասպարեզում գիտական նորույթ գրեթե չկար:

1950-ական թվականներին իրար հետևից հրատարակվեցին Գ. Ղարիբջանյանի մայիսյան ապստամբությանը նվիրված աշխատությունները⁴: 1955 թ. լույս տեսավ Հ. Տոնոյանի փոքրածավալ գրքույկը, որտեղ հեղինակը ներկայացնում է հիմնահարցի համառոտ շարադրանքն ու վերլուծությունը: Մայիսյան ապստամբությունը նա համարում է Հայաստանի աշխատավորության ազատագրական պայքարի հերոսական դրվագներից մեկը⁵: «Դաշնակների տիրահռչակ տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանը սովի և աղքատության, անվերջ պատերազմների, ազգամիջյան կոտորածների երկիր էր: Դաշնակների ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով ստեղծարար հայ ժողովուրդը պարզապես կանգնեց ֆիզիկական բնաջնջման վտանգի առջև»⁶:

1960-ական թվականներին հրատարակված աշխատությունների շարքում ցանկանում ենք առանձնացնել Հ. Կարապետյանի և Ա. Մելքոնյանի գրքերը: Հ. Կարապետյանը առավել ամբողջական է ներկայացնում հիմնա-

¹ Տե՛ս **Ներսիսյան Մ.**, Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Երևան, 1935, էջ 93:

² Տե՛ս նույն տեղում, էջ 98-101:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 94:

⁴ Տե՛ս **Ղարիբջանյան Գ.**, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917-1920 թթ., Երևան, 1953, *նույնի՝* Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան 1955, *նույնի՝* Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Երևան, 1955:

⁵ Տե՛ս **Տոնոյան Հ.**, Փառապանծ էջ Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունից. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (համառոտ ակնարկ), Երևան, 1955, էջ 3, 20:

⁶ Նույն տեղում, էջ 6:

հարցը: Ի տարբերություն նախորդ շրջանի հեղինակների՝ նա փաստական հարուստ նյութի հիման վրա շարադրում է ապստամբության սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները, զինված ապստամբությունը և ապստամբության պարտության պատճառներն ու նշանակությունը: Մակայն ամենևին համաձայն չենք հեղինակի այն եզրահանգմանը, թե իբր Հայաստանում ստեղծվել էր անմիջական հեղափոխական իրադրություն, ապստամբական տրամադրությունը համակել էր բանվորներին, զինվորներին և գյուղի աշխատավորներին¹: Ընդունելի չենք համարում նաև նրա այն ձևակերպումը, թե իբր «կոմունիստական պարտիայի և սովետական իշխանության գաղափարը մեծ մասսայականություն էր գտել Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիների լայն շերտերի մեջ»: Իբրև նման հետևության հաստատում հեղինակը վկայակոչում է մայիսմեկյան ցույցերն ու հանրահավաքները²:

Հ. Կարապետյանը մայիսյան ապստամբությունը համարում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության հարուստ տարեգրության փառավոր էջերից մեկը, համաժողովրդական, երկրում առկա օբյեկտիվ իրադրությամբ պայմանավորված ապստամբություն, աշխատավորական լայն զանգվածների հեղափոխական, ազատագրական պայքարի օրինաչափական հետևանք³:

1965 թ. հրատարակվեց Ա. Մելքոնյանի՝ մայիսյան ապստամբությանը նվիրված աշխատությունը: Գնահատելի են հեղինակի հարցադրումները վիճահարույց հիմնահարցերի մասին, և հատկապես գովեստի է արժանի այն, որ նա առաջին գլխում ներկայացրել է թեմային վերաբերող գրականության տեսության համառոտ վերլուծությունը, ինչը մինչ այդ որևէ հեղինակի կողմից չէր արվել: Ի տարբերություն իր նախորդների, ովքեր մայիսյան ապստամբության պատմությունը մեծ մասամբ ներկայացրել էին նկարագրողական ձևով, Ա. Մելքոնյանը հիմնահարցի որոշ դրույթներ ներկայացնելիս ցուցաբերել է պատմաքննական մոտեցում: Աշխատության նորույթը կարելի է համարել այն, որ հեղինակը քննարկման առարկա է դարձրել զինված ապստամբության կազմակերպման հարցի շուրջ եղած տարաձայնությունները⁴:

1960-1980-ական թվականներին հրատարակվեցին ակադեմիկոս Գ. Գալոյանի աշխատությունները, որոնց մի մասը ուղղակիորեն վերաբերում էր

¹ Տե՛ս **Կարապետյան Հ.**, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան, 1961, էջ 121:

² Տե՛ս նույն տեղում, էջ 120:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 278:

⁴ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, Երևան, 1965, էջ 95-120:

մայիսյան ապստամբությանը¹, իսկ մյուս մասում իրադարձության պատմությունը լուսաբանվում էր Հայաստանի խորհրդայնացման համապատկերում²:

Փաստորեն խորհրդային պատմագրության մեջ 1920 թ. մայիսյան ապստամբությունը փառաբանվել է ու որակվել իբրև հերոսական և ժողովրդական: Խորհրդահայ պատմաբանները, առանց լուրջ հիմնավորման, գտնում էին, որ եթե այս ապստամբությունը ավարտվեր հաղթանակով, և Հայաստանը հռչակվեր խորհրդային, ապա քեմալականները չէին հարձակվի խորհրդայնացված Հայաստանի վրա, և չէինք ունենա տարածքային կորուստներ: Խորհրդային տարիներին նման տեսակետները կարծես թե օրինաչափ էին:

Միյուրքահայ պատմագրության մեջ ևս շրջանառվում էր այս կարծիքը, որը, ի դեպ, դա մահից առաջ սատարել է նաև Ս. Վրացյանը. «Մենք պետք է ավելի խոհեմ լինեինք, ավելի շրջահայաց, պետք է ատ քայլն ըրած ըլլայինք մայիսյան ընդվզումի օրերին. Հայաստանը հանձնած ըլլայինք ձեզ՝ պուշեիկներուդ: Հայաստանի տարածքն ավելի ընդարձակ կըլլար Ղարս, Արդահան, Իգդիր... Է՛հ, ինչ ըսեմ, ինչպես արդարանամ»³: Ռ. Հովհաննիսյանը ևս զարգացնում է այս տեսակետը. «Իբրև պատմաբան և իբրև սրտացավ հայ կըսեմ, թե երանի 1920 թ. այն ապստամբությունը հաջողեր և միգուցե Կարսը մնար, Սուրմալուն կմնար մեր ձեռքը, Մասիսը մեր ձեռքը կմնար: Բայց պետք է հասկանալ նաև այն ժամանակվա կառավարողներուն»⁴: Չարմանալին այն է, որ հետխորհրդային պատմագրության մեջ, մամուլի էջերում դարձյալ շրջանառվում է վերոնշյալ տեսակետը, որ եթե 1920 թ. մայիսին դաշնակցականները ընդհանուր լեզու գտնեին բոլշևիկների հետ, և հենց մայիսին խորհրդայնացվեր Հայաստանը, ապա կբացառվեր քեմալականների հարձակումը Հայաստանի վրա, և տարածքային նման կորուստներ չէինք ունենա⁵: Եթե խորհրդայնացումը կատարվեր մայիսին, շատ հնարավոր է՝ Հայաստանն այսօր իր սահմաններում ունենար նաև Կարսի մարզը, Սուրմալուի գավառը: Հարկ է, սակայն, նշել, որ այս տարածքների, ինչպես նաև Ղարաբաղի և Նախիջևանի շուրջ վերջնական համաձայնություն

¹ Տե՛ս **Գալոյան Գ.**, Մայիսյան հերոսական ապստամբությունը, Երևան, 1960, *նույնի՝* Հերոսական մայիսից հաղթական նոյեմբեր, Երևան, 1980:

² Տե՛ս **Գալոյան Գ.**, Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, 1961, *նույնի՝* Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900-1922, Ереван, 1969, *նույնի՝* Октябрьская революция и возрождение народов Закавказья, М., 1977, *նույնի՝* Պատմության քառուղիներում, ազատագրված ժողովրդի վերածնունդը, Երևան, 1982:

³ «Հայաստանի Հանրապետություն», 24.11.1993:

⁴ Հղումն ըստ **Լ. Հախվերդյանի**, Թումանյանը և իր ժամանակը, Երևան, 1995, էջ 84:

⁵ «Առավոտ», 12.5.2001, **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 153:

կայացվեց միայն 1921 թ., երբ Հայաստանն արդեն խորհրդայնացված էր, իսկ Խորհրդային Ռուսաստանը որևէ առարկություն չարեց այս տարածքները մեր թշնամիներին զիջելու հարցում:

Մայիսյան ապստամբությունը համարում ենք հայ բոլշևիկների անձնական նախաձեռնությունը, որովհետև Խորհրդային կառավարության կամ հայ բոլշևիկների կողմից որևէ դիմում ՀՀ կառավարությանը իշխանությունը հանձնելու վերաբերյալ չի եղել: Կարծում ենք, որ եթե անգամ ՀՀ կառավարությունը որոշեր իշխանությունը հանձնել բոլշևիկներին, այն է՝ Արմենկոմին, քանի որ տվյալ պարագայում այն էր ՌԿ(Բ)Կ Հայաստանի կոմիտեն, ապա դա շատ սխալ քայլ կլիներ Դաշնակցական կառավարության կողմից, քանի որ Արմենկոմը ուղղակի անկազմակերպ և թույլ մի կառույց էր: Ինչպես իրավացիորեն նշում է խորհրդահայ պատմաբան Բ. Բորյանը, Արմենկոմում ներկա էին պատահական մարդիկ¹:

Անտեղի և անհիմն ենք համարում Դաշնակցական կառավարության հասցեին հնչած մեղադրանքները տարածքային կորուստների հետ կապված, որովհետև ո՞վ պահանջեց իշխանությունը դաշնակցականներից, որոնք չտվեցին այն: Միայն մի դեպքում հնարավոր կլիներ 1920 թ. մայիսին խորհրդայնացնել Հայաստանը, եթե Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հստակ պահանջ ներկայացներ իշխանությունը հանձնելու վերաբերյալ, և տրվեին տարածքների պահպանման համապատասխան երաշխիքներ:

Ադրբեջանի խորհրդայնացումը, անշուշտ, իր արձագանքը գտավ Հայաստանի սահմաններում: ՀՀ մի շարք վայրերում և հատկապես Ալեքսանդրապոլում ռուս-ադրբեջանական քարոզիչները, շահագործելով հացի ճգնաժամը, կարողացան հրահրել մի շարք հակապետական խռովություններ: Կառավարությունը անմիջապես ձեռնամուխ եղավ վերջ տալու հայ ժողովրդի շրջանում ոչ մի հող չգտած և օտարների կողմից Հայաստան թափանցած արկածախնդրությանը²: Հայ բոլշևիկները իրենց հույսը դրել էին դրսի օգնության վրա, ինչը չիրականացավ: Իսկ թե ինչու, ցանկանում ենք նախ նշել, որ Ադրբեջանին ձեռնտու չէր Հայաստանի խորհրդայնացումը, որովհետև Ադրբեջանը, հեշտությամբ հանձնելով իշխանությունը բոլշևիկներին, հույս ուներ թուրքերի միջնորդությամբ և բոլշևիկների օգնությամբ լուծել իր խնդիրները³: Խորհրդայնանալուց հետո փաստորեն այն դարձավ Ռուսաստանի մի ծայրագավառը: Ռուսաստանը հետզհետե իր ձեռքը վերցրեց երկրի զինվորական ու արտաքին քաղաքական դեկը և Ադրբեջանին դաշնակից անվանելով՝ սկսեց պաշտպանել նրա շահերը ի վնաս Հայաս-

¹ Տե՛ս **Борян Б.**, Армения, международная дипломатия и СССР, ч. II, М., 1929, с. 114:

² ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 107, թ. 3:

³ Տե՛ս **Խատիսեան Ա.**, ՀՀ ծագումն ու զարգացումը, Պէրյութ, 1968, էջ 253:

տանի¹: Փաստորեն անիմաստ էր հայ բոլշևիկների կողմից Ադրբեջանից օգնություն ակնկալելը, քանի որ վերջինիս վերաբերմունքը հայերի նկատմամբ միշտ եղել է թշնամական: Այդ հարցում հայ բոլշևիկները համոզվեցին Ադրբեջանի Հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովից օգնություն խնդրելուց հետո: Գաղտնիք չէ, որ Ա. Նուրիջանյանը և Ս. Մուսայեյանը մայիսի 3-ին դիմել էին նրան՝ խնդրելով աջակցություն, սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, որևէ արդյունքի չհասան²:

Հարկ է նշել, որ բոլշևիկների Կովկասյան բյուրոն ևս դեմ էր մայիսյան ապստամբությանը: Դրան դեմ էին նաև հայտնի բոլշևիկներ Բ. Ղարիբջանյանը և Ս. Ալավերդյանը³: Ապստամբները զուր էին օգնություն ակնկալում Անդրկովկասում գտնվող բոլշևիկյան գորամասերից: Ճիշտ է, Ադրբեջանի խորհրդայնացումից հետո խորհրդային զորքերը սկսեցին համապատասխան ռազմավարական քայլեր ձեռնարկել Հայաստանի և Վրաստանի սահմաններին, սակայն մայիս ամսին Լեհաստանում իրավիճակը սկսել էր բարդանալ, ինչը աննպաստ էր բոլշևիկների համար: Ուստի նման պայմաններում խորհրդային կառավարությունը ստիպված էր մեծ թվով զորքեր ուղարկել լեհական ճակատ: Ահա թե ինչու 10-րդ բանակը, որն ուղարկվել էր Կովկաս, ամբողջությամբ տեղափոխվեց հյուսիս: Այս իրավիճակում է, որ անգլիական սադրիչ քաղաքականության արդյունքում Գյանջայի շրջանում՝ բոլշևիկյան զորքերի թիկունքում, բռնկվեց ադրբեջանական հակահեղափոխականների ապստամբությունը: Նման պայմաններում 11-րդ բանակի հրամանատարությունը դադարեցրեց գործողությունները Հայաստանի և Վրաստանի սահմանին և բոլոր ուժերը ուղարկեց հակահեղափոխականների դեմ⁴: Փաստերը ցույց են տալիս, որ այդ ժամանակ Ստալինը ևս Հայաստանի խորհրդայնացման կողմնակից չի եղել: Լ. Կարախանի մայիսի 23-ի հեռագրից պարզվում է, որ Ստալինը Հայաստանում ստեղծված իրավիճակը համարում էր անբավարար որոշում կայացնելու համար և խնդրում էր տրամադրել լրացուցիչ տեղեկություններ, թե ինչ կարելի է ակնկալել: Նրա կարծիքով երկու գնդի ապստամբների կողմն անցնելը դեռևս երաշխիք չէր, որ հայկական զորքերի մեծ մասը կանցնի ռուսների կողմը: Իսկ ռուսական զորամասերի առանձնացումը համարում էր անժամանակ: Առայժմ ամեն ինչ պետք է տրվեր լեհական ճակատին: Լ. Կարախանի կարծիքով, հարկավոր էր ստանալ Թուրքիայի հետ շփման լրիվ հնարավորություն, իսկ դրա համար պետք էր հայկական կառավարությունից պահանջել համաձայնել ռուսական զորքերի կողմից հայ-մուսուլմանական խառը բնակչու-

¹ ՀԱՍ, ֆ. 200, ց. 2, գ. 107, թ. 4:

² Տե՛ս **Калишев А. Б.**, Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960, с. 287-288:

³ Տե՛ս **Խուդինյան Գ., Հակոբյան Ա.**, 23 Դաշնակցության պատմության խեղաթուրման վերջին փորձերը, Երևան, 2005, էջ 45:

⁴ Տե՛ս **Ататурк М. К.**, Избранные речи и выступления, М., 1966, с. 102:

թյամբ տարածքների զբաղեցումը: Դա կնշանակեր թույլ տալ ռուսական զորքերին մոտենալ Թուրքիայի սահմանին, ինչը պետք է արվեր բացահայտ, որ ամբողջ Հայաստանն իմանար ռուսների պահանջի մասին և հավատար ցանկացած սադրանք ու ազգային ջարդ կանխելու նրանց ցանկությանը¹:

Այդ օրերին բոլշևիկների կողմից Կենտրոն ուղարկվող հեռագրերը մեկ նպատակ էին հետապնդում՝ համոզել խորհրդային կառավարությանը, որ հայ ժողովուրդը պատրաստ է ընդունելու խորհրդային իշխանություն: Այնինչ 11-րդ բանակի երկու գնդերը մայիսյան այդ օրերին Հայաստան էին մտել ոչ թե խորհրդային կառավարության գիտությամբ, այլ Գ. Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ: Մինչդեռ խորհրդային ղեկավարությունը Ադրբեջանի խորհրդայնացումից հետո արտաքին և ներքին աննպաստ պայմանների թելադրանքով մայիսի սկզբներին որոշում է օրակարգից ժամանակավորապես հանել Վրաստանի և Հայաստանի խորհրդայնացման հարցը²: Այս ամենը ավելի պաշտոնական ձևակերպում է ստանում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի 1920 թ. մայիսի 25-ի նիստում, որը որոշում է կայացնում. «Շարունակել բանակցությունները ՀՀ կառավարության հետ, չվերցնելով ռուսական զորքերի օգնությամբ անմիջապես խորհրդայնացման նախաձեռնությունը»³: Փաստորեն, Քաղբյուրոյի այս որոշումով Խորհրդային Ռուսաստանը հրաժարվում է Հայաստանը զինված ուժով խորհրդայնացնելու մտքից, իսկ այդ հարցը, արտաքին և ներքին աննպաստ պայմաններից ելնելով, ժամանակավորապես հանվում է օրակարգից և ընդգրկվում ՀՀ-ի հետ բանակցային գործընթացում:

Այսպիսով, Հայաստանի խորհրդայնացման առաջին անկազմակերպ փորձը ձախողվեց: ՀՀ կառավարությունը արդեն տեղյակ էր քեմալա-բոլշևիկյան մերձեցմանը, ուստի դրանից վտանգ տեսնելով՝ սկսում է բանակցությունները Խորհրդային Ռուսաստանի հետ: Սակայն երեք ամիս տևած բանակցությունները չհանգեցրին որևէ դրական արդյունքի, համաձայնություն չկայացավ Ղարաբաղի և Ջանգեզուրի հարցերի շուրջ, որոնք Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի կառավարությունները նկատում էին իբրև վիճելի⁴: Կարծում ենք, որ Հայաստանի խորհրդայնացման առաջին փորձը հենց սկզբից դատապարտված էր անհաջողության, քանի որ բոլշևիկների ուժերը բավականին քիչ էին, սակավ էին թե՛ մարդկային և թե՛ ռազմական ռեսուրսները: Տեղում հենարան չունենալով՝ նրանք իրենց հույսը դրել էին դրսի օգնության վրա, ինչը չիրականացավ: Իրական օգնություն կարելի էր սպասել միայն Խորհրդային Ռուսաստանից, ինչը ևս առայժմ

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), Երևան, 2000, էջ 194:

² Տե՛ս **Խուրջուղյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թ., Երևան, 2002, էջ 48:

³ Նույն տեղում, էջ 50:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 107, թ. 5:

անհեռանկարային էր: Ըստ Ա. Հովհաննիսյանի հաշվարկների՝ բոլշևիկների թիվը մայիսյան ապստամբության նախօրեին հազիվ թե կարող էր հասնել հազարի: «Մոտավոր հաշվով կազմակերպության մեջ մտնում էին Երևանի գավառում 200 անդամ և թեկնածու, Նոր-Բայազետի գավառում 60-80, Իջևանի և Դիլիջանի շրջաններում 150-200, Ալեքսանդրապոլի գավառում 200, Ղարսի և Սարիղամիշի շրջաններում 100 և այլն»¹,– գրում է նա: Նման պարագայում բնական է, որ նորանկախ Հայաստանը չէր հրաժարվի իր անկախությունից, ուստի հայ ժողովուրդը, սոցոթրված անկախական գաղափարներով, պայքարեց ապստամբությունը ճնշելու և երկրի անկախությունն ու ազատությունը ապահովելու համար:

1920 թ. գարնանը Խորհրդային Ռուսաստանը մի կողմից զբաղված էր Դենիկինի, Վրանգելի և Կոլչակի դեմ պայքարով, իսկ մյուս կողմից ուժերը կենտրոնացրել էր լեհական ճակատում իրավիճակը խաղաղեցնելու համար: Բնական է, որ սովյալ պարագայում անիրատեսական էր խորհրդային ուժերի մուտքը Հայաստան: Իսկ ինչ վերաբերում է Ադրբեջանի խորհրդայնացմանը, որը տեղի ունեցավ այդքան լուռ և հապճեպ, ապա պետք է նշել, որ այդ գործում լուրջ դերակատարություն է ունեցել Մուստաֆա Քեմալը: Ադրբեջանի խորհրդայնացումը փաստորեն խորհրդա-քեմալական համագործակցության առաջին լուրջ արդյունքը եղավ²: Ադրբեջանի խորհրդայնացման գլխավոր դերակատարներից մեկը Վ. Ի. Լենինն էր, ով դեռևս մարտի 17-ին Օրջոնիկիձեին հղած մի հեռագրում շեշտում էր, որ հաշվի առնելով ադրբեջանական նավթի անհրաժեշտությունը Կարմիր բանակի համար՝ հարկ է, որ բոլշևիկները իրենց բոլոր ուժերը կենտրոնացնեն Բաքուն գրավելու համար³:

Այսպիսով, 1920 թ. մայիսին հայ բոլշևիկների ծրագրած Հայաստանի խորհրդայնացումը չիրականացվեց, մանավանդ այդ օրերին Մոսկվա էր մեկնել Շանթի գլխավորած հայկական պատվիրակությունը: Սա նշանակում է, որ Հայաստանի խորհրդայնացման հարցը ժամանակավորապես սառեցվեց և մտավ բանակցային փուլ:

Азатян Ара – Относительно оценки майского опыта советизации Армении

Майское восстание 1920 г. является одним из спорных вопросов новейшего периода истории армянского народа, удостоенных разных оценок в историографии. Майское восстание квалифицировалось как демократическое, героическое. Советско-армянские историки безосновательно считали, что в случае победы восстания осенью 1920 г. кемалисты не напали бы на РА и не было бы территориальных потерь, что произошло в результате турецко-армянской войны. Диаметрально противоположную точку зрения

¹ Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 9-10:

² Տե՛ս և Խաչատրյան Վ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, էջ 15:

³ Տե՛ս և Կաдишев А., указ. соч., с. 230:

развивает дашнакская историография, считая восстание ударом большевиков в спину РА. Данные крайние подходы к майскому восстанию не дают возможности исследователям полностью проанализировать этот фундаментальный вопрос, сделать объективные выводы. Нашей целью было представить определения, данные майскому восстанию, разъяснить существующую в историографии точку зрения, имели бы мы более обширную территорию или нет, если бы Армения советизировалась в мае, и обосновать, почему провалился первый этап процесса советизации.

Ara Azatyan – Regarding the Evaluation of the May Attempt of Sovietization of Armenia

The May Uprising of 1920 is one of the disputable issues of the modern period of Armenian history, which has been evaluated differently in historiography. The May Uprising was qualified as a democratic, heroic one. Soviet Armenian historians wrongly believed, that in case of the victory of the Uprising in the autumn of 1920, the Kemalists would not have attacked the RA and there wouldn't have been territorial losses, which happened as a result of the Turkish-Armenian War. A completely opposite view is developed by the Dashnak historians, who consider the May Uprising to be a stab in back of the RA by the Bolsheviks. The extremely different approaches to the May uprising do not allow researchers to fully analyze this fundamental issue and to come to fair conclusions. Our goal is to qualify the records of the May uprising, to clarify the point of view existing in historiography, i.e. whether we would have a larger territory had Armenia been Sovietized in May, and substantiate why the first stage of the process of Sovietization failed.

«ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՒՋԱՅԵԼ
ԼԵՄԿԻՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Բանալի բառեր – Ռաֆայել Լեմկին, Օսմանյան կայսրություն, հումանիտար ինտերվենցիա, քրիստոնյա ազգեր, եվրոպական տերություններ, միջամտություններ ի պաշտպանություն հայերի, 1878 թ. Բեռլինի պայմանագրի դրույթներ

Գոյություն ունեն հումանիտար ինտերվենցիա հասկացության տարբեր սահմանումներ: Շատ հեղինակներ հավատարիմ են մնում ավանդական սահմանմանը, ըստ որի՝ հումանիտար ինտերվենցիան որևէ պետության կողմից հիմնարար իրավունքների ոտնահարումը և իր քաղաքացիների նկատմամբ հալածանքները կանխելուն միտված գործողություն է¹: Ընդունված է նաև Ջորջ Վաշինգտոնի անվան համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր, ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի անդամ Շոն Մըրֆիի սահմանումը՝ մարդասիրական միջամտությունը որպես առանձին պետության, պետությունների խմբի կամ միջազգային կազմակերպության կողմից ուժի կամ դրա սպառնալիքի կիրառումն է, որը միտված է թիրախային համարվող երկրի քաղաքացիների պաշտպանությանը մարդու՝ միջազգայնորեն ճանաչված իրավունքների ոտնահարումներից²: Փաստենք, որ մարդու իրավունքների խախտումները կարող են ներառել նաև մարդկայնության դեմ ուղղված հանցագործությունները և ցեղասպանությունները: Կան նաև այլ սահմանումներ:

Մարդասիրական միջամտության վերաբերյալ տեսությունը անցել է զարգացման տարբեր փուլեր: XVII դարում հոլանդացի իրավաբան, պետական գործիչ և փիլիսոփա Հուգո Հրոցիոսը, ով, հիմնվելով բնական իրավունքի վրա, դրել է միջազգային իրավունքի հիմքերը, առաջին անգամ ներկայացրել է մարդասիրական միջամտության տեսության հետևյալ բնութագրումը. երբ բռնակալները վատ են վերաբերվում իրենց հպատակներին, որոնք չեն կարողանում պաշտպանել իրենց, այլ երկրները կարող են քայլեր

¹ Տե՛ս **Benjamin B. M.**, Fordham International Law Journal, Unilateral Humanitarian Intervention: Legalizing the Use of Force to Prevent Human Rights Atrocities, vol. 16, The Berkeley Electronic Press, 1992, p. 126:

² Տե՛ս **Sean Murphy**, Humanitarian Intervention: The United Nations in an Evolving World Order, Philadelphia, 1996, p. 11-13:

ձեռնարկել՝ պաշտպանելու նրանց¹: Առաջ քաշելով «արդարացի պատերազմ» հասկացությունը՝ նա պնդում էր, որ պատերազմը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ դրա համար կա իրավական հիմք, երբ ճնշված բնակչությունը չի կարողանում պաշտպանել իրեն իր իսկ կառավարության հալածանքներից և օգնություն է խնդրում օտար երկրից: Հրոցիոսը ենթադրում էր նաև, որ մարդասիրական նպատակների տակ կարող են քողարկված լինել ներխուժման իրական տնտեսական կամ քաղաքական պատճառներ:

Նշենք, որ հումանիտար ինտերվենցիաների իրականացումը պայմանավորված է ինքնիշխանության իրավունքի խախտմամբ: Մարդասիրական միջամտությունները չեն ենթադրում ռազմական ուժի պարտադիր կիրառում, քանի որ դրանք կարող են հանդես գալ, օրինակ, պատժամիջոցների սահմանման ձևով:

Մարդասիրության ներքո պետությունները հաճախ փորձում են արդարացնել իրենց միջամտությունները: Շատ դեպքերում այդ ներխուժումը կարող է պայմանավորված լինել կրոնական փոքրամասնություններին, օրինակ՝ Օսմանյան կայսրության վերահսկողության տակ գտնվող տարածքներում ապրող քրիստոնյաներին պաշտպանելու անհրաժեշտությամբ: 1768-1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո՝ 1774 թ. հուլիսի 10-ին, Քյուչուկ Քայնարջիում կնքված պայմանագիրը սկիզբ դրեց Օսմանյան կայսրությունում մարդասիրական միջամտությունների պրակտիկային: Այդ պայմանագրի VII հոդվածը իրավունք էր վերապահում ռուսներին հանուն ռուս ուղղափառ եկեղեցու անդամների և ուղղափառ հպատակների, օրինակ՝ հույների և բուլղարացիների, միջամտել՝ պաշտպանելու նրանց մահմեդականների հալածանքներից²:

Հումանիտար ինտերվենցիան լայն տարածում ստացավ Հունաստանի անկախության պատերազմի ընթացքում, երբ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը միացյալ ինտերվենցիա իրականացրին Հունաստանում՝ հույն 1827-1830 թթ. բնակչության նկատմամբ ճնշումները դադարեցնելու նպատակով:

Հումանիտար ինտերվենցիայի իրականացումը կարևոր դեր է խաղացել նաև Ղրիմի պատերազմի ժամանակ (1853-1856), երբ Ռուսաստանը Օսմանյան կայսրությունից պահանջեց բարելավել նրա տարածքում բնակվող ուղղափառ հպատակների վիճակը, ինչպես նաև Պաղեստինում որոշակի արտոնություններ տրամադրել ուղղափառ և կաթոլիկ եկեղեցիներին³:

1860 թ. հունիսին Լիբանանի լեռներում ու Դամասկոսում մահմեդական-

¹ Տե՛ս **Benjamin B. M.**, նշվ. աշխ., էջ 127:

² Տե՛ս **Dadrian V. N.**, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus*, Berghahn Books, 1995, p. 8:

³ Տե՛ս **Köchler H.**, *The Use of Force in International Relations: Challenges to Collective security*, MG-Studio, Vienna 2006, p. 47:

ները և դրուզները կոտորեցին հազարավոր մարոնիտ քրիստոնյաների: 1860 թ. հուլիսի 31-ին Ավստրիայի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները Փարիզում հանդիպեցին Օսմանյան կայսրության ներկայացուցիչների հետ: Ընդունվեց արձանագրություն և այն ներառվեց սեպտեմբերի 5-ին ստորագրված կոնվենցիայի մեջ, ըստ որի՝ սուլթանը պետք է համաձայնվեր, որ Սիրիայում 12.000-անոց զորք տեղակայվեր խաղաղության վերականգնմանը նպաստելու համար: Ֆրանսիական զորքերը ռազմակալեցին Մեծ Սիրիայի զգալի մասը, իսկ նրանց ռազմանավերը կարգ ու կանոն էին պահպանում ափամերձ տարածքում 1860 թ. օգոստոսից մինչև 1861 թ. հունիսը¹:

Այսպիսով՝ Ֆրանսիան ռազմական միջամտություն իրականացրեց Սիրիայում՝ կանխելու Օսմանյան կայսրությունում քրիստոնյա բնակչության սպանող: Ֆրանսիական միջամտությունը համարվում է պատմագիտության մեջ հումանիտար ինտերվենցիան լեգիտիմացնելու ծանրակշիռ նախադեպ:

Հետագայում տեղի ունեցան հումանիտար ինտերվենցիաների բազմաթիվ դեպքեր: 1866-1868 թթ. Ավստրիան, Ֆրանսիան, Իտալիան, Պրուսիան և Ռուսաստանը հումանիտար ինտերվենցիա իրականացրին Կրետե կղզում, որտեղ ապրող քրիստոնյաները ենթարկվում էին թուրքական իշխանությունների բռնություններին, իսկ 1875-1878 թթ. եվրոպական տերությունները Բոսնիայի, Հերցոգովինայի, Բուլղարիայի քրիստոնյաներին լուրջ աջակցություն ցուցաբերեցին: Նման բազմաթիվ դեպքեր են հայտնի նաև XX դարում: Ինտերվենցիաների պրակտիկան կիրառվում է նաև ժամանակակից միջազգային հարաբերություններում:

Հումանիտար ինտերվենցիաների վերաբերյալ ուսումնասիրություններ են կատարել բազմաթիվ հեղինակներ: Մարդասիրական միջամտությունների, պետության ինքնիշխանության սահմանափակման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության հարցերը եղել են նաև «ցեղասպանություն» եզրույթի հեղինակ Ռաֆայել Լեմկինի գիտական հետաքրքրության շրջանակում: Իր հետազոտություններում անդրադառնալով այս խնդիրներին՝ նա տարբեր երկրներում տեղի ունեցած հումանիտար ինտերվենցիաների հետ մեկտեղ նշել է նաև ի պաշտպանություն հայերի Թուրքիայում իրականացված միջամտությունների կամ չիրականացված միջամտությունների անհրաժեշտության մասին:

Նյու Յորքում գտնվող Հրեական պատմական ընկերակցության Լեմկինի հավաքածուում պահպանվող բազմաթիվ արխիվային նյութեր վերաբերում են մարդասիրական միջամտություններին և փոքրամասնությունների պաշտպանությանը: Օրինակ՝ բացառապես այդ հարցերի մասին են 7-րդ

¹ Տե՛ս **Simon Chesterman**, *Just War Or Just Peace? Humanitarian Intervention and International Law*, New York, 2001, p. 32:

պահոցի 5-րդ թղթապանակում, 9-րդ պահոցի 1-ին և 8-րդ թղթապանակում պահվող նյութերը: 9-րդ պահոցի 2-րդ թղթապանակի գրառումների մի մասում ներառված են փաստեր Օսմանյան կայսրությունում ի պաշտպանություն հայերի և ասորիների ԱՄՆ-ի, Բրիտանական կայսրության և այլ երկրների իրականացված միջամտությունների մասին¹: Այս պահոցում տեղ գտած հետազոտական գրառումները հիմնականում կատարվել են Լեմկինի ուսանող օգնականների կողմից, սակայն դա չի նշանակում, որ նա անմասն է մնացել դրանց ձևակերպումներից: Դրանցում նկատելի են Լեմկինի դիտարկումները, որոնք նաև շաղկապվում են նրա հետազոտական այլ նյութերի հետ: Ալաբամայի համալսարանի պրոֆեսոր Սթիվեն Ջեկոբսը նշում է, որ Լեմկինի «Ցեղասպանության ուսումնասիրության ներածություն» վերնագրով անտիպ ձեռագրում կա մի կարճ քննարկում (3 էջանոց) միջամտության և մարդասիրական միջամտության մասին²:

Լեմկինը իր՝ «Միջամտություն մարդկության անունից» անտիպ հետազոտության մեջ առաջին հերթին վերլուծում է մարդասիրական միջամտության ընդհանուր հասկացությունը: «Ո՞րն է մարդասիրական միջամտության իմաստը և գործողությունը»³, – հոետորական հարց է բարձրացնում Լեմկինը և ներկայացնում Կոլումբիայի համալսարանի միջազգային իրավունքի պրոֆեսոր Էլերի Սթոնվելի՝ մարդասիրական միջամտության վերաբերյալ սահմանումը. «Ըստ պրոֆեսոր Սթոնվելի՝ մարդասիրական միջամտությունը կարելի է սահմանել հանուն արդարության ուժի կիրառում՝ այլ երկրի բնակիչներին կամայական և վիրավորական վերաբերմունքից պաշտպանելու համար...»⁴:

Լեմկինը փաստում է, որ հակասություն կա մարդասիրական միջամտության իրավունքի և միջամտության ենթարկվող պետության անկախության իրավունքի միջև: Սակայն նա նախապատվությունը տալիս է հումանիտար ինտերվենցիայի՝ իր իսկ բնորոշմամբ՝ մարդկության և սկզբունքորեն անձեռնմխելի իրավունքին: Այն իրավունք է դառնում, երբ իրավիճակը պահանջում է գործողություն՝ պաշտպանելու վտանգված շահերը և իրավունքները: Այս համատեքստում Լեմկինը մեջբերում է Բրյուսելի համալսարանի իրավունքի պրոֆեսոր Ե. Արնցի հետևյալ խոսքերը. «Արդարև, պետք է հարգվի սուվերենության իրավունքը, ավելի պետք է հարգվի մարդ-

¹ Guide to the Raphael Lemkin (1900-1959) Collection, P-154, Box 7, folder 5, Foreign Intervention for Oppressed Minorities and Minority Protection Treaties Essays, Box 9, folder 1, American Intervention for Oppressed Minorities and Minority Protection Treaties, Box 9, folder 2, Armenians and Assyrians, Box 9, folder 8, Minority Protection Treaties and British Intervention (<http://digifindingaids.cjh.org/?pID=109202>).

² Steven Leonard Jacobs, «The Human, the Humane, and the Humanitarian: Their Implications and Consequences in Raphael Lemkin's Work on Genocide», Agnieszka Bieńczyk-Missala, Sławomir Dębski, «Rafał Lemkin: a hero of humankind», The Polish Institute of International Affairs, Warsaw, 2010, p. 156.

³ Raphael Lemkin Collection, Box 7, Folder 5, Note on Humanitarian Intervention, undated, p. 1.

⁴ Լույն տեղում:

կային քաղաքակրթության իրավունքը... ինչպես պետության մեջ ազատությունը անհատական պետք է լինի և սահմանափակվի օրենքով ու հասարակության սովորություններով, այնպես էլ պետությունների ազատությունը պետք է սահմանափակվի և սահմանափակվում է մարդկային քաղաքակրթության օրենքներով» (Raphael Lemkin Collection, Box 7, Folder 5, Note on Humanitarian Intervention, p. 2):

Լեմկինը քննարկում է այն հարցը, թե արդյոք օրինական է, երբ մի պետության համար միջամտում է մյուս պետության գործերին մարդասիրության հիման վրա, ապա նշում, որ այս խնդրի վերաբերյալ իրավական մտքի մեջ առկա են երկու ընդդիմադիր ճամբարներ: Առաջինը գլխավորում է Յեյլի համալսարանի իրավունքի պրոֆեսոր Էդվին Բորչարդը, ով պետության ներքին գործերին մարդասիրական հիմունքներով միջամտություն իրականացնելու կողմնակից է: Նա ներկայացնում է վերջինիս տեսակետը. «Այն դեպքում, երբ պետությունը արհամարհում է իր քաղաքացիների իրավունքները, մյուս պետությունները և ազգերի ընտանիքը իրավասու են միջամտելու մարդասիրության հիմունքներով» (Raphael Lemkin Collection, Box 7, Folder 5, Note on Humanitarian Intervention, p. 3):

Իսկ տեսաբան Բարնարդը գլխավորում է մարդասիրական միջամտությունների դեմ հանդես եկող ճամբարը: Լեմկինը նշում է, որ, նրա կարծիքով, շատ վտանգավոր է յուրաքանչյուր պետության համար դատավոր լինել մյուս երկրի ներքին գործերին միջամտելու պարագայում, քանի որ չկա օբյեկտիվ չափանիշ: Վտանգն այն է, որ ուժեղ ազգերը օգտվում են որոշակի առիթից՝ իրականացնելու իրենց զավթողական նպատակները՝ գործելով մարդասիրության գեղեցիկ պատրվակի քողի ներքո:

Իր գրվածքներում Լեմկինը ներկայացրել է հումանիտար ինտերվենցիաների բազմաթիվ օրինակներ: Նա Օսմանյան կայսրության քրիստոնյա փոքրամասնության աջակցությանն ուղղված հումանիտար ինտերվենցիաներին զուգահեռ անդրադարձել է նաև հայերին օգնելու նպատակով իրականացված միջամտություններին: Առաջին հերթին նա ուշադրություն է հրավիրել այն հանգամանքի վրա, որ 1878 թ. Բեռլինի պայմանագրի՝ հայերին վերաբերող դրույթների անկատար մնալը և կայսրության տարածքում սանձազերծված հայկական կոտորածները մարդասիրական միջամտությունների իրականացման համար հիմք են դարձել:

Լեմկինի հավաքածուում պահպանվել են փաստաթղթեր, որոնք վերաբերում են Բեռլինի պայմանագրի դրույթների կատարման պահանջով Օսմանյան կայսրության ներքին գործերին Մեծ Բրիտանիայի միջամտությանը: Դրանցից մեկում ներկայացված է 1880 թ. օսմանյան կառավարությանն ուղղված Մեծ Բրիտանիայի բողոքը՝ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով նախատեսված դրույթների իրականացման պահանջով:

«Բեռլինի պայմանագրի որոշ դրույթների իրականացումն ուշացնելը հանգեցրել է այն ստորագրած պետությունների միջև կարծիքների փոխա-

նակման: 61-րդ հոդվածով Բարձր Դուռը պարտավորվել է անհապաղ իրականացնել հայերով բնակեցված նահանգների վարչական բարեփոխումներ ու ապահովել նրանց անվտանգությունը քրդերի և չերքեզների հարձակումներից և ձեռնարկվող քայլերի արդյունքի մասին տեղեկացնել տերություններին, որոնք պետք է հսկեն դրանց իրականացումը: Որքանով Նորին Մեծության կառավարությունը տեղյակ է, ոչինչ չի արվել... հետևաբար Նորին Մեծության կառավարությունը պետք է պահանջի պայմանագրի 61-րդ հոդվածի ամբողջական և անհապաղ իրականացում և կոչ անի Նորին կայսերական մեծություն սուլթանի կառավարությանը մանրամասնորեն հայտնել, թե ինչ քայլեր պետք է կատարվեն, որպեսզի կյանքի կոչվեն այս հոդվածի դրույթները» (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 8, Minority Protection Treaties and British Intervention, British attitude, notecard 104 recto verso.):

Լեմկինի փաստաթղթերում կան Բրիտանիայի խորհրդարանում կատարված քննարկումներին վերաբերող նյութեր, որոնցում խորհրդարանի ներկայացուցիչները Բրիտանիայի կառավարության ուշադրությունը հրավիրում էին Բեռլինի պայմանագրի դրույթներն անկատար մնալու և Օսմանյան կառավարության կողմից հայերի նկատմամբ իրականացվող ճնշումների վրա: Այնտեղ նույնիսկ հնչում էին արևմտահայերին վերաբերող խնդիրներում Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու կոչեր: Լեմկինի թղթերից մեկում ներկայացվում է նաև Բրիտանիայի խորհրդարանում Օսմանյան կայսրությունում ազգությամբ հայ քաղաքական բանտարկյալների խնդրի վերաբերյալ պատգամավորներից մեկի հարցը. «Պարոն Սվան* (Մանչեսթեր), ես խնդրում եմ հարցնել արտաքին գործերի փոխպետքարտուղարին, թե արդյոք նրա ուշադրությունը գրավել է «Daily News»-ի հայկական թղթակցի ներկայացրած պնդումը այն մասին, թե Վանի, Էրզրումի և Մուշի հայկական նահանգներում բանտարկությունների շարքը վկայում է, որ ներկայումս 700 հայեր բանտում սպասում են իրենց դատավարությանը՝ որպես քաղաքական բանտարկյալներ... Նորին Մեծության կառավարությունը Բարձր Դռան ուշադրությունը հրավիրելով է այդ փաստերի վրա, քանի որ Մեծ Բրիտանիայի կառավարությունը հատուկ պարտավորություն է ստանձնել հայ ժողովրդի հանդեպ...» (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 8, Minority Protection Treaties and British Intervention, British attitude, notecard 108): Քննարկվող փաստաթղթում տեղ է գտել նաև բարձրացված հարցին տրված արձագանքը. «Պարոն Ջ. Վ. Լոուրեր*, արտգործնախարարությունից հայտարարությունը հաստատող տեղեկություն չկա: Նորին

* Չարլզ Էրնսթ Սվանը (1844-1929) բրիտանացի բիզնեսմեն էր և քաղաքական գործիչ, Լիբերալ կուսակցության անդամ, բրիտանական խորհրդարանի անդամ:

* Ջեյմս Վիլյամ Լոուրեր (1855-1949) – բրիտանական պահպանողական կուսակցության ներկայացուցիչ, քաղաքական գործիչ, խորհրդարանի անդամ: Նա եղել է Համայնքների պալատի խոսնակ 1905-1921 թթ.:

մեծության ներկայացուցչին Կոստանդնուպոլսում պետք է հարց ուղղվի, թե արդյոք որևէ հիմք կա այդպիսի զեկույցի համար: Փոքր Ասիայի գործերի վերաբերյալ Նորին Մեծության հյուպատոսական ծառայողների թղթերը զեկույցների հետ միասին պետք է ներկայացվեն պառլամենտին» (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 8, Minority Protection Treaties and British Intervention, British attitude, notecard 108):

Լեմկինի արխիվում պահպանվել է հայերի նկատմամբ Մեծ Բրիտանիայի վերաբերմունքի մասին ևս մեկ փաստաթուղթ՝ Բրիտանիայի խորհրդարանում 1892 թ. տեղի ունեցած քննարկումներից.

«Պարո՛ն Ֆ. Ս. Սթիվենսոն՝, ես խնդրում եմ հարցնել ԱՄՆ-ի կառավարությանը, թե արդյոք 4-րդ բանակային կորպուսի թուրքական հրամանատարը, որի շտաբը Էրզրումում է, ստիպել է հայերին ձիեր մատակարարել՝ քրդական հեծելազորային գունդ ձևավորելու համար, և դրանց սեփականատերերը ոչ մի հատուցում չեն ստացել բռնագրավված կենդանիների համար, և որ դաժանություններ են կատարվել այն անձանց նկատմամբ, ովքեր հրաժարվել են տալ իրենց սեփականությունը: Արդյոք ք բրիտանական հյուպատոսը Հայաստանում որևէ բողոքով հանդես եկել է, արդյոք ք նշված գործողությունները հակասում են Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածին, և խոստացված թղթերը, որոնք վերաբերում են Հայաստանին, երբ կհրապարակվե՞ն» (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 8, Minority Protection Treaties and British Intervention, British attitude, notecard 110): Այս բարձրացված հարցադրումը ստացել է հետևյալ արձագանքը. «Պարո՛ն Ջ. Լոուրթեր, մեղադրանքը հաստատող ոչ մի տեղեկատվություն չի ստացվել: Նորին մեծության փոխհյուպատոսը Վանում հաղորդում է, որ քրդերը մեծ սիրով արձանագրել են, որ իրենց ձիերը եղել են ցեղական, ու թեև ենթադրվում էր, որ ձիերը նրանք փոխ էին առել և գողացել էին մյուսներից, այս փաստը նա չի կարողացել հաստատել զեկույցում: Հետևաբար հիմք չի եղել Նորին մեծության դեսպանության համար (այդ տեղեկությունը պնդելու – Ն. Պ.): Ենթադրյալ գործողությունները կարող են համարվել Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի խախտում» (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 8, Minority

* Ֆրենսիս Սթիվենսոնը (1862-1938), եղել է անգլիական հասարակական, քաղաքական գործիչ, բրիտանական խորհրդարանի անդամ, Անգլո-հայկական միության առաջին նախագահը: Նա գրել է մի շարք աշխատություններ («Հայկական քարոզչությունը, պատասխան Սադիկ Էֆենդիին», «Հայաստան», «Անգլիան, Թուրքիան և Ռուսաստանը, պատմության հետադարձ հայացք», «Փաստեր հոգուտ հայերի»), որոնցում վերլուծել է Արևմտյան Հայաստանի վիճակը, հայկական հարցի նկատմամբ տերությունների քաղաքականությունը: Ֆ. Սթիվենսոնը գտնում էր, որ Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը, որի իրականացումը կբարելավեր Օսմանյան կայսրության հայերի վիճակը. Հայկական հարցը վերածեց միջազգային հարցի, ինչը ձեռնտու էր սուլթանին, քանի որ Մերձավոր Արևելքում եվրոպական տերությունների փոխադարձաբար բացառող շահերը հնարավորություն կտային նրան անորոշ ժամանակով հետաձգել անցանկալի բարեփոխումների կատարումը:

Protection Treaties and British Intervention, British attitude, notecard 110):

Լեմկինի թղթերից մեկում նշվում է, թե Բեռլինի պայմանագրով նախատեսված բարեփոխումները իրականացնելու փոխարեն՝ Օսմանյան կայսրությունը պատասխանեց 1894-1895 թթ. հայկական սարսափելի կոտորածներով, ինչը հանգեցրեց տերությունների կողմից հետաքննություն կատարելուն: Այս անգամ Օսմանյան կայսրությանը ներկայացվեց ծրագիր, որը նախատեսում էր Թուրքիային քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ եվրոպական հսկողության հաստատում: Լեմկինի դիտարկմամբ՝ Անգլիայի և Ռուսաստանի միջև թշնամանքը կանխեց Թուրքիայի նկատմամբ այդ ծրագրին առնչվող միասնական քայլերի ձեռնարկումը: 1909 թ. Մեծ Բրիտանիան հայերի կոտորածների խնդրի շուրջ դիմեց թուրքական կառավարությանը, և վերջինս խոստացավ անել ամեն ինչ՝ կանխելու հետագա կոտորածները և գորքեր ուղարկեց անհանգիստ շրջաններ: (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 8, Minority Protection Treaties and British Intervention, British attitude, notecard 110): Լեմկինը փաստում է, որ Մեծ Բրիտանիայի շահերը Միջերկրական ծովում և դրա սահմաններից դուրս, ինչպես նաև նրա երկյուղը Ռուսաստանի միջամտությունից նրան դարձրին Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանմանն աջակցելու կողմնակից, ինչի արդյունքում Մեծ Բրիտանիան առաջատար դեր ստանձնեց միջամտության միջոցով կրոնական փոքրամասնություններին պաշտպանելու հարցում (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 8, Minority Protection Treaties and British Intervention, British attitude, notecard 110):

«Հումանիտար ինտերվենցիաների շուրջ Լեմկինի ուսումնասիրություններում առանձին տեղ է հատկացվում ԱՄՆ-ի կատարած միջամտությունների վերլուծությանը: Այս առիթով նա գրում է.

«ԱՄՆ-ի իրականացրած անհամար միջամտությունների արձանագրված դեպքերից ոչ բոլորն են ուսումնասիրված: Ես սահմանափակվում եմ այն դեպքերով, որոնք հիմնվում են անձի կամ խմբի նկատմամբ դաժան վերաբերմունքի վրա՝ իր ռասայի, կրոնի կամ ազգության պատճառով: Ընդհանրապես անտեսել եմ ի պաշտպանություն մեկ քաղաքացու ԱՄՆ-ի միջամտության դեպքերը, երբ նրա ռասայական կամ կրոնական պատկանելությունը պատճառ էր դարձել իր նկատմամբ դաժան վերաբերմունքի... Ուսումնասիրությունը հավանաբար սպառիչ է» (Raphael Lemkin Collection, Box 7, Folder 5, American Intercession on Behalf of Maltreated Minorites Abroad, p. 1):

Լեմկինը ներկայացնում է ԱՄՆ-ի դիրքորոշումը և միջամտություններն ի պաշտպանություն Ռուսաստանում, Ռումինիայում, Մարրոկոյում, Շվեյցարիայում, Իրանում ապրող հրեաների, Ճապոնիայում, Չինաստանում, Թուրքիայում ապրող քրիստոնյաների և այլն: Առանձին ներկայացված է նաև Օսմանյան կայսրությունում ապրող հայերի նկատմամբ կիրառվող դաժան քաղաքականության վերաբերյալ ԱՄՆ-ի դիրքորոշումը: Նա նշում է, որ ԱՄՆ-ը կտրականապես հրաժարվեց 1906 թ. հանդես գալ միջամտություն

իրականացնելուց՝ ի պաշտպանություն թուրքիայում ապրող հայերի՝ պատճառաբանելով, որ ինքը չի կարող միջամտել, քանի որ չի ստորագրել Բեռլինի պայմանագիրը, որով սուլթանը երաշխավորել էր հայերի անվտանգությունը: Որպես փաստարկ՝ ԱՄՆ-ը ձգտում էր գուգահեռներ անցկացնել Մոնրոյի վարդապետության¹ հետ՝ միջնորդության մերժումը հետագայում արդարացնելու համար (Raphael Lemkin Collection, Box 7, Folder 5, American Intercession on Behalf of Maltreated Minorities Abroad, p. 8): Լեմկինի թղթերից մեկում ներկայացված է ԱՄՆ-ի կողմից մարդասիրական միջամտություն իրականացնելուց հրաժարվելու մասին փաստաթուղթ, որը պետքարտուղար Էլիհու Ռուտը² ուղղել է առևտրի և աշխատանքի քարտուղար Օսկար Մթրաուսին³:

«ԱՄՆ-ի կողմից 1878 թ. Բեռլինի պայմանագրի չստորագրումը չգրված օրենք է, որը ավելի քան մեկ դար արգելակում է ԱՄՆ-ին քաղաքական շահեր հետապնդել Եվրոպայում: Մեկ դար հնություն ունեցող հզոր վարդապետությամբ բացառվում է, որ եվրոպական տերությունները միջամտեն արևմտյան կիսագնդի ինքնիշխան պետությունների քաղաքական խնդիրներին: Անընդունելի է այն առաջարկը, որ նախագահը հայկական հարցի լուծման համար արտահերթ կոնֆերանս հրավիրելու նախաձեռնությամբ հանդես գա, այն դեպքում, երբ չի թույլատրվում, որ եվրոպական տերություններից մեկը նույնպիսի նախաձեռնություն ցուցաբերի՝ Ամերիկյան մայրցամաքի որևէ հանրապետության ներքին գործերին վերաբերող խնդրի լուծման շուրջ հատուկ կոնֆերանս հրավիրելու ուղղությամբ...

Թուրքիայի տառապյալ հայ հպատակները աղաղակում են փոխհատուցում ստանալու և իրենց իրավունքների պաշտպանության համար: Ողջ աշխարհը ցավում է և դատապարտում ազգամիջյան թշնամանքը...» (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 1, American Intervention, for Oppressed Minorities and Minority Protection Treaties, Armenians in Turkey, notecard 44, recto, verso):

Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կիրառվող դաժանությունների շարունակությունը եվրոպական պետություններին դրդեց նոր

¹ Մոնրոյի վարդապետությունը հռչակագիր էր ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության սկզբունքների մասին («Ամերիկյան ամերիկացիների համար»), որով ամերիկյան մայրցամաքը հայտարարվում էր փակ եվրոպական տերությունների միջամտության համար: Այս վարդապետությամբ ԱՄՆ-ը հռչակում էր այն հայեցակարգը, որ չի միջամտելու եվրոպական պետությունների ներքին գործերին, հետևաբար եվրոպական պետությունները ևս չպետք է միջամտեն արևմտյան կիսագնդի ներքին գործերին:

² Էլիհու Ռուտ (1845-1937) – իրավաբան, ամերիկյան քաղաքական գործիչ հանրապետական կուսակցությունից, 1899-1904 թթ.՝ ռազմական նախարար, 1905-1909 թթ. աշխատել է պետքարտուղար, իսկ 1905-1915 թթ.՝ սենատոր: 1912 թ. նրան շնորհվել է խաղաղության Նոբելյան մրցանակ:

³ Օսկար Մոլոմոն Շտրաուս (1850-1926) – առևտրի և աշխատանքի պետական քարտուղարը (1906-1909) Թեոդոր Ռուզվելտի նախագահության շրջանում: Շտրաուսը եղել է առաջին հրեան ԱՄՆ վարչակազմում:

միջամտության իրականացմանը և 1914 թ. կայսրությունը նոր բարեփոխումների ծրագիր ներկայացրեց: Մրա հետ կապված՝ Լեմկինի նյութերում նշվում է.

«1912-1913 թթ. եվրոպացի դիվանագետները հանդիպեցին խորհրդակցությունների համար, իսկ հայերը գործը ներկայացրին Լոնդոնի կոնֆերանսում, հետո նաև՝ առանձին երկրների կառավարություններին: Ռուսաստանի կառավարությունը նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը՝ նախագծելու բարեփոխումների նոր ծրագիր վեց վիլայեթում: Գերմանական կառավարությունը հակադրվեց, սակայն Ռուսաստանը և հայ պատվիրակները անցկացրին իրենց տարբերակը: Նախագիծը հետագայում փոփոխություններով ընդունվեց երիտթուրքերի կառավարության կողմից և 1914 թ. փետրվարին հրապարակվեց»: (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, notecard 29):

Ըստ բարեփոխումների նախագծի՝ Օսմանյան կայսրության արևելյան հատվածը պետք է բաժանվեր երկու մասի, որոնցից յուրաքանչյուրի դեկավար պետք է նշանակվեր օտարերկրացի տեսուչ-գեներալը, որը պետք է վերահսկեր վարչակազմին և ոստիկանությանը: Նրանք միայն տեխնիկապես էին նշանակվելու սուլթանի կողմից: Բայց երբ բռնկվեց եվրոպական պատերազմը, սուլթանը արագորեն ազատվեց այս տեսուչներից: Այնուհետև տեղի ունեցան 1915 թ. և 1922 թ. հայերի կոտորածները (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 8, Minority Protection Treaties and British Intervention, Minority treaties, notecard 75 verso – notecard 75 a):

Լեմկինի հավաքածուում ընդգրկված հետազոտական գրառումներում, որոնք հիմնականում արձանագրված են նրա ուսանող օգնականների կողմից, որոշակի անդրադարձ է կատարվում 1915 թ. Հայոց ցեղասպանությանը՝ Գերմանիայի, Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջամտություններին: Գերմանիայի ձեռնարկների մասին մասնավորապես նշված է.

«Գերմանիան չաջակցեց թուրքերին Արևելքի դեմ պատերազմում, և թուրքերը իրենց ներքին գործերում հասան բացարձակ ազատության: 1915 թ. հունիսին գերմանական դեսպանը Բարձր Դռան ուշադրությունը հրավիրեց հայերի ցեղասպանության վրա և հանձնարարեց գերմանական հյուպատոսությանը բողոքել նահանգային իշխանություններից: Հուլիսի 4-ին Գերմանիայի դեսպանը հուշագիր հանձնեց մեծ վեզիրին: Նա համաձայնեց Արևելյան Անատոլիայի տեղահանությունների ռազմական անհրաժեշտությանը, սակայն մատնանշեց բռնություններով ուղեկցվող տեղահանությունների վտանգները: Նման գործողությունները զրգռում էին դաշնակիցներին, և գուցե ներգրավվեր ԱՄՆ-ը, որն արդեն հետաքրքրություն էր ցուցաբերում հայերի նկատմամբ: Այլ հուշագրեր ևս հետևեցին, սակայն բոլորն ապարդյուն: Կարլ Լիբկնեխտը 1915 թ. գերմանական խորհրդարանում բողոքեց Հայոց ցեղասպանության առնչությամբ և մեղադրեց գերմանական կառավարությանը կոտորածները հանդուրժելու համար» (Raphael Lemkin

Collection, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, notecard 26, recto):

Գրառումներում նշվում է նաև, որ Գերմանիայի բողոքական եկեղեցիների ներկայացուցիչները բազմիցս բողոքում էին հայերի նկատմամբ ցեղասպանություն իրականացնելու համար և այդ հարցով դիմում կայսերական կառավարությանը: Թուրքական բարձր հրամանատարությունը գտնվում էր գերմանացիների ազդեցության ներքո (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, notecard 26, verso, notecard 27, verso):

1915 թ. հունիսին՝ կոտորածները սկսվելուց հետո, ամերիկյան իշխանությունները առաջարկեցին Գերմանիայի կառավարությանը միջնորդել, սակայն Գերմանիան նույնիսկ հարկ չհամարեց պատասխանել այդ խնդրանքին (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, notecard 26, recto):

Գրառումներում անդրադարձ է կատարվում նաև ԱՄՆ-ի կատարած միջամտություններին. «Խարբերդում ամերիկյան հյուպատոսը մի քանի անգամ բողոքեց, սակայն կուսակալը հաշվի չառավ, նրա հետ վարվեցան ամոթաբար: Դեսպան Մորգենթաուն և ամերիկյան միսիոներները հաճախ միջամտում էին: Մորգենթաուն խոստացավ, որ հայ բողոքականները պետք է փրկվեն: Այնուամենայնիվ ազատության թույլտվությունը եղավ այն բանից հետո, երբ տեղահանություններն իրականացվել էին» (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, notecard 31, recto):

Ինչ վերաբերում է Օսմանյան կայսրությունում ապրող հայերի նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշմանը, ապա Լեմկինի հետազոտական գրառումներից մեկում նշվում է, որ Ռուսաստանը ռուսացման քաղաքականություն էր իրականացնում: Երբ 1916 թ. Ռուսաստանը «ազատագրեց» Հայաստանը, ռուսները փորձեցին կանխել հայերի վերադարձը իրենց տարածքները, իսկ նրանք մտադիր էին Արևմտյան Հայաստանում կազակների բնակեցնել (Raphael Lemkin Collection, Box 9, Folder 2, Armenians and Assyrians, The Armenian Case, notecard 30):

Ամփոփելով նշենք, որ Լեմկինը, վերլուծելով մարդասիրական միջամտությունների տարբեր օրինակներ, ի ցույց է դնում, որ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ հալածանքները և նրանց իրավունքների ոտնահարումը շարունակական էին, որի մասին են վկայում նաև հայերի վիճակի բարելավման մասին եվրոպական երկրների հորդորների անտեսումը օսմանյան իշխանությունների կողմից: Եվրոպական երկրների միջամտությունները տեսանելի արդյունք չունեցան նաև միմյանց միջև առկա հակասությունների, մասնավորապես Անգլիայի և Ռուսաստանի տարաձայնությունների պատճառով:

**Нарек Погосян – Понятие «гуманитарной интервенции» и «интервенции»
Рафаэля Лемкина в защиту армян**

В статье рассматриваются понятия «гуманитарная интервенция» и развитие теории. Начиная с XIX века крупные державы в целях защиты прав христианских народов в Османской империи вмешивались во внутренние дела империи. Гуманитарная интервенция носила коллективный характер в ходе освободительной войны за независимость Греции (1827-1830). Практика осуществления интервенции продолжилась не только в XX веке, но и в современных международных отношениях. Специалист по международному праву Рафаэль Лемкин, анализируя в своих исследованиях различные примеры гуманитарных интервенций, отмечал также и те интервенции, которые были проведены европейскими державами в защиту армян, живущих в Османской империи. Приводя в связи с этим конкретные документальные примеры, Лемкин показывает, что преследования армян и ущемление их прав в Османской империи носили систематический характер. Об этом свидетельствует и игнорирование османскими властями призывов европейских держав к улучшению положения армян. Но вмешательство европейских стран не дало видимых результатов.

**Narek Poghosyan – Concept of the “Humanitarian Intervention” and Raphael Lemkin's
“Interventions” for the protection of Armenians**

The article presents the concept of “Humanitarian intervention” and the development of this theory. Beginning from the XIX century the great powers started interfering in the internal affairs of the Ottoman Empire for the sake of protecting the rights of the Christian nations of the Empire. Humanitarian intervention obtained a collective character during the Greek War of Independence (1827-1830). The practice of interventions continued not only during the XX century but in the modern international relations as well. Analyzing different examples of humanitarian interventions in his studies Raphael Lemkin, an expert in international law, referred also to the interventions which came to the defense of the Armenians living in the Ottoman Empire. On the factual examples Lemkin showed that persecutions of Armenians in the Ottoman Empire and the violation of their rights had a systematic character. The interventions of European powers did not have visible results.

**ՀԵՅՐԱՐ ԱԼԻԵՎԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊԵՏՈՒՄՆ ԱՂԲԵՋԱՆՈՒՄ
1995-1998 ԹԹ.**

Բանալի բառեր – Ադրբեջան, Հեյդար Ալիև, Ռուվշան Ջավադով, Մուրաթ Հուսեյնով, դարաբաղյան պատերազմ, ներքաղաքական իրադրություն, խռովություն, բռնապետական կարգեր, Ադրբեջանի ժողովրդական ճակատ, անձի պաշտամունք

1994 թ. մայիսի 11-ի լույս 12-ի գիշերը ուժի մեջ մտավ Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների դադարեցման և հրադադարի հաստատման վերաբերյալ եռակողմ արձանագրությունը, որը ստորագրեցին Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության նախարարներ Սերժ Սարգսյանը, Մամեդրաֆի Մամեդովը և Մամվել Բաբայանը: Հրադադարի հաստատումից հետո ստեղծված ոչ խաղաղ, ոչ պատերազմական իրավիճակը պահպանվում է մինչ օրս. դարաբաղյան հարցի կարգավորումը տեղափոխվեց բանակցային հարթակ: Այսպիսով, ավարտվեց դարաբաղա-ադրբեջանական հնգամյա պատերազմը, որը Ադրբեջանին պատճառել էր ոչ միայն տարածքային ու մարդկային մեծ կորուստներ, այլև աղետի առջև կանգնեցրել էր կրի տնտեսությունն ու հանգեցրել քաղաքական անկայունության: 1993 թ. քաղաքական ասպարեզ վերադարձած և նախագահի պաշտոնը զբաղեցնող Հեյդար Ալիևը պատերազմի դադարեցմամբ փաստացի կասեցրեց ռազմական գործողությունները իր իշխանության դեմ կիրառելու հնարավորությունը՝ ստեղծելով ավելի նպաստավոր իրավիճակ իր քաղաքական հակառակորդների դեմ պայքարելու և դիրքերը ամրապնդելու համար:

Թեև 1994 թ. հրադադարը Ադրբեջանի ներքաղաքական կյանքում որոշակի կայունություն սահմանեց, այդուհանդերձ Ալիևը դեռևս բախվելու էր իշխանության տապալման մի շարք փորձերի հետ, որոնց ճնշումն ու հնարավոր հակառակորդների հեռացումը կապահովեին նրա միանձնյա իշխանությունը: Անհրաժեշտ էր նաև Ադրբեջանի հասարակական-քաղաքական դաշտում հիմնավորված ներկայացնել հրադադարի կնքման անհրաժեշտությունը, քանի որ այն միանշանակ գնահատական չստացավ հատկապես այն պատճառով, որ հրադադարի համաձայնագրում նշվում էր ռուսական խաղաղապահ զորքերի տեղադրման հնարավորության մասին, ինչից կողմերը ավելի ուշ հրաժարվեցին: Այդուհանդերձ, ռուսական զորքերի տեղակայման մասին լուրը հատկապես սուր արձագանք գտավ Ադրբեջանի ռազմական ուժերի ներկայացուցիչների շրջանում: Իսկ հրադադարի պայմա-

նագիրը մատուցվեց ոչ թե որպես տարածքային կորուստների համակերպում և ադրբեջանական կողմի պարտությունն արձանագրող փաստ, այլ ժամանակավոր դադար՝ ոտքի կանգնելու և հետագայում կորցրածը հետ բերելու համար: Դա հատկապես վառ դրսևորվում էր Հ. Ալիևի հրապարակային ելույթներում: 1994 թ. մայիսի 21-ին փախստականների հետ հանդիպման ժամանակ նա կրկին շեշտում է. «Ես ևս մեկ անգամ կրկնում եմ՝ վստահ եմ, որ շեհիդների թափած արյունը չի մնա անպատիժ, ադրբեջանական ժողովուրդը շարունակելու է սկսած պայքարը՝ հասնելով իր տարածքային ամբողջականության վերականգնմանը»¹:

Մույն հոդվածի նպատակն է ցույց տակ հրադարարի կնքումից հետո Ալիևի ձեռնարկած գործողությունները՝ ուղղված ներքաղաքական իրավիճակի կայունացմանն ու իր իշխանության ամրապնդմանը: Ինչպես նրան հաջողվեց, լինելով տարածքներ զիջող նախագահ, դառնալ «ազգի փրկիչ», ստեղծել բռնապետական վարչակարգ և Ադրբեջանում ապահովել իշխանության ժառանգական փոխանցումը:

Հրադարարից հետո Ադրբեջանում ներքաղաքական լարվածության հերթական փուլը պայմանավորված էր Հ. Ալիևի վարած նավթային քաղաքականությամբ: 1994 թ. սեպտեմբերի 20-ին Բաքվում՝ «Գյուլիստան» պալատում, Ադրբեջանի պետական նավթային ընկերության և «Բրիթիշ Փեթրոլիումի» գլխավորած արտասահմանյան ընկերությունների կոնսորցիումի միջև ստորագրվում է Կասպից ծովի ադրբեջանական հատվածում «Ազերի», «Չըրազ», «Գյունեշլի» նավթային երեք հանքավայրերի համատեղ վերամշակման մասին պայմանագիր: Ութ միլիարդ դոլար արժողությամբ այդ փաստաթուղթը ստացավ «Դարի պայմանագիր» անվանումը²: Թեև այն խոստանում էր տնտեսական խոշոր եկամուտներ ապահովել Ադրբեջանի համար, այդուհանդերձ ստացվող արդյունքը գերազանցապես վերահսկվում էր Ալիևների ընտանիքի կողմից: Նրա որդին՝ Իլհամ Ալիևը, զբաղեցրեց նավթային պետական ընկերության փոխնախագահի պաշտոնը և իր վերահսկողության տակ վերցրեց արտասահմանյան ներդրողների հետ բանակցություններ վարելու և նավթային եկամուտների տնօրինման գործընթացները:

«Դարի պայմանագիրը» իհիստ քննադատության արժանացավ ռուսական իշխանությունների կողմից: Այդ առնչությամբ ռուսական «Известия» թերթը գրում է. «Բաքվում ստորագրված պայմանագիրը կարող է լուրջ նախադեպ դառնալ Կասպյան ավազանի մյուս երկրների համար: Եթե ընդերքի ինքնուրույն մշակում թույլատրվում է Ադրբեջանին, ապա ինչո՞ւ այն չի կարող թույլատրվել Թուրքմենստանին, Ղազախստանին, Իրանին: Եվ

¹ Речь президента Азербайджанской Республики Гейдара Алиева на встрече с беженцами, временно проживающими в пансионате в Загульба-21 мая 1994 года, <http://lib.aliyev-heritage.org/ru/7442017.html>, 13.01.2016.

² Տե՛ս **Cornell S.**, Azerbaijan since Independence, Armonk, New York, 2011, p. 85:

ամենայն հավանականությամբ նրանք կգերադասեն դա անել առանց Ռուսաստանի»¹: Ռուսաստանի Արտաքին գերատեսչությունը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ իր համար ընդունելի չեն Կասպից ծովի վերաձևման՝ ադրբեջանական կողմի փորձերը²:

Նավթային պայմանագրի կնքումը միանշանակ չընդունվեց նաև Ադրբեջանի ներքաղաքական կյանքում՝ հատկապես քննադատության արժանանալով ռուսամետ որոշ ուժերի և զինվորականության կողմից: Ալիևի վարչակարգի համար դեռևս լուրջ սպառնալիք էին ռստիկանական հատուկ նշանակության ջոկատների հանդեպ վերահսկողություն ունեցող Ռովշան Ջավադովը, ինչպես նաև Մուրաթ Հուսեյնովը, ով վարչապետի պաշտոնը ստանձնելու հետ մեկտեղ վերահսկողություն էր սահմանել Ադրբեջանի Ազգային անվտանգության, Պաշտպանության և Ներքին գործերի նախարարությունների նկատմամբ: Դեռևս 1994 թ. ամռանը Ներքին գործերի նախարարը հրաման արձակեց ՕՍՕՆ-ական ուժերը ցրելու վերաբերյալ, սակայն Ջավադովը հրաժարվեց ենթարկվել³: Ավելի ուշ հրամանը չեղյալ հայտարարվեց:

1994 թ. սեպտեմբերի 21-ին՝ «Դարի պայմանագրի» կնքման հաջորդ օրը, Ազգային անվտանգության քննչական մեկուսարանից փախուստի են դիմում չորս բանտարկյալ, որոնց թվում էին Պաշտպանության նախկին նախարար Ռահիմ Ղազիևը և Թալիշ-Մուղանի Հանրապետության⁴ նախկին ղեկավար Ալիքրամ Գումբատովը⁵: Դրան անմիջապես հաջորդեց Ազգային անվտանգության նախարարի պաշտոնանկությունը: Ղազիևի և Գումբատովի փախուստից օրեր անց սպանվեցին խորհրդարանի փոխխոսնակ Աֆիյաթդին Ջալիլովը և Պաշտպանության նախարարության հակահետախուզության վարչության պետ Շամսի Ռահիմովը: Խորհրդարանի անդամները ստանում էին անանուն զանգեր՝ նավթային պայմանագրի վրա վետո դնելու կոչերով⁶: Ջալիլովի և Ռահիմովի սպանության մեղադրանքով ձերբակալվեցին ՕՍՕՆ-ի երեք անդամներ: Դրան ի պատասխան՝ հոկտեմբերի 3-ին Ռ. Ջավադովի վերահսկողության տակ գտնվող զինված ուժերը հարձակում

¹ Бакинский контракт века поднимает политический шторм на Каспии // «Известия», 22 сентября 1994.

² Նույն տեղում:

³ Տե՛ս **Тодя 3.**, Азербайджанский пасьянс, М., 2001, с. 32:

⁴ Նշենք, որ 1993 թ. հունիսին թալիշները Ալիքրամ Գումբատովի գլխավորությամբ հայտարարեցին ինքնավար հանրապետության ստեղծման մասին, որին տրված Թալիշ-Մուղան անվանումը պայմանավորված էր 1919 թ. մարտ-հունիս ամիսներին Մուղանյան խորհրդային հանրապետության առաջացմամբ, որը ձևավորվել էր ի հակակշիռ ԱԴՀ-ի: Թալիշ-Մուղանի ինքնավար հանրապետությունը գոյատևեց մինչև 1993 թ. օգոստոս, այն է՝ Հ. Ալիևի վերադարձը քաղաքական ասպարեզ:

⁵ Տե՛ս **Тодя 3.**, նշվ. աշխ., էջ 32:

⁶ Տե՛ս **Cornell S.**, նշվ. աշխ., էջ 85:

գործեցին գլխավոր դատախազության շենքի վրա՝ գերի վերցնելով գլխավոր դատախազին, նրա տեղակալին և շուրջ 30 աշխատակիցների¹: Ըստ մեկ այլ տեղեկության՝ գլխավոր դատախազը Հ. Ալիևի պահանջով դատախազություն է հրավիրում Ռովշան և Մեհիր Ջավադովներին, ովքեր, երկյուղելով հնարավոր ձերբակալությունից, ներկայանում են զինված²: Շենքը շրջապատվում է նաև կառավարական ուժերի կողմից, որոնք պահանջում էին Ջավադովին և նրա համախոհներին ցած դնել զենքերն ու հանձնվել: Ջավադովը պահանջում է իշխանություններից հրավիրել Գերագույն խորհրդի նիստ, ինչպես նաև պաշտոնանկ անել ներքին գործերի նախարարին և Գլխավոր դատախազին: Այս դեպքերը Ալիևի կողմից գնահատվում են իբրև պետական հեղաշրջման փորձ: ՕՍՕՆ-ի գործողություններին զուգահեռ՝ հոկտեմբերի 4-ին Գյանջայի տեղական իշխանությունների դեմ հանդես են գալիս նախկինում Հուսեյնովին ենթարկվող զինվորական ուժերը, որոնք վերահսկողություն են սահմանում օդանավակայանի, երկաթուղային կայարանների և բոլոր վարչական կառույցների նկատմամբ: Գործողությունը ղեկավարում էին Հուսեյնովի բարեկամ Քարամաթ Քերիմովը, ինտերպոլի ադրբեջանական բաժնի պետ Իլգար Սաֆիհանովը և Գյանջայի զինվորական ոստիկանության պետ Էլդար Ալիևը³: Հոկտեմբերի 5-ի առավոտյան կառավարական ուժերը վերականգնում են վերահսկողությունը Գյանջայում: Ապստամբներից շատերը փախուստի են դիմում⁴:

Իր հրապարակային ելույթում այս դեպքերը Ալիևը գնահատում է որպես պետական հեղաշրջման փորձ և կոչ է անում ժողովրդին ոտքի կանգնել ու թույլ չտալ անկայունության խորացմանը Ադրբեջանում⁵: Նա նաև մեղադրում է արտաքին ուժերին, առաջին հերթին Ռուսաստանին՝ Ադրբեջանի ինքնիշխանությանը հարվածելու փորձերի մեջ: Իր կոչում Ալիևը խնդրում է ի աջակցություն իշխանության հավաքվել նախագահի նստավայրի մերձակայքում: Կարճ ժամանակահատվածում հազարավոր մարդիկ շրջապատում են նստավայրը՝ ցուցաբերելով նրան իրենց աջակցությունը: Նման իրավիճակում նախագահի նկատմամբ չեզոքություն է դրսևորում նաև Ռ. Ջավադովը: Դրան հաջորդում է ավելի բազմամարդ ցույց Բաքվի «Ազադլըզ» հրապարակում, որտեղ իր ելույթում Ալիևը քննադատեց հոկտեմբերին Գյանջայում տեղի ունեցած դեպքերն ու հայտարարեց, որ կառավարության որոշ անդամներ ներգրավված են եղել երկրի ղեկավարի դեմ կազմակերպված պետական հեղաշրջման փորձում և աջակցություն ստացել Ադրբեջանի

¹ Верталеты над Баку как призрак государственного переворота // «Известия», 4 октября 1994.

² 1994 cu il Oktyabr hadisələri haqqında veriliş. (Rövşən və Mahir Cavadovlar), ANS, Ən Yeni Tərix, <https://www.youtube.com/watch?v=2L38Q-Fqlcs>, 10.01.2016.

³ Мафия в Гяндже оказалась родней мятежного полковника // «Известия», 14 октября 1994.

⁴ Նույն տեղում:

⁵ Выступление президента Азербайджанской Республики Гейдара Алиева по национальному телевидению и радио - 3 октября 1994, <http://lib.aliyev-heritage.org/tu/4547485.html>, 7.01.2016.

առաջին նախագահ Այազ Մութալիբովի և Ադրբեջանական ԽՍՀ ԿԳԲ-ի նախկին ղեկավար Վազիֆ Հուսեյնովի կողմից¹: Նա նաև ուղղակիորեն մեղադրեց վարչապետ Մուրաթ Հուսեյնովին հեղաշրջման փորձը գլխավորելու մեջ², որին հաջորդեց վերջինիս պաշտոնանկությունը: Նա նաև գրկվեց «Ազգային հերոսի» կոչումից, և նրա դեմ քրեական գործ հարուցվեց «Պետական դավաճանություն» հոդվածով: Հուսեյնովին հաջողվեց փախուստի դիմել տնային կալանքից և ապաստան գտնել Ռուսաստանում: Ինքը՝ Հուսեյնովը, 1995 թ. «Аргументы и факты» թերթին տված հարցազրույցում պնդում է, որ որևէ կապ չունի 1994 թ. հոկտեմբերին Գյանջայում տեղի ունեցած դեպքերի հետ, և դա ուղղակի պատրվակ էր իրեն հեռացնելու համար. «Այն մասին, որ ես պատրաստվում էի հեղաշրջում կատարել, իմացա 1994 թ. հոկտեմբերի 4-ին հեռուստացույցով հեռարձակվող լուրերից, որտեղ ցուցադրվում էր ցույցը: Այդ ժամանակ Ալիևը մեղադրեց ինձ, ՆԳՆ փոխնախարար Ռովշան Ջավադովին և նրա եղբորը՝ Մահիր Ջավադովին, պետական հեղաշրջման փորձ կատարելու մեջ: Ես զանգահարեցի նրան և հարցրի, թե արդյոք գիտակցում է, թե ինչ է խոսում: Նա պատասխանեց, որ զանգահարել է ինձ երկու անգամ, բայց ես տեղում չեմ եղել: Հետագայում հետապնդումներ սկսվեցին իմ և իմ հարազատների նկատմամբ»³:

Բարդ է միանշանակ գնահատական տալ 1994 թ. աշնանը տեղի ունեցած դեպքերին: Ուսումնասիրված աղբյուրներից ելնելով՝ բացառված չեն արտաքին միջամտությունն ու հնարավոր աջակցությունը, սակայն, մյուս կողմից՝ Ալիևը հստակ խնդիր ուներ՝ ազատվել իր համար վտանգավոր ուժ հանդիսացող Հուսեյնովից և Ջավադովից, ուստի հավանական է նաև որոշ սադրիչ գործողությունների ձեռնարկումը: Ի տարբերություն Մուրաթ Հուսեյնովի՝ Ռովշան Ջավադովին հաջողվեց ժամանակավորապես խուսափել Ալիևի պատժից, քանի որ առանց հապաղելու հրապարակայնորեն հայտարարեց, որ ինքը աջակցում է նախագահին⁴: Այդուհանդերձ, Ալիևի հաջորդ կարևոր քայլը Ռովշան Ջավադովի և նրա վերահսկողության տակ գտնվող ՕՍՕՆ-ական ուժերի չեզոքացումն էր: Դրա համար հիմք ծառայեց այն, որ Ջավադովի ՕՍՕՆ-ական խմբավորումները աստիճանաբար տուրք էին տալիս քրեական՝ մաքսանենգ գործունեության և համագործակցում թուրքական ծայրահեղ աջակողմյան ազգայնական խմբավորումների հետ⁵: Ուստի առկա էին նրանց չեզոքացնելու հիմքեր:

1995 թ. մարտի 13-ին ադրբեջանական ոստիկանությունը Գյանջա տա-

¹ Տե՛ս **Cornell S.**, նշվ. աշխ., էջ 86:

² Տե՛ս **Aliyev H.**, Surat Huseynov, ANS, Փո Yeni Tarix, <https://www.youtube.com/watch?v=vm4zj5xXI8Y>, 3.01.2016:

³ **Гусейнов С.**, В Азербайджане грядет взрыв // «Аргументы и факты», 10 марта 1995.

⁴ 1994 cu il Oktyabr hadisələri haqqında veriliş. (Rövşən və Mahir Cavadoqlar), ANS, Փո Yeni Tarix, <https://www.youtube.com/watch?v=2L38Q-Fqlcs>, 10.01.2016.

⁵ Տե՛ս **Cornell S.**, նշվ. աշխ., էջ 86:

նող ճանապարհին առգրավեց Թուրքիա տեղափոխվող մաքսանենգ բեռ՝ կես միլիոն դոլար արժողությամբ 150 տոննա զունավոր մետաղ. այն ուղեկցում էին Ղազախի շրջանի ՕՄՕՆ-ականները¹: Դրան ի պատասխան՝ վերջիններս վերահսկողության տակ են վերցնում Ղազախի շրջանի ոստիկանական ուժերն ու ինքնակառավարման մարմինը: Այս դեպքերը հերթական անգամ Ալիևը գնահատում է իբրև պետական հեղաշրջման փորձ²: Այդ ժամանակ ՊՆ փոխնախարարի պաշտոնը զբաղեցնող Իսա Մադիգովը նրա հրամանով մեկնում է Ղազախ՝ իրավիճակը շտկելու: Վերջինս իր հուշերում նշում է, որ այն ժամանակ, երբ իրավիճակը շտկվում էր, և ՕՄՕՆ-ականները նահանջում էին, Ալիևի կողմից տրվում է ՕՄՕՆ-ը ցրելու և նրանց դեմ գործողություն ձեռնարկելու վերաբերյալ հերթական հրամանը³: Այդ ժամանակ Ջավադովը ցանկություն է հայտնում հանդիպել Ալիևի հետ և պարզել իրադրությունը, սակայն նախագահը մերժում է⁴: Այնուհետև Ալիևը հայտարարում է, որ Ջավադովը պահանջում է խորհրդարանի խոսնակ Ռասուլ Գուլիևի և իր հրաժարականը⁵: Մարտի 17-ին տեղեկություն է հաղորդվում, որ Ռովշան Ջավադովը և նրա եղբայր Մահիր Ջավադովը սպանվել են պետական հեղաշրջման փորձի, ավելի ստույգ՝ Ալիևի դեմ իրականացված մահափորձի ժամանակ: Արձանագրվում է նաև, որ նրանք աջակցություն էին ստանում թուրքական քաղաքական շրջանակների և Ադրբեջանում Թուրքիայի նախկին դեսպանի կողմից⁶: Նման զարգացումներում թուրքական ներկայության հանգամանքը բարդացնում է այն փաստը, որ Ալիևը նախագրուշացում է ստացել Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրիլից իր դեմ կազմակերպվող մահափորձի վերաբերյալ⁷:

Ռ. Ջավադովի սպանությունից հետո արդեն սկսվում են ՕՄՕՆ-ականների ձեռքակալություններն ու հետապնդումները: Այս քայլով Ալիևը ազատվեց զինվորական այն ուժից, որը կարող էր սպառնալիք դառնալ իր համար: Դրանով նա միանձյա վերահսկողություն սահմանեց պետական զինված ուժերի նկատմամբ: Փաստացի թե՛ Սուրաթ Հուսեյնովի և թե՛ Ռովշան Ջավադովի պարագայում տեսնում ենք զարգացումների միևնույն սցենարը.

¹ Мятаж заказывали? Очередное покушение на власть в Азербайджане: подоплека, подробности, версии // «Известия», 21 марта 1995.

² Обращение к народу президента Азербайджанской Республики Гейдара Алиева по национальному радио и телевидению - 15 марта 1995, <http://lib.aliyev-heritage.org/ru/7029330.html>, 1.15.2016.

³ Записки полковника. 1995 год: ОМОН. Часть 5, 16.03.2012, <http://www.radioazadlyg.org/content/blog/24518140.html>, 1.15.2016.

⁴ Записки полковника. 1995 год: ОМОН. Часть 7, 02.04.2012, <http://www.radioazadlyg.org/content/blog/24535289.html>, 1.15.2016.

⁵ Обращение к народу президента Азербайджанской Республики Гейдара Алиева по национальному радио и телевидению - 15 марта 1995, <http://lib.aliyev-heritage.org/ru/7029330.html>, 1.15.2016.

⁶ Ismailzade F., Turkey-Azerbaijan: The honeymoon is over, Baku, 2009, p. 4.

⁷ Տե՛ս **Cornell S.**, նշվ. աշխ., էջ 87:

իրադարձություններ, որտեղ առկա են սադրանքի բացահայտ նշաններ՝ Ալիևի կողմից արտաքին ուժի միջամտության, պետական հեղաշրջման փորձի մեղադրանք և ի հետևանս՝ հաշվեհարդար: Համեմատություն անցկացնելով՝ կարելի է արձանագրել նաև Ալիևի հին գործելաճը, որը կիրառվում էր Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցության¹ ներկայացուցիչների նկատմամբ Նախիջևանում: Ալիևը, իր հնարավոր հակառակորդներին պաշտոններ տալով և նրանց իր տեսադաշտում պահելով, կարողանում էր որոշակիորեն վերահսկել, հասկանալ հիմնական թուլություններն ու դրանք օգտագործելով՝ ազատվել անցանկալի անձանցից: Միաժամանակ ազատվելով ՕՄՕՆ-ականներից և զինված ուժերի նկատմամբ լիակատար վերահսկողություն սահմանելով՝ նա բացառեց Ադրբեջանում թուրքական սցենար կիրառելու հավանականությունը, երբ զինվորականությունը կարող է միջամտել քաղաքականությանը և իրականացնել պետական հեղաշրջում: Սա նաև հնարավորություն ընձեռեց Ալիևին ամրապնդելու իր միանձնյա իշխանությունն ու ճնշել այլակարծության դրսևորումները՝ սերմանելով վախ իր հնարավոր քաղաքական հակառակորդների շրջանում: Բացի դրանից, արտաքին ուժի հնարավոր միջամտությունն ու Ադրբեջանի պետականությանն ու անկախությանը սպառնացող դավադրությունների մասին տեսությունը դարձան ադրբեջանական քաղաքական դաշտի բաղկացուցիչ մասը, որը նաև կիրառվում էր անցանկալի անձանցից ազատվելու նպատակով: Ի դեպ, եթե 1990-ական թվականների վերջերին այդ ուժերը համարվում էին Ռուսաստանը, Իրանն ու Թուրքիան, ապա այժմ այդպիսիք գերազանցապես դիտվում են հայերը և Արևմուտքում գործող հայկական լոբբիստական կազմակերպությունները²:

1995 թ. մարտի դեպքերին հաջորդեց ձերբակալությունների նոր ալիք: Ջավադովի ձեռնարկած պետական հեղաշրջման գործում ներգրավվածության կասկածանքով ձերբակալվեց նաև «Բոզքուրդ» կուսակցության նախագահ, Էլչիբեյի կառավարման շրջանում ՆԳՆ ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Իսկանդեր Համիդովը: Ավելի ուշ նրան մեղադրանք առաջադրվեց «Պաշտոնական դիրքի չարաշահում» և «Պետական գումարների շորթում»

¹ Կուսակցության մասին մանրամասն տե՛ս Ադրբեջանի ժողովրդական ճակատ, https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%A4%D6%80%D5%A2%D5%A5%D5%BB%D5%A1%D5%B6%D5%AB_%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE%D6%80%D5%A4%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%B3%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BF, 1.05.2016:

² Օրինակ, 2012 թ. առաջին քառորդի արձանագրած արդյունքներին նվիրված կառավարության նիստում իր ելույթում Ադրբեջանի ներկայիս նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել է. «Կրկնում եմ՝ մեզ համար հայկական լոբբին համար մեկ թշնամին է: Մենք պետք է պատրաստ լինենք այդ պատերազմին»: Closing speech by Ilham Aliyev at the meeting of the Cabinet of Ministers of the Republic of Azerbaijan dedicated to the results of the socioeconomic development in the first quarter of 2012 and future goals, 16 April, 2012, <http://en.president.az/articles/4740>, 2.06.2012.

հողվածներով, և նա դատապարտվեց 14 տարվա ազատազրկման¹, իսկ կուսակցությունը վերանվանվեց «Ադրբեջանի ազգային ժողովրդավարություն»: Մարտի դեպքերի նկատմամբ ոչ միանշանակ դիրքորոշման և Ջավադովին հնարավոր աջակցություն ցույց տալու պատրվակով պաշտոններից ազատվեցին ռազմական դատախազը, Գյանջայի, Խանլարի, Ղազախի, Ադստաֆայի տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները: Նրանցից մի քանիսի դեմ հարուցվեցին քրեական գործեր²:

Ադրբեջանում նախագահական համակարգի ամրապնդման ուղղությամբ կարևոր քայլ էր 1995 թ. նոր Սահմանադրության ընդունումը, որը փոխարինելու էր 1987 թ. Սահմանադրությանը: Ալինի կողմից հրավիրված Սահմանադրական հանձնաժողովը ձևավորվեց 1995 թ. հունիսին և նախնական տարբերակը ներկայացրեց հոկտեմբերին: Հանրաքվեն նախատեսված էր նոյեմբերի 12-ին: Փաստաթղթի վերջնական տարբերակը պետք է հանրությանը ներկայացվեր հանրաքվեից տասն օր առաջ, այսինքն՝ նոյեմբերի 2-ին, սակայն ներկայացվեց նոյեմբերի 8-ին: Հանրաքվեի արդյունքում Սահմանադրությունը հաստատվեց և ուժի մեջ մտավ նոյեմբերի 27-ից³: Սահմանադրությունը հստակ բաժանում էր մտցնում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև: Նոր Սահմանադրությամբ հատկապես լայն լիազորություններով օժտվեց երկրի նախագահը: Ըստ 109-րդ հոդվածի՝ նախագահն էր նշանակում և ազատում երկրի վարչապետին և կառավարության անդամներին, ինչպես նաև զինված ուժերի գլխավոր հրամանատարությանը և դատավորներին: Նախագահը օժտված էր խաղաղություն հաստատելու, պատերազմ, երկրում արտակարգ իրավիճակ, համընդհանուր զորահավաք, ամենամյա զորակոչ հայտարարելու և մի շարք այլ լիազորություններով⁴:

Միննույն ժամանակ, ի հավելում Սահմանադրությամբ նրան պաշտոնապես ընձեռված իշխանության, արդեն 1995 թ. նախագահը հանդես եկավ որպես գերիշխող ուժ: Ալինը Սահմանադրությամբ փաստացի օրինակացրեց իր գործողություններն ու իշխանական լծակները: Թեև Սահմանադրությունը արձանագրում է, որ Ադրբեջանի քաղաքական համակարգը ժողովրդավարական հանրապետական է, և գործադիր իշխանությունը հաշվետու է Սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի առջև, սակայն գործնականում գործադրի սահմանադրական արտոնությունները հնարա-

¹ Տե՛ս **Alieva L.**, Political Party Regulation in the Republic of Azerbaijan, Baku, Center for National and International Studies (Azerbaijan), January 2012, p. 25:

² Մանրամասն տե՛ս **Mehdiyev R.**, Milli məkfura, dövələçilik, müstəqillik yolu ilə iyun 1971-iyun 2001, Bakı, 2006, s. 279:

³ Տե՛ս **Kamrava M.**, State Building in Azerbaijan: The Search for Consolidation // «Middle East Journal», 55, № 2, Spring, 2001, p. 228:

⁴ Տե՛ս Azərbaycan Respublikasının Konstitusiyası, Maddə 109. Azərbaycan Respublikası Prezidentinin səlahiyyətləri:

վորություն ընձեռեցին նախագահին լիակատար վերահսկողություն սահմանելու իշխանական, իրավական և օրենսդրական համակարգերի նկատմամբ: Դատական իշխանության անկախությունը ստորադասվեց, քանի որ նախագահն էր նշանակում դատավորներին և գլխավոր դատախազին: Ինչ վերաբերում է օրենսդրին, ապա այս համակարգի նկատմամբ լիակատար վերահսկողությունն ամրապնդվեց 1995 թ. նոյեմբերի խորհրդարանական ընտրություններից հետո:

Դեռևս խորհրդարանական ընտրությունների նախօրեին շատ կուսակցություններ դադարեցրել էին իրենց գործունեությունը, ինչը պայմանավորված էր շարունակվող ձերբակալությունների, գրաքննության և կուսակցական գործունեությունը խոչընդոտող բազմաթիվ հանգամանքներով: Մասնավորապես, 1995 թ. հայտարարվել էր կուսակցությունների վերագրանցման անհրաժեշտության մասին, որի հետևանքով դրանցից շատերը գրկվեցին գրանցումից¹: Կուսակցությունների գործունեության վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ տնտեսական դաշտի մոնոպոլացման գործընթացը. մի կողմից իշխանություններից կախվածության մեջ ընկնելով՝ փոքր և միջին ձեռնարկատերերը լուրջ խնդիրների հետ էին բախվում ընդդիմադիր կուսակցություններին ֆինանսական աջակցություն ցույց տալու դեպքում, մյուս կողմից՝ աստիճանաբար աճեց պետական ոլորտում աշխատողների թիվը, ինչը ևս սահմանափակում էր ընդդիմադիր շարժումներին մասնակցելու հավանականությունը: Միևույն ժամանակ իշխանություններից դժգոհ ընտրագանգվածի մի մասը գործազրկության և քաղաքական խտրականության հետևանքով արտագաղթեց Ռուսաստան և Թուրքիա²: Կուսակցությունների թուլացումն ու դրանց մի մասի գործունեության կասեցումը բացասական նշանակություն ունեցան Ադրբեջանի քաղաքական կլիմայի վրա՝ խոչընդոտելով ժողովրդավարական զարգացումներն այդ երկրում:

Ընտրական իրավունքը գործողության մեջ մտավ 1995 թ. օգոստոսին՝ պայմանով, որ խորհրդարանի 125 ներկայացուցիչներից 100-ն ընտրվելու են մեծամասնական ընտրակարգով, իսկ մյուսները՝ կուսակցական ցուցակներից³: Նոյեմբերի ընտրությունները անց էին կացվում իշխանությունների կողմից ամբողջությամբ վերահսկվող քաղաքական մթնոլորտում, մի շարք ընդդիմադիր (այդ թվում՝ «Մուսավաթ», «Ադրբեջանի Ազգային ժողովրդավարություն», «Կոմունիստական» և «Հույս») կուսակցությունների թույլ չտրվեց մասնակցել ընտրություններին: Խորհրդարանական տեղերի ճնշող մասը՝ 59 տեղ, զբաղեցրին իշխող «Նոր Ադրբեջան» կուսակցության պատգամավորները, որոնց թվում էր նաև Հեյդար Ալիևի որդին, Ադրբեջանի ներկայիս

¹ Советское наследие 22 года спустя: преодоление или консолидация? Под ред. Лейли Алиевой, Центр национальных и международных исследований, Баку, 2013, с. 107.

² Նույն տեղում:

³ Տե՛ս **Cornell S.**, նշվ. աշխ., էջ 91:

նախագահ Իլհամ Ալիևը: Մի քանի պատգամավորական մանդատներ ստացան Էթիբար Մամեդովի ղեկավարած «Ադրբեջանի ազգային անկախություն» և «Ադրբեջանի ժողճակատ» կուսակցությունների ներկայացուցիչները: Վերջինիս առաջնորդությունը Էլչիբեյից հետո ստանձնել էր նրա տեղակալ Ալի Քերեմլին¹: Շուրջ 50 տեղ հասկացվեց անկուսակցականներին, որոնց մեծ մասը իշխող ուժի ազեցության ներքո էր: Խորհրդարանական ընտրությունները միջազգային դիտորդական կառույցների կողմից գնահատվեցին միջազգային չափանիշներին չհամապատասխանող²: Միջազգային քննադատություններին ի պատասխան՝ 1996 թ. փետրվարին որոշ ընտրատեղամասերում կայացավ ընտրությունների երկրորդ փուլ, որում ընդդիմադիր ուժերին հաջողվեց պատգամավորական նոր մանդատներ ստանալ: Այդուհանդերձ, նոր Սահմանադրությունը և խորհրդարանական ընտրությունները ամրագրեցին Ալիևի և նրա ղեկավարած «Նոր Ադրբեջան» կուսակցության գերակա դերը Ադրբեջանի քաղաքական դաշտում՝ ստեղծելով ուժեղ նախագահական համակարգ և ձևավորելով նրան ենթակա խորհրդարան: Ալիևը իր աջակիցներին պաշտոններ տալով՝ ստեղծեց իրեն հնազանդ տեղական ինքնակառավարման մարմինների ցանց:

Այսպիսով, ամբողջ քաղաքական համակարգը կենտրոնանում էր Ալիևի շուրջ: Այս գործընթացները ուղեկցվում էին նաև Ալիևի անձի պաշտամունքի խորացման ակնհայտ դրսևորումներով՝ որոշակիորեն հիշեցնելով Ադրբեջանի խորհրդային անցյալը: Նախագահի նկարներն ամենուրեք էին՝ ներկայացնելով նրա կյանքի և գործունեության տարբեր ժամանակահատվածները: Նրա անունով կոչվում էին այգիներ, հասարակական վայրեր, նույնիսկ մզկիթները նախագահի պատվին անվանակոչվում էին Հեյդար կամ Ալիև³: Նրան հաճախ կոչում են «Հեյդար բաբա» կամ «Հայր Հեյդար»: Այս առումով կարելի է զուգահեռներ անցկացնել Թուրքիայի պատմության մեջ Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի կերպարը պաշտամունքի վերածելու հետ: Ալիևը ևս քարոզչական բոլոր միջոցներով ներկայացվում էր որպես երկրի փրկիչ: Հատկանշական է, որ 1995 թ. նա նաև կրոնական ուխտագնացություն՝ հաջկատարեց դեպի Մեքքա՝ շեշտելով, որ Ադրբեջանը իսլամական աշխարհի մասն է: Փաստացի նախագահ Ալիևը փորձում էր իր կերպարով ամբողջացնել թյուրքականությանը, իսլամականությանը և կառավարման խորհրդային համակարգին հատուկ բաղադրիչները՝ հանդես գալով որպես ադրբեջանականության գաղափարախոսության քաղաքական առաջնորդ: Ըստ էության, սա Ալիևի հաջողության ամենակարևոր պայմաններից էր, քանի որ նա կարողացավ ադրբեջանականության ներքո համախմբել դեռևս XX դարի

¹ Նույն տեղում:

² Azerbaijan's November 1995 Parliament election, A Report Prepared by the Staff of the Commission on Security and Cooperation in Europe, Baku, Lenkoran, Lerik, 1996.

³ Տե՛ս **Kamrava M.**, նշվ. աշխ., էջ 232:

սկզբին առաջ քաշված ազգայնականության տարրերը՝ թյուրքականությունն ու իսլամականությունը: Հակահայկականության գործոնը ավելի ակնհայտ սկսեց կիրառվել նրա կառավարման երկրորդ ժամանակաշրջանում՝ ստանալով ռասիստական դրսևորումներ մերօրյա Ադրբեջանում¹:

Ալիևի համար անհրաժեշտ էր նաև միջազգայնորեն ամրագրել իր շուրջ ձևավորված քաղաքական համակարգը՝ նվազեցնելով Ադրբեջանի հասցեին հնչող քննադատությունների ալիքը: Նավթը այս գործընթացի գլխավոր տարրն էր, և Ալիևը հիանալիորեն օգտագործեց միջազգային հետաքրքրվածությունը Ադրբեջանի էներգետիկ պաշարների նկատմամբ որպես միջոց օտարերկրացի առաջնորդների հետ կապերի ամրապնդման գործընթացում: Նա նավթային կոնսորցիում կառուցեց հիմնականում Արևմուտքի հետ՝ ներառելով ամերիկյան, եվրոպական նավթային կազմակերպությունները, որտեղ առաջնային դերը զբաղեցնում էր «Բրիթիշ փեթրոլիումը»: Ներգրավված էին նաև ճապոնական, թյուրքական և արաբական ընկերությունները: Ինչ վերաբերում է Ռուսաստանի բացասական դիրքորոշման չեզոքացմանը, ապա Ալիևը մեծացրեց ռուսական «Լուկոյլ» ընկերության մասնաբաժինը «Դարի պայմանագրում»՝ դրանով հարթելով հարաբերությունները նաև Ռուսաստանի հետ: Նախատեսվում էր նաև իրանական նավթային ընկերությունների հետ համագործակցություն, ինչը, սակայն, կասեցվեց ԱՄՆ միջամտությամբ:

Տարբեր երկրների հետ առևտրատնտեսական կապերի խորացումն ու նավթային արդյունաբերության զարգացումը մեծապես անդրադարձան նաև երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: 1995 թ. սկսած՝ Ադրբեջանի կառավարությունը Համաշխարհային բանկի աջակցությամբ մի շարք տնտեսական ռեֆորմներ ձեռնարկեց: Մասնավորապես, կառավարությունը ուղիներ էր փնտրում ամսական գնաճը նվազեցնելու, մասնավորեցման գործընթացը արագացնելու, հանրային ձեռնարկությունները վաուչերների միջոցով վաճառելու, ձեռնարկությունների նկատմամբ ֆինանսական վերահսկողություն սահմանելու, հարկային համակարգ ներդնելու, ֆինանսական ոլորտը բարեփոխելու, աուդիտային և հաշվապահական համակարգեր սահմանելու ուղղությամբ: 1995 թ. Ադրբեջանը մի շարք վարկեր վերցրեց Համաշխարհա-

¹ Դրա վառ օրինակը 2006 թ. Բուդապեշտում կայացած ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հատուն խաղաղության» ծրագրի շրջանակներում ադրբեջանցի Ռամիլ Սաֆարովի կողմից հայազգի Գուրգեն Մարգարյանի դաժան սպանությանը հաջորդած զարգացումներն էին: Մասնավորապես, 2012 թ. օգոստոսի 31-ին Հունգարիան Ադրբեջանին արտահանման մարդասպան Ռամիլ Սաֆարովին, ում Բաքու հասնելուն պես ներում շնորհեց Ադրբեջանի նախագահ Իլիևը: Քնած հային էթնիկ հենքի վրա կացնահարած ադրբեջանցի մարդասպանն իր երկրում հերոսացավ՝ «Փայրենիքի համար կրած տառապանքների համար»: Տե՛ս Ramil Səfərova mayor rütbəsi verildi, 01.09.2012, <http://anspress.com/index.php?a=2&lng=az&nid=166597>, 10.05.2013:

² Տե՛ս **Cornell S.**, նշվ. աշխ., էջ 91:

յին բանկից¹: Միջազգային ներդրումները, նավթարդյունաբերության զարգացումը և տնտեսական որոշ բարեփոխումների իրականացումը դրական դեր խաղացին սոցիալ-տնտեսական կացության բարելավման գործում, որի հիմնական ազդեցությունը տարածվեց քաղաքացիական և պետական ծառայողների աշխատավարձերի ու թոշակների վրա: Որոշ քաղաքացիների աշխատավարձեր 1995-1996 թթ. ընթացքում բարձրացան 60 տոկոսով²: Այդուհանդերձ, ադրբեջանական տնտեսության դիվերսիֆիկացիա տեղի չունեցավ, և այն գերազանցապես հենվում էր նավթային արդյունաբերության վրա, ուստի հսկայական կախվածության մեջ հայտնվեց միջազգային շուկայում նավթի գների տատանումներից³: Կոռումպացված բյուրակրատական համակարգը, տնտեսության հետագա մոնոպոլացումն ու նավթային եկամուտների անհավասարաչափ բաշխումը մեծապես խոչընդոտեցին տնտեսական բարեփոխումների իրագործման ու տնտեսական զարգացման գործընթացները:

1998 թ. նախագահական ընտրություններից առաջ Ալիևը ասպարեզից արդեն հեռացրել էր քիչ թե շատ անկախություն դրսևորող քաղաքական և պետական այն գործիչներին, որոնք կարող էին հավակնություններ ունենալ նախագահի պաշտոնի համար: Այդ առումով հատկանշական է խորհրդարանի խոսնակ Ռասուլ Գուլիևի հեռացումը, ում հետ Ալիևը լուրջ տարածայնություններ ուներ: Ի տարբերություն Ալիևի քաղաքական մյուս հակառակորդների՝ Գուլիևը մեղադրվեց ոչ թե «պետական դավաճանության», այլ «պետական միջոցների շորթման» մեջ: Այդուհանդերձ, նրան հաջողվեց քաղաքական ապաստան գտնել Հոլանդիայում⁴:

Ալիևի և նրա ընտանիքի դիրքերի հետագա ամրապնդման առումով նշանակալից էր 1998 թ. հոկտեմբերին կայանալիք նախագահական ընտրություններում հաղթանակի հասնելը: Մինչ այդ բազմաթիվ քայլեր էին ձեռնարկվել քաղաքական հակառակորդներին ասպարեզից հեռացնելու ուղղությամբ: Մակայն այն հանգամանքը, որ Ադրբեջանը անդամակցության հայտ էր ներկայացրել Եվրոպայի խորհրդին և ցանկանում էր դրանով ավելի ամրապնդել իր դիրքերը միջազգային ասպարեզում, հարկադրում էր Ալիևին գոնե ձևականորեն հետևել միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ԵԱՀԿ ԺՄՇԻԳ-ի խորհրդատվություններին և փորձել անցկացնել միջազգային չափանիշներին համապատասխան ընտրություններ: Այդ առումով կարևոր էր 1998 թ. օգոստոսին տպագիր մամուլի և այլ լրատվա-

¹ Տե՛ս **Kamrava M.**, նշվ. աշխ., էջ 225:

² Նույն տեղում:

³ Դրա վառ օրինակը ներկայիս Ադրբեջանում ստեղծված իրավիճակն է, երբ նավթի գների անկման հետևանքով կտրուկ արժեզրկվել է ազգային արժույթը՝ մանաթը, ինչը նաև տնտեսական ճգնաժամի առաջ է կանգնեցրել երկիրը: Մանրամասն տե՛ս Azerbaijan in crisis as currency plummets, 22.12.2015, <http://www.theguardian.com/world/2015/dec/22/azerbaijan-currency-plummets-oil-price>, 11.01.2016:

⁴ Տե՛ս **Тодья З.**, նշվ. աշխ., էջ 44-45:

միջոցների նկատմամբ կիրառվող գրաքննության վերացումը: Մյուս հատկանշական քայլը ընտրական օրենքի փոփոխությունն էր, որն ավելի մոտեցվեց միջազգային չափանիշներին: Չնայած այդ փոփոխություններին՝ քաղաքական մի շարք ուժերի ներկայացուցիչներ հրաժարվեցին մասնակցել ընտրություններին՝ պնդելով, որ առկա չեն համապատասխան պայմաններ. նրանց թվում էին «Մուսավաթ» և Ժողձակատ կուսակցությունների առաջնորդներ Իսա Գամբարն ու Ալի Քերեմլին: Ստեղծված իրավիճակում ընտրությունների ժամանակ Ալիևի հիմնական մրցակիցը համարվում էր «Ադրբեջանի ազգային անկախություն» կուսակցության ներկայացուցիչ Էթիբար Մամեդովը: Ընտրություններին իրենց թեկնածությունն էին առաջադրել նաև Նիզամի Սուլեյմանովը՝ «Անկախ Ադրբեջան» կուսակցությունից, Ֆիրուդին Հասանովը՝ Կոմունիստական կուսակցությունից, Աշրաֆ Մեհդիևը՝ «Պատիվ» կուսակցությունից և Խանհուսեյն Կազիմլին՝ «Ադրբեջանի սոցիալական բարգավաճում» կուսակցությունից:

1998 թ. ընտրություններում Ալիևի հաղթանակը դժվարացավ իր իսկ ստեղծած խոչընդոտի պատճառով: Դեռևս 1993 թ. իր բարձր վարկանիշով տարված՝ նա կետ մտցրեց ընտրական օրենքում, ըստ որի՝ նախագահական ընտրության առաջին փուլում հաղթում է այն թեկնածուն, ով հավաքում է ձայների երկու երրորդը և ոչ թե մինչ այդ ընդունված 50 տոկոսը և ավելին¹: Մամեդովի քարոզարշավը շատ ավելի հաջողված էր, նրա հանրային ելույթները մեծ տարածում էին ստանում, ինչը հարկադրեց Ալիևին նախընտրական արշավի երկրորդ փուլում առավել ակտիվ քարոզչություն սկսել: Հոկտեմբերի 11-ին կայացած նախագահական ընտրություններում Ալիևը պաշտոնապես հավաքեց ձայների 77,6%, իսկ Մամեդովը՝ 11,8%-ը²: Միջազգային դիտորդական կազմակերպությունները արձանագրեցին բազմաթիվ խախտումներ: Որոշ պնդումների համաձայն՝ Ալիևն իրականում հավաքել էր ձայների 50 կամ 60%, իսկ Մամեդովը՝ 25%³: Սակայն Ալիևի կողմից ընտրությունների ակնհայտ կեղծումը մեծապես ազդեց նրա հեղինակության վրա: Ակնհայտ էր, որ մի կողմից նա կայունացրեց Ադրբեջանում տիրող իրավիճակը՝ ապահովելով քաղաքական համակարգի անսասանությունը և հեռու պահելով երկիրը պատերազմական ճնշումներից, սակայն մյուս կողմից իր անձի շուրջ ձևավորված քաղաքական համակարգի ներդրմամբ կասեցրեց ժողովրդավարության հնարավոր զարգացումը՝ հանգեցնելով փակ հասարակության ձևավորմանը: Ավելին, նա ոչ միայն կանխում էր ընդդիմադիր գործիչների կողմից հնարավոր քաղաքական ակտիվության դրսևորումները, այլև հեռացնում էր իշխանական ճամբարի այն ակնառու գործիչներին,

¹ Տե՛ս **Cornell S.**, նշվ. աշխ., էջ 95:

² 1998-ci ildə keçirilmiş prezident seçkilərində 77,6 faiz səsə Heydər Əliyev Azərbaycan Respublikasının Prezidenti seçilmişdir, <http://o53xo.pfqxa.n5zgoltbpi.cmlle.ru/az/view/pages/58>, 1.28.2015.

³ Տե՛ս **Cornell S.**, նշվ. աշխ., էջ 96:

որոնք կարող էին առաջադրվել նախագահի պաշտոնում: Հեյդար Ալիևը քայլ առ քայլ ապահովում էր իր որդու՝ Իլհամ Ալիևի պաշտոնավարումը՝ փաստացի ժառանգական դարձնելով նախագահի պաշտոնը: Դա ավելի ակնառու դարձավ Ալիևի նախագահության երկրորդ շրջանում (1998-2003 թթ.): Իր առողջական վիճակի վատթարացման ժամանակ՝ 2003 թ., Ալիևը որդուն նշանակեց երկրի վարչապետ: Վերջինս 2003 թ. նախագահական ընտրությունների ժամանակ ընտրվեց Ադրբեջանի նախագահ և զբաղեցնում է այդ պաշտոնը մինչ օրս:

Ամփոփելով կարող ենք արձանագրել Հեյդար Ալիևի կառավարման շրջանին հատուկ հետևյալ բնորոշիչները. սկզբնական փուլում ներքաղաքական կյանքի կայունացում, հետագայում՝ լճացում, այլախոհության ճնշում, անձի պաշտամունքի ձևավորում, նախագահակենտրոն իշխանական համակարգի ստեղծում, ինչպես նաև Ալիևների ընտանիքի դիրքերի վերջնական ամրապնդում, ինչը հետագայում ապահովելու է իշխանության անցումը Հեյդար Ալիևի որդուն՝ Իլհամ Ալիևին: Ի վերջո, Ալիևի քաղաքական վերադարձը խորհրդանշեց ադրբեջանականության գաղափարական հաղթանակը Ադրբեջանում, որը, պարունակելով թյուրքականության և իսլամականության տարրեր, խնդիր ուներ ապացուցելու ադրբեջանցիների «բնիկության» և հայերի «եկվորության» կեղծ տեսությունը: Հակահայկական քարոզչության հետագա խորացումը ավելի սուր դրսևորումներ ստացավ արդեն Իլհամ Ալիևի կառավարման տարիներին:

**Татевик Айрапетян – Укрепление власти Гейдара Алиева
в Азербайджане в 1995-1998 гг.**

Автор проанализировал внутривластную ситуацию, сложившуюся в Азербайджане после установления в мае 1994 г. режима прекращения огня. Представлена политика, проводимая Гейдаром Алиевым, и – как следствие – укрепление его власти в Азербайджане. Затрагиваются также методы Алиева по избавлению от политических соперников, его агитационные ухищрения, с помощью которых явное поражение, понесенное в Карабахской войне, стало преподноситься как временная пауза. Анализу подвергается также внедрение теории азербайджанизации, основанной на исламизме и отуречивании. Эта теория стала идейной основой власти Алиева.

**Tatevik Hayrapetyan – The Strengthening of Heydar Aliyev's Power
in Azerbaijan During 1995-1998**

The author analyzes the inner political situation in Azerbaijan after the ceasefire of May 1994. The article presents Heydar Aliyev's policy, which resulted in the strengthening of his power and position in Azerbaijan. A reference is made to Aliyev's practice of getting rid of his political opponents, as well as the tactics of his propaganda, due to which their apparent defeat in Karabakh War was presented as a temporary armistice. The introduction of the Azerbaijanism theory based on Turkishness and Islamism, which became the ideological basis of Aliyev's regime, is also being analyzed.

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ «ԱԿՕՍ» ԵՐԿԼԵԶՈՒ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹՈՒՄ 1996-2007 ԹԹ.

Բանայի բառեր – Հրանտ Դինք, «Ակօս» շաբաթաթերթ, ազգային ինքնություն, տարու, Հայոց ցեղասպանություն, Սփյուռք, ռասիզմ, ազգային փոքրամասնություն

Արդեն տևական ժամանակ է, ինչ Թուրքիայում հասարակական և քաղաքական շրջանակներում առաջնային խնդիրներից է ինքնության հարցը: Դարեր շարունակ պետական մակարդակով իրականացվող ձուլման քաղաքականության հետևանքով Թուրքիայում այսօր առկա է խառնածին մի հասարակություն, որի տարբեր շերտերում ինքնության խնդիրը տարբեր կերպ է դրսևորվում: Այս առումով ուշագրավ է Թուրքիայում ինքնության խնդրի ծավալման և հավանական հանգուցալուծման վերաբերյալ Հրանտ Դինքի արտահայտած հետևյալ կարծիքը. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ ինքնության խնդրի»¹: Ինքնության խնդիրը հատկապես նկատելի է Թուրքիայի հայության մեջ, որի հանդեպ ձուլման քաղաքականությունը առավել դաժանորեն է դրսևորվել:

Իսկ ե՞րբ է բարձրանում ինքնության հարցը: Այս առնչությամբ տեղին է հղել ֆրանսահայ գրող և քննադատ Գրիգոր Պլտյանին. «Ինքնութիւնը հարցաքննել, զայն արդէն կորսնցնել է, սակայն զայն հարցադրել կը նշանակէ տակաւին կառչիլ անոր, թէ ոչ արդէն շատոնց կը դադրինք հարցադրելէ: Այլ խօսքով՝ ինքնութեան մասին խօսքը կու գայ կորուստէ մը, առանց որ այդ կորուստը կորսուած ըլլայ բոլորովին»²:

Յուրաքանչյուր հայկական համայնք ենթակա է տեղական հայակու պայմաններին, ինչի դեպքում վտանգվում է ազգային ինքնությունը, իսկ ինքնության գաղափարը այս պարագայում ստանում է խիստ կարևոր նշանակություն. հատկապես Թուրքիայում հայ ազգային ինքնության բնատիպը կորցնելու վտանգը մշտապես շատ մեծ է եղել: Ուստի տարբեր լծակների և հարթակների բացակայության պարագայում պոլսահայ մամուլին վերապահվում է բացառիկ դեր՝ զորավիզ լինելու հայկական ինքնության պահպանմանը կամ վերագտնումին. այն դառնում է հասարակական կյանքի

¹ Այս միտքը նա հայտնել է 2007 թ. ԱՄՆ-ում հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ:

² **Պլտյան Գ.**, Ինքնութեան փորձառութիւն Սփիւռքի մէջ // Ինքնութեան հարցեր, Երևան, 2002, էջ 90:

կազմակերպման այն ասպարեզը, ուր կենտրոնանում են հայ մտավոր-հասարակական ուժերը:

Բարդ ու հակասական որոնումների պայմաններում «Ակօս»¹ շաբաթաթերթը նորովի է գնահատում ինքնության հետ կապված խրթին և բազմաուղորտ հարցը: Հայ ինքնության գիտակցման և որակների պահպանման գործում պարբերաթերթն առաջին իսկ համարից նպատակային և հետևողական ուղեգիծ է որդեգրում և իբրև չափանիշ ընտրում է ազգային ինքնության վերագտնումի և վերարժևորման, ինքնաճանաչման ու ինքնապաշտպանության սկզբունքները, որոնք, կարելի է ասել, հիմք են դնում մի շարժման, որի սահմանները այնուհետև խորացնում են և ընդարձակում:

Այդ առումով «Ակօս»-ի առաջին «հոչակագիրը» թեև ընդհանրացնող կողմեր ուներ, սակայն պարունակում էր այն հիմնական սկզբունքները, որոնց վրա խոյանալու էր նրա հետագա գործունեությունը. «Լոյս կը տեսնենք, որպէսզի մենք մեզ անսխալ ծանօթացնենք... Ըսել կ'ուզենք, որ մենք ձեզմէ տարբերութիւն չունինք, մենք ալ ձեզ նման մարդիկ ենք, կ'ապրինք ձեր պայքարին մէջ, ձեր ցաւերն ու հարցերն են, կը խնդանք՝ երբ դուք կը խնդաք, կը յուզուիք, ձեզմէ տարբեր չենք: Միակ տարբերութիւնը որ կայ, մեր եկեղեցին է ու մեր լեզուն: Այդ պատճառաւ ալ, մեզ իրարմէ տարբեր ցոյց տուողներուն ծուղակը մի՛ իյնաք: Այս թերթը յարձակելու համար, կամ ալ կարգ մը իրաւունքներ պահանջելու համար չէ որ լոյս կը տեսնէ: Այս լրագիրը պարզապէս իր ինքնութիւնը, ինքզինք պաշտպանելու համար է որ լոյս կը տեսնէ»²:

Հայ ազգային ինքնության բարդ խնդիրների նկատմամբ շաբաթաթերթը նախընտրում է հեղափոխական մոտեցում, որի մասին Հ. Դինքը գրում է. «Հայ ինքնութիւնը պէտք ունի նոր նախադասութիւններու»³: Այդ փնտրտուքի մեջ կարևոր տեղ էր հատկացվելու պատմական փաստերն անկողմնակալ և խորքային ներկայացնելուն, որը Թուրքիայի պարագայում ձեռք էր բերում մեծ նշանակություն, քանի որ պետության կողմից իրականացվող ազգային քաղաքականությունն արդարացնելու նպատակով թուրքական պատմագրությունը տասնամյակներ շարունակ իր հասարակությանն է ներկայացրել կեղծ, պատմական անցյալը խեղաթյուրող տեղեկություններ: Ընտրելով պատմության «հիշողությունն» արթնացնելու ուղին՝ Հ. Դինքը «Մենք մոռնալու կարիքը ունինք» կարգախոսով առաջնորդվողներին լուրջ չէր համարում, քանի որ գիտակցում էր, որ ճշմարիտ ուղին ոչ թե մոռանալն է, այլ հիշելը: Այս մասին նա գրում է. «Պէտք է որ բոլորս ջանանք խնդիրներուն խորքին

¹ «Ակօսը» պոլսահայ համայնքի մամուլի պատմության մեջ առաջին հայերեն-թուրքերեն շաբաթաթերթն է, որը հիմնադրվել է 1996 թ. Հրանտ Դինքի կողմից, ով եղել է թերթի գլխավոր խմբագիրը մինչև իր մահը՝ 2007 թ.:

² Թերթերը՝ մեր հայելին // «Ակօս», 25.10.1996:

³ **Տինք Հ.**, Հայ ինքնութիւնը պէտք ունի նոր նախադասութիւններու // «Ակօս», 9.02.2007:

թափանցել, ճշմարտություններուն հասնիլ»¹: Իսկ Թուրքիայում, անժխտելի է, որ 1923 թ. հանրապետության հռչակումից ի վեր արգելվել է պատմական հիշողության, այն է՝ անցյալի իրադարձություններին առնչվող ստույգ, իրականությանը համապատասխանող տեղեկությունների փոխանցումը: Այդ տաբուն կոտրելը թեև բարդ, բայց հույժ կարևոր խնդիր էր:

Հայ ինքնության առումով «Ակօս»-ի գործունեությունը կարելի է պայմանականորեն բաժանել երկու ուղղության: Առաջինը վերաբերում է ազգային արժեքները, մշակույթը ճանաչելուն: Անհրաժեշտ է հրատարակել հայ նշանավոր գրողների ստեղծագործությունները, ազգագրական նյութեր՝ որպես հայեցի դաստիարակության կարևոր միջոցներ: Այդ նպատակով «Ակօս»-ը անդրադառնում է հայ մշակույթի այնպիսի դեմքերի, ինչպիսիք են Կոմիտասը, Խրիմյան Հայրիկը, Պարույր Սևակը, Պետրոս Դուրյանը, Երվանդ Օտյանը, Գրիգոր Զոհրապը, Եղիշե Չարենցը և այլք: Նման ընտրությունը պատահական չէ, քանի որ շարաթաթերթը, ընթերցողին ծանոթացնելով մշակութային արժեքներին, մշակույթի նշանավոր դեմքերին, դառնում է ազգային ինքնության արտահայտիչը:

Հայ ազգային ինքնության առումով «Ակօս»-ի երկրորդ և կարևոր ուղղությունը տարբեր դարերում և հատկապես 1915 թ. Հայոց ցեղասպանության տարիներին և դրանից հետո բռնի իսլամացված հայերի² և նրանց սերունդների արմատների փնտրտույն է:

Սկսած առաջին իսկ համարներից՝ Հ. Դինքը «Հայ ինքնության շուրջ» ընդհանուր խորագրի ներքո սպագրում է հողվածաշար, որտեղ լայն քննության նյութ է դարձնում իսլամացված հայերի ծագման և ինքնության խնդիրը: Նրան հաջողվում է դիտարկել ազգային ինքնության խնդիրը նոր տեսանկյուններից և ձևերով, կատարել էթնոհոգեբանական, փիլիսոփայական և պատմական լայն ընդհանրացումներ: Նա մի ամբողջ ծրագիր է ներկայացնում սեփական ազգային ինքնության հետ առերեսվելու, ծանոթանալու, ազգայինը յուրացնելու ուղղությամբ:

«Ակօս»-ը բազմաթիվ առիթներով անդրադառնում է իսլամացված հայերի առանձին ուշագրավ պատմություններին, որոնք նախկինում երբևէ լուսաբանված չեն եղել, և այդ գործում հատկապես մեծ է Հ. Դինքի գործոնը: Նա բազմաթիվ հողվածներ է հրապարակում իսլամացված հայերի ամենատարբեր խնդիրներին՝ այդ հարցում որդեգրելով հետևողական դիրքորոշում: Իսլամացված հայության թեմայով Դինքի հեղինակած հողվածները, փաստորեն, դառնում են «Ակօս»-ի կարևոր ուղղություններից մեկը: Դինքն այնքան է տարվում այդ թեմայով, որ հանդիպումներից մեկի ժամանակ անգամ նշում է. «Երանի գիտնական լինեի և միայն այս թեմայով զբաղվեի»³:

¹ Dink H., Tercih “Tehcir” oluncu // “Agos”, 12.06.1998.

² Սյս մասին մանրամասն տե՛ս «Հաշիները տակնուվրայ...» // «Ակօս», 29 ապրիլ 2005:

³ «Օրակարգ» (Գլենդել), 10.01.2007:

Շաբաթաթերթը լայն կապեր է հաստատում հայ ազգային ինքնությունը վերագտնելու ցանկություն ունեցողների հետ՝ դառնալով նման մարդկանց իրական ինքնությունը ճանաչելու ամենագործուն և կենսական միջոցը: Անդրադառնալով իսլամացված հայության խնդրին՝ Դինքն այն ավելի ընդգրկուն է ներկայացնում՝ փորձելով դա դիտարկել ընդհանրապես Թուրքիայում տեղի ունեցող «ինքնության ճգնաժամի» համատեքստում. «Այսօր Թուրքիայում շատերն են դեգերում իրենց ինքնության լաբիրինթոսում՝ ապրելով «ինքնության ճգնաժամ»¹: «Թուրքիոյ մէջ այսօր հազարաւորներ կան որ քաջութիւն ունին հրապարակաւ արտահայտուելու, գիրքեր ու յօդուածներ գրելու, թէ իրենց պապերը հայ էին: Թուրքիոյ մէջ հիմա այս ուղղութեամբ շարժում կայ եւ ես ըսեմ որ ապագայ հայ կեանքի ամենամեծ ու ամենաշուսալի աշխատանքներէն մէկը կրնայ դառնալ անիկա: Եթէ Թուրքիան Եվրոմիութեան անդամ դառնայ օր մը, չեմ սխալիր, եթէ հայութիւն առնուազն երկու միլիոն ևս շատանայ Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող իսլամ հայերու թիւը: Ինծի համար շատ կարևոր հարց է այս հարցով աշխատիլ և գտնիլ այդ կորսուածները, ողջնցնել այդ մեռածները: Շատ կարևոր է գտնել այդպիսի հայ մը եւ իրեն տալ իր հայութիւնը»²: Այս մասին «Պատմութեան եւ Այսօրուան Հայելիէն Հեմշինի Հայերը» գրքի հեղինակ Ալիե Ալթը գրում է. «Երբ մարդոց լուծիւնները կամաց-կամաց կը սկսին տեղի տալ, երբ մարդիկ իրենց պապերը կը փնտռեն ու մեծմայրերու ինքնութիւնը կը հրապարակեն, իրենց Մահմետական չըլլալը բարձրաձայն կ'աղաղակեն եւ իրենց արմատներուն հասնելու հետամուտ մարդոց թիւը երբ օրըստօրէ կ'աւելանայ, իրենց կեանքը ստուերներու պէս շարունակել ջանացողներուն պատմութիւններն ալ հետզհետէ յաջորդաբար կը սկսին լոյս աշխարհ գալ»³:

Այսպիսով Հրանտ Դինքը «Ակօս»-ում սկիզբ է դնում իսլամացված հայերին իրենց արմատներին վերադարձնելու հարցը Թուրքիայի քաղաքական և հասարակական օրակարգ մտցնելու գործընթացին, որը լիովին նոր երևույթ էր և մինչ այդ դուրս էր մնացել այլ պարբերականների ուշադրությունից: Մա իրականում բավական համարձակ քայլ էր Թուրքիայում, քանի որ այդ երկրում տաբու թեմաների թվում առանձնահատուկ տեղ ունի ինքնության հարցը: Շաբաթաթերթի էջերում «թաքնված» հայի իրական ինքնությունը ներկայացնող նյութերը թուրք հասարակության մեջ սկսեցին ավելի խորացնել կասկածները սեփական ինքնության վերաբերյալ:

«Ակօս»-ում հրատարակված պատմություններից մի քանիսը լայն տարածում գտան՝ դառնալով հանրային քննարկման առարկա, իսկ երբեմն նույնիսկ գիրք-հուշագրությունների հիմք: Դրանցից ամենահայտնին իրավապաշտպան Ֆեթիյե Չեթինի և նրա հայուհի տատի պատմությունն է.

¹ **Dink H.**, Bu köşedeki adam, İstanbul, 2009, s. 257.

² **Տինք Շ.**, Հայ ինքնութիւնը պէտք ունի նոր նախադասութիւններու // «Ակօս», 9.2.2007:

³ Դաւանափոխութիւնը ընդունիլ... // «Ակօս», 9.6.2006:

«Ակօս»-ի 2000 թ. փետրվարի 11-ի համարում տեղ էր գտել հետևյալ մահազոդը. «Նրա անունը Հերանուշ էր: Հերաբեթ Կատարյանի թոռնուհին էր, Իսկուհի և Օվաննես Կատարյանների միակ աղջիկը: Բալուի Հաբաբ գյուղում մինչև չորրորդ դասարանը երջանիկ մի մանկություն է ապրել: Միանգամից վրա են հասել տառապանքներով լի ժամանակներ, որոնց մասին նա ասում էր. «Այդ օրերը թող գնան, այլևս ետ չգան»: Հերանուշն իր ամբողջ ընտանիքը կորցրեց, նրանց հետ այլևս չկարողացավ հանդիպել: Նոր ընտանիք, նոր անուն ունեցավ, կյանքի ընթացքում այդ բոլորից ընդհանրապես չբողոքեց, սակայն իր անունը, գյուղը, մորը, հորը, պապին և մտերիմներին երբևիցե չմոռացավ: Մի օր նրանց հանդիպելու, նրանց հետ ողջագուրվելու հույսով 95 տարի ապրեց: Գուցե այս հույսով այդքան երկար ապրեց, գիտակցությունը մինչև վերջին օրերը չկորցրեց: Հերանուշ տատիկս անցյալ շաբաթ վախճանվեց և նրան դեպի հավիտենականություն ճանապարհեցինք: Նրա հարազատներին (մեր հարազատներին), որոնց իր կենդանության օրոք չենք կարողացել գտնել, հույս ունենք այս հայտարարության միջոցով գտնել, վշտերը կիսել և ասում ենք. «Այդ օրերը թող գնան, այլևս չկրկնվեն»¹: Ֆ. Չեթինի տատը՝ Հերանուշ Կատարյանը, այն իսլամացված հայերից էր, ովքեր 1915 թ. Հայոց ցեղասպանության ժամանակ ապաստան էին գտել մուսուլմանական ընտանիքներում և ժամանակի ընթացքում իսլամացվել էին: Նրանք փոխել են իրենց անունը, կրոնը և այդպես շարունակել իրենց գոյությունը: «Ակօս»-ի միջոցով Ֆ. Չեթինը ամիսներ անց կարողացավ գտնել իր տատի ամերիկաբնակ հարազատներին, ամբողջացնել Կատարյան ընտանիքի եղեռնյան պատմությունը և այն թղթին հանձնել: Արդյունքում 2004 թ. Ստամբուլում հրատարակվեց «Մեծ մայրս» վերնագրով հուշագրությունը², որը Թուրքիայում դարձավ ամենամեծ պահանջարկ ունեցող գրքերից մեկը, ապա թարգմանվեց տարբեր լեզուներով³: Առանց չափազանցության կարելի է ասել, որ «Մեծ մայրս» գիրքը շրջադարձային նշանակություն ունեցավ Թուրքիայում էթնիկ ինքնության քննարկումների ասպարեզում՝ դրդելով շատերին բարձրաձայնելու իրենց հայկական ինքնության մասին կամ սկսելու փնտրտուքներ:

Դինքը և նրա միջոցով նաև «Ակօս»-ը հետզհետե ընդլայնում են հայկական ինքնության տեսական քննարկման ոլորտը, անդրադառնում Թուրքիայում փոքրամասնություններին և առավել կոնկրետ քրիստոնյա հայ համայնքի խնդիրներին: Այս հարցում իրավացիորեն առաջնային քննարկման և քննադատության նյութ է դառնում թուրքական պետական քաղաքականության հետևանքով առաջացած վախի մթնոլորտը: Սակայն պարբերաթերթը

¹ Çetin F., Anneanem, İstanbul, 2004, s. 77.

² Çetin F., Anneanem, İstanbul, 2004.

³ Գիրքը երկու անգամ արևելահայերենով հրատարակվեց Հայաստանում 2006 և 2008 թվականներին (Չեթին Ֆ., Մեծ մայրս, թարգմանությունը՝ Ռուբեն Մելքոնյանի, Երևան, 2006):

առաջնորդվում է այն ճշմարտությամբ, որ թեև վախը «փոքրամասնության մը ամենահզոր ու բնական զենքն ու իրաւունքն» է, սակայն պետք չէ «իրենք զիրենք փոքրամասնութիւն ըլլալով տեսնել՝ այդ զենքին դիմել»¹ և վարել երկչոտ քաղաքականություն: Այս մոտեցմամբ «Ակօս»-ը չի խուսափում համարձակ քննադատական վերլուծություններից՝ անտեսելով նույնիսկ «պետության գայրոյթը»: «Իրաւ որ, մեր ինքնութեան պահպանութեան ժամանակ, եթէ ըլլան գայրացողներ, այդ իրենց հարցն է: Մենք ինքնապաշտպանութեան եւ իրականութիւնները ցոլացնելու ջանք կը թափենք,– գրում է Հ. Դինքը,– ես ալ կը գայրանամ, երբ ամէն անգամ հեռատեսիլը բանալով «Հայու լակոտ» եւ նման խօսքերու կամ ՓՔՔ-ի հետ մեր յարաբերութիւններու մասին լուրեր կը լսեմ: Եթէ գայրոյթը այնքան կարեւոր հարց է, եկէք եւ այս հարցերը, ցաւերը միատեղ ապրինք, ու քիչ մըն ալ դուք գայրացէք»²:

Թուրքիայի Հանրապետությունում փոքրամասնությունների նկատմամբ իշխանությունների սերմանած թշնամանքը չէր կարող անհետանալ մնալ: Թուրք ժողովրդի գիտակցության մեջ փոքրամասնությունները ընկալվեցին որպէս «իրավագուրկ օտարներ»: Հ. Դինքը, սակայն, փորձում է «փոքրամասնություն» եզրույթին տալ փոքր-ինչ խորհրդանշական բնույթ՝ այն չընդգրկելով էթնիկ-կրոնական շրջանակների մեջ, և նրա համոզմամբ՝ Թուրքիայում «խորքին մեջ բոլորն էլ փոքրամասնություն են»: Այս մասին նա գրում է. «Ճիշդ է. բոլորս փոքրամասնութիւն ենք: Օրինակ՝ փոքրամասնութիւններուն համար իրաւունքի հարց մը խնդրոյ առարկայ կ'ըլլայ. «Յակոբին կայ, Միշոյին կայ, մեզի չկայ» ըսելով աղաղակ կը բարձրացնեն Իսլամական թերթերը: Հոն կը շշմիմ: Այս երկրին մեջ իմ կողմէ մեծամասնութիւն նկատուած հատուածն ալ խորքին մեջ ինծի պէս հարցեր ունի: Այսինքն՝ մեզմէ միայն մեկուն հարցին լուծում գտնելը՝ համատեղ ապրումի բարոյականի տեսակետով ճիշդ ձեւ մը չէ եւ ո՛չ մեկուն օգուտ կը պատճառէ: Ասիկա ալ միակ բառով մը կը բացատրուի. – Ժողովրդավարութիւն»³:

Հայերի շրջանում տարածված վախի մթնոլորտի հաղթահարման ուղղությամբ Հ. Դինքի քայլերին «Ակօս»-ի խմբագրականը հետևյալ կերպ է անդրադառնում. ««Փողոցը երբեք Հայերէն մի՛ խօսիր: Երբ դուրսը կը գտնուիս, վզդ կախուած Խաչը ծածկէ՛, որոշ հեռաւորութեան մեջ կեցիր եւ Թրքութեան վերաբերեալ հարցերու մի՛ միջամտեր, երբեք առաջին կարգերու վրայ տեղ մի՛ գրաւեր, եթէ Հայութեանդ պատճառաւ ստորագնահատուիս՝ մի՛ գանգատիր եւ ընդհակառակն՝ լռէ՛: Տարբեր բացատրութեամբ մը անտեսանելի եղիր»: Հայերը, մինչեւ կարճ ժամանակ մը առաջ՝ Թուրքիոյ Հանրապետութեան մեջ իսկապէս ալ անտեսանելի դիրք մը կը ներկա-

¹ Արձագանգ Թուրք Մամուլի մէջ // «Ակօս», 10.12.1999:

² Թերթերը՝ մեր հայելին // «Ակօս», 25.10.1996:

³ **Տինք Հ.**, Խորքին մէջ բոլորս փոքրամասնութիւն ենք // «Ակօս», 21.10.2005: Տե՛ս նաև Azinlik içinde azinlik olmak // “Agos”, 24.08.2007:

յացնէին: Այս աստիճան նուաստ եւ անշուք կ'ապրէին: Եթէ այս երեւոյթը փոխուեցաւ, ասոր մէջ մասնաւորապէս անձի մը կողմէ հրատարակուած երկլեզու շաբաթաթերթ «Ալօս»ի հրատարակիչ Հրանդ Տինքի բաժինը մեծ է»¹: Վերջին ձևակերպումը փոքր-ինչ ուռճացված է, և վիճակը ներկայացված է առավելապէս ցանկալիի, քան թէ իրականութեանը համապատասխանող դիրքերից, քանի որ հայկական համայնքում ներկայումս ևս գերիշխող են վախի մթնոլորտը և դրանից բխող ծայրահեղ զգուշավորությունը:

Թուրքիայում հայկական ինքնութեան խնդրին անդրադառնալիս «Ալօս»-ը և Հ. Դինքը իրավացիորեն հատուկ շեշտադրում են կրթական համակարգում թուրքական իշխանությունների որդեգրած քաղաքականությունը, այն է՝ դպրոցից արմատախիլ անել ազգային ինքնութեան դրսևորման և ծավալման փորձերը: Այսպէս, Հ. Դինքը նկատել է տալիս, որ Թուրքիայում ազգային փոքրամասնությունների հանդէպ անհանդուրժողական քաղաքականությունը կարելի է տեսնել նույնիսկ դպրոցական դասագրքերում, որտեղ խոսք անգամ չկա ազգային փոքրամասնությունների մասին: Սրա վերաբերյալ նա բերում է հետաքրքիր օրինակ. ««Ալի՛, գնդակը Այշէին տու՛ր», կամ՝ «Այշէ՛, գնդակը Ալիին տու՛ր»: Երբեք չի հանդիպում «գնդակը տու՛ր Հակոբին, Դելալին կամ Հրիստոյին»: Փողոցում, բակերում, շրջապատում այս մարդիկ ընդհանրապէս չկան»²:

Թուրքիայում յուրաքանչյուր աշակերտ իր դպրոցական օրն սկսում էր «աշակերտական երդումով», որտեղ, անկախ այն բանից աշակերտը հայ է, հրեա, հույն թէ քուրդ, ստիպված է արտասանել «թուրք եմ, ճշմարիտ եմ, աշխատասեր եմ» արտահայտություններով սկսվող, և «ինչ երջանիկ է նա, ով ասում է՝ ես թուրք եմ» բանաձևով վերջացող ուխտը: Իսկ նրանք, ովքեր «ես թուրք եմ»-ի փոխարեն «ես քուրդ եմ կամ հայ եմ» արտահայտությունն են օգտագործում, պատժվում են³:

*“Türküm, doğrucum, çalışkanım.
İlkem; küçüklerimi korumak, büyüklerimi saymak,
yurdumu, milletimi özümünden çok sevmektir.
Ülküm; yükselmek, ileri gitmektir.
Ey büyük Atatürk! Açtığın yolda, gösterdiğin hedefe
durmadan yürüyeceğime ant içerim.
Varlığım, Türk varlığına armağan olsun.
“Ne mutlu Türküm diyene!”⁴.*

¹ «Ալօս», 19.5.2006:

² **Dink H.**, İki yakın halk iki uzak komşu, İstanbul, 2008, s. 26-27. Տե՛ս նաև՝ **Dink H.**, Yaşamın sürdürülebilirliği mi? // “Agos”, 14.06.1996:

³ <http://arevelkcenter.com/archives/2468>.

⁴ <http://istanbul.meb.gov.tr/upload/istanbulders/ogrenci3s1.pdf>.

*«Ես թուրք եմ, ճշմարիտ եմ, աշխատասեր եմ:
Սկզբունքս է՝ փոքրերիս պաշտպան լինել,
Մեծերիս հարգել, պետությունս, ազգս ինձնից առավել սիրել:
Գերագույն նպատակս է՝ բարձրանալ և առաջ գնալ:
Հե՛ն, մե՛ծն Աթաթուրք, երդվում եմ անդադար քայլել
Քո գծած ուղիով, որ տանում է դեպի Քո մատնացույց արած նպատակը:
Թո՛ղ դ իմ գոյությունը նվիրաբերվի թուրքի գոյությանը:
Ի՛նչ երջանիկ է նա, ով ասում է՝ ես թուրք եմ»:*

Պոլսահայ լրագրող Ալին Օզինյանը նկատում է, որ հայկական վարժարաններում այս երդումը շատ ավելի խիստ է կիրառվում, չնայած բոլոր աշակերտները և ուսուցիչների մեծ մասը հայեր են: Նույնը վերաբերում է հունական ու հրեական վարժարաններին: Նույնիսկ ծնողական ժողովները սկսում էին այդ երդման արտասանությամբ, և ծնողներին ևս վերահսկում էին նույն ձևով: Փաստորեն, էթնիկապես ոչ թուրք աշակերտների դպրոցական յուրաքանչյուր օր սկսվում է իրավունքների ոտնահարումով, թեև Հ. Դինքը նկատել է տալիս. «Իրավո՞ւնք: Նման բան չկա: Այս երկրում ամեն հայրենակից թուրքերի հետ հավասար իրավունքներ չի կարող ունենալ»²:

Զինվորական քայլերգ հիշեցնող աշակերտական երդման մասին Հ. Դինքը գրում է երիտթուրք պարագլուխ Ջեմալ փաշայի թոռանը՝ հայտնի լրագրող Հասան Ջեմալին. «Սիրելի Հասան Ջեմալ, 14.12.2002-ին «Մազլում դեր»-ի Ուրֆայի մասնաճյուղի նախագահության կազմակերպած նիստին հրավիրվել էի որպես բանախոս: Ելույթիցս հետո անցանք ներկաների հարցերին: Ինձ ուղղված հարցերից մեկն այն էր, թե արդյոք հայկական դպրոցներում արտասանվում է՝ «Թուրք եմ, ճշմարիտ եմ, աշխատասեր եմ» երդումը, և եթե, այո՛, ապա այդ պահին ինչ եմ զգում:

Ես հետևյալն ասացի.

«Աշխատասեր եմ, ճշմարիտ եմ» բառերը շատ եմ սիրում և բղավելով արտասանում եմ: Իսկ «թուրք եմ» հատվածն ասելիս ձգտում եմ այն ընկալել որպես «թուրքաբնակ»: Ես թուրք չեմ, թուրքաբնակ եմ: Թուրքիայի Հանրապետության քաղաքացի եմ և հայ եմ»³:

Թուրքիայի հայկական և հունական դպրոցներում աշխատած ուսուցիչներից էմեն Քեշմերը, որը նաև «Մի տոպրակ Ստամբուլի հող» վերտառությամբ գրքի հեղինակն է⁴, նշում է, որ «թուրք եմ, ճշմարիտ եմ, աշխատասեր եմ» արտահայտությունը ոչ թուրք աշակերտներին արտասանել պարտադրելն ինքնին պետականորեն իրականացվող ազգայնամոլական քաղաքականության դրսևորում է: Նա «Ակօս»-ին տված իր հարցազրույցում նշում է, որ

¹ **Օզինյան Ա.**, Ոչ այլևս թրքության երդում (http://civilnet.am/alin_ozinian_turkish_oath): Տե՛ս նաև **Dink H.**, Türkiyeli olmak // “Agos”, 12.10.2003:

² Իրատունք Ունիս. Բայց Դուն Տարբեր ես // «Ակօս», 1.08.1997:

³ **Cemal H.**, 1915: Ermeni Soykırımı, İstanbul, 2012, s. 9-10.

⁴ **Keşmer E.**, Bir Poşet İstanbul Toprağı, İstanbul, 2012.

իրենք՝ թուրքերը, միշտ հպարտանում են, որ աշխարհում միայն իրենք են, որ ապրիլի 23-ին տոնում են երեխաների օրը: Բայց միաժամանակ նրանք այդ օրը երեխաներին սովորեցնում են այնպիսի բանաստեղծություններ, որոնք ատելություն են սերմանում իրենց «երկրի թշնամիների» հանդեպ¹:

Այս թեմայի շուրջ ոչ թուրք քաղաքացիների կողմից օրեցօր թեժացող բողոքներն ի վերջո թուրքական իշխանություններին ստիպեցին 2013 թ. վերացնել այդ հարկադրանքը: Այդ պայքարում առաջնային դեր էր ստանձնել նաև «Ալօս»-ը, որի էջերում պարբերաբար քննարկվում ու քննադատվում էր ծայրահեղ խտրական «աշակերտական» այդ երգումը: Մակայն իրատես լինելու համար պետք է նշել, որ այդ հարցում էական դեր խաղաց բազմամիլիոնանոց քուրդ ազգաբնակչության ընդվզումը և՛ հասարակական, և՛ քաղաքական, և՛ իրավական հարթություններում:

Նկատենք, որ նմանատիպ ազգայնամոլական շեշտադրումներ ունի նաև Թուրքիայի Հանրապետության պետական օրհներգը, իսկ քրեական օրենսգրքով որոշակի պատիժ է սահմանված օրհներգից շեղումների դեպքում: Հ. Ջեմալին ուղղված վերոհիշյալ նամակում Հ. Դինքը անդրադառնում է նաև օրհներգին և փոքրամասնությունների շրջանում դրա առաջացրած ընկալումներին. «Անդրադարձա մեր ազգային օրհներգի «Իմ հերոս ռասային ժպտա» տողին և խոստովանելով, որ ռասա բառի շեշտադրումից անհանգստություն եմ զգում՝ հետևյալն ասացի.

«Մանկությունիցս ի վեր ձեզ հետ միասին երգում եմ Անկախության օրհներգը: Մակայն վերջին ժամանակներս մի տող կա, որին հասնում եմ թե չէ՝ արգելակվում եմ: Ես լռում եմ, իսկ դուք շարունակում եք, և հետո միայն ես միանում եմ շարունակությանը. «Հերոս ռասայիս ժպտա»...

«Ռասա», «իմ նախնին», «հերոս»: Այսինքն՝ մինչև հիմա ազգային օրհներգում քաղաքացիություն հասկացությունը, ազգային միասնությունը դեռ ռասայով, հերոսական մի ռասայով ենք ձգտում ապահովել: Ռասա բառը բացարձակապես չի ներդաշնակում ազգային օրհներգին, բացահայտ անջատողականության և ռասիզմի ենք դիմում: Անջատողականության ենք դիմում, քանի որ այս երկրում բոլորս նույն ռասայից չենք: Թուրք կա, հույն կա, քուրդ կա, հայ կա:

Նույն տողը նույն պահին երգելով՝ իրականում մենք բոլորս մեր ռասան ենք նկատի ունենում: Մրանից ավելի բացահայտ ռասիզմ և անջատողականություն հնարավոր է»²:

«Ռասայական խտրականություն», ինչպես նաև՝ «թուրքիացի»³, արտահայտությունների առաջադրման համար Հ. Դինքի դեմ քրեական գործ

¹ <http://www.agos.com.tr/mudur-dediggin-okulu-gozetler-2107.html>

² Cemal H., նշվ. աշխ., էջ 10:

³ Այս եզրույթը նա կիրարկում էր միայն Թուրքիայի՝ ազգությամբ ոչ թուրք քաղաքացիների պարագայում:

հարուցվեց «Թուրքականությունը վիրավորելու» մեղադրանքով:

Ինքնությանը վերաբերող հաջորդ խնդիրը, որը դարձավ Դինքի և «Ակօս»-ի օրակարգային նյութ, վերաբերում էր Թուրքիայի իշխանությունների դեմ զինված պայքար մղող քրդական «Քրդստանի աշխատավորական կուսակցություն» (ՔԱԿ) ծայրահեղական կազմակերպության մարտիկներին հայկական ծագում վերագրելուն: 1980-1990-ականներից սկսած՝ թուրքական իշխանությունները հրապարակ նետեցին մի անհիմն թեզ, թե ՔԱԿ-ը հայկական կառույց է, և նրա անդամները ծպտյալ հայեր են: Այս անհեթեթությունը լայն տարածում գտավ նաև մամուլում և դարձավ հայությանը վիրավորելու, նրա ազգային ինքնությունը կաղապարելու ևս մեկ պատրվակ: Հայտնի է, որ թուրք ազգայնականների առաջնային թիրախը հայերն են, և հակաթուրքական որևէ երևույթի հետևում հասարակության մեծ մասը հաճախ տեսնում է հայերին: Թուրքական իշխանությունների և մամուլի հետևողական աշխատանքի արդյունքում այսօր Թուրքիայում ամենածանր վիրավորական արտահայտություններն են «գլավուր», «հայի բիճ», «հայի լաճ» բառերը¹:

Թուրքական հասարակությանը բացատրություններ տալու նպատակով Հ. Դինքն իր ելույթներում ու հոդվածներում հետևողականորեն առաջ էր տանում այն միտքը՝ փորձելով թուրք հասարակությանը բացատրել, որ հայերը ոչ մի առնչություն չունեն ՔԱԿ-ի հետ: Նրան հատկապես անհանգստացնում էր, որ Թուրքիայում արվում էր հնարավորը հայերին ՔԱԿ-ի հետ նույնացնելու համար: Այս մասին «Ակօս»-ում կարդում ենք. «Բայց իրականութեան մեջ անոնք ալ գիտեն, թե Հայերը ոչ մեկ աղերս ունին ՓՔՔ-ի կամ Քիւրտերու հետ: Այս ընթացքը կ'անհանգստացնէ մեզ, քանի որ կապրինք այս երկրին մէջ: Եթէ հոս պիտի ապրինք, ստիպուած ենք այս վարուելակերպին հետ ապրելու... Այսքան ստորացումի եւ արհամարհանքի փոխարէն եթէ մենք դեռ կը շարունակենք այս երկրին մէջ ապրիլ, պէտք է քիչ մը սպասել ու խորհիլ: Որովհետեւ մեր արմատները, եկեղեցիները, վարժարանները, ասանդութիւնները ու նաեւ մեր ապագան հոս են»²:

ՔԱԿ-ին որպես հայկական կառույց ներկայացնելու քարոզչության մեջ էական նշանակություն ուներ այն, որ 1997 թ. Թուրքիայի ներքին գործերի նախկին նախարար տիկին Մերալ Աքջեները նոր ոստիկանատան բացման ժամանակ ազգային միասնականության վերաբերյալ ելույթ ունենալիս խոսել է ՔԱԿ-ի առաջնորդ Աբդուլլահ Օջալանի մասին և հայտարարել. «Հայու վիժվածք դատարկապորտ մը Աբօ, չկրցաւ մեր ազգային միասնականութիւնը խախտել... մեր բազմաթիւ եղբայրները լեռ բարձրացնելով կը կարծէ թէ պիտի կարենայ այս երկիրը պառակտել»³:

¹ «Հայ մը, որ կը փնտռէ վերածնունդը» // «Ակօս», 26.04.2002:

² Փոքրամասնութեան «Գունաւոր» թերթերը // «Ակօս», 25.07.1997:

³ Հատուածներ Թուրք մամուլի մէջ լոյս տեսած հակազղեցութիւններէն // «Ակօս», 4.04.1997, Հրապարակային ներողութիւն // «Ակօս», 4.04.1997:

Նրա այդ հայտարարությունից հետո, նաև շնորհիվ «Ակօս»-ի, Հ. Դինքի և նրա հետ արդեն համագործակցող թուրք հրատարակախոսների, մեծ աղմուկ բարձրացավ և թուրքական ու հայկական մամուլում հրատարակվեցին այդ մեղադրանքները քննադատող հոդվածներ: Հ. Դինքի ընդվզումը «Ակօս»-ի էջերում անդրադառնում էր նաև ինքնության խնդրին. «Ես Հա՛յ եմ եւ Հայրենասէր եմ: Ես չեմ ուզեր, որ իմ անունիս այլ անականներ կցուին: Այս երկրին քաղաքական կեանքին, ժողովրդավարութեան, միատեղ աշխատանքին, վերակազմութեան, ամէն բանին մէջ կ'ուզեմ ըլլալ: Ահա՛ իմ ինքնութիւնս»¹:

Ուշագրավ է, որ այդ թեմային անդրադարձան նաև թուրքական մամուլի որոշ ներկայացուցիչներ, որոնց հոդվածները անմիջապես տեղ էին գտնում «Ակօս»-ի էջերում: Այսպես, թուրքական «Մաբահ» թերթի մարտի 20-ի համարում լույս տեսավ լրագրող Հրնջալ Ուլուչի հոդվածը. «Հայերը այս երկրին հայրենակիցները, այս ազգին, թուրք ժողովուրդին մէկ մասնիկը չե՞ն միթէ... Այս մարդիկ, որոնք գլխաւորութեամբ Հայաստանի՝ աշխարհի գրեթէ բոլոր երկիրներուն մէջ ազգականներ ունենալով՝ տէր են իրենց համար որեւէ հայրենիք մը ընտրելու, Թուրքիա չե՞ն բնակիր իբրեւ իրենց հարազատ հայրենիքը... Գիտէ՞ք այսօր թէ մեր շրթներէն անպակաս, ամէն առթիւ մեծ հաճոյքով երգուած սքանչելի երգերէն քանին «Հայու սերմ»-երու ստեղծագործութիւններն են»²: Հեղինակը նաև փաստում է, որ թուրքերը հոչակավոր Սուլէյմանիէներ, Սելիմիէներ մզկիթների մասին հպարտությամբ ասում են՝ «մերն է», սակայն իրականում դրանք հայերն են կառուցել:

Թուրքական «Յենի Յուզլըլ» թերթում տպագրվում է Յադմուր Աթսըզի «Ես իր անունով ներողութիւն կը խնդրեմ» խորագիրը կրող հոդվածը, որտեղ նա նշում է. «Հրամանատարուհի Մէրալ Ազշէներ իր խելքովը Աբօն նախատած ըլլալու համար գործածեր է «Հայու սերմ» ասութիւնը: Ես կ'անգիտանամ իրեն ինչի՞ սերմ ըլլալը, չեմ ալ ուզեր գիտնալ: Նման անարգ վերաբերում մը նողկանքով կը պարսաւեմ, քանի որ ան միեւնոյն ատեն մարդկային յանցանք մըն է: Այս նախատական խօսքերուն համար անոր հաշուոյն ներողութիւն կը խնդրեմ բոլոր Հայ հայրենակիցներէն...»³:

Ծավալված բողոքի և քննադատության ալիքը որոշակի արդյունք ունեցավ, և ապրիլի 1-ին հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ Մ. Աքշէները «ցավ» հայտնեց հայ հայրենակիցներին վիրավորելու համար: Այդուհանդերձ, նման դեպքերը Թուրքիայում բազմաթիվ են, իսկ դրանք պարսավողները քիչ:

¹ Պտոյտ մը «Ականուած Դաշտին» մէջ // «Ակօս», 26.12.1997:

² Նույն տեղում: Տե՛ս նաև “Sabah”, 29.03.1997:

³ Հատուածներ Թուրք մամուլի մէջ լոյս տեսած հակազդեցութիւններէն // «Ակօս», 4.04.1997: Տե՛ս նաև “Yeni Yüzyıl”, 31.03.1997, “Radikal”, 30.03.1997, “Radikal”, 31.03.1997, “Sabah”, 30.03.1997, “Hürriyet”, 31.03.1997, “Radikal”, 1.04.1997:

Այդ դեպքը, սակայն, ինչպես նաև դրան հաջորդած զարգացումները «Ակօս»-ում շատ կարևոր մի նոր փուլ էին սկզբնավորում, որոնք հետագայում ծավալվելու էին: Սա առաջին քայլերից էր, որն ուղղակի կամ անուղղակի նպաստեց, որ հայկական թեմատիկան ընդլայնի իր սահմանները և, բացի թուրքահայ մամուլի զգուշավոր անդրադարձներից, իր որոշակի տեղը զբաղեցնի թուրքական մամուլում, և այս հարցում «Ակօս»-ի ու Հ. Դինքի դերը իրականում բավականին մեծ է: Ավելի ուշ նա կրկնելու էր և հստակեցնելու պարբերաթերթի հիմնադրման կարևոր նպատակներից մեկի մասին իր տեսակետը. «Խոսիլ հայութեան խնդիրներու մասին Թուրքիոյ հանրութեան առջեւ, իրենց հասկցած լեզուով, քանի որ, այդ օրերուն «Հայ» բառը հասած էր նոյնիսկ հայհոյանքի աստիճանին, ամէն օր, հեռուստակայաններու եւ թերթերու մէջ, քաղաքական անձնաւորութիւններու եւ մտաւորականներու բերնէն Հայուն հասցէին զանազան անարգանքներ եւ ամբաստութիւններ կ'ըլլային: Նաեւ մեր համայնքային կէանքին մէջ, զազաթնակէտին հասած էր պետական ճնշումներուն ստեղծած դժուար կացութիւնը, երբ մեր ձեռքերէն կալուածները կ'առնուէին եւ դպրոցներու մէջ ճնշում կար: Այս կացութեան մէջ կը մտածէինք, թէ պէտք է Թուրքիոյ ժողովուրդին փոխանցենք մեր հարցերը եւ իրենց հասկցած լեզուով անոնց գիտակցութեան յանձնենք, թէ ի՞նչ տեղի կ'ունենայ եւ թէ ո՞վ է հայր: Մենք մեզ պաշտպանելու համար մէջտեղ եկած թերթ ենք»¹:

«Ակօս»-ի հեղինակության աճի և ավելի լայն ներկայացվածության մասին է վկայում այն, որ թերթին սկսեցին ավելի հաճախակի աշխատակցել թուրք, քուրդ և այլ ժողովուրդների ներկայացուցիչ լրագրողներ ու հրապարակախոսներ: Նրանցից է նաև թուրք հայտնի հրապարակախոս Բասքըն Օրանը, ով բավական ակտիվ է նաև հասարակական-քաղաքական որոշակի ոլորտներում: Չնայած նա ոչ միանշանակ կերպար է և հայկական թեմատիկայի շուրջ արել է բավականին ադմկահարույց հայտարարություններ, կատարել թվացյալ «հայանպաստ», իրականում, սակայն, իշխանամետ քայլեր, այնուամենայնիվ թուրքական մամուլում նա որոշակի հեղինակություն է վայելում: «Ակօս»-ի էջերում նա սկսում է ինքնության հարցի շուրջ տեսական հարցադրումներ պարունակող հոդվածներ հրատարակել, որտեղ քննության նյութ է դարձնում Թուրքիայում տարածված «երկու ինքնությունների» կամ «վերին ու ներքին ինքնությունների» (üst kimlik, alt kimlik) թեման: Նկատենք, որ այդ թեմային անդրադարձել էր Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը, ըստ որի՝ Թուրքիայի բոլոր քաղաքացիները «վերին ինքնությամբ» թուրք են, իսկ «ներքին ինքնությամբ» կարող են լինել հայ, քուրդ, արաբ և այլն: Բ. Օրանը, փաստորեն, կրկնում է վարչապետի մտքերը՝ նշելով, որ «վերին ինքնությունը» անձի՝ տվյալ երկրի քաղաքացիությամբ

¹ Տիսք Հ., Հայ ինքնությունը պէտք ունի նոր նախադասություններու // «Ակօս», 9.02.2007:

պայմանավորված սոցիալական ինքնությունն է¹: Իսկ թուրքական սահմանադրության 66-րդ հոդվածում այդ մասին նշված է. «Բոլոր նրանք, ովքեր ունեն թուրքիայի քաղաքացիություն, թուրք են» («Türk Devletine vatandaşlık bağı ile bağlı olan herkes Türktür»²): Այստեղից կարելի է հետևության հանգել, որ «Türk» բառը էթնոսից վեր է դասվում: Այդ դեպքում ի՞նչ է նշանակում «ներքին ինքնություն». այն, ըստ Բ. Օրանի, մարդու պատկանելությունն է որևէ այլ էթնիկական խմբի: Այստեղ նա նկատել է տալիս, որ անձն իր էթնիկական ծագումը պետք է պաշտպանի, բացեիքաց դրսևորի իր ազգային առանձնահատկությունները և չպետք է միայն տվյալ երկրի թելադրած, պարտադրած ազգային ինքնությունն ընդունի³:

Հ. Դինքը նույնպես անդրադառնում է «երկու ինքնությունների» թեմային, սակայն այլ կտրվածքով. ըստ նրա՝ թուրքահայը այսօր կանգնած է ինքնության երկվության առաջ և երկու ինքնություն ու երկու գիտակցություն կրող է: Թեև նա թուրքաբնակ է, թուրքիայի Հանրապետության քաղաքացի, սակայն ծագումով հայ է, նա թուրքիայի հայկական համայնքի մասնիկն է, միևնույն ժամանակ բարոյապես Հայաստանի և Սփյուռքի մասնիկն է: Ազգային և քաղաքացիական ինքնությունների տարբերակման գիտակցումից բխած իր խոսքերը հաճախ ուղղվում էին իր իսկ դեմ՝ որպես ազգի կամ պետության դավաճանի: Նման գնահատականը արդյունք էր երկու ժողովուրդների և երկու երկրների որոշակի գաղափարական դիրքորոշումների: Ի վերջո նա տալիս է այդ վիճակի թեկուզ փոքր-ինչ կոպիտ, սակայն դիպուկ գնահատականը. «Հայերն իրենց հոգեխեղման, իսկ թուրքերը մտազարության ախտանիշներով հիվանդներ են»⁴: Նա, սակայն, առաջարկում է իր սեփական օրինակով այդ երկու ինքնությունների միջև ներդաշնակություն ստեղծել. «Երկու ինքնութիւններս, զորս երբեք փոխելու նպատակ չունիմ եւ հակառակ անոր որ ահաւոր ցաւ մը եւ նաեւ պատիւ կ'զգամ անոնց տէր ըլլալով, աւելցնեմ որ յաջողած եմ այդ զոյգ ինքնութիւններու միջեւ ներդաշնակ միասնութիւն մը ստեղծելու»⁵:

Քննարկվող թեմայի շրջանակներում Հ. Դինքը անդրադառնում է թուրքահայերի և հայաստանաբնակ հայերի, ինչպես նաև թուրքահայ-սփյուռքահայ-հայաստանցի եռանկյունու քաղաքական, հոգեբանական բարդ խնդիրներին: Նա և «Ակօս»-ը առանձին-առանձին են դասակարգում և դիտարկում Հայաստանի հայերի, սփյուռքահայերի և թուրքահայերի պարագաները, քանի որ յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ տարբերակիչ հատկանիշներ:

¹ **Oran B.**, Hortumlama ve Uluslararası Kynescilik // “Agos”, 21.12.2001.

² <http://www.tbmm.gov.tr/anayasa/anayasa82.htm>

³ Ավելի մանրամասն տե՛ս **Oran B.**, Alevilerde bölücü sayıldı ya.pes! // “Agos”, 22.02.2002, Oran B. Lâhasümüt // “Agos”, 14.01.2005:

⁴ Տե՛ս **Dink H.**, Ermeni kimliği üzerine (6) Ermeninin “Türk”ü // “Agos”, 23.01.2004:

⁵ «Ֆրանսայի ճարպիկութիւնը» // «Ակօս», 9.02.2001:

Հ. Դինքը նաև նկատել է տալիս, որ սփյուռքահայերը, անկասկած, հոգեխեղման ամենաձանր վիճակում են գտնվում: Պատմությունը և պատմության թողած հոգեվիճակները թե՛ թուրքերի և թե՛ հայերի մեջ անառողջ և անհանգիստ են: Երկկողմ մոտեցումներում հակառակ կողմը «խորթ» է, և այդ «խորթությունը» անխուսափելի գոյավիճակ է:

Խոսելով «սփյուռքահայ» եզրույթի սահմանների մասին՝ Հ. Դինքը նշում է, որ գոյություն ունի անկախ հայկական պետություն, որն աշխարհի բոլոր հայերի մայր հայրենիքն է: Իսկ դրա սահմաններից դուրս բնակվող հայերը Հայկական Սփյուռքն են: Սակայն նա նկատել է տալիս, որ թուրքաբնակ հայերի պարագայում նույնպիսի բնորոշում հնարավոր չէ տալ: Այս դեպքում, ինչպես նա է նշում, իրականությունը ճիշտ չի արտացոլվի. թուրքաբնակ հային սփյուռքահայ համարելը սխալ է¹:

Հայկական Սփյուռքի համար թուրքը շարունակում է մնալ պատմության այդ նույն թուրքը, որը չի փոխվում: Հ. Դինքը մեծ արձագանքի արժանացած հոդվածներից մեկում կոչում էր սփյուռքահայերին «մաքրել իրենց արյունը թուրքերի հանդեպ ունեցած ատելությունից»: Սակայն քանի դեռ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ավելին՝ շարունակում է այն ժխտել, ցեղասպանության հարցը մնալու է սփյուռքահայի ինքնության կարևորագույն բաղադրիչը. «Ես ո՞ր կէ կու գամ մայրիկ» հարցումով՝ Սփյուռքահայուն ինքնութեան որոնումը բաւարար պատճառ մըն է՝ անոր մօտաւոր անցեալին պատահած Ցեղասպանութեամբ հետաքրքրուելու համար: Եթէ նոյնիսկ մենք չխոսինք կամ մեր զուակներուն չպատմենք, օր մը անհատը ի՞նքը պիտի ուզէ ատիկա: Երբ պրպտելով ամէն ինչ երեսն կու գայ, հոգեվիճակը կը վիրաւորուի: Ասիկա՝ այնպիսի հոգեբանութիւն մըն է որ, զայն բուն ձեւաւորողը, կիւր բռնաբարող մարդը, փոխանակ իր արարքին մասին զոջում յայտնելով խոստովանելու, ընդհակառակն կը պնդէ, թէ ի՞նքը բռնաբարուած է կնոջ կողմէ»²: Իսկ հայաստանցիների համար ոչ միայն թուրքն է պատմական թշնամի, այլև Թուրքիան է այնպիսի պետություն, որը տարիներ շարունակ շրջափակել է Հայաստանի Հանրապետությունը, և տնտեսական դժվարությունները էլ ավելի են մեծացրել հակակրանքը նրա հանդեպ³:

Հ. Դինքը «Ակօս»-ի էջերում բացում է նաև մեկ այլ արդիական և կրկին հայկական ինքնության հետ առնչվող թեմա՝ հայերի բնիկ լինելը և «Թուրքիայից հողային պահանջատիրությունը»: Թեև այս հարցերի շուրջ նրա

¹ **Dink H.**, Define Tarifi // “Agos”, 18.02.2000, Diaspora'nın köyü (1) // “Agos”, 7.04.2000, Diaspora'nın köyü (2) // “Agos”, 14.04.2000, Yeni kavramlara doğru // “Agos”, 22.02.2002, Diaspora kaplumbağaları // “Agos”, 1.03.2002, Acıyı sırtlayıp onurla taşımak // “Agos”, 5.04.2002, Himayelerinden kurtulmak // “Agos”, 19.04.2002, Diaspora Bakanlığı // “Agos”, 8.05.2002.

* Ի դեպ, այս արտահայտությունը ևս պատճառ դարձավ Հ. Դինքի նկատմամբ պետական և հասարակական հավաճանքների ու դատական գործ հարուցելու:

² «Ո՞ր հարցումով սկսինք» // «Ակօս», 5.04.2002:

³ Տե՛ս **Dink H.**, İki yakın halk iki uzak komşu, İstanbul, 2008, s. 3-4:

տեսակետները Թուրքիայում տարածված հիվանդագին ընկալումները կոտրելու միտում ունեն և որոշ կետերում տարբերվում են հայաստանյան և սփյուռքյան տեսակետներից, այնուամենայնիվ կարևոր են:

«Ակօս»-ում ինքնության թեմայի շուրջ ուսումնասիրությունները հետզհետե դառնում էին ավելի համարձակ՝ վերածվելով և՛ թուրքական իշխանությունների, և՛ նրանց արբանյակների մտահոգության առարկա: Սակայն այդ թեմայի շրջանակներում ամենաաղմկահարույց բացահայտում-ուսումնասիրությունը առնչվում է Թուրքիայի խորհրդանիշներից մեկին՝ առաջին կին ռազմական օդաչու և հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի որդեգիր աղջկան՝ Մաբիհա Գյոքչենին: 2004 թ. փետրվարի 6-ին «Ակօս»-ում լույս է տեսնում Հ. Դինքի և Տիրան Լոքմագոջյանի հոդվածը՝ «Մաբիհա Գյոքչենի գաղտնիքը» վերստառությամբ¹: Հոդվածում հեղինակները բացահայտում են, որ թուրքական ամենակարևոր խորհրդանիշներից մեկը, որը նաև թուրք ազգայնականության ոգեշնչման աղբյուրներից էր, իրականում Հայոց ցեղասպանության որբուհիներից է՝ Խաթուն Սեբիլջյան անունով, ում Մուսթաֆա Քեմալը որդեգրել է և տվել ռազմական կրթություն: Հ. Դինքը և Տ. Լոքմագոջյանը գտել էին Խաթուն Սեբիլջյան-Գյոքչենի հայաստանաբնակ ազգականներին, ովքեր մի շարք մանրամասներ էին պատմել լեզենդար օդաչուի և նրա ինքնության մասին: Հոդվածն օրեր անց արտատպվել է նաև թուրքական մամուլում և դարձել Թուրքիայի՝ այդ օրերի հասարակական-քաղաքական օրակարգի թիվ մեկ նյութը: Այս առիթով քննադատությամբ հանդես եկան բազմաթիվ քաղաքական գործիչներ, պաշտոնյաներ, անգամ Թուրքիայի զինված ուժերի գլխավոր շտաբը պաշտոնական հայտարարություն տարածեց, որտեղ ասված էր՝ այդ հոդվածն ուղղված է թուրքական պետականության հիմնասյուների դեմ: Հարկ է հատկապես առանձնացնել այն, որ կտրուկ հայտարարությամբ հանդես եկան ծայրահեղ ազգայնամոլական կուսակցություններն ու կազմակերպությունները. «Ակօս»-ի առջև տեղի ունեցավ «գորշ գայլերի» բազմամարդ բողոքի հանրահավաք, որտեղ բացահայտ ասվեց. «Դի նք, դու մեր թիրախն ես»: Կան հիմնավոր կարծիքներ, որ հենց այդ հոդվածը նրա համար ճակատագրական եղավ, քանի որ նա դրանով անդրադառնում էր թուրքական կեղծ և պարտադրված ինքնությանը, որի խարխուլումը միանշանակ վտանգում է պետականությունը: Ի վերջո 2007 թ. հունվարի 19-ին հենց վերոնշյալ ծայրահեղական կազմակերպությունների երիտասարդ անդամների կողմից Հրանտ Դինքը սպանվեց:

Այսպիսով, հայ ինքնության որակների պահպանման և տեսական քննության փորձը «Ակօս» պարբերաթերթում նորովի մոտեցումներով է դրսևորվում: Կարելի է ասել, որ այն հստակ ծրագրային ուղղությամբ համարձակ

¹ **Dink H.**, Lokmagözyan T. Sabiha Hatun'un Sırrı // “Agos”, 6.02.2004.

խոսքի ճանապարհ բացեց: Պոլսահայ մյուս թերթերի համեմատությամբ՝ այս հարցում ևս «Ակոս»-ը անհամեմատ համարձակ է: Ազգային ինքնության շուրջ վիճաբանություններից և հարցադրումներից շատերն էին վախենում. «Թուրքիա, թրավմաներու երկիր մըն է: Մարդիկ՝ կամ լռութիւն պահած են եւ կամ ալ իրադարձութիւնները ծածկած, սուտ խօսած են»¹: Սակայն Դինքն առաջնորդվում էր այն վճռական հավատամքով, որ «ինքնութիւնները հարցադրելու և զանոնք հասկնալու ժամանակն» է: Այս նպատակի համար նա սկզբունք էր ընդունում միմյանց հասկանալ ցանկանալու մեկնակետը. «Եթէ մեր ինքնութիւնները լաւ հասկնանք, ա՛յն ատեն միայն զիրար պիտի հասկնանք»²:

Շարաթաթերթը դիմում է ինքնության ընկալման, ճանաչման և բացահայտման բազմազան, նորովի և որ ամենակարևորն է՝ վերլուծական մոտեցումների քննությանը, տպագրում, համեմատում ու համադրում է ազգային ինքնության ընկալման և նրա ձևափոխման ուղիները: Այս ուղղությամբ «Ակոս»-ը նոր շարժում սկզբնավորեց՝ ճանապարհ բացելով «ինքնության ճգնաժամ» ապրողների համար:

Элина Мирзоян – Проблема национальной идентичности на страницах газеты «Акос» в годы редакторства Гранта Динка (1996-2007 гг.)

Изложенный в статье материал позволяет заметить, что включение темы национальной идентичности в указанные годы в повестку дня турецкой прессы и общественно-политических, научно-аналитических рамок Турции, а также дальнейшее развитие этой темы были главным образом связаны с газетой «Акос» и опубликованными в ней статьями армянских и иностранных авторов. В широком смысле в статье теоретически и практически рассматривается вопрос идентичности на страницах периодического издания «Акос». Газета сыграла неоспоримую роль в деле осознания армянской идентичности и сохранения ее качеств, рассмотрению чего и посвящена указанная подглава.

Elina Mirzoyan – The Problem of National Identity in the Pages of the “Agos” Weekly During the Years of Hrant Dink’s Editorship (1996-2007)

The material set out in the article allows to note that during the mentioned years the inclusion of the issue of national identity in the agendas of the Turkish press and Turkey's sociopolitical, scientific and analytical framework, as well as the further development of the mentioned problem were greatly connected with the newspaper “Agos” and the articles published in it by Armenian and foreign authors. In a broad sense it is a theoretical and practical overview of the problem of identity in the pages of the periodical “Agos”. The newspaper played an undeniable role in raising the awareness of the Armenian identity and maintaining its qualities, which is the subject matter of the mentioned subchapter.

¹ «Դաւանափոխութիւնը ընդունիլ...» // «Ակոս», 9.06.2006:

² Տիմր Շ., Խորքին մէջ բոլորս փոքրասանութիւն ենք // «Ակոս», 21.10.2005: Տե՛ս նաև www.tempodergisi.com (18 հոկտեմբեր 2005):

**ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ-ԼԵՎՈՆ ՉԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ.
ՄԵՐՏ ԲԱՐԵԿԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆԴԱՐՁ ԲԱԺԱՆՈՒՄ**

Բանալի բաներ – Վահան Թեքեյան, Չավեն Սյուրմեյյան, նամակագրություն, Հայաստան, Միացյալ Նահանգներ, որբություն, ազգային գործունեություն, հոգևոր հայր, բաժանում, զոհողություն, ազնվական ասպետ, հիվանդություն, սիյոնոք, ճանաչողական արժեք

ՄՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Քիչ չեն այն դեպքերը, երբ ժամանակն ու տարածությունը վճռական ազդեցություն են ունենում մարդկային հարաբերությունների վրա: Այդպիսի իրողություններից է հայ երկու գրողների՝ Վահան Թեքեյանի և Լևոն Չավեն Սյուրմեյյանի կյանքում տեղի ունեցած բարեկամության ու անջատման պատմությունը, երբ ժամանակը ունեցել է բարեբեր նշանակություն՝ առթելով ծանոթություն, մարդկային ջերմ փոխհարաբերություններ և փոխհոգածություն, իսկ տարածությունը բացասաբար է ազդել այդ հարաբերությունների ընթացքի վրա և տեղիք տվել անդարձ բաժանման:

1914 թ. Վ. Թեքեյանը Կ. Պոլսում հրատարակել էր իր «Հրաշալի հարություն» ժողովածուն, երբ նույն թվականի հուլիսի 28-ին սկսված Առաջին համաշխարհային պատերազմը նրան ազգային ու կուսակցական գործունեության նոր ոլորտներ մղեց: Նույն թվականի օգոստոսին նա թողնում է Երուսաղեմի, որն այդ ժամանակ Թուրքիայի տիրապետության տակ էր, Ս. Հակոբ վանքում Կ. Պոլսի Ազգային ժողովի ներկայացուցչի իր պաշտոնը և հեռանում Եգիպտոս: Ալեքսանդրիայում 1915 թ. նա հիմնում է «Արեւ» թերթը, ակտիվորեն մասնակցում հայ գաղթականների ու որբերի օգնության և հետագա կյանքի կազմակերպման աշխատանքներին, մասնակցում Կիպրոսում Հայկական լեգեոնի ձևավորմանը: 1918 թ. զինադադարը, ինչպես հայության մի մասին, Թեքեյանին ևս մեծ հույսեր է ներշնչում: 1919 թ. նա մեկնում է Հայաստան: Նույն թվականին Փարիզում տպում է «Կես գիշերեն մինչև արշալույս» բանաստեղծությունների ժողովածուն՝ գրքի որոշ բանաստեղծություններում տարփողելով այդ «արշալույսը»:

1920 թ. նոյեմբերին Թեքեյանը նորից Կ. Պոլսում էր, ուր ստանձնում է «Ժողովրդի ձայնը» թերթի խմբագրապետությունը, քաջալերում նոր-նոր գրական կյանք մտնող Վազգեն Շուշանյանին, Որբունուն, Նիկողոս Սարաֆյանին, Պետրոս Չարոյանին և այլոց: 1921-1922 թթ. ուստարում նա ստանձնում է Ազգային Կեդրոնական վարժարանի ուսուցչի, ապա տեսչի պաշտոնը:

նը, ուր և հանդիպում է վարժարանի աշակերտներից մեկին՝ Ջավեն Սյուրմեյանին:

Նրանց միջև անմիջապես ծնունդ է առնում փոխադարձ համակրանքը: Թեքեյանին գրավում են պատանի Սյուրմեյանի գրական հետաքրքրությունները, նրա լրջությունն ու մտավոր առկայծումները, նրա իսկ խոսքերով՝ պատանու «զգացումն ու կորովը, նրբանկատությունն ու ազնվությունը» և, ամենակարևորը, նրա՝ բանաստեղծ լինելու հայտնությունը: Ի դեմս Սյուրմեյանի՝ Թեքեյանը կարծես գտել էր իր որոնած «զուսակ»-ին, ում «տաքուկ շունչը» օգնելու էր իրեն «կեանքէն դեռ համ մը առնելու եւ բան մը յուսալու»¹: Նա հավատում է, թէ Սյուրմեյանը պիտի «մեծնա մաքրութեամբ... եւ ավելցած շնորհներով»՝ հանուն նրա բարիքի և իր սփոփանքի:

Սյուրմեյանը կորովից՝ Սյուրմեյանը գերվում է վարժարանի տեսչի լրջությամբ (ուր մասին նա հետագայում պիտի գրեր. «Թէ՛ տեսքով եւ թէ՛ զգացումով՝ Թեքեյան իրական ազնուականն էր միտքի...»²), նրա բանաստեղծական տաղանդով, մարդկային հոգատարությամբ: Թեքեյանը անցել էր կյանքի դժվարին բավիղներով, տեսել ու զգացել ինչպես կուսակցական ու հասարակական, այնպես էլ մարդկային բարոյ ու հակասական բազում ելևէջումներ՝ գաղափարական տևական կռիվներ, ազգային փլուզումներ, յուրայինների ուրացումներ, օրվա հացի խնդրի լուծման դժվարություններ, երկրից երկիր թափառումներ, ընտանեկան հարկի բացակայություն: Ճակատագիրը նրան բանաստեղծ էր կարգել, բայց չէր տվել կյանքի երջանկություն: Չէր տվել նաև կին ու երեխա ունենալու բարեբախտություն: 1914 թ. գրած «Ջավակս» բանաստեղծության մեջ նա իր դժգոհությունն է հայտնում Աստծուց. «Ջուկի մը շնորհն անգամ, ո՛վ Տէր զլացար // Ինձի ընդ միշտ...»:

Այս ամենը հանգեցրել էր նրան, որ Թեքեյանը, երբ հանդիպեց Սյուրմեյանին, արդեն քառասունն անց ամուրի էր և վաղուց ցանկանում էր երեխա ունենալ, որին իր բանաստեղծություններում անվանում էր «տղաս» կամ «զավակս»: Սյուրմեյանի անձի մեջ Թեքեյանը տեսնում ու զգում է հենց իր փնտրած այդ զավակին, ով կարիք ուներ նեցուկի ու օգնող ձեռքի, ով կարող էր մեծանալ ու իր միայնակ կյանքի հենարանը լինել, և ում ինքը կարող էր իր կյանքը տալ ու նրանից կյանք ստանալ՝ գտնելով «անոր մեջ ինքզինք» ու «կրկնուած անոր մեջ»:

Տրապիզոնում ծնված Սյուրմեյանի հայրն ու մայրը գոհ էին գնացել եղեռնին, և նա ճաշակել էր որբության բոլոր դառնություններն ու մանկության զրկանքները:

Իր կյանքի բերումով Թեքեյանը լավ գիտեր ցավաշատ մանկության պատճառած մորմոքները և մինչև Սյուրմեյանին հանդիպելը՝ 1919 թ., ար-

¹ Վահան Թեքեյանի նամակները Լեւոն-Ջուլեն Միւրմէլեանին, Նիւ Յորք, 1950, էջ 25:

² Նույն տեղում, էջ 11:

դեն գրել էր այդ առնչությամբ իր լավագույն բանաստեղծություններից մեկում.

«Ով երագուն մանկություն՝ որ մանկությունըս եղար,
Կը փափաքիմ, ոչ այլևս ըզքեզ ապրիլ վերստին»¹:

Ու երբ հանդիպեցին 16-ամյա Սյուրմեյանն ու 43-ամյա Թեքեյանը, բացի առաջինի գրական հետաքրքրությունից ու երկրորդի գրական փորձառությունից, միմյանց հասկանալու ու հարազատանալու գործում քիչ դեր չխաղաց երկուսի՝ այդ տխուր մանկությունը «ոչ այլևս» վերստին ապրելու բաղձանքը, որը Սյուրմեյանի առաջին բանաստեղծություններում արտահայտվում է որպես վիճակ ու մտածում, իսկ Թեքեյանի պոեզիայում՝ որպես ընդհանրացնող ասելիք ու բողոք:

Ճակատագրով, ինչպես և ներաշխարհով ու մտածողությամբ իրար հարազատ այս երկու հոգիների առաջին հանդիպումը տեղի է ունեցել հեռակա, երբ 1920 թ. նոյեմբերին արտասահմանից վերադարձած Թեքեյանը ձեռնարկել էր Ռամկավար ազատական կուսակցության միացումը, ընտրվել դրա նախագահ և խմբագրում էր կուսակցության օրգան «Ժողովրդի ձայնը» օրաթերթը: Սյուրմեյանը, կոտորածների պատճառով որբանալով, թափառել էր ռուսական մի շարք քաղաքներում, 1918 թ. վերադարձել Կ. Պոլիս, կարճ ժամանակով ուսանել Արմաշի գյուղատնտեսական վարժարանում*, որբ աշակերտների հետ մեկնել Հայաստան ու Կարսի անկումից և Հայաստան թուրքերի ներխուժումից հետո կրկին վերադարձել Կ. Պոլիս, ապրել տեղի Էսայան վարժարանում տեղավորված որբանոցում և մի քանի ամիս սովորել Կեդրոնականում՝ ուսուցիչներ ունենալով Հ. Օշականին, Կ. Զարյանին, Գ. Գավաֆյանին և այլոց: Այս օրերին Սյուրմեյանը Թեքեյանի հրատարակած թերթում տպագրում է իր երկու բանաստեղծությունները**, որոնց հեղինակի իսկությունը խմբագիրը տեղեկանում է միայն հետո ու իմանում, որ իր սանն է:

Վահան Թեքեյանը հանձին Սյուրմեյանի տեսնում է ապագա մեր շնորհալի բանաստեղծներից մեկին և անգամ նմանություն իր ու պատանի Սյուրմեյանի բանաստեղծական զգայնությունների միջև: Սյուրմեյանը Թեքեյանի «երագած» ու այնքան տենչված տղան էր՝ իրեն հայտնված մի փոքր մեծացած: Սյուս կողմից նա հավատացած էր, որ Սյուրմեյանը իր «կարօտ ազգին» ավելին պիտի տա, քան «մեկ քանի լաւագոյններ տուած են»: Եվ հենց այս համոզմամբ Թեքեյանի հարաբերությունները աստիճանաբար խորա-

¹ Թեքեյան Վ., Ամբողջական երկեր, Գահիրե, 1949, էջ 56:

* Սյուրմեյանի այս նախասիրությունը գալիս էր նրա մորեղբորից՝ Հարությունից, ով երկրագործություն էր ուսանել Եվրոպայում, սակայն թոքախտի պատճառով կիսատ էր թողել ուսումը և վերադարձել իր գերդաստան ու կնքել իր մահկանացուն: Նա ունեցել է նաև գրական հակումներ:

** Մինչ այդ Սյուրմեյանը Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթում տպագրել էր Հայաստանում իր անցկացրած ամիսների տպավորությունները:

նում են՝ տեղիք տալով ջերմ ու սրտառուչ մի բարեկամության, որն աննախադեպ երևույթ է մեր գրական-մշակութային կյանքում և ակունքվում էր երկու կարևոր ելակետերից. Թեքեյանը Սյուրմեյանի համար ամուր հենարան էր, խորհրդատու և հայրական ամբողջ հոգատարությամբ լի անձ, ով, ի լրումն այդ ամենի, նաև մեծ բանաստեղծ էր, ուսուցիչ, ազգային գործիչ, իսկ Սյուրմեյանը Թեքեյանի համար այն անձն էր, ում մեջ նա տեսնում էր մարմնացումը իր ոչ միայն հոգևոր, այլև տենչած ֆիզիկական զավակի և որի նկատմամբ տածում էր «... հայր չեղած մարդու պահուած աղապատանք» ու «բոլորովին չանցած պատանությունն մր անուշ երազներ»¹:

Մակայն, որքան զարմանալի թվա, մամուլում արդեն տպված գործերի հեղինակ, Թեքեյանի ու Հակոբ Օշականի խրախուսանքներին արժանացած Սյուրմեյանը, ինչպես ինքն է վկայում, մտադիր չէր իր ուսումը շարունակել Կեդրոնականում և բոլորովին հավակնություն չունեի բանաստեղծ դառնալու. «Ես կուզեի մեկնիլ Ամերիկա, երկրագործական գիտության տիրանալու՝ Հայաստանի համար: ... Ես բանաստեղծ չեի»²: Չենք կարող չասել, որ իրականում Սյուրմեյանը իրոք օժտված էր բանաստեղծական շնորհով, բանաստեղծ էր իր էությամբ ու տաղանդով, բայց այդպիսին չէր իր նախասիրություններով ու նպատակներով:

Դաշնակից մեծ պետությունները քիչ-քիչ Թուրքիային էին զիջում Առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով իրենց գրաված հողերը: Խուճապը հասնում է մինչև Կ. Պոլիս: Թեքեյանը Սյուրմեյանին հորդորում է չհեռանալ և շարունակել ուսումը: «Անտուն և անոթի որբ» Սյուրմեյանը ընկերների հավաքած դրամներով և Կ. Պոլսում գործող Հայ գյուղատնտեսական միության աջակցությամբ Ամերիկա մեկնող մի նավի նկուղի տոմսակ է գնում ու 1922 թ. օգոստոսին հեռանում Կ. Պոլսից:

Ավելի ուշ՝ 1922 թ. հոկտեմբերին, Սյուրմեյանին գրած նամակում Թեքեյանը նշում է, որ նա ինչ լավ արեց, որ իրեն չլսեց, քանի որ ամեն բան դեպի «գեշն» է գնում, և փախչողների ու ցրվողների թիվը աստիճանաբար աճում է:

Անկեղծությամբ ու հոգատարությամբ լեցուն և հուզականությամբ թոթովուն բարեկամության մի նոր շրջան են թևակոխում Թեքեյան-Սյուրմեյան հարաբերությունները՝ այս անգամ արդեն նամակագրության միջոցով:

Ամեն բան փոխադարձ էր: Թեքեյանը իր նամակներում ամենայն գործով Սյուրմեյանին անվանում է «սիրելի տղաս», իր աղապատանքը հայտնում, որ պիտի տաքացնի Սյուրմեյանի «մտղ սիրտը», հավաստիացնում, որ ինքը «իր ցուրտին մեջ» պետք ունի Սյուրմեյանի գործվին: Իսկ Սյուրմեյանը գրում է, որ Ամերիկայում ինքը ոչ մի մտերիմ չունի և իրեն համարում է կրկնակի որբացած, որ Թեքեյանի նամակներն իրեն շատ են օգնում ճիշտ

¹ Վահան Թեքեյանի նամակները Լեւոն-Չաւէն Սիրմէլեանին, էջ 21-22:

² Վահան Թեքեյան, Լեւոն-Չաւէն Սիրմէլեան // «Սովետական գրականություն», 1980, թիվ 6, էջ 96:

կողմնորոշվելու կյանքի հորձանուտում: Այս ընթացքում գրված երկուստեք նամակներն աչքի են զարնում ջերմությամբ ու անմնացորդ նվիրումով:

Բանաստեղծությունը՝ բանաստեղծություն, գրական շնորհը՝ շնորհ, ամրակայող հայր-զավակ հարաբերությունները՝ երկուստեք բաղձալի, բայց Սյուրմելյանի համար գոյություն ուներ մեկ այլ նպատակ, որի մասին նա երազել էր վաղուց և անելու էր ամեն ինչ՝ այն իրականացնելու համար՝ ստանալ երկրագործական հիմնավոր կրթություն ու մեկնել Հայաստան՝ այնտեղ կիրառելու իր գիտելիքները՝ ծառ տնկել հայրենի հողում ու նպաստել գյուղատնտեսության զարգացմանը: Իր նպատակին հասնելու համար նա ընդունվում է Կանգասի երկրագործական քոլեջ (հետագայում սովորել է նաև Նեբրասկալի և Կալիֆոռնիայի համալսարաններում):

Սյուրմելյանին ուղղված՝ 1922 թ. հոկտեմբերի 12 թվակիր նամակում Թեքեյանը գրում է, որ նրան ճանաչելուց հետո ինքը ունեցել է «մաքուր ու տաքացնող զգացում», մի բան, որ «վաղուց չի ունեցել», իսկ այդքան տեղին երբեք: Այդ նամակում Թեքեյանը Ամերիկյան բնութագրում է «զուտ ուժի եւ սզեղ ուժի երկաթե ու քարե զանգուած», Սյուրմելյանին խորհուրդ տալիս դիմակայել իրեն «չտեսնող» ու «տեսնել չուզող» ամբոխին, հաղթահարել բոլոր խոչընդոտները, բայց և՛ «պիտի աշխատիս, տղա ս, որ սիրտդ մնայ ինչ որ է, յիշել. յուզուիլ եւ կապուիլ գիտնալ անձերու եւ իրերու, որ ունենայ միշտ իր թաքուն պարտեզը կամ իր պզտիկ մատուռը»¹:

Իսկ Վառնայից գրված նույն թվականի դեկտեմբերի 21 թվակիր նամակում ափսոսանք է հայտնում, որ ինքը ավելի վաղ չի ճանաչել Սյուրմելյանին, այն ժամանակ, երբ «կրնայի օգտակար ըլլալ քեզի, քու մանկութիւնդ պաշտպանել, քու որբութիւնդ մեղմել, քու զրկանքդ ամոքել»²: Նամակում Թեքեյանը գրառել է նաև իր բանաստեղծություններից մեկը («Կուզեմ մեկը»), որում ոչ միայն արտահայտվում է Թեքեյան անհատի հոգեկերտվածքը, այլև սիրո նկատմամբ սիրագուրկ մարդու բաղձանքը՝ ունենալ մեկին.

*Որ փոյթ չէ, թե ինձ համար չզգայ բնաւ ոչ մէկ սէր
Բայց որ իմ սէրս գիտնայ:*

.....
*Չըսիրելով հանդերձ զիս՝ երախտագէտ ինձ ըլլայ
Ձինք սիրելոյս համար շատ.
Միրէ՛ սիրուիլը ինձմէ եւ դընէ վիզն ուսիս վրայ
Վստահութեամբ մը ազատ...:*

Դիտելի է, որ վերոհիշյալ բանաստեղծությունը որքան որ ուղղված է անհայտ «մեկին», նույնքան էլ հասցեագրված է հենց Ձ. Սյուրմելյանին, ումից

¹ **Թեքեան Վ.**, Նամականի, Լոս Անջելես, 1983, էջ 215: (Այս գրքից կատարված մեջբերումները այսուհետև կնշվեն միայն *Նամականի* և էջ հղումով – *Ա. Ա.*):

² Նույն տեղում, էջ 218:

Թեքեյանը ոչինչ չի ուզել, ընդամենը՝ փոխադարձ նվիրում ու, ինչպես այդ բանաստեղծությունում է ասվում, գիտենալը իր սիրո:

Սյուրմեյանն իհարկե ջերմությամբ ու պատրաստակամությամբ է ընդունել Թեքեյանի հոգու այս գեղումներն ու շոպյումները, որի դրսևորումներից մեկը նրա՝ Թեքեյանին ուղղված նամակների դիմումի ձևն է ու ստորագրությունը՝ «սիրելի հայր», «իմ սիրելի հայր», «զավակդ՝ Զավեն», «Մեծցող զավակդ՝ Զավեն», «Միրելի հայրս, մեծ եղբայրս, առաքյալս, վարպետս» և այլն¹: Պատասխանելով Սյուրմեյանի՝ իրեն ուղղված նամակներից մեկին՝ Թեքեյանը գրում է. «Ինչ բնականօրեն զուսկդ կըսես ինձի՝ որ *անոր կարօտով տուայտեր եւ օրօրուել եմ միշտ*, գիտնալով, որ գրկաբաց կընդունուիս՝ այն պատճառաւ, որ *չափազանց կը նմանիս սրտով, մտքով* ու կը խորհիմ հիմա – *կերպարանքով՝ ա՛լ անո՛ր, իմ երագիս զուսկին...*»² (ընդգծումները մերն են - Ս. Ս.):

Վերոհիշյալ բանաստեղծությունը անշուշտ Թեքեյանի կյանքի «լքումների ու յուսահատությունների» արտահայտություններից է, որ պարունակում է «Լոյս եւ ըստուեր քովէ քով» և փաստում այն միայնությունը, որի մեջ հայտնվել էին թե՛ բանաստեղծ և թե՛ մարդ Թեքեյանը:

Նույն նամակում իր այդ միայնությունը Թեքեյանը նմանեցնում է «քարանձաւի եւ աւերակի», որից ազատվելու համար ինքը պետք ունի սրտակից հոգու, որի արտահայտություններից մեկը նա իր նամակներում ու բանաստեղծություններում խտացնում է «զավակ» հասկացությամբ:

1922 թ. նոյեմբերին՝ քեմալականների մուտքից մի քանի օր առաջ, Կ. Պոլսից հեռացել էր նաև Թեքեյանը. սկզբից՝ Բուլղարիա, իսկ 1923 թ. մարտի սկզբներին՝ Հունաստան՝ Ազգային պատվիրակության հանձնաժողովի հանձնարարությամբ հունական կղզիներում ծավալելով գաղթականներին օգնություն ցուցաբերելու կարևոր գործունեություն, ուր խնդրահարույց էին մանավանդ գաղթականների սննդի, աշխատանքի, բնակության, իսկ որբերի՝ դաստիարակության, հանգստի, ազգային կրթության և արդեն չափահաս որբուհիների հետագա ճակատագրերի լուծման հարցերը:

Հունաստանում կար շուրջ 50 գաղթատեղ: Այստեղ Թեքեյանը նախաձեռնում և ստեղծում է «Հունաստանի հայ որբախնամ միությունը», դիմում-

¹ Տե՛ս **Վահան Թեքեյան**, Լևոն-Զավեն Սյուրմեյան: Տե՛ս ԳԱԹ, Վ. Թեքեյանի ֆոնդ, թիվ 175:

^{*} Այդ «նմանությունը» ոմանց կարծել է տվել, թե Թեքեյանն ու Սյուրմեյանը արյունակից հայր ու որդի են: Այս առումով Թեքեյանը իր նամակներից մեկում վկայում է, թե ինչպես Միքայել Կյուրճյանի ձեռքն ընկած Սյուրմեյանի նկարը նրան մտածել է տվել, թե վերջինս Թեքեյանի ապօրինի զավակն է՝ արդյունքը բանաստեղծի ստիպողական թափառումների: Այդ կասկածին տեղիք է տվել «Հորս՝ Վահան Թեքեյանին» մակագրությունն ու Սյուրմեյանի դիմագծերի նմանությունը Թեքեյանին:

² Նամականի, էջ 217:

ներ կատարում հունական իշխանություններին, հորդորում հայ ընտանիքներին իրենց հարկի տակ առնել անտուն հայ որբերին:

Ամերիկյան Near East Relief (Մերձավոր Արևելքի նպաստամատույց) կոչվող կառույցը, որ ստանձնել էր որբախնամ գործը և նպաստավորվում էր նաև ամերիկացի հայերի տված գումարներով, անտարբեր ու անհոգ էր մանավանդ հայ որբերի ազգային նկարագրի ձևավորման հարցերում:

Սյուրմեյանին ուղղված նամակներում որբերի կյանքին վերաբերող անդրադարձները, Թեքեյանի մտահոգությունների արտահայտումը լինելուց զատ, նաև Սյուրմեյանի վիճակում հայտնված «որբ տողոց» ընդհանրացված ներաշխարհի արտահայտումն են, դրանով իսկ՝ հենց Սյուրմեյանի համար հայ իրականության նկատմամբ ազգային նկարագիր կերտող աշխարհայացք ձևավորող: Իր նամակներից մեկում Թեքեյանը գրում է ամերիկյան որբախնամ մարմինների կեղծ ու պատիիր գործունեության մասին և պատմում Կեդրոնական վարժարանի նախկին աշակերտ մի որբի նամակի մասին, ուր վկայվում է, թե ինչպես իրենց օրերով քաղցած թողնելով՝ ամերիկացի պաշտոնյաները իրեն և իր մյուս ընկերներին «սինեմայի բռնեցին՝ հանձնարարելով պառկիլ, էլլեյ, ժպտիլ ու լողալ – մի՛ շտ անօթի»¹:

1923 թ. հուլիսի սկզբներին Թեքեյանը մեկնում է Աթենքից: Նույն ամսի կեսերին նա արդեն Ալեքսանդրիայում էր: Շուտով մեկնում է Փարիզ, կուսակցական գործերով լինում Լիբանանում, Ժնևում, Ալժիրում... Այս ժամանակաշրջանում Թեքեյանը իր մի շարք նամակներում Սյուրմեյանին է ուղարկում նաև իր նոր գրած մի քանի բանաստեղծությունները, որոնց հիմնական նպատակը ոչ այնքան Սյուրմեյանի կարծիքը իմանալն էր, որքան Սյուրմեյանի մեջ գրական հետաքրքրությունների բորբոքումն ու խթանումը:

Թեքեյանի փայփայած ծրագրերից մեկը Հունաստանում և Սիրիայում ապաստանած որբերին Հայաստան տեղափոխելն էր, այլապես «անոնք կ'սպառին եւ կը փճանան»: Նա արդեն երկու անգամ առիթ էր ունեցել լինել Հայաստանում: Առաջին անգամ 1911 թ. որպես եգիպտահայոց կողմից ընտրված պատվիրակ նա մասնակցեց Էջմիածնում կայացած Գևորգ Ե կաթողիկոսի ընտրություններին և Հայաստանից ստացած տպավորությունների տակ գրեց «Արարատյան դաշտին մեջ» բանաստեղծությունների շարքը, որը ձոնեց Լևոն Բաշայանին: Երկրորդ այցելությունը կապված է 1919 թ. թուրքահայերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ բանակցություններ վարելու Ազգային պատվիրակության ներկայացուցչի գործընթացի հետ: Ասենք, որ Թեքեյանը միշտ էլ փայփայել է Հայաստանում ապրելու ու ստեղծագործելու երազանքը և աշխատել նաև Սյուրմեյանի մեջ բորբոք պահել այդ ցանկությունը: Այսպես՝ 1924 թ. դեկ-

¹ Նույն տեղում, էջ 534:

տեմբերին Սյուրմեյանին նա գրել է. «Կոստան Զարեանը հոս է (Փարիզում – *Ս. Ս.*), Հայաստանէն եկած (Զարյանը Հայաստանից հեռացել է 1924 թ. ամռան վերջերին և սկզբնական շրջանում ներկայանում էր որպէս Լուսժողովուրդի և ՀՕԿ-ի ներկայացուցիչ – *Ս. Ս.*) ... ըսի որ կը մտածէիք, դուն ու Վահրամը (խոսքը բանաստեղծ Վահրամ Կաքավյանի մասին է, ով Կ. Պոլսի Կեդրոնականի սաներից էր, և ում Թեքեյանը շատ է օգնել կրթություն ստանալու գործում – *Ս. Ս.*) Հայաստանի մէջ ազարակ մը ունենալ տպարանի մը եւ ինձի հետ. հավաստեց, որ ամէն դիրքերին կուտայ կառավարութիւնը: Քանի մը օր առաջ տեսայ նաեւ Երկրագործության] Կոմիսար Արամայիս Երզնկեանը: Հայաստան կը հրաւիրեն, *բայց առանց քեզի չեմ երթար*»¹ (ընդգծումը մերն է – *Ս. Ս.*): Հայաստանի վերաբերյալ Թեքեյանի ծրագրերը շատ ավելի մեծ են եղել, որը համահունչ էր այդ ժամանակ գործող «Հայոց խորհրդակցական խառը համաժողովի» ծրագրերին՝ Սիրիայից, Հունաստանից, Բուլղարիայից և հայաշատ այլ բնակավայրերից Հայաստան տեղափոխել 50 հազար գաղթականների:

Ելնելով բոլշևիկյան դիրքերից՝ Ալեքսանդր Մյասնիկյանն ու Արտաշես Կարինյանը այս ընթացքում Ռամկավար ազատական կուսակցության դեմ մի քանի ելույթներ ունեցան, որն ինքնին ուղղվեց նաև Թեքեյանի դեմ, քանի որ նա, ինչպես նշվեց, այդ կուսակցության օրգան «Ժողովրդի ձայնը» թերթի խմբագիրն էր: Ուստի Հայաստան մեկնել հնարավոր չեղավ: Մնում էր սպասել ավելի բարենպաստ ժամանակների: 1925 թ. Սյուրմեյանը արդեն հասցրել էր ավարտել երկրագործական քոլեջը, ինչ-որ գրություններ տպագրել անգլերենով՝ ավելի ու ավելի թափանցելով ամերիկյան կյանքի մեջ: Ճիշտ է, Թեքեյանին նա ավելի հազվադեպ էր գրում, բայց դեռ շարունակում էր իր նվիրումները հայտնել նրան: Վերոհիշյալ նամակից անց՝ 8-ը նոյեմբերի 1925 թվակիր նամակում, Թեքեյանը գրում է Սյուրմեյանին, որ իր անմնացորդ պատրաստակամության փոխարեն ինքը որևէ երախտագիտության չի սպասում, որ ինքը բավարարված է «մտերիմ տղու» այն զգացմամբ, որ տածում է Սյուրմեյանը իր նկատմամբ. «Ես շատ եմ մինակ, միշտ մինակ ապրած: Այլ յոյս չունեի՝ թե կրնայ փոխուիլ ատիկա: Ներսէն փտորելով՝ դուրսէն կը կարծրանայի հետզհետէ: ... *Այդ յոյսը տուիր դուն ինձի եւ քեզմով եւ մօտեցայ նորէն կեանքին*»² (ընդգծումը մերն է – *Ս. Ս.*):

Այդ նույն նամակում Թեքեյանը արտահայտում է նաև իր հրճվանքը՝ կապված Հայաստան գնալու նոր հնարավորության հետ. «Քեզ Հայաստան կը հրաւիրեն և արդէն: Ի՞նչպէս: Ուրեմն կերթանք կոր, ե՞րբ: Ու չմոռնա՛ւ ըսելու՝ թէ հետո՞ մէկը պիտի առնես Եգիպտոսէն, որ ոչ ոքի թշնամի է այնտեղ եւ ամէն պարագայի մէջ շատ բարեկամ է հայ երկրին ու ժողովրդին»³:

¹ Նույն տեղում, էջ 276:

² Նույն տեղում, էջ 284:

³ Նույն տեղում, էջ 286:

«Ամեն պարագայի մէջ» ասելով՝ Թեքեյանը նկատի ունէր երկրի խորհրդայնացումը, որի կողմնակիցը չէր ինքը և այդ հարցում ունէր իր պատկերացումները, բայց երկիրը երկիր էր մնում, ու ժողովուրդը՝ ժողովուրդ, որոնց և «շատ բարեկամ» էր ինքը միշտ: Բայց այս անգամ էլ վիճակված չէր իրականացնել այդ մեկնումը: Պատճառներից մեկը Սյուրմեյանի թոքերի սուր հիվանդությունն էր:

1926 թ. հունվարին գրված նամակում Թեքեյանը տեղեկացնում է Սյուրմեյանին, որ ինքը պատրաստվում է որպէս նոր կազմված խնամակալության ներկայացուցիչ Կիպրոս մեկնել՝ այնտեղ նոր բացվող Մելքոնյան որբանոցում աշխատելու: Այդ նամակում Թեքեյանը հույս է հայտնում, որ ինքը հնարավորություն պիտի ստանա գրականությամբ զբաղվելու ու հանդես հրատարակելու. «Եթէ ասիկա ըլլայ եւ եթէ շուտով, ինչպէս կը յուսամ, առողջանաս, տարիէ մը հոս կուգաս՝ Հայաստան երթալէ առաջ, կը մնաս տարի մը – երկու, հոն հաւաքուելիք հինգ հարիւր տղոց եւ ինծի հետ. անոնց քու հոգիդ կը ներշնչես եւ յետոյ, միասին, կերթանք Հայաստան՝ հոն մեծ եւ պզտիկ տղոց մէջ աշխատելու, անոնցմէ առնելու եւ անոնց տալու՝ համար մեր լաւագոյնը: Իր հողին վրայ. ամենուրեք իրեններու միայն հանդիպելով՝ մարդ, կը հաւատամ, թէ իր կրցածին լաւագոյնն ու մեծագոյնը կուտայ...»¹:

Թէ՛ Սյուրմեյանը և թէ՛ Թեքեյանը, որ 1935 թ. ևս Հայաստանի իր բարեկամ շրջանակներից (Զապել Եսայան և այլք) հրավերներ ստացավ, միասին Հայաստան գալու հնարավորություն չունեցան ու հայրենի անդաստաններում չտնկեցին ո՛չ ծառ և ո՛չ «իրենց կրցածը» կարողացան իրականացնել:

Թեքեյանի նամակներում, բանաստեղծություններում և անգամ բանաստեղծությունների վերնագրերում օգտագործված «տղա» հասկացությունը, որ նրա ընկալմամբ մարմնավորումն է ներկայի, հույսը վաղվա, ինչպէս նաև «Երկրի խորհուրդն, երկնի երազն անսահման»², յուրովի բնութագիր է նաև իրեն՝ Թեքեյանին: Սյուրմեյանին ուղղված մի նամակում նա գրում է. «Այնչափ աւելի կարծենք իբրեւ մարդ, որչափ իբրեւ տղայ զգալու մեր յատկութիւնը կորսնցուցած չենք ամբողջապէս: Բանաստեղծը, ամենէն շատ, տղայ ու տղայ կը մնայ մինչեւ իր ճերմակ մազերուն տակ, տղայ՝ նոյնիսկ քերթուածներ գրելու իր յամառ միամտութեանը մէջ. Տղայ՝ ինքզինք պատկերներով եւ ձայնաւորներով խաբելու իր սովորութեամբ»³ (ընդգծումը մերն է – Ա. Ա.): Հասկանալի է, որ Թեքեյանը այս տողերում նկատի ունի ստեղծագործողի մէջ երիտասարդ ոգու ու անարատության հարատւության անհրաժեշտությունը, բայց չմոռանանք, որ այս նամակը ուղղված էր հենց Սյուրմեյանին, ում նա համարում էր իր «տղան»՝ «գավակը»:

Թեքեյանի բանաստեղծական աշխարհի տիրապետող թեմաներից մեկը

¹ Նույն տեղում, էջ 292:

² Տե՛ս Թեքեյանի «Ես կը սիրեմ» բանաստեղծությունը:

³ Նամականի, էջ 260:

չունեցածի բաղձանքն ու որոնումն է, որի դրսևորումներից են նաև նրա՝ հոգևոր ու մարմնավոր *զավակին* նվիրված մի քանի քերթվածներն ու արտահայտությունները, որոնցից մի մասում որպես բանաստեղծության «բնորդ» ըստ երևույթին նկատի է ունեցել նաև հանդիպելիք պատանին, որը իրականություն դարձավ հանձին Սյուրմելյանի:

Թեքեյանը «Զավակս» վերնագրով երեք բանաստեղծություն ունի գրած:

Առաջին բանաստեղծությունն արձանագրումն է ընտանիք, կին ու երեխաներ չունեցող Թեքեյանի մեջ բորբոքվող տենչի, որը հար անբաժան պիտի մնար նրանից.

*Ուզեցի անգուսպ քեզ իբրև կորյուն՝
Իմ փափագներէս, ցասումէս ծնած,
Որպեսզի գոչեմ սրտես «Հաղթություն՝ն»,
Երբ որ թարթափին աչքերս քնեած:*

Բանաստեղծությունը գրվել է 1901 թ. և զետեղվել Թեքեյանի՝ 1914 թ. Կ. Պոլսում լույս տեսած «Հրաշալի Յարութիւն» գրքում: Թեքեյանը իր «զավակին» պատկերացնում է որպես ուժի և շնորհների կրող անձ, ով սեզ է ու սիրված ամենքից, բայց մանավանդ մեկը, ում միջոցով պիտի ճանաչեն նաև իրեն.

*Եվ մեծնա հասակդ ամբոխին վերև,
Եվ երգեն անունդ միաբերան,
Ու ճանչնան զիս վրադ, որդի՛ս աննման...:*

Սա հենց այն հոգեվիճակն է, որ արդեն պատրաստի հող էր ստեղծում հոգեզավակ մեկին իր կողքին ունենալու համար: Երիտասարդ Սյուրմելյանին ոգևորել ու օգնել են ոչ միայն Թեքեյանի գրած նամակները, այլև նրա հին ու նոր բանաստեղծությունները: Վահան Թեքեյանի մասին գրած իր անգլերեն հոդվածում* Սյուրմելյանը վկայում է, որ իր հետ Ամերիկա է տարել նրա «Հրաշալի հարություն» և «Կես գիշերեն մինչև արշալոյս» գրքերը, որոնք մակագրված էին հեղինակի կողմից: Թեքեյանին ուղղված 2-ը նոյեմբերի 1922 թվակիր նամակում, խոսելով Ամերիկայում իր ծանր կացության մասին, Սյուրմելյանը գրում է. «Հուշատետրիս մեջ արձանագրած եմ տված գրքերեդ կտորներ ու աղոթագրքի մը նման հետս կպտտեցնեմ զայն: Երբ տրտում եմ կամ ձախողության մը համար քիչ մը հուսահատիմ, անմիջապես կբանամ հուշատետրս ու կկարդամ, անկուշտ կկարդամ, մինչև որ հոգիս բացվի: *Մանավանդ երկու «Զավակս»-ները ինձի այնքա՛ն ուժ կուտան, այնքա՛ն, այնքա՛ն իսանդավառություն...»*¹ (ընդգծումը մերն է – Ա. Ա.):

Երկրորդ բանաստեղծությունը, որ Թեքեյանը զետեղեց 1919 թ. Փարիզում

* Տե՛ս Վահան Թեքեյան, Լևոն-Զավեն Սյուրմելյան, էջ 96-107:

¹ Լույս տեղում, էջ 101:

լույս տեսած իր «Կէս գիշերէն մինչեւ արշալոյս» գրքում, գրել է 1914 թ., երբ ինքը 36 տարեկան էր և իրեն, ինչպէս այդ բանաստեղծությունում է բնութագրում, արդէն համարում էր «զիս իմ մէջս» չարաչար սպանված: Բանաստեղծությունը արտահայտում է Թեքեյանին այնքան հատկանշական գալիքի մեջ շարունակվելու բաղձանք՝ իրեն նեցուկ զավակի միջոցով.

*Երբ ես ծրոհիմ՝ ան բարձրանա՛ր քովս ի վեր,
Իմ սպառած կեանքիս հիւթովն առլըցուկ.
Ե՛ս հովանի անոր եւ ա՛ն ինձ նեցուկ,
Ու նո՛ր արեւ՝ աչքին մէջ աչքըս գոցուէր...*

Բանաստեղծության գրության տարին՝ 1914 թ., արդէն վկայում է, որ այս քերթվածը կապ չունի Սյուրմեյանի հետ: Բայց այն փաստում է հոգեկան հենց այն պարապը, զգայական այն բաղձանքը, որը 1920-ական թվականների սկզբին լցվել է Սյուրմեյանի անձով՝ բառ առ բառ արձանագրելով հոր ու զավակի այն ցանկալի փոխհարաբերությունը, որ ծնվելու էր նրանց միջև՝ «Ես հովանի անոր եւ ա՛ն ինձ նեցուկ»:

Երրորդ բանաստեղծությունը Թեքեյանը գրել է 1926 թ., ստույգ ամիսը հայտնի չէ: Սակայն դատելով բանաստեղծության չորրորդ տնից՝ այն ուղղակիորեն առնչվում է Թեքեյանի կյանքից Սյուրմեյանի «իսպառ» մեկնած լինելուն, հասկանալի է՝ բանաստեղծական ուրույն ընդհանրացմամբ: Այդ «մեկնած լինելը» կարելի է նաև ընկալել որպէս բանաստեղծի մեջ զավակի նկատմամբ տաժած զգացումի ու տենչի մարում-սպառում: Ստույգ է, որ այստեղ գործել են թե՛ կոնկրետ անձնավորումը և թե՛ բանաստեղծական ընդհանրացումը:

Եթե բանաստեղծության առաջին տունը արձանագրում է զարմանք զավակի նկատմամբ ունեցած այդքան մեծ սիրո, իսկ երկրորդ տունը՝ հաստատում, որ այդ սերը ավելի խորն էր, քան ուրիշների և անգամ ծնողների նկատմամբ սերը, ապա երրորդ տունը արդէն իրական հոգի ու մարմին առած զավակի հաստատումն է, որը, սակայն, այլևս անցյալ է.

*Ա՛հ, իմ տղա՛ս որ կապրեր ատեն մ՛այնքան ինձ մոտիկ,
Հիմա մեկնե՛ր է իսպառ, ու ամպերուն մեջ երբեմն,
Անցնող ճերմակ ամպերուն, ես զինքը դեռ կգտնեմ...*

Մի կողմ թողնելով այս բանաստեղծության մեջ առկա ուղղակի ակնարկումները՝ ասենք, որ եթե առաջին երկու բանաստեղծությունները այս կամ այն չափով բացահայտում էին Թեքեյանի հոգեկան տվայտանքները և արտահայտում բանաստեղծի մեջ ծնված հայրական ու ծնողական ցանկությունները, ապա երրորդ բանաստեղծությունը զանցումն է այդ ամենի, զանցումը դեռևս մանկությունից եկող այն սիրո, որ, բանաստեղծի խոսքերով ասած, «ինձմէ դէպի ինձ կընէր շրջան մը անծայր»:

(Շարունակությունը հաջորդ համարում)

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՌԱԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(համաժամանակյա հայեցակետ)

Բանալի բառեր – եռաբարբառ, եռաբարբառակերպ, հին հայերեն, ավանդական ըմբռնում, լ (w) և յ (y) ձայնորդներ

Ի տարբերություն հին հայերենի երկբարբառների, որոնք հատկապես համաժամանակյա հայեցակերպով հանգամանալից քննության նյութ են դարձել հայերենագիտության մեջ, եռաբարբառների քննությունը կրել է հպանցիկ բնույթ: Ինչպես երկբարբառների, այնպես էլ եռաբարբառների դեպքում կարևոր հարցերից մեկը նրանց կազմի ճշտումն է, որը, հասկանալի է, ի թիվս այլ հանգամանքների (օր.՝ դիրքային արտաբերության), պայմանավորված է բուն երկբարբառի/եռաբարբառի՝ որպես հնչարանական իրողության ըմբռնումով:

Հին (իմա՝ գրաբարյան) հայերենի եռաբարբառների կազմի վերաբերյալ ևս, ինչպես և երկբարբառային կազմությունների դեպքում, քերականների պատկերացումները տարբեր են, չնայած այն իրողությանը, որ բոլոր հայերենագետներն էլ ընդունում են եռաբարբառների նույն բանաձևը «V₁+V₂+S» (հմմտ. *էայ, էաւ*) կամ «S+V₁+V₂» (հմմտ. *ւոյ*)¹: Այսպես, Մ. Աբեղյանը գրաբարում ճանաչել է նշված երեք՝ *էայ* (պաշտան*էայ*), *էաւ* (արդ*էաւք*), *ւոյ* (այգ*ւոյն*), եռաբարբառների գոյությունը²: Հ. Աճառյանը, դրանցից բացի, տարբերակել է նաև *էայ, ուոյ, էիւ, ուաւ* եռաբարբառներ³: *էայ* և *էիւ* եռաբարբառներ ընդունել է նաև Ս. Ղազարյանը⁴: Ա. Աբրահամյանը և Վ. Առաքելյանը, վերոհիշյալ երեք եռաբարբառներից բացի, *իայ* եռաբարբառ են տարբերակել *սիայն* բառի կազմում⁵: Գ. Ջահուկյանը եռաբարբառների վերջավոր

¹ V-ն լատ. vokalis «ձայնավոր», իսկ S-ը sonoris «ձայնորդ» բառերի սկզբնատառերն են: Երկբարբառների դեպքում բանաձևն ունի «V+S»/«S+V» կամ «V₁+V₂» տեսքը:

² Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. 2, Երևան, 1974, էջ 715:

³ Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, հ. VI, 1971, էջ 151, 224: «Հայոց գրերը» աշխատության մեջ *էաւ*-ի փոխարեն նշվում է *իաւ*, որ, անշուշտ, վրիպակ պիտի համարել, որովհետև նրա լատինական տառադարձումն է éaw, ինչպես որ *էայ*-ինը՝ éay (տե՛ս **Աճառյան Հ.**, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 593):

⁴ Տե՛ս **Ղազարյան Ս. Ղ.**, Հայոց գրական լեզվի պատմություն, Երևան, 1961, էջ 176:

⁵ Տե՛ս **Աբրահամյան Ա. Ա.**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 5, **Առաքելյան Վ.**, Գրաբարի քերականություն, Երևան, 2010, էջ 16: Վ. Առաքելյանը գրաբարում տարբերակել է նաև *իա* երկբարբառ (հմմտ. *սիակ, սիականի* և այլն), որը, սակայն, մեր կարծիքով, արդարացված չէ, որովհետև այն բառերում, որոնցում առկա է այդ հնչյունական հաջորդականությունը, *ի*-ն և

ցանկ չի ներկայացնում: Նրա դիտարկումները ուշագրավ են հատկապես այն առումով, որ, եռաբարբառների գրային նշանակումներից բացի, տալիս է նաև դրանց հնչյունական արժեքները (հմմտ. *եսյ* [iai], *եսու* [iau], *ւոյ* [uoi]: Ըստ այդմ՝ ձայնորդական բաղադրիչներին ևս ձայնավորական հնչյուն է վերագրվում¹: Է. Թումանյանը հիմնականում հետևում է Է. Աղայանին՝ տարբերակելով *եսյ*, *եսու*, *ուայ*, *ուաու*, *ուոյ* եռաբարբառները²: Հին հայերենի եռաբարբառների տարբերակման հարցում հստակ չէ Հ. Մուրադյանի դիրքորոշումը. բացառելով *ու-* սկզբնաբաղադրիչով եռաբարբառային կազմությունները հին հայերենում՝ նա մերթ ճանաչում է միայն երկու եռաբարբառի գոյությունը՝ *եսու*, *եսյ* (ընդ որում՝ երկրորդը՝ [իայ] հնչյունական արժեքով)³, մերթ էլ չորս՝ ավելացնելով նաև *իայ-ը* և *ւոյ-ը*⁴:

Եթե հին հայերենի երկբարբառների զգալի մասը սերում է հ.-ե. նախալեզվի երկբարբառներից⁵, ապա եռաբարբառային կազմությունների համար հ.-ե. նախաձևեր հնարավոր չէ ցույց տալ, որքան որ նախալեզվի համար այդպիսիք պարզապես չեն վերականգնվում:

Գրաբարյան հայերենում քերականների կողմից տարբերակվող եռաբարբառները, մեր կարծիքով, *եռաբարբառակերպեր* (triphthongoid) են, որովհետև դրանք ունեն *յ* (*y*) կամ *ւ* (*w*) ձայնորդական բաղադրիչը, իսկ ձայնորդները հին հայերենում վանկարար գործառույթ չեն իրականացրել: Իհարկե, տարածամանակյա քննության տեսանկյունից «եռաբարբառ՝ *ո*, թե՛ եռաբարբառակերպ» հարցադրումը սկզբունքային նշանակություն չունի, այն կարևոր է համաժամանակյա հայեցակերպում:

Հին հայերենի *ու-* սկզբնաբաղադրիչով եռաբարբառային կազմությունները՝ *ուայ* (*լուայք* «լսեցիք»), *ուաու* (հով*ուաւք* «հովիվներով»), *ուոյ* (պատան*ուոյն*), եռաբարբառներ կարող են համարվել պայմանականորեն՝ երկու կիսաձայնի՝ *ւ* և *յ*, առկայությունը մեկ վանկի կազմում մեկ ձայնավորի համարժեք դիտելու դեպքում, որովհետև մեր համոզմամբ *ու-*ն հին հայերենում չի եղել պարզ ձայնավոր, այլ եղել է *երկբարբառակերպ* (diphthongoid), ինչպես և *աւ*, *եւ*, *իւ*, *այ*, *ոյ* կազմությունները: *Ու-*ն պարզ ձայնավոր համարելու միտումը հայերենագիտության մեջ, ըստ ամենայնի, գալիս է Հ. Հյուբշմանից և Ա. Մեյլեից: Ըստ Հ. Հյուբշմանի՝ «ու տառանշանը, բաղարկված $n=0+1=u\dots$ ոչ այլ ինչ է, բայց եթե հունական *ou*-ի ընդօրինակումը և նախկինում (ինչպես այն) = *u*

*ա-*ն պատկանում են տարբեր վանկերի (տե՛ս **Պետրոսյան Վ. Զ.**, Հայկական և հնդեվրոպական երկբարբառային համակարգերը // «Վեմ», 2015, թիվ 3, էջ 116-117):

¹ Տե՛ս **Джаукян Г. Б.**, Сравнительная грамматика армянского языка, Ереван, 1982, էջ 28:

² Տե՛ս **Աղայան Է. Բ.**, Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 140, **Туманян Э. Г.**, Древнеармянский язык, М., 1971, էջ 33:

³ Տե՛ս **Մուրադյան Հ. Դ.**, Հայոց լեզվի պատմական քերականություն, Երևան, հ. I, Հնչյունաբանություն, 1982, էջ 142:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 196-203:

⁵ Տե՛ս **Պետրոսյան Վ. Զ.**, նշվ. աշխ., էջ 115-127:

ձայնավորին»¹: Իսկ հունարենի *ou*-ն, նրա կարծիքով, *V* դարում արդեն վերածվել էր պարզ ձայնավորի, և որովհետև Մաշտոցն առհասարակ հետևել է հունական այբուբենի սկզբունքին, այդ հարցում ևս ընդօրինակել է *ou* [u]-ի երկգիր գրության ձևը: Ա. Մելեն նույնպես հին հայերենի *ml*-ն դասել է ձայնավորների շարքում²: Հին հունարենի *ou*-ի՝ *V* դարում [u] արտաբերվելու մասին տեսակետը վարկածային բնույթ ունի, որի հարցում, մեր կարծիքով, կարող էր դեր խաղալ երկու հանգամանք. 1) ավանդական արտասանությունը, 2) *ou* երկբարբառի գոյությունը, որն ունեցել է [ou] (կարճ *u*-ով) արտաբերությունը (հմմտ. *ωτότος*): Բնական է՝ երկար *ou* [ou] և կարճ *ou* [ou] երկբարբառային տարբերակների պարզեցման դեպքում պարզ ձայնավորի կվերածվել կարճը: Բայց ամբողջ հարցն այն է, թե երբ է տեղի ունեցել այդ պարզեցումը. արդյոք *V* դարում, և ի՞նչ հիմքեր կան այդպիսի պնդման համար: Այդ երկբարբառների պարզեցման ժամանակի մասին տեսակետը վարկածային է: Մեր համոզմամբ, այն ավելի ուշ է տեղի ունեցել, և ինչպես *Z*. Հյուբշմանին է առարկել *Z*. Աճառյանը բառավերջի *l*-ի հնչյունական արժեքի (հմմտ. *հաշի՛ւ*, թե՛ *հաշիւ՛*) հարցի առնչությամբ, եթե *V* դարում հայերենի *ml*-ն պարզ ձայնավոր լիներ, ոչինչ չէր խանգարի Մաշտոցին, որպեսզի այն ևս մեկ գրով նշանակեր: Մաշտոցը հետևել է հունարենի այբուբենի սկզբունքին, բայց ոչ տառին: Բացի այդ, միանշանակ չէ նաև «հուն. *ou*=*hj*. ու» համապատասխանությունը³:

Հին հայերենի *ml*-ին երկբարբառային բնույթ է վերագրել հայերենագիտության մեկ այլ երախտավոր ևս՝ *Z*. Պետերսընը⁴:

Հետևաբար, *mlaj*-ը համարժեք է քառաբաղադրիչ «*oway*»-ի և ոչ թե եռաբաղադրիչ «*uay*»-ի: Ըստ այդմ, *mlw*, *mlk*, *mlh*, *mln*, *mlt* կազմությունները պիտի համարել եռաբարբառակերպեր⁵. *mlt*-ն ևս ունի բաղադրիչների «*VSV*» կազմը, որովհետև հին հայերենի *t*-ն ևս եղել է պարզ, բայց՝ երկար ձայնավոր (*e*) և ոչ թե երկբարբառակերպ կամ երկբարբառ (*ej/ey*), ինչպես որ համարել են հայերենագետներից շատերը, չնայած որ այն հիմնականում ունեցել է երկբարբառային ծագում⁶:

¹ Հյուբշման *Z*, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 70: Ի տարբերություն *Z*. Հյուբշմանի, որի կարծիքով բաղաձայնին հաջորդող և ձայնավորին նախորդող դիրքում *ml*-ն ունեցել է [վ/վ] արտաբերություն (հմմտ. *թուլոյ* արտաբերվել է *thovoy*, այլ ոչ թե *thovoy*) (տե՛ս նույն տեղում), Ն. Մառը այդ դիրքում *ml*-ին վերագրում է [ow], այսինքն՝ երկբարբառակերպային արժեք, որը, մեր կարծիքով, ավելի ճիշտ է. հմմտ. «... **թուականություն** պիտի կարդալ **θowakanθūn**» (տե՛ս **Март Н.**, Грамматика древнеармянского языка, СПб., 1903, с. 13-14):

² Տե՛ս **Meillet A.**, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1936, p. 40-41:

³ Տե՛ս **Պետրոսյան Վ. Զ.** Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, Երևան, 2015, էջ 226-227:

⁴ Տե՛ս **Պետերսըն *Z.*** Նպաստ մը հայ լեզուի պատմության, Վիեննա, 1907, էջ 120:

⁵ Նշվածներից առաջին չորսը *E*. Աղայանը համարել է երկբարբառ, իսկ վերջինը՝ երկբարբառակերպ (տե՛ս **Աղայան *E. Բ.***, նշվ. աշխ.):

⁶ Տե՛ս **Петросян В.**, Диахроническая типология фонем **т** в древнеармянском и **ѣ** в старославянском языках // «ՀՀ», 2016, թիվ 1, էջ 128-141:

Այդ առումով կարևոր է նա երկու հանգամանք. 1) նշված կազմությունները արտաբերվում են մե^օկ վանկում, թե^օ տարբեր վանկերում, 2) բոլոր դիրքերում են հանդես գալիս իբրև երկբարբառ, թե^օ միայն բաղաձայնին նախորդող դիրքում:

Ըստ այդմ ուշագրավ են հետևյալ իրողությունները.

- 1) *Էայ, էի* եռաբարբառային կազմություններ, որպիսիք ճանաչել էին Չ. Աճառյանը և Ս. Ղազարյանը, պարունակող բառային օրինակների մեր որոնումները արդյունք չտվեցին, ուստի դրանց հարցը մնում է առկաի, մանավանդ որ հետագա քերականները նա այդպիսի կազմությունների առհասարակ չեն անդրադառնում¹:
- 2) Մեր կողմից ընդունված սկզբունքի համաձայն՝ *ւոյ* հաջորդականությունը, չնայած եռաբաղադրիչ կազմին՝ «S+V+S», ավելի շուտ համարժեք է երկբարբառի (հմմտ. այգ-ւոյ/ն (=այգու/ն), հոգ-ւոյ/դ, գին-ւոյ/ն)²:
- 3) *Եայ, էաւ* հաջորդականությունները, ըստ ամենայնի, արտաբերվում են մեկ վանկում (հմմտ. հ(ը)-րեայ/ք, քաւ-դէայ/ք [=աստղագուշակ/ներ], պաշտաւ-նէայ/ք, էաւթն, կդ-զէաւ/ք, և այլն):
- 4) Ինչպես նշվեց, տարակարծության տեղիք է տվել նաև *ու*- սկզբնաբաղադրիչով՝ *ուայ, ուաւ, ուոյ* հաջորդականությունների հնչույթաբանական կարգավիճակի հարցը: Նշված հաջորդականություններից առաջին երկուսը առավելապես հանդիպում են բայական ձևերում (հմմտ. լուայ (=լեցի), լուաւ, լուայք, լուայց (=լսեմ, կլսեմ), տուայ (=տվեցի), տուաւ, տուայք, տուայց (=տամ, կտամ)), ուաւ-ը՝ նաև մի քանի գոյականների գործիական հոլովաձևում (հմմտ. արուաւ/ք, լեզուաւ/ք, հովուաւ/ք), իսկ երրորդը՝ գոյականների սեռ.-տր. հոլովներում (հմմտ. թուոյ, պատուոյ/ն, նուոյ (=հարսի)): Ու- սկզբնաբաղադրիչով հաջորդականությունների հնչույթային արժեքի հարցը ուսումնասիրողները պայմանավորել են երկու հանգամանքով. 1) այդ բաղադրիչներն արտաբերվել են մե^օկ վանկում, թե^օ բաշխվել են երկու վանկի վրա, 2) երկրորդ ապառնիի կազմության ժամանակ *g>u* հնչյունական անցում տեղի^օ է ունեցել, թե^օ ոչ: Ըստ այդմ՝ ա) էթե բայաձևը կատարյալի եզ. թ. ձևերում, մասնավորապես՝ 3-րդ դեմքում, ստացել է *ե*- նախահավելվածը (աուգմենտը), ուրեմն միավանկ է (հմմտ. եկէզ (=այրեց), եմուտ, էբեր, եկաց, էտես, եդ, էտ և այլն), էթե չի ստացել, ուրեմն բազմավանկ է (հմմտ. հայեցաւ (=նայեց), թռեաւ, ան-

¹ Կան *էա, էի* հաջորդականություններ (հմմտ. յառնէաք, յառնէիք, յառնէին, ունէաք, ունէիք, ունէին (անց. անկ.) նն), որոնց երկբարբառային կազմություն լինելու հարցը, սակայն, միանշանակ չէ մեկ վանկում արտաբերվելու առումով: Ըստ վանկատման պարզ սկզբունքի, կլինի, օր., յառ-նէ-աք, ու- նէ-ին, այսինքն՝ *էա, էի* հաջորդականությունների բաղադրիչները կբաշխվեն տարբեր վանկերի վրա: Հետևաբար երկբարբառներ չեն:

² Տե՛ս **Պետրոսյան Վ. Զ.** Ընդհանուր և հայ լեզվաբանության հարցեր, էջ 231:

կաւ, մարտեաւ, մնաց և այլն)¹. ք) եթէ երկրորդ ապառնիի կազմութեան ժամանակ *g>u* հնչյունափոխություն տեղի չի ունենում, ուրեմն բայաձևը միավանկ է (տացես, տագէ, տացուք ևն), իսկ եթէ տեղի է ունենում, ուրեմն միավանկ չէ (եկեսցես (<եկեցցես), եկեսցէ, եկեսցուք ևն)²:

Առաջին դրույթի առնչությամբ շ. Մուրադյանը նկատում է, որ նշված սկզբունքը ավելի հետևողական կիրառում է ունեցել *դնել* և *տալ* բայերի կատարյալի հարացույցում, որովհետև *ե-* նախահավելվածը ստացել են նաև երկու թվերի մյուս դեմքերի ձևերը, բացառությամբ *տալ* բայի հգն. թ. 1-ին դեմքի (հմմտ. *տուաք* (=սվեցինք)): Ավելացնենք, որ նախահավելական *ե-* ն առկա է նաև *զալ* բայի կատարյալի (հմմտ. *էկի, էկիր, էկ, էկաք, էկիք, էկին*), 2-րդ ապառնիի (*էկից, էկեսցես* ևն), բուն հրամայականի (*է՛կ, էկա՛ք*), հորդորական հրամայականի (*էկեսջի՛ր, էկեսջի՛ք*) ձևերում, ինչպես նաև՝ անցյալ (*էկեալ*) և ենթակայական (*էկող*) դերբայներում: Նշված բայերի կատարյալի ձևերի առնչությամբ պիտի նկատի ունենալ հետևյալը.

Ա) Գրաբարի քերականություններում կատարյալ (perfect) համարված ձևերը համապատասխանում են հ.-ե. աորիստին: Աորիստը հնդեվրոպական հին լեզուներում անցյալի ժամանակային իմաստ արտահայտող հիմնական ձևն էր և բնորոշ է եղել հին հնդկերենին, հին հունարենին, փոյուգերենին, հին պավոներենին և հին հայերենին: Աորիստի ձևերը, բացառությամբ հին պլավոներենի, ստացել են նախահավելական մասնիկ. հին հնդկ.՝ *a-*, մյուսներում՝ *e-* (հմմտ. սնսկ. *á-dhāt* «նա դրեց», հուն. *ἔ-θηκα*, հյ. ed, փոյուգ. *ε-δασε*): Ի տարբերություն հին հնդկ. և հին հունարենի, որոնցում նախահավելված ստանում են աորիստի եզ. և հգն. թվերի բոլոր ձևերը³, հին հայերենում այդ սկզբունքը խախտված է. բացառությամբ *զալ, տալ* և *դնել* բայերի, մյուսները նախահավելված ստանում են միայն կատարյալի (հին աորիստի) եզ. թ. 3-րդ դեմքում: Սա նշանակում է, որ հին հայերենի բայական համակարգը, առնվազն՝ աորիստի համակարգը, մյուս երկու լեզուների համեմատությամբ, ներկայացնում է զգալիորեն քայքայված վիճակ:

Բ) Ինչպես երևում է *տալ* բայի կատարյալի հարացույցից, նախահավելված չունի 6 ձևից միայն մեկը՝ *տուաք*: Արդյո՞ք ավելի հավանական չէ կարծել, որ այդ ձևը նախահավելվածը կորցրել է ուշգրաբարյան արտասա-

¹ Շ. Աճառյանը և Շ. Մուրադյանը հիշյալ հաջորդականությունները համարել են երկվանկ, իսկ Է. Աղայանը՝ միավանկ: Չնայած այդ հանգամանքին, Շ. Աճառյանը *m-* սկզբնաբաղադրիչով հաջորդականությունները համարել է երկբարբառներ (համապատասխանաբար՝ եռաբարբառներ), ինչպես և Է. Աղայանը, իսկ Շ. Մուրադյանը՝ ձայնավորների պարզ կապակցություններ, իսկ երկրորդները՝ «ու-ի և է, այ, աւ, ոյ երկբարբառների գուգորություններ» (տե՛ս Աճառյան Շ., նշվ. աշխ., էջ 593, Մուրադյան Շ. Գ., նշվ. աշխ., էջ 138, 142, Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 131):

² Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 130:

³ Հմմտ. Семереньи О., Введение в сравнительное языкознание, М., 1980, с. 297-301, Савченко А. Н., Сравнительная грамматика индоевропейских языков, М., 1974, с. 273-279:

նական տեղաշարժերի ազդեցությամբ, երբ նշված դիրքում որոշակիորեն կարող էր փոխված լինել *ու*-ի հնչյունական արժեքը, այն է՝ վերածված լինել [վ]-ի կամ դրան մոտ արտաբերության, որի արդյունքում *տուաք* [towak']-ն էլ հնչեր իբրև [տըվաք/təvak'], այսինքն՝ դառնար երկվանկ՝ *տ(ը)-վաք*: Մեր դատողությունների հիմքում հին հայերենի *ու*-ի՝ որպես երկբարբառակերպի, իսկ նախագրաբարյան վաղ շրջանում՝ վաղնջահայերենում, երկբարբառի պատկերացումն է: Իհարկե, *ու*-ի երկբարբառային (երկբարբառակերպային) հնչյունական արժեքի մասին կարելի է խոսել միայն ենթադրաբար՝ նրան վերագրելով, օրինակ, [ouv] հնչյունական արժեքը, բայց ամբողջ հարցն էլ այն է, որ իրականում մեզ հայտնի չէ, թե հնչյունական ինչ արժեք է ունեցել կիսաձայն *ու*-ն: Կարծում ենք՝ **ետուաք* *[etowak']-ի ոչ դյուրին արտաբերությունը, համաձայն լեզուների բնորոշ արտասանական էներգիայի խնայողության կամ «նվազագույն ճիգի» սկզբունքի¹, ժամանակի ընթացքում ձգտել է պարզեցման, ինչն էլ ուշգրաբարյան փուլում հանգեցրել է *ե*- նախահավելվածի կորուստի: Հետևաբար, *ուա*-ն, ըստ ամենայնի, ունեցել է միասնական արտաբերություն, այն է՝ երկբարբառային՝ [oua]՝ նախագրաբարյան փուլում և երկբարբառակերպային [owa]՝ գրաբարյան փուլում, իսկ բառաձևն էլ ամբողջությամբ եղել է միավանկ: Այն երկվանկ է դարձել *ե*- նախահավելականով՝ **ե-տուաք*: Այսինքն՝ *ուա*-ն բոլոր դեպքերում արտաբերվել է մեկ վանկում՝ որպես միասնական բաղադրիչ:

Գ) Եթե այդպես է, ուրեմն *ուայ*, *ուալ*, *ուոյ* գուգորդություններն էլ հնչույթների պարզ հաջորդականություններ չեն, այլ հնչույթաբանական մեկ միավորի արժեքով բաղադրիչներ, ըստ իս՝ նույնպես եռաբարբառներ (չնայած քառաբաղադրիչ կազմին):

5) Ի տարբերություն Հ. Աճառյանի, որը երկբարբառային/եռաբարբառային կազմությունների բնույթը չի պայմանավորում դիրքային արտաբերությամբ, այն է՝ բոլոր դիրքերում *ու* և *յ* կիսաձայնների վերագրում է ձայնավորական արժեք², Է. Աղայանը, Հ. Հյուբշմանի հետևողությամբ, ձայնավորների միջև և բառավերջի դիրքերում *ու*-ին և *յ*-ին վերագրում է բաղաձայնական արժեք, ուստի, օր., *տուայ*, *տուալ*, *թուոյ* բառաձևերի կազմում նա տարբերակում է ոչ թե *ուայ*, *ուալ*, *ուոյ* եռաբարբառներ, այլ «ուա/ուո երկբարբառ+յ/լ բաղաձայն» կապակցություններ³: Մենք կարծում ենք, որ բոլոր դիրքերում էլ *ու* և *յ* կիսաձայնները պահպանել են իրենց ձայնորդական արժեքը: Ըստ էության, լինելով երկբնույթ հնչույթներ, որոնց մեջ համադրված են ն՝ ձայնավորական, և՝ բաղաձայնական հատկանիշներ, բաղաձայնին

¹ Տե՛ս **Мартине А.**, Принцип экономии в фонетических изменениях, М., 1960, с. 126-198:

² Հմնտ. «Մենք կարծում ենք, որ **ալ**, **եա**, **իլ** ամեն դեպքում էլ հնչվել են au, eu, iu (ա՛ու, է՛ու, ի՛ու) և ոչ բնավ av, ev, iv, նույնիսկ բառերի վերջում. ապա թե ոչ ի՛նչ պատճառ ունեթ Մեարոպը չգրելու **հաշիվ**, այլ **հաշիլ**» (տե՛ս **Աճառյան Հ.**, նշվ. աշխ., էջ 588):

³ Տե՛ս, օրինակ, **Հյուբշման Հ.**, նշվ. աշխ., էջ 69-71, **Աղայան Է. Բ.**, նշվ. աշխ., էջ 112-128:

նախորդող դիրքում նրանց արտաբերությունը ավելի հակված է եղել դեպի ձայնավորական հնչումը (հմմտ. տուալք [towaɫkʰ], թուոյն [t'owoɔn]), իսկ բառավերջի և հատկապես ձայնավորների միջև դիրքում դեպի բաղաձայնական հնչումը (հմմտ. նուոյ [nowoɔy] (սեռ.-տր.), արքայ [arqay], բայց (յ) արքայէ [(y)arqayē], կաթսայ [kat'say], բայց (ի) կաթսայէ [i kat'sayē], շղթայ [šyt'ay], բայց (ի) շղթայէ [i šyt'ayē], աշագ [avag], հաշատամ [havatam] ևն): Կիսաձայնների բաղաձայնական հնչումը ավելի զգալի պիտի լիներ ձայնավորների միջև դիրքում, ներառյալ հնչաշղթայում բառավերջի դիրքը, երբ լ-ին կամ յ-ին հաջորդել է ձայնավորով սկսվող բառ, այսինքն՝ կրկին երկու ձայնավորների միջև դիրքը (հմմտ. «... իսկ Բէլ հեզ և հանդարտ ամբոխի մեծաւ ի ձախմէ ջուրցն ի վերայ ռստոյ միոյ, իբրև ի դիտանոցի»¹, «Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն ի միմյանս՝ ահագին դղրդմունս ի վերայ երկրի առնէին շահատակելով, և ահս պակուցանողս տարագուք յարձակմանց սկայագունքն զմիմեամբք արկանէին»²): Ի և յ կիսաձայնների դիրքային տարբերակները միմյանց նկատմամբ գտնվում են այլահնչակային հարաբերության մեջ, այսինքն՝ դրանք միննույն՝ W կամ Y հնչույթի տարբերակներն են՝ [w/ɰ], [y/j] հարաբերակցությամբ:

6) Կարծում ենք՝ «միայն» բառում իայ եռաբարբառի տարբերակումը արդարացված չէ. «միայն»-ը երկվանկ բառ է՝ մի-այն վանկատումով, հետևաբար իայ հաջորդականության բաղադրիչները բաշխվում են տարբեր վանկերի վրա: Այդպիսի վանկատման օգտին է վկայում նաև այն հանգամանքը, որ «միայն»-ը բարդ բառ է՝ «մի(<մեկ>+այն» կազմությամբ, բառային շեշտը, ըստ ամենայնի, ընկնում է առաջին՝ «մի» բաղադրիչի վրա, որն իր հերթին լրացուցիչ արգելք է «միայն»-ի կազմում իայ հաջորդականության բաղադրիչների սերտ միասնություն կազմելու համար:

7) Եռաբարբառային կազմությունների առնչությամբ ուշագրավ հարցադրումներից մեկը «եայ»-ի [իայ] արտաբերության մասին տեսակետն է, որն արտահայտել է Է. Աղայանը³: Ընդհակառակը, Հ. Աճառյանը և Հ. Մուրադյանը պաշտպանել են եայ-ի [եայ/eay/eai] (համապատասխանաբար՝ եա-ի [եա/ea]) արտաբերության տեսակետը⁴: Եա-ին [ea] հնչում վերագրելու Հ. Աճառյանի մոտեցումը է. Աղայանը բացատրում է նրա կողմից առանձին իա [ia] երկբարբառ տարբերակելու հանգամանքով⁵: Մեր կարծիքով, սակայն, Հ. Աճառյանի դիրքորոշման հիմքում պարզապես երևույթները մաշտոցյան «մեկ հնչյուն (իմա՝ մեկ հնչույթ՝ Վ. Պ.)-մեկ տառ» սկզբունքին հնարավորինս հարազատ մնալով բացատրելու մղումն է, որն ակնհայտ է նաև այլ

¹ Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1991, էջ 35:

² Նույն տեղում, էջ 36:

³ Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 91-92, 123-126:

⁴ Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 589-590, Մուրադյան Հ. Դ., նշվ. աշխ., էջ 143-146:

⁵ Տե՛ս Աղայան Է. Բ., նշվ. աշխ., էջ 124:

դեպքերում: Իհարկե, մաշտոցյան սկզբունքի հետևողական կիրառման դեպքում ևս հին հայերենի հնչյութաբանական և հնչյունաբանական իրողությունների մեկնությունը չի հեշտանում, մեր համոզմամբ, սակայն, խնդիրներն ավելի հաճախ առաջ են գալիս, և իրականությունից մենք ավելի ենք հեռանում այն դեպքերում, երբ, առերևույթ ընդունելով մաշտոցյան այբուբենի ստեղծման վերոհիշյալ սկզբունքը, իրականում փորձում ենք միանգամայն այլ դիրքերից բացատրել այս կամ այն երևույթը: Պիտի նկատել, որ Հ. Աճառյանը ևս լիովին հետևողական չի գտնվել մաշտոցյան սկզբունքի կիրառման հարցում (օր., նա ևս *ու*-ն համարել է պարզ ձայնավոր՝ այդ հարցում, թերևս, հետևելով իր ուսուցիչների՝ Հ. Հյուբշմանի և Ա. Մեյեի օրինակին, որը, մեր կարիծքով, հակասում է մաշտոցյան այբուբենի հորինման տրամաբանությանը), բայց և այնպես նա ամենից քիչն է հեռացել հիշյալ սկզբունքից: Ե//ե//ի հերթագայությունները հնարավոր են դարձնում թե՛ մեկ և թե՛ մյուս մեկնաբանությունը, այսինքն՝ *ես*-ին ինչպես [ea], այնպես էլ [ia], *եայ*-ին ինչպես [eay], այնպես էլ [iay] հնչում վերագրելը (հմմտ. Հերակլէս-Հերակլէայ, Մովսէս-Մովսէսի-Մովսիսի, լէսոն-լերինք, ատէան-ատենի, դէ-դիլի, տէր-տէսոն, գէս-գիսաւոր, դէզ-դիզի, ծէս-ծիսի, աղուէս-աղուէսու-աղուիսու, որդի-որդէակ (<որդի+ակ), կղզի-կղզէակ և այլն), բայց միայն առաջինն է բխում մաշտոցյան այբուբենի ստեղծման տրամաբանությունից¹:

8) Եռբարբառակերպեր պիտի համարել նաև *ուա* (տուաք «տվեցինք»), *ուի* (լուիցես «լսելու եմ, լսեմ, կլսեմ, պիտի լսեմ»), *ուո* (տուոդ «տվող»), ուե (թուեմ, «հաշվել, կարծել», թուեսցի) և *ուէ* (նուէր, կուուէր) հնչյունական հաջորդականությունները, որովհետև, վերը շարադրված սկզբունքների համաձայն, հին հայերենում առավել հավանական է նրանց միասնական (=միավանկ), քան թե տրոհված (=երկվանկ) արտաբերությունը: Ըստ ամենայնի՝ երկվանկ *լուիցես*, *լուիցէ* տիպի բառերի վանկաբաժանը անցել է *ի* և *ց* հնչյունական բաղադրիչների միջով (հմմտ. *լուիցես*, *լուիցէ*): Ինչ վերաբերում է *ուէս* հաջորդականությանը (հմմտ. *տուէսլ*, *լուէսլ* «տալ» և «լսել» բայերի անցյալ դերբայները), ապա, գտնվելով երկու ձայնավորների միջև, *ւ* ձայնորդը ի հայտ է բերում առավելապես բաղաձայնական որակներ՝ սահմանաբաժան դառնալով *ո*-ի և *է*-ի միջև. այն *ո*-ի հետ ձևավորում է երկբարբառակերպ, իսկ *է*-ն երկբարբառային միասնություն է կազմում հաջորդող *ա* ձայնավորի հետ (հմմտ. *տուէսլ*, *լուէսլ*): Հետևաբար նշված տիպի բառաձևերում պիտի ճանաչել «ու երկբարբառակերպ+էս երկբարբառ» հաջորդականություն: Ասվածը միաժամանակ նշանակում է, որ ինչպես երկբարբառային, այնպես էլ եռբարբառային կազմությունների տարբերակման համար հնչյունական բաղադրիչի դիրքը հնչաշղթայում, այնուամենայնիվ, կարևոր է:

¹ Տե՛ս նաև Պետրոսյան Վ. Զ., Հայկական և հնդեվրոպական երկբարբառային համակարգերը, էջ 120-121:

Այսպիսով, գրաբարյան փուլում հին հայերենը մաքուր եռաբարբառներ չի ունեցել, այլ ունեցել է՝ 1) *եայ, էաւ, ուա, ուի, ուն, ուե* և *ուէ* եռաբարբառակերպերը՝ « V_1+V_2+S » և « V_1+S+V_2 » կաղապարներով և 2) *ուայ, ուաւ, ուոյ* եռաբարբառները (պայմանական ըմբռնումով)՝ « $V+S+V+S$ » տիպի կաղապարով, որոնցում երկու ձայնորդի առկայությունը մեկ վանկի կազմում կարող է համարժեք դիտվել մեկ ձայնավորի:

Вардан Петросян – Трифтонговые образования в древнеармянском языке (синхронный аспект)

Трифтонговые сочетания древнеармянского языка изучаются в арменистике, по существу, до настоящего времени неиспользованными принципами. В частности, 1) сочетания модели « $V_1 + V_2 + S$ » (сравн. *եայ, էաւ*) рассматриваются в качестве трифтонгоидов, а не трифтонгов, при учете того, что звуки *ւ(w)* и *յ(y)* в древнеармянском языке не выполняли присущую гласным функцию; 2) *ու* считается таким же дифтонгическим сочетанием, как и *աւ, իւ, էւ, այ, ոյ*, а не простым гласным, как это принято в арменистике; соответственно, сочетания типа *ուայ, ուաւ* в общепринятом понимании являются трифтонгами, если наличие двух звуков в одном слоге будет считаться эквивалентным одному гласному; 3) трифтонгоидами являются также сочетания *ուա, ուի, ուն, ուե* и *ուէ* со структурой « $V_1 + S + V_2$ ». По убеждению автора, такой подход вытекает из соответствия "один звук – одна буква", присущего алфавиту Маштоца, что отмечали все арменисты, но не всегда были последовательны при его использовании. Использование данных принципов при исследовании дает основание говорить о том, что в древнеармянском языке не было чистых трифтонгов, а были только трифтонгоиды и условные трифтонги. Последние, по существу, также являются трифтонгоидами, которые вместо трехкомпонентного строения первых имеют четырехкомпонентное строение.

Vardan Petrosyan – Old Armenian Triphthongal Combinations (a Synchronic Approach)

Old Armenian triphthongal combinations are discussed by the methods, which essentially have not been applied within the scope of Armenian Studies so far. In particular, 1) the combinations of the model « V_1+V_2+S » (cf. *եայ, էաւ*) are considered to be triphthongoids, rather than triphthongs taking into consideration the fact that the sonorous sounds *ւ(w)* and *յ(y)* did not carry out a function of a vowel in Old Armenian; 2) *ու* is considered a diphthongoid similar to the combinations *աւ, իւ, էւ, այ, ոյ* and not a simple vowel, as it is accepted in Armenian Studies. Accordingly, the combinations of the *ուայ, ուաւ* type are triphthongs only conventionally, as the presence of two sonorous sounds in one syllable is considered an equivalent of one vowel sound; 3) the combinations *ուա, ուի, ուն, ուե* and *ուէ* are also considered to be triphthongoids, in which the structure « V_1+S+V_2 » is present. According to the author, this kind of an approach comes from the peculiarity of Mashtot’s alphabet - “one sound per one letter”, which was emphasized by all Armenologists, but who did not consistently apply it. The use of these principles in the present study gives grounds to say that Old Armenian did not have pure triphthongs, but only triphthongoids and conventional triphthongs. The latter, in essence, are also triphthongoids, which instead of a three-component structure of the former have a four-component structure.

ՇԱՐԱՀԱՅՈՒՍԱԿԱՆ ՆՈՐՄ. ԶՈՒԳԱԶԵՎԵՐ ԵՎ ՇԵՂՈՒՄՆԵՐ

*Բանալի բառեր – շարահյուսական նորմ (կանոն), համաձայնություն, խնդրատու-
թյուն, առողջություն, գուգաձևեր, թույլատրելի տարբերակներ, շեղումներ*

Լեզվական ստորակարգությունը կազմող կառուցվածքային մակարդակների միավորները, ինչպես հայտնի է, խոսքային կիրառության տևական գործընթացում ենթակա են փոփոխությունների ու տեղաշարժերի՝ զանազան գործոնների ազդեցությամբ: Այդ փոփոխությունները կարող են պայմանավորված լինել թե՛ լեզվի զարգացման ներքին ազդակներով, թե՛ օտար ազդեցություններով և թե՛ սովյալ լեզուն կրող հանրության կյանքում տեղի ունեցող տեղաշարժերով: Հանրահայտ է նաև, որ այս գործոնների հանդեպ առավել զգայուն է լեզվի բառապաշարը. հնչյունական համակարգի, ինչպես նաև քերականական կառուցվածքի միավորները, «ապահովագրված» չլինելով վերոնշյալ գործոնների ազդեցությունից, բավականաչափ «դժկամորեն» են ենթարկվում դրանց հարուցած փոփոխություններին: Այդուհանդերձ, լեզվական համակարգի զարգացման տրամաբանությունը թելադրում է այդ զարգացման որոշակի փուլում կանոնով (նորմով) հաստատված ձևերի կողքին նաև նույն այդ կանոնից շեղվող ձևերի ու իրողությունների առկայություն: Եթե նորակազմ ձևը կամ նորահայտ իրողությունը ակնհայտորեն հակադրվում է լեզվական կանոնին, ապա բավական արագ դուրս է մղվում և կարող է գոյատևել խոսակցական ոճում (օրինակ՝ ենթակայի և ստորոգյալի թվային անհամաձայնության դեպքերը այսօրվա հայերենում): Լեզվական ավանդույթը երբեմն բավական տևականորեն «հանդուրժում» է նույնանշանակ ձևերի գոյակցությունը կանոնի սահմաններում, սակայն սովորաբար ժամանակի ընթացքում դրանցից մեկը՝ ավանդական կանոնականը կամ էլ նորակազմ կանոնախախտը, նախընտրության է արժանանում՝ հաճախ նաև նորմավորողի միջնորդությամբ:

Ընդհանրապես լեզվական համակարգի ներքին դինամիկան, նրանում տարբեր ձևերի համագոյակցության իրողությունը մեծապես պայմանավորված են լեզվական նշանի արտահայտության և բովանդակության պլանների ոչ համաչափ (ասիմետրիկ) համապատասխանությամբ: Սա վերաբերում է նաև քերականական, այդ թվում՝ շարահյուսական միավորներին: Այս առումով հետաքրքիր է Ժորժ Վանդրիեսի դիտարկումը. «Ցանկացած քերականության տրամաբանական իդեալն է ունենալ յուրաքանչյուր առանձին գործառույթի համար մեկ արտահայտություն և միայն մեկ գործառույթ՝ յուրա-

քանչյուր արտահայտության համար: Եթե այդ իդեալը իրականանար, լեզուն կունենար նույնպիսի ճշգրիտ սահմաններ, ինչպես հանրահաշիվը, որի ցանկացած բանաձևը, մի անգամ հաստատվելով, անփոփոխ է մնում բոլոր դեպքերում: Մակայն ասույթները հանրահաշվական բանաձևեր չեն»¹: Մրան կարելի է ավելացնել նաև, որ լեզվի բուն էությունը հենց այդ «հանրահաշվական ճշգրտության» բացառումն է. նրա նշանների ներքին հարաբերությունների անհամաչափ բնույթը ոչ միայն լեզվական տարբերակային ձևերի գոյության նախապայմանն է, այլև լեզվի համակարգի զարգացման կարևորագույն լծակներից մեկը:

Լեզվական տարբերակային ձևերի մասին խոսելիս պետք է զանազանել համաժամանակյա և տարաժամանակյա դիտվածքները: Մասնագիտական գրականությունից շատ փաստեր կարելի է բերել, որոնք կվկայեն մասնավորապես քերականական համակարգի այս կամ այն միավորի՝ անցյալում համագոյակցած ձևերից մեկի վերջնական հաղթանակը. որպես օրինակներ կարելի է նշել ենթադրական եղանակի կազմության մեջ կատարված տեղաշարժը, որի արդյունքն է ժամանակակից հայերենի ժխտական կոչվող դերբայի առաջացումը, հրամայական եղանակի ժխտական ձևերի կազմության միօրինակացման արդեն իսկ ավարտված գործընթացը և այլն: Չենք խոսում այլևս վաղ անցյալում մեր լեզվի մեջ ծայր առած այնպիսի տեղաշարժերի մասին, որոնք հանգեցրին հին հայերենի քերականական համակարգի որակական փոփոխության:

Ժամանակակից հայերենի հնչյունական, բառապաշարային, քերականական մակարդակներում կատարվող տեղաշարժերը այսօր նույնպես բավական հաճախ են հայտնվում ուսումնասիրողների տեսադաշտում. արձանագրվում են կանոնից արդեն իսկ առկա շեղումներ, փորձեր են արվում գնահատելու դրանց գործառության հեռանկարը, և ըստ այդմ էլ մշակվում են դրանց կանոնարկմանը միտված հանձնարարականներ²: Ընդամին պետք է նկատի առնել, որ համագոյակից ձևերը տվյալ փուլում կարող են հավասարապես ընդունելի դիտվել կանոնի դիրքերից. դրանք սովորաբար իմաստային կամ կիրառական նրբերանգային տարբերություններով են բնութագրվում:

Շարահյուսական մակարդակում կատարվող փոփոխությունների ու տեղաշարժերի պատճառները նույնպես բազմազան կարող են լինել՝ օտար կաղապարների ազդեցություն կամ պատճենում, կաղապարների փոխներգործություն, համաբանություն, բաղադրություն և այլն: Ինչպես նշվեց, շարահյուսական նույնանշանակ կառույցների ավանդական-կանոնական և

¹ Вандриес Ж., Язык, М., 1937, с. 149-150.

² Տե՛ս, օրինակ, Ավետիսյան Յու., Տեղաշարժեր արդի գրական հայերենում, Երևան, 2011, **Բեդիրյան Պ.**, Հայ լեզուն և մեր խոսքը, Երևան, 1999, **Գալստյան Հ.**, Ճիշտը և սխալը, Երևան, 2007 և այլն:

ավանդախախտ տարբերակների գուգահեռ գործածությունը առավել տևական է լինում մակարդակային այլ միավորների համեմատությամբ: Բիարկե, խոսքը չի վերաբերում ակնհայտ սխալակազմություններին (լեզվի ոչ կատարյալ իմացությամբ պայմանավորված) կամ էլ լեզվական ցածր ճաշակի դրսևորումներին, որոնք ցավալիորեն տարածված են նաև զանգվածային լրատվամիջոցներում, հաճախ էլ հայտնվում են իրավացի քննադատության թիրախում և վերահսկվող խոսքում դյուրությամբ հաղթահարելի են:

Շարահյուսական համագոյակից կառույցները, ինչպես նաև կանոնից շեղվող ձևերը դիտարկելի են կապակցության եղանակներից յուրաքանչյուրի՝ համաձայնության, խնդրատության և առդրության գործառության ոլորտներում:

Ստորև կփորձենք ներկայացնել արդի հայերենի շարահյուսական մի քանի իրողությունների տարբերակային դրսևորումներ, նշել դրանց կիրառության ոլորտներն ու պայմանները՝ ըստ հարկի անդրադառնալով նաև մասնագետների կողմից դրանց տրվող գնահատականներին:

1. Ենթակայի և ստորոգյալի թվային համաձայնության կանոնը առավել հանրահայտն ու դյուրընկալելին է թերևս, չնայած բակառություն կոչվող շեղումը այսօր էլ հաճախադեպ է բանավոր և գրավոր խոսքում (**Ուսանողների կեսը ներկա չեն, նրանց մի մասը գնացին** և այլն): Հանձնարարելի են, անշուշտ, քերականորեն ճշգրիտ կառույցները (**կեսը ներկա չէ, մի մասը գնաց** և այլն): Նույն հանձնարարականին պետք է հետևել նաև բազմակի ենթակաների հետ բայի հոգնակի թվի կիրառության կանոնի պահպանման հարցում, թեև սրանից առկա շեղումները մեր դասական գրականության ընտիր էջերում էլ են հանդիպում (Օրինակ. **Աշնան խաղաղ օրերին նրան հաճելի էր և՛ սիմֆոնիկ տերևների խշռոցը, և՛ վազերի օրորը, և՛ հնձանի դոնակի երգը** (Բակունց), **Մերն ու սիրտն էլ երբ չկա...**(Թումանյան) և այլն): Նման դեպքերում եզակի ստորոգյալի գործածությունը թույլատրելի է, եթե բազմակի ենթակաները մեկ հասկացություն արտահայտող հարադրության արժեք ունեն (**կարգ ու կանոն չկա, հարց ու պատասխան չեղավ** և այլն): Թույլատրելի գուգաձևեր պետք է համարվեն թվական որոշիչով եզակի ենթակաների և դրանց ստորոգյալների եզակի կամ հոգնակի կիրառությունները (**երկու ուսանող եկավ (եկան), հինգ ուսանող բացակա է (են) և այլն**): Թվային անհամաձայնության անհանձնարարելի մյուս դեպքերը գրական լեզու են թափանցում հիմնականում խոսակցականից (օր. ...**երբ լույսերն անջատվեց, բոլորը կորցրին խոսելու կարողությունը** (համացանց), **Ուքերս մրտում է** և այլն): Արտահայտության պլանում այս կարգի շեղումը համընկնում է թվի և առկայացման կարգի մի յուրահատուկ դրսևորման հետ, երբ –**ներ** հոգնակերտը հանդես է գալիս որպես եզակի թվի ցուցիչ (այսպես կոչված «առանձնական եզակի») և կանոնավորապես գուգորդվում է եզակի ստորոգյալի հետ, ինչպես՝ **գլուխներս ցավում է, տուններդ շինվի, աչքներս ջուր կտրեց** և այլն (հոգնակերտ ձևույթն այստեղ արտահայտում է հասկացյալների մեջ

ներակայված հատկացուցիչների հոգնակիություն)¹:

Ինչ վերաբերում է բացահայտչի և բացահայտյալի համաձայնությանը, ապա կարևոր ենք համարում նշել, որ շարահյուսական նորմի շրջանակներում հանդուրժելի չեն մասնական կոչվող բացահայտչի և իր լրացյալի հոլովական համաձայնության խախտումները, որքան էլ դրանք տարածված լինեն հատկապես մերօրյա պաշտոնական խոսքում (օր. **Ես նրան որպես բժիշկ (փխ. բժշկի) բարձր եմ գնահատում**)²:

2. Կապակցական շեղումների մասին խոսելիս չի կարելի անտեսել առողրական առնչության յուրահատուկ մի դրսևորում, որը հայտնի է «կախում» անունով³ և որոշ մասնագետների կողմից ներկայացվում է որպես շարահյուսական կապակցության առանձին եղանակ⁴: Խոսքը հատկապես «որոշիչ-որոշյալ» կապակցության այն դեպքերին է վերաբերում, երբ որոշիչը իր բառային իմաստի թելադրանքով պահանջում է որոշյալի եզակի կամ հոգնակի թիվ: Օրինակ, **բոլոր, բազմաթիվ, մի քանի, գույզ – գույզ, խումբ – խումբ** և այլ որոշիչների հետ կանոնավորապես գործածվում է հոգնակի որոշյալ, **ամեն (մի), յուրաքանչյուր, որևէ, ողջ, ամբողջ** և այլ որոշիչների հետ՝ եզակի ստորոգյալ: Մակայն բանավոր (հաճախ նաև գրավոր) խոսքում սակավադեպ չեն այս կանոնի խախտումները՝ **որևէ առաջարկներ չեն ստացվել, տարածաշրջանի ողջ երկրները, դպրոցների ամբողջ աշակերտները** և այլն:

3. Քանի որ հայերենի (և ոչ միայն) շարահյուսական կառուցվածքի մեջ բացառիկ կարևոր դեր ունի բայը, շարահյուսական կառույցների կապակցական զուգահեռ կամ հոմանիշ ձևերի առկայությունը առավելաբար կապված է լինում բայի կապակցելիական հնարավորությունների կամ առանձնահատկությունների հետ: Մասնագիտական գրականության մեջ հաճախադեպ են մասնավորապես բայական խնդրառությամբ պայմանավորված զուգաձև կառույցների տարաբնույթ գնահատությունները: Որպես սրա ամենաբնորոշ օրինակ՝ կարելի է նշել դիմավոր բային լրացնող անորոշ դերբայի ձևավորման խնդիրը: Բանն այն է, որ դիմավոր բայի խնդրառական հատկությամբ թելադրվող տրական կամ բացառական հոլովով ձևերին (ձգտում է **հասնելու**, խուսափում է **հանդիպելուց**) զուգահեռ արդի հայերենում սովորական է նաև անորոշ դերբայի ուղիղ ձևով կառույցը (այսպես կոչված «բացարձակ աներևույթը»՝ ձգտում է **հասնել**, խուսափում է **հանդիպել** և

¹ Այս ձևերի քերականական իմաստի գնահատման մասին մանրամասն տե՛ս **Գրուզառյան Դ.**, Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Երևան, 2016, էջ 64-71:

² Խոսքային նման վթարները կարող են նույնիսկ զավեշտական իրավիճակի առիթ լինել այսպես, Ազգային ժողովի պատգամավորուհին տղամարդ հաղորդավարին շնորհակալություն է հայտնում՝ ասելով. «Դուք ինձ դիմավորեցիք որպես կին և ճանապարհում եք որպես կին»:

³ Տե՛ս **Իշխանյան Ռ.**, Արդի հայերենի շարահյուսություն, Երևան, 1986, էջ 33:

⁴ Տե՛ս, օրինակ, **Մարգարյան Ա.**, Ժամանակակից հայերենի շարահյուսական կապակցության մի եղանակի մասին // «Լեզու և լեզվաբանություն», 2015, հ. 1-2:

այլն): Այս վերջին ձևերը հետազոտողների մի մասը համարում է օտարա-
մուտ և անհանձնարարելի: Միանշանակ չի գնահատվում նաև անվանական
բաղադրիչներով որոշ բայական հարադրությունների հետ անորոշ դերբայի
չթեքված ձևի կիրառությունը՝ հույս ունի **հանդիպել**, կարիք չկա **հիշեցնել**,
հարկ չկա **մտահոգվել** և այլն: Մրանք ևս շատերը ոչ կանոնական են
համարում՝ հանձնարարելով նման կառույցներում գործածել միայն անո-
րոշի սեռական-տրական հոլովածը՝ որպես հարադրության անվանական
բաղադրիչի հատկացուցիչ (հույս ունի **հանդիպելու** և այլն): Կարծում ենք՝
այս երկու կառույցների մեջ էլ անորոշ դերբայի ուղիղ ձևի կիրառությունը
խորթ չէ հայերենի շարահյուսական կանոնի տրամաբանությանը (նույնիսկ
էթե ընդունենք դրանց՝ օտար ազդեցության հետևանք լինելը), և պետք է
ընդունել անորոշի թեքված ձևերով կառույցների հետ զուգահեռ դրանց
գործածվելու իրավունքը գոնե արդի շրջանի արևելահայերենում (ի դեպ,
նշված կառույցները նույնքան սովորական են նաև արևմտահայերենում)¹:
Այս առնչությամբ, սակայն, կարևոր է ուշադրություն դարձնել մի հանգա-
մանքի վրա: Վերոնշյալ կառույցներում անորոշի ուղիղ ձևից խուսափելու
չափազանցված զգուշավորությունը առիթ է տալիս ակնհայտ սխալ կազմու-
թյունների. մի կողմից անորոշ դերբայի տրականի ձևն են գործածում այն-
տեղ, որտեղ խնդրառական կանոնով միակ հնարավորը ուղղականի ձևն է
(թույլ տվեք **դիմելու** (փխ. **դիմել**), արտոնել են **առևտուր անելու** (**անել**), շա-
րունակե՛ք **պատասխանելու** (**պատասխանել**), աշխատում են **հասնելու**
(**հասնել**) առաջավորներին, միշտ փորձել եմ **օգնելու** (**օգնել**) հարազատնե-
րիս և այլն), մյուս կողմից, ընդհակառակը, ուղիղ ձևը գործածում են պա-
հանջված տրականի փոխարեն (օր.՝ «Մենք ունենք լրագրողական գործեր,
որոնք արժանի են **հրատարակվել** և **պարզևատրվել**» (Հ 2 հեռուստատալիք),
«Վագում էին **գրկել** երեխային» և այլն)²:

4. Բայական արժույթի, խնդրառության ոլորտում առկա տեղաշարժերը,
անշուշտ, ավելի բազմազան դրսևորումներ ունեն, որոնք հաճախակի
քննարկման առարկա են դառնում քերականագիտական, ուսումնական,
նաև լեզվի կանոնարկման հարցերին նվիրված աշխատանքներում: Խնդրա-
ռությամբ պայմանավորված շարահյուսական տարբերակների երկու կարգի
դրսևորում կարելի է առանձնացնել. **ա)** բայի բազմիմաստությունից բխող
կրկնասեռությամբ պայմանավորված՝ խնդրի տարբեր ձևավորումներ (**սովո-
րել դասը – սովորել միջավայրին, ապրել քաղաքում – ողբերգություն ապրել,
լսել երաժշտություն – լսել ծնողներին, աշխատել գործարանում – փող**

¹ Այս մասին առավել հանգամանորեն տե՛ս **Թեյյան Լ.**, Արդի հայերենի քերականության
հարցեր, Երևան, 2016, էջ 23-43:

² Այս կառույցները թերևս կանոնական են արևմտահայերենում: Հմմտ. «Եվ այլիք մը թևը
բացած կը վազէ / Գրկել ավունքն իղձիս ոսկե ավազե» (Մեծարենց):

աշխատել, նայել երկնքին – հեռուստացույց նայել և այլն)¹, և բ) ժամանակի ընթացքում բայասեռի քերականական կարգի ներսում կատարված տեղաշարժերով պայմանավորված գուգաձևություններ (**կարոտել գյուղին – կարոտել գյուղը, դավաճանել հայրենիքին – դավաճանել հայրենիքը, ձեռնարկել գործին – ձեռնարկել գործը** և այլն): Այս իրողությունները քերականագիտության մեջ վաղուց նկատված և նկարագրված են, սակայն այսօր էլ հրատապ է սրանց դիտարկումը հատկապես խնդրառական գուգաձև կառույցների՝ լեզվի կանոնարկման համատեքստում գնահատելու առումով: Արդի հայերենում մի շարք բայերի գուգաձև խնդրառության երևույթը հենց այս տեսանկյունով էլ քննության է առնված Լ. Սարգսյանի մի ուշագրավ հոդվածում²: Կարևոր է, որ հեղինակը համագոյակից կառույցների կիրառության հեռանկարը գնահատելիս հիմնվում է արդի փուլում դրանց գործածության հաճախականության վերաբերյալ վիճակագրական հաշվումների վրա (հարցումային գիտափորձերի օգնությամբ): Ըստ դրանց՝ արդի հայերենում **կարոտել, տենչալ, դավաճանել** բայերի գուգաձև խնդիրներից առավել հաճախական են ուղղական հոլովով ձևավորվածները (խոսքը, անշուշտ, իրի առման մասին է), **դավանել, խոչընդոտել, խանգարել** բայերի դեպքում գերակշռում են տրականաձև խնդիրները (ուղղականի համեմատությամբ): Հետաքրքիր է, որ վիճակագրական գիտափորձի մասնակիցներից սակավ գործածական կառույցներին նախապատվություն տվածները առավելապես տարեց մարդիկ են, ինչը զարգացման որոշակի միտումի վկայություն կարելի է համարել: Գնահատելի է նաև, որ հոդվածի հեղինակը սկզբունքորեն տարբերակել է համակարգային զարգացման տրամաբանությամբ թելադրված ձևերը անհատական նախընտրությամբ պայմանավորվածներից (**ափսոսալ ծառերին, ողջունել հաղորդաշարին** և այլն) կամ էլ ակնհայտ սխալակազմություններից, որոնք, անկախ կիրառության հաճախականությունից, չեն տեղավորվում այսօրվա շարահյուսական կանոնի շրջանակում:

5. Խնդրառական որոշ կարգի գուգաձևեր շարահյուսական կանոնի սահմաններում գոյության հավասար իրավունքով են օժտված իրական նույն հարաբերության՝ մտածական տարբեր կաղապարներով արտահայտվելու պատճառով. **կառչել մեկին / մեկից, կախել պատին / պատից, գերազանցել մեկին / մեկից, խնդրել մեկին / մեկից, հարցնել մեկին / մեկից, տեղյակ լինել մի բանի / մի բանից, երկուսին / երկուսից հինգ է պակաս** և այլն: Խնդրի տարբեր ձևավորումները երբեմն պայմանավորված են լինում խնդրառության հետ իմաստային կապի առանձնահատկությամբ: Այսպես, **ծանոթանալ** բայի խնդիրը **հետ** կապով է ձևավորվում, եթե ծանոթությունը փոխադարձ է

¹ Կրկնասեռ բայերի մասին մանրամասն տե՛ս **Սաֆարյան Տ.**, Կրկնասեռ բայերը հայերենում, Երևան, 2013:

² **Սարգսյան Լ.**, Բայերի սեռային անցումները արդի արևելահայերենում // «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն» (այսուհետև՝ «ԲԵՀ»), 2014, թիվ 3, էջ 45-54:

(բնականաբար անձ նշանակող խնդիրների դեպքում)՝ **ծանոթանալ բանաստեղծի հետ**, միակողմանի ծանոթությունը հաղորդվում է առանց կապի՝ **ծանոթանալ բանաստեղծությանը**: Նույնպես և՛ **հանդիպել (ուսանողների հետ / դժվարությունների)**, **հարմարվել (հարևանների հետ / իրավիճակին)** և այլն: **Հետ** կապով և առանց կապի՝ տրականով արտահայտվող խնդիրների գուգահեռ թույլատրելի կիրառության այլ դեպքերի միջև էլ թերևս կարելի է հետևյալ նրբերանգային տարբերությունն արձանագրել. **հետ**-ով կառույցների մեջ ընդգծվում է հարաբերվող եզրերի տրամաբանական համարժեքությունը, տրականաձև խնդիրների դեպքում էլ կարծես թե կախման հարաբերությունն է կարևորվում: Համեմատենք.

համագործակցել մեկին / մեկի հետ

հակադր(վ)ել մեկին, մի բանի / մեկի հետ, մի բանի հետ

գուգորդ(վ)ել մի բանի / մի բանի հետ

համապատասխանել մեկին, մի բանի / մեկի հետ, մի բանի հետ

հավասարվել մեկին, մի բանի / մեկի հետ, մի բանի հետ և այլն:

Այս կարգի գուգաձև խնդրառությունը կարող է հատուկ լինել նաև ածականին, մակբային և այլն: Օրինակ՝ **մեկին, մի բանի / մեկի հետ, մի բանի հետ համաչափ, գուգահեռ, համաքայլ, ներդաշնակ** և այլն:

Վերոբերյալ խնդրառական կաղապարների իրացումների մեջ հազվադեպ չեն նաև սխալակազմությունները, ինչպես՝ **բաժանվել կնոջ հետ, օգտվել գործիքով, սիրահարվել մեկի վրա, կտակել մեկի վրա, մոտ լինել տնից** և այլն, որոնք օտար կամ բարբառային ձևեր են: Պետք է տարբերել նաև որոշ հարանուն գույգերի խնդրառական յուրահատկությունները՝ խուսափելու համար դրանց գործածության մեջ հանդիպող շփոթից՝ **կախված լինել մեկից / մի բանից, կապված լինել մեկի հետ / մի բանի հետ** (նաև՝ **պայմանավորված լինել մի բանով**), **շնորհակալություն հայտնել մեկին, շնորհակալ լինել մեկից / մեկին** և այլն:

Թերևս արժե ևս մի անգամ առանձին անդրադառնալ **վերաբերել / վերաբերվել** և **համաձայնել / համաձայնվել** գույգերի կիրառության ոլորտներին և խնդրառական բնութագրերին: Առաջին գույգը կազմող բայերի կիրառության շրջանակները կարծես թե հստակեցված են. -վ- ածանցով ձևը «վերաբերմունք ունենալ, ցուցաբերել» նշանակությամբ գուգորդվում է միայն անձնանիշ ենթակաների հետ: Երկրորդ գույգը կազմող եզրերի համար գործածության նման որոշակիություն դժվար է սահմանել. երկուսն էլ գուգորդվում են տրական հոլովով կամ էլ տրականով ու **հետ** կապով ձևավորված խնդիրների հետ, իսկ արդի հայերենի քերականություններում և բառարաններում դրանք հիմնականում ներկայացվում են որպես հոմանիշ և փոխադարձ փոխարինելի կառույցներ: **Համաձայնվել** ձևը, որ կազմված է չեզոք սեռի բայից -վ- ածանցով, ըստ էության հակասում է հայերենի բայակազմության կանոնին (հմմտ.՝ **տուժվել, քծնվել, նախանձվել** և նման սխալ կազմությունները), սակայն հաճախադեպ կիրառությունը կարծես թե հանդուրժելի է դարձրել

այն լեզվական նորմի մեջ: Հարցին նվիրված մի հոդվածում, համենայն դեպս, փորձ է արվում **համաձայնել/համաձայնվել** գույզի անդամների միջև իմաստային և կիրառական որոշակի տարբերություններ նշելու. «...**Բայի երկու տարբերակների գործածության հիմքում իմաստային որոշակի տարբերակում, այնուամենայնիվ, կա: Ածանցավոր բայը կա՛մ դրված է հոգնակի թվով և նշանակում է «համաձայնության գալ», այսինքն՝ փոխադարձ սեռի է, կա՛մ նույն նշանակությամբ գործածված է եզակի թվով՝ առանց միասնության խնդրի, որը, սակայն, հիմնականում գիտակցվում է, և հնարավոր է վերականգնել անձնանիշ գոյականի սեռական հոլով + հետ կապ»¹ (ընդգծումը բնագրում է): Կարծում ենք, սակայն, որ բերված իմաստակիրառական սահմանազատումն այնքան էլ համոզիչ չէ նույնիսկ հեղինակի կատարած վիճակագրական հաշվումների («Արևակի» նյութի հիման վրա) շրջանակում: Մեր տպավորությամբ **համաձայնել / համաձայնվել** բայերի կիրառության սահմաններն այսօրվա շարահյուսական կանոնի մեջ այդքան հստակորեն տարրորշված չեն: Չուզահեռ (տրականով կամ **հետ** կապով) խնդրառության տարածված լինելը փաստելով հանդերձ, կարծում ենք, նախընտրելի պետք է համարել առանց -վ- ածանցի ձևը:**

6. Խնդրառական մի անձշտություն ևս, որ հանդիպում է առավելապես գրավոր խոսքում, նաև գիտական (նույնիսկ լեզվաբանական) բնագրերում: Ուղևորման իմաստ արտահայտող բայերի տեղի պարագան (ու՛ր հարցն առնող), որն ըստ կանոնի պետք է դրվի ուղղական (հայցական) հոլովով, դրվում է ներգոյականով (հավանաբար այսպես կոչված «ներակայման» տեղի պարագայի գուգորդային ազդեցությամբ): Ահա այդպիսի մի երկու օրինակ. Այդ շրջանից սկսած՝ հոգևորականներ և մտավորականներ մուտք են գործում այդ **երկրում** (Համացանց), ...Մայրը համաձայն չէր, որ աղջիկը մեծ **ընտանիքում** հարս գնար, ...Նա երկու տարի ինձ կանչել էր իր **համալսարանում** որպես պետական քննությունների հանձնաժողովի նախագահ («Հուշապատումներ»), ...Դրանք (դարձվածները)միայն այդ դեպքում են ավարտված միտք արտահայտում և ընկնում մտածական կապի **ոլորտում**, ...Այդ բառերը մուտք են գործում գրական **լեզվում**² և այլն:

7. Հայերենի շարահյուսական կանոնի պահանջներից մեկն էլ վերաբերում է անորոշ դերբայի գործիական հոլովով կազմված բառակապակցություններով (դերբայական դարձվածներով) նախադասություններին: Դեռևս Մ. Աբեղյանն էր գգուշացնում, որ նման կառույցներում «դերբայը և խոսքի բայը միշտ միևնույն ենթական ունին»³, ինչպես՝ «Նրանք, մի քանի ծուռ անցքեր **անցնելով, հասան** մի բարձր տեղ», «Ուռենին, կանաչագեղ ոստերը

¹ Ներսիսյան Վ., Հայերենի **համաձայնել / համաձայնվել** բայերի իմաստային տարբերակման հարցի շուրջ // «Ձառուկյանական ընթերցումներ», Երևան, 2016, էջ 170:

² Այս մասին տե՛ս նաև **Ավագյան Մ.**, Խոհեր մայրենի լեզվի մասին, Երևան, 1982, էջ 77-78:

³ **Աբեղյան Մ.**, նշվ. աշխ., էջ 406:

աջ ու ձախ **տարածելով, հովանավորում էր** մի փոքրիկ լճակ»: Մինչդեռ այսօրվա գրավոր և բանավոր խոսքում այնքան էլ հազվադեպ չեն այս օրինաչափության անտեսումները. «Լինելով մահմեդական երկիր՝ Հորդանանում հայերը վաղուց են բնակվում», «Գտնվելով Հորդանան գետի մոտ՝ քեզ է համակում քրիստոնեական անբացատրելի զգացում» («Արմենիա»), «Լինելով փխրուն արարած՝ ինձ միշտ հուզել է շրջապատի կարծիքն իմ մասին» (ԳԹ, հ. 40, 2016), «Դու, չունենալով դերասանական կրթություն, դժվար չէ՞ր խաղալ նրանց կողքին» (Համացանց), «Բնակվելով գյուղում՝ նրա կյանքը լիովին փոխվում է» և այլն: Ի դեպ, Մ. Ավագյանն իր գրքում բերում է այս սխալի ավելի քողարկված դրսևորման օրինակներ, երբ նախադասության ստորոգյալն ու դերբայը տարբեր սեռի բայեր են. «Բառարանում բառերը **բերվում են** ժամանակագրական կարգով՝ **նշելով** նրանց գործածության ժամանակը», «Մենագրության մեջ**բնութագրված են** Սիամանթոյի ժողովածուները,**վերլուծված՝** բանաստեղծությունները՝ **ընդգծելով** գրողի ստեղծագործական հասունացումը» և այլն¹:

Բնական է, որ այս կարգի անճշտություններից կարելի խուսափել սեփական գրավոր խոսքն առավել ուշադիր հսկելու պարագայում:

8. Ներկայացնենք հիմնականում լրատվության միջոցների (այդ թվում՝ գրավոր) լեզվում հանդիպող շարահյուսական վրիպումի ևս մի օրինակ: «Դիմավոր բայ + անորոշ դերբայ» կառույցի դիմավոր բայը հաճախ միայն եղանակավորիչ կամ կերպավորիչ արժեք է ունենում, իսկ բուն գործողությունն արտահայտվում է անորոշ դերբայով: Սեռանիշ -վ- ածանցը նման կառույցում բնականաբար պետք է ընդունի հենց անորոշը: Օրինակ՝ «Նա շարունակում է կառուցել շենքը» և «Շենքը շարունակում է կառուցվել»: Պետք է խուսափել ածանցի կրկնակի կիրառությունից, ինչը, օրինակ, արված է հետևյալ նախադասություններում. «Ձայնասկավառակը **սկսվել է ձայնագրվել** 2015 թվականին» (Հանրային ռադիո), «Մի հարց, որը քննարկվեց և **շարունակվում է քննարկվել** այսպիսի ծավալներով և այսպիսի տևողությամբ, նշանակում է մեկ բան....» («Իրավունք», հ. 115, 2016):

9. Վերադառնալով շարահյուսական տեղաշարժերի հարցում օտար ազդեցության խնդրին՝ հարկ է արձանագրել, որ «օտարածին» համարվող շարահյուսական միավորները լեզվական համակարգում միատեսակ «ընդունելության» չեն արժանանում: Վերը դիտարկված կառույցը՝ «բացարձակ աներևույթ» կոչվածը, ինչպես նշեցինք, չի հակասում հայոց լեզվի ներքին տրամաբանությանն ամենից առաջ հայերենի անորոշ դերբայի իմաստային յուրահատուկ նկարագրի պատճառով: Սրան հակառակ՝ մի շարք դեպքերում շարահյուսական կառույցը կամ դրա բաղադրատարրերը, լինելով օտար լեզվի ազդեցության հետևանք, չնայած տևական կիրառություններին,

¹ Տե՛ս **Ավագյան Մ.**, նշվ. աշխ., էջ 82-83:

չեն հարմարվում հայերեն լեզվամտածողությանն ու չեն արմատավորվում լեզվական կանոնի շրջանակում: Ասվածը կարող է վերաբերել, օրինակ, **որպեսզի, եթե** շաղկապների որոշակի կիրառությունների: Նախ, պաշտոնական ոճում և թարգմանական երկերում, ի հեճուկս մասնագետների բավական հետևողական հորդորների, դեռևս ձանձրացնելու չափ շատ են **որպեսզի** շաղկապի անճիշտ կիրառությունները՝ «Խնդրել ենք, որպեսզի օգնեն», «Ցանկանում ենք, որպեսզի հանրապետությունում օրենքը գործի», «Պահանջել է, որպեսզի դադարեցնեն», «Ժամանակն է, որպեսզի սթափվեք» և այլն¹: Այս շաղկապների ռուսաբան անցանկալի կիրառության մի դեպքի՝ անորոշ դերբայով միակազմ նախադասությունների հետ սրանց զուգորդվելու մասին զգուշացրել է դեռևս Մ. Սբեդյանը. «Օտարաբանություն է անորոշ դերբայով անենթակա խոսքեր կազմելը, ինչպես՝ Եթե նրան հարցնել, նա կպատասխանի: -Որպեսզի հաջողություն ունենալ, պետք է շատ աշխատել: Այս խոսքերը հայերեն լինում են՝ Եթե նրան հարցնեն, նա կպատասխանի: -Հաջողություն ունենալու համար պետք է շատ աշխատել,- կամ՝ Որպեսզի մարդ հաջողություն ունենա, պետք է աշխատի»²: Մեր օրերում ևս, թեև ոչ այնքան հաճախակի, այս կարգի սխալներ հանդիպում են: Ահա օրինակներ հեռուստահաղորդավարների խոսքից. «Եթե **անդրադառնալ** արևմտյան մեգաստղերին, ապա **կարելի է փաստել**, որ նրանք շատ են կարևորում քնելը» (ATV), Սա կարելի էր նկատել, եթե **ուշադիր լինել** (Հ. 2) և այլն:

Ռուսերեն **если, чтобы** շաղկապների մի երրորդ կարգի կիրառության հայերեն պատճենումից էլ զգուշացնում է մերօրյա հայերենի մաքրության հարցերին նախանձախնդիր երախտավորներից մեկը՝ Պ. Բեդիրյանը: Խոսքը վերաբերում է նշված շաղկապներով սկսվող ռուսերեն ավարտուն (առանց գերադաս բաղադրիչի) նախադասությունների հայերեն կրկնօրինակմանը. «Որպեսզի վաղը մի մարդու պես ներկայանաք», «Եթե միայն երազանքս իրականանար» և այլն: «Ռուսը կարգադրել կամ զգուշացնել է ուզում, թող ախի՝ **Чтобы завтра на работу не опоздали**, իսկ դուք՝ «Վաղն աշխատանքից չուշանաք, հա՛», կամ՝ «...չլինի թե ուշանաք», կամ՝ «Այնպես արեք, որ չուշանաք», կամ՝ «...մի՛ ուշանաք», կամ էլ՝ «...ձեր բաղձանքը այս բանաձևումներից մեկնումեկով պիտի հայտնեք՝ «Երանի թե... իրականանար», «Ո՛ր էր թե... իրականանար», « Ի՛նչ կլիներ կամ ի՛նչ (ինչե՛ր) կտայի, որ... իրականանար»³ :

Ընդհանրապես դժվար է չհամաձայնել արգո գիտնականի լեզվական նուրբ դիտարկումներին, սակայն **եթե** շաղկապով այս վերջին կարգի կառույցները (առանց գերադաս բաղադրիչի), մեր կարծիքով, դժվար է միանշա-

¹ Տե՛ս նաև **Սարգսյան Դ.**, Խնդրառության մի քանի հարցեր // «Ջահուկյանական ընթերցումներ», Երևան, 2014, **Գալստյան Հ.**, Ճիշտը և սխալը, Երևան, 2007, էջ 76 և այլն:

² **Սբեդյան Մ.**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 373:

³ **Բեդիրյան Պ.**, նշվ. աշխ., էջ 143-144:

նակորեն օտար կաղապարի անընդունելի պատճենումներ համարել: Դրանք երևի խորթ չեն մեր լեզվամտածողությանը և հատկապես գեղարվեստական խոսքին որոշակի զգացական լիցք են հաղորդում՝ արտահայտելով անկատար ըղձանքի ցավը: Մի թե մեր լեզվին հարազատ չեն Տերյանի տողերը.

*Ա՛խ եթե լիներ երկնային աշխարհ,
Եվ թռած լիներ քո հոգին պայծառ
Այնտեղ, ուր մաքուր երանության մեջ
Ապրում են այնքան լուսե հոգիներ
Եվ ժպտում երկնի աստղերից անշեջ,-
Ա՛խ եթե լիներ, ա՛խ եթե լիներ...¹:*

Կամ՝ հայտնի իմաստախոսությունը՝ «Եթե երիտասարդությունն իմանար..., եթե ծերությունը կարողանար...», հայերեն նույնքան բնական է հնչում, որքան «Երանի թե...իմանար, երանի թե... կարողանար» հոմանիշ տարբերակը, և առաջինը նախընտրողներին օտարամոլ համարելը, գոնե մեր կարծիքով, այնքան էլ արդարացի չի լինի:

9. Մեր լրատվության զանգվածային միջոցների լեզուն, ինչպես որ հաճախ և իրավացիորեն ահագանգում են մասնագետ լեզվաբաններն ու խնդրով մտահոգ այլ մտավորականներ, հիմնականում չի փայլում մաքրությամբ, ճշգրտությամբ, խոսքի մշակույթի որակով: Առկա թերությունների մի մասը, ինչպես վերևում էլ նշեցինք, հետևանք է հայոց լեզվի շարահյուսական օրինաչափությունների չիմացության կամ էլ սեփական խոսքի հանդեպ անփույթ վերաբերմունքի: Բերենք շարահյուսական տարաբնույթ մեղանչումների մի փունջ ևս լրատվամիջոցների (մեծ մասամբ՝ հաղորդավարների) խոսքից՝ առանց մեկնաբանության (ուշադրության են արժանի հատկապես կապային կառույցներում սխալ խնդրառության դեպքերը). «Արձանագրվել է հրազենային վնասվածք՝ **առանց** թոքի **վնասումով**» («Շանթ»), «Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում ճանապարհորդություն տարվա եղանակների **միջև**» («Շանթ»), «**Քանի դեռ** ստացիոնար պայմաններում **չստուգենք**, ոչինչ չենք կարող ասել» («Ազատություն» ո/կ), «Նրա հետաքրքրությունը **փոխարինվեց սարսափի**» («Արմենիա»), «Չկարողանալով աշխատել **ըստ մասնագիտությամբ**՝ զբաղվում էր առևտրով» (Հանրային ռադիո), «Մա վերաբերում է բոլորին՝ սկսած հավաքարարից, վերջացրած **պատգամավորից**» (Համացանց), «Ստեղծվել է մի ստեղնաշար, որը կարելի է դեկավարել՝ **առանց կաչելով** ստեղներին» (Հ 2), «Այն երջանկությունը, որ տալիս է երեխան, չես **փոխարինի** ոչ մի **բանի հետ**» (Հ 1), «Ես կուզենայի, **որպեսզի** բոլոր մանկատները փակվեն, **որովհետև չլինեն** նման խնդիրները» (Հ 2), «Դատելով **Ձեզ**՝ դուք պետք է այլ ժանրով երգեիք» («Շանթ»), «Գիտելիք-

¹ Տերյան Վ., Երկեր, Երևան, 1989, էջ 148:

ների ինչ պաշար պիտի ունենան երեխաները՝ **բացի** անգլերենի **իմացություն**» («Արմենիա»), «Այսինքն Դուք խնդիր չունեք **հերոսով**» (Հ 1), «Իրենց նախապատվությունը տալիս են **առանց բարելավիչով** հացին» (Հ 1), «Ինձ ընդունիր, ինչպես կամ՝ իմ **կյանքի հետ հանդերձ**» («Արմենիա»), «Որքանով է **կախված** երկրի զարգացվածությունը (՝) **կոռուպցիայի հետ**» («Շանթ»), «**Տրամաբանությամբ** ելնելով՝ ընտրեցի «Հյուսիսային պատերազմը»» («Արմենիա»), «Լավ է ժամանակ ծախսել խոհանոցում՝ **փոխարենը ուտելու** այս կուրքիկները» (Հ 1), «**Թեև** արտասահմանյան հրավերներին՝ նա ցուցահանդեսներ է բացում արտասահմանում» (Հ 1), «Ձուլածո առարկաների **ձևից պայմանավորված**՝ ստեղծվում են կաղապարներ» («Շողակաթ») և այլն, և այլն:

Իհարկե, հայերենի շարահյուսական համակարգի մեջ արդի փուլում առկա զուգաձևություններն ու կանոնից շեղումները շատ ավելի ընդգրկուն քննության նյութ կարող են լինել: Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում մասնավորապես բարդ նախադասության ոլորտը, որի ներսում առկա կապակցական, կիրառական, տրամաբանական տարաբնույթ դրսևորումները կարիք ունեն ուսումնասիրության և կանոնարկման:

Леонид Телян – Синтаксическая норма: вариативные формы и отклонения

Рассмотренные в статье вариативные формы синтаксических конструкций функционируют в современном армянском языке и сформированы действующими в нем способами синтаксической связи – согласованием, управлением и примыканием. Эти конструкции оцениваются с точки зрения их соответствия синтаксической норме литературного армянского языка, даются рекомендации по их применению.

Leonid Telyan – The Syntactic Norm: Variation Forms and Deviations

The variation forms of syntactic structures under study function in the modern Armenian language and are formed by means of syntactic relations functioning therein - coordination, alignment and adjacency. These structures are valued in terms of their correspondence to the syntactic norm of the literary Armenian language, and are recommended to be used.

**ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԴ
ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Բանալի բառեր – թվային համաձայնություն, իմաստային համաձայնություն, բազմակիություն, բարդ նախադասություն, հարաբերյալ, հարաբերական դերանուն, երկրորդական նախադասության կապակցում

Համաձայնությունը՝ որպես կապակցման եղանակ, գործում է ոչ միայն պարզ նախադասության որոշ միավորների, այլև բարդ ստորադասական նախադասության որոշ բաղադրիչների կապակցման դեպքում: Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում հանդես են գալիս թվային և ժամանակային համաձայնություններ, որոնցից այստեղ կանդրադառնանք առաջինին: Բարդ նախադասության բաղադրիչների միջև թվային համաձայնությունը գործում է *ենթակա, ստորոգելի, գոյականական անդամի լրացում, բայական անդամի խնդիր լրացում* երկրորդականների կապակցման դեպքում: Թվային համաձայնություն դրսևորող եզրերից մեկը լինում է հարաբերական դերանուն, իսկ մյուսը կարող է արտահայտվել գոյականներով, դերանուններով (հարաբերյալներով), փոխանվանական կամ ինքնանվանողական գործառնությամբ կիրառված բառերով: Թվային համաձայնությունը կարող է դրսևորվել միայն այն դեպքում, երբ կապակցական գործառնությամբ կատարող բառերից առնվազն մեկին բնորոշ է թվի քերականական կարգը: Երկու եզրերի միջև հնարավոր է թվային համաձայնության երեք դրսևորում՝ *ձևաբանական թվով-ձևաբանական թվով, իմաստային թվով-ձևաբանական թվով, բազմակիությամբ-ձևաբանական թվով*: Առաջին դեպքում կապակցվող եզրերը դրվում են ձևաբանական միևնույն թվով, երկրորդ դեպքում դրանցից մեկը իմաստով է հոգնակի կամ եզակի (օրինակ՝ *մեկը, բոլորը*), իսկ մյուսը՝ ձևաբանորեն է եզակի կամ հոգնակի, երրորդ դեպքում որպես կապակցման մի եզր հանդես են գալիս բազմակի միավորներ, իսկ մյուս եզրը լինում է ձևաբանորեն հոգնակի բառ: Պետք է նշել, որ հարաբերյալը կարող է զեղչված լինել և, ինչպես հին հեղինակներն են ասում, հասկացվել «գործությամբ»: Այս ընդհանուր սկզբունքները բնորոշ են թե՛ գրաբարին, թե՛ միջին հայերենին, թե՛ աշխարհաբարի երկու տարբերակներին՝ արևելահայերենին ու արևմտահայերենին, սակայն դրանց միջև անշուշտ կան որոշ տարբերություններ:

Գրաբարում բարդ նախադասությունների կապակցման գործընթացում թվային համաձայնությունը առաջին հերթին դրսևորվում է *որ* դերանունով կապակցվելու դեպքում: Օրինակ՝ *Եթե աղբերքն մշտաբուղիսք, որք ի նորա*

հրամանէ կարգեցան, հանապազ բոլորն և ոչ պակասն, որոց բոլորնքն զայլոց կարօտութիւնս լնուն, և ինքեանք ի նմին յորդութեան կան մշտնջենաւորք, ո՞րչափ ևս առաւել այն՝ որ նոցա զյորդութիւն բոլորնսն յօրնեաց, որ աղբիւր է բարութեան. որ զամենայն յոր արար գեղեցիկս արար, այս ինքն զբանաւորս և զանբանաւորս, զմտաւորս և զանմտաւորս, զխօսունս և զանխօսունս, զասունս և զանասունս (Եզնիկ)¹: Մ. Չամչյանը, որին Գ. Ջահուկյանը անվանում է «Առաջին հեղինակը, որ գրաբարի քերականությունը վերջնականապէս ազատեց հունարանության և լատինաբանության բացասական ավանդույթներից, քերականության մեջ մուծված արհեստական «բարեփոխումներին» հակադրեց հին տեքստերի անկանխակալ ուսումնասիրության ու մատենագրական վկայությունների վրա հիմնված քերականական կանոններն ու բացատրությունները»², իր «Քերականութիւն հայկազեան լեզուի»³ աշխատության մեջ քննում է համաձայնությանը վերաբերող մի շարք հարցեր, որոնց թվում նաև բարդ նախադասության մեջ հանդես եկող համաձայնական կապը: Նախորդ հեղինակների նման նա ևս «համաձայնություն» տերմինը գործածում է երկու իմաստով՝ շարահյուսություն և շարահյուսական կապակցման եղանակներից մեկը, թեև նա շարահյուսությունն ըմբռնում է ավելի նեղ իմաստով: Համաձայնությունը որպէս կապակցման եղանակ քննելիս Մ. Չամչյանն առանձնացնում է խոսքի մասերի կապակցման ութ տեսակ, որոնց մեջ դերանունների երկու տեսակի կապակցություն է նշում՝ մեկ այլ դերանվան հետ և անվան հետ: Ահա դերանունների կապակցությունը քննելիս էլ անդրադառնում է բարդ նախադասությունների բաղադրիչները կապակցող *որ* դերանվան կիրառություններին: «Յաղագս համաձայնութե՛ յարաբերական դերանուանս՝ *Որ*» վերնագրված ԺԴ գլխի հենց սկզբում Մ. Չամչյանը նշում է, որ հարաբերական *որ* դերանունը գործածվում է, «որպէս զի մի՛ կրկնեսցի մի և նոյն բառ»⁴, ապա առանձին-առանձին քննում, թե որ դեպքում է *որ*-ը թվով համաձայնում գերադաս նախադասության այն բառին, որին բուն իմաստով կապակցվում է երկրորդականը: Այսինքն՝ Մ. Չամչյանը *որ*-ի համաձայնությունը համարում է գերադաս նախադասության մեջ եղած բառին փոխարինելու հետևանք: Մինչդեռ գրաբարի քերականության մեկ այլ գիտակ՝ Ստ. Մալխասյանցը, համաձայնության պատճառը համարում է *որ* հարաբերականի կապակցական գործառույթը: Գրաբարի բարդ նախադասությունները քննելիս նա նշում է. «Յարաբերական դերանունը կրկնակի կապ ունի, մի կողմից գլխաւոր նախադասու-

¹ Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց (թարգմ. և ծանոթ. Ա. Աբրահամյանի), Երևան, 1994, էջ 8:

² Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974, էջ 303:

³ Տե՛ս Քերականութիւն հայկազեան լեզուի, յօրինեալ ըստ նախնի ուղղախօսութեան՝ ի հայր Միքայէլ վարդապետէ Չամչեանց Կոստանդինուպոլսեցոյ՝ յաշակերտէ ամենապատիւ տեառն Մխիթարայ Մեծի Աբբայի, Վենետիկ, 1779:

⁴ Նույն տեղում, էջ 382:

թեան այն բառին հետ, որին որոշում է (յարաբերեալ) և միւս կողմից երկրորդական նախադասութեան հետ, որի անդամն է կազմում: Այս պատճառով նա պէտք է համաձայնի թէ՛ յարաբերեալին հետ և թէ՛ երկրորդական նախադասութեան հետ»¹: Այս կարծիքին է նաև Ստ. Պալասանյանը: Նա գրում է. «Որ յարաբերականը գլխաւոր նախադասութեան այն գոյականի հետ է համաձայնում թուով, որին երկրորդական նախադասութիւնը յարաբերում է, իսկ հոլովով համաձայնում է երկրորդական նախադասութեան բային նայելով»²: Թեև այս ընդհանուր մոտեցման հարցում լեզվաբանների կարծիքները տարբեր են, սակայն բուն խնդիրը, որը բխում է լեզվական փաստերից, թէ՛ նշված, թէ՛ այլ հեղինակները մոտավորապէս նույն ձևով են ներկայացնում: Ընդհանուր սկզբունքն այն է, որ եզակի թվով բառերին կապակցվելու դեպքում *որ* հարաբերականը դրվում է եզակի թվով, իսկ հոգնակի թվով բառերին կապակցվելու դեպքում՝ հոգնակի թվով: Հաճախ դերանունով արտահայտված հարաբերյալը կարող է գեղջված լինել և հասկացվել իմաստից: Սակայն այս ընդհանուր սկզբունքից շեղումներ հաճախ են պատահում: Ինչպէս *որ* հարաբերականի մասին խոսելիս նշում է Ստ. Պալասանյանը. «Բայց շատ անգամ յոգնականի տեղ եզակի է մնում, մանաւանդ նախորդի հոլովներում, նոյնպէս եթէ յարաբերեալը անեզակյան գոյական է: *Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք: Սոքա են՝ որ զբանն Աստուծոյ լսեն և առնեն: Կատարեաց զամենայն զգործս իւր զոր արար*»³: Գրաբար բնագրերում անհամաձայնություններ հաճախ են հանդիպում: *Որ* հարաբերականը հատկապէս անհամաձայն է մնում, երբ ուղղական հոլովով է: Այս իրողությունը բնորոշ է նաև ժամանակակից հայերենին: Ստ. Մալխասյանցը համարում է, որ դա հեղինակների սուբյեկտիվ վերաբերմունքի հետևանք է: «Ինչպէս երևում է,- գրում է նա,- այսպիսի դեպքերում յարաբերականն եզակի կամ յոգնակի դնելը կախուած է եղել մատենագիրների ճաշակից և կամքից: Նախնականն ու կանոնաւորն եղել է յոգնակին, բայց սովորականը՝ եզակին»⁴:

Միջին հայերենում էլ ընդհանուր առմամբ կա գրաբարից եկող սկզբունքը, այսինքն՝ հարաբերականի և այն բառի համաձայնությունը, որին կապակցվում է երկրորդականը, սակայն շատ մեծաթիվ են նաև շեղումները, օրինակ՝ *Չոր յառաջ կամ յետև սուրբքնն հաւասար, որք թողին զմեծութիւն ու զաշխարհի սէր* (Ֆրիկ)⁵ : *Գեւ չի մընաց աղբիւր ու գետ, Որ լացուցա ծքրս*

¹ **Մալխասեանց Ստ.**, Գրաբարի համաձայնութիւնը, Յովհ. Մարտիրոսեանցի տպարան, Թիֆլիս, 1892, էջ 121:

² **Պալասանեան Ստ.**, Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, հատոր երկրորդ, Համաձայնութիւն, Համբ. Էնֆիաճեանցի եւ ընկերութեան տպարան, Թիֆլիզ, 1869, էջ 79:

³ Նույն տեղում, էջ 79:

⁴ **Մալխասեանց Ստ.**, նշվ. աշխ., էջ 136:

⁵ **Ֆրիկ**, Տաղեր (առաջաբանը, բնագրի պատրաստումը, հավելվածը Ա. Ղանալանյանի), Երևան, 1982, էջ 19:

չի խմեցին (Ֆրիկ, էջ 75): *Ես աղաչեմ զամենեսեան, ով զիմ ողբանքսս լըսենայ* (Ֆրիկ, էջ 32): *Գիտեմ՝ կային հանցեղ մարդիկք, Որ ի մեր չարքն խընդային* (Ֆրիկ, էջ 76): Միջին հայերենում *որ*-ի անհամաձայնությունը այնքան տարածված է, որ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» գրքի հեղինակները համարում են, որ *որ*-ը շատ դեպքերում շաղկապի է վերածվել: Որոշիչ երկրորդական նախադասությունների քննության ժամանակ նշվում է հետևյալը. «...միջին հայերենի վաղ շրջանում նկատվող *որ* հարաբերականի՝ շաղկապի վերափոխվելու միտումն այդ լեզվի հետագա շրջանի համար օրինաչափ է դառնում: ...միջին հայերենում *որ* հարաբերականը՝ կիրառվելով իբրև որոշիչ երկրորդական նախադասությունը գլխավորի հետ կապակցելու միջոց, մեծ մասամբ գործածվում է միայն եզակի, այսինքն՝ թվով չի համաձայնում իր հարաբերյալին և այն ստորոգյալին, որը պարունակող նախադասության մեջ ինքը հանդես է գալիս»¹: Միջին հայերենում տարածվում է նաև *որ*-ի՝ անհրաժեշտ հոլովով էլ չդրվելու դեռևս գրաբարում նկատվող միտումը: Այս ամենով հանդերձ՝ *որ*-ի՝ թվային համաձայնությունը միջին հայերենում այնուամենայնիվ լիովին չի վերանում:

Ժամանակակից արևելահայերենում բարդ նախադասության կապակցության մեջ թվային համաձայնությունը գործում է *ենթակա, ստորոգելի, գոյականական անդամի լրացում, բայական անդամի խնդիր լրացում* երկրորդականների կապակցման դեպքում, եթե որպես կապակցման բառական միջոց երկրորդական նախադասության մեջ հանդես են գալիս *որ, ով, ինչ, ինչպիսի, որպիսի* դերանունները: Այդ գործառույթում հարաբերական դերանունները կապակցման երկու եզր ունեն: Սակայն գլխավորի կազմում հարաբերյալ կարող է նաև չլինել: Ընդունված է համարել, որ այդ դեպքում համաձայնական կապ է գործում հարաբերական դերանվան և գլխավորի ստորոգյալի միջև: Ն. Պառնասյանը ենթակա երկրորդականները կապակցող *ով* դերանվան վերաբերյալ հետևյալն է գրում. «*Ով* հարաբերականը, որպես գլխավոր և երկրորդական նախադասությունները կապակցելու միջոց, իր թվով համաձայնում է հարաբերյալի հետ, իսկ հարաբերյալի բացակայության դեպքում՝ գլխավոր նախադասության ստորոգյալի հետ»²: Ստտավորապես նույն ձևակերպումն է կատարում Գ. Գարեգինյանը: Նա ենթակա երկրորդականները քննելիս *ով* դերանվան առնչությամբ գրում է. «*Ով* դերանունը թվով համաձայնում է գլխավորի հարաբերյալի, իսկ նրա բացակայության դեպքում՝ *ստորոգյալի հետ*»³: Մենք հավելենք, որ երևույթը նույնն է նաև ստորոգելի, գոյականական անդամի լրացում, ինչպես նաև խնդիր երկ-

¹ Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Բ, Երևան, 1975, էջ 199-200:

² Պառնասյան Ն., Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում, Երևան, 1961, էջ 30:

³ Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Երևան, 1991, էջ 145:

բորդականների և վերը նշված մյուս (*որ, ինչ, ինչպիսի, որպիսի*) հարաբերականներով կապակցվելու դեպքում, սակայն կարելի է ասել, որ համաձայնությունը այս դեպքում իմաստային առումով առնչվում է նաև ենթադրյալ հարաբերյալին, որի առկայության դեպքում համաձայնական կապ պետք է լիներ նրա և ստորոգյալի միջև: Սա կարելի է համեմատել նաև զեղչված ենթակայով նախադասության հետ, որտեղ ստորոգյալն ունենում է ենթադրյալ ենթակայի թիվը: Հավելենք նաև մի կարևոր իրողություն, որը ուշադրության չի արժանանում: Համաձայնական կապը ոչ միշտ է գործում հարաբերականի և հարաբերյալի միջև: Որոշ դեպքերում համաձայնական կապը լինում է ոչ թե հարաբերականի և այն բառի միջև, որին լրացնում է երկրորդականը, այլ այդ բառի լրացման ու հարաբերականի միջև: Դրանց կանդրադառնանք քիչ ուշ:

Եզակի կամ հոգնակի թվով դրվելուց բացի՝ կապակցող հարաբերական դերանունները կարող են դրվել տարբեր հոլովներով, սակայն դա հոլովի կարգով համաձայնությունն չէ, քանի որ թվային համաձայնությունը գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցման գործառնությի արդյունք է, իսկ հարաբերական դերանվան հոլովը՝ հարաբերական դերանվան կատարած պաշտոնի: Թեև հնարավոր են հոլովի կարգով համընկնումներ, սակայն դա համաձայնության հետևանք չէ: Օրինակ՝ *Եկան այն մարդիկ, որոնք կառուցել էին կամուրջը* նախադասության մեջ *մարդիկ* և *որոնք* բառաձևերի հոգնակի թիվը համաձայնության հետևանք է, իսկ ուղղական հոլովով դրված լինելն այն բանի հետևանք է, որ երկուսն էլ կատարում են ենթակայի պաշտոն: Դա ապացուցվում է նրանով, որ *մարդիկ* բառաձևի՝ եզակի լինելու դեպքում *որոնք*-ը նույնպես եզակի կդրվի՝ *Եկավ այն մարդը, որը կառուցել էր կամուրջը*: Մինչդեռ *մարդիկ* բառաձևը ուղղական հոլովով թողնելով՝ *որոնք*-ի հոլովը կարող ենք փոփոխել, եթե երկրորդականի մեջ *որոնք*-ը գործածենք մեկ այլ այնպիսի պաշտոնով, որում պետք է դրվի ուրիշ հոլովով, ինչպես՝ *Եկան այն մարդիկ, որոնցով հպարտանում էին բոլորը*: Ինչպես տեսնում ենք, թվային համաձայնությունը պահպանվում է, իսկ հոլովականը՝ ոչ:

Ինչպես նշվել է, կապակցվող եզրերի միջև հնարավոր է թվային համաձայնության երեք ձև: Տարբեր պատճառներով հնարավոր են նաև անհամաձայնության դեպքեր, որոնց կանդրադառնանք համաձայնությունը քննելուց հետո:

Քերականական թվով-քերականական թվով համաձայնության դեպքում կապակցվող եզրերը դրվում են քերականական նույն թվով՝ երկուսն էլ եզակի կամ երկուսն էլ հոգնակի: Օրինակ՝ *Նա բերել էր այն գրքերը, որոնք պետք է կարդայինք*: Եկել էին *նրանք, ովքեր* մեզ օգնել էին աշխատանքի ժամանակ: *Նա պիտի լսեր այնպիսի բաներ, ինչքան չէր լսել դեռ ոչ մի անգամ*: *Մեզ անհրաժեշտ են այնպիսի մասնագետներ, ինչպիսիք* նրանք են: *Նա տեսավ այնպիսի բաներ, որպիսիք* ամբողջ կյանքում չէր տեսել: Կային նաև

այնպիսիները, որոնք բերել էին իրենց աշխատանքները: Հաղթողները **նրանք** էին, **որոնք** երկար նախապատրաստվել էին մրցույթին: Ասացին միայն **նրանց** անունները, **որոնք** պետք է մեկնեին: **Նրանք, որոնք** պետք է կատարեին աշխատանքը, եկել էին վաղ առավոտյան: Մենք տեսանք **նրանց, որոնք** պետք է մեզ օգնեին: Երեխաները մոտեցան **նրանց, որոնք** եկել էին հարևան բակից: **Նա, ով** ավարտում էր աշխատանքը, դուրս էր գալիս:

Պետք է նշել, որ *ինչպիսի, որպիսի*, դերանունների հոգնակին տարբերվում է *որ, ով, ինչ* դերանունների հոգնակիից: Եթե *որ, ով, ինչ* դերանունները առարկայանիշ-անձնանիշ են և ունեն թվի կարգ, ապա *ինչպիսի, որպիսի* դերանունները հատկանշանիշ են, և թվի կարգը նրանց ինքնին բնորոշ չէ: Այդ կարգը դրսևորվում է փոխանվանական կիրառության հետևանքով: Մ. Ասատրյանը գրում է. «*Ինչպիսի՞ և որպիսի՞* դերանունները գոյականաբար կարող են կիրառվել հազվադեպ, այն էլ սովորաբար հոգնակի ձևով, որն ուղղականում ունենում է ՆԵԼ կամ Ք մասնիկները՝ *ինչպիսիները/որպիսիները, ինչպիսիք/որպիսիք*: Առաջին ձևերը հոլովվում են *Ի* հոլովմամբ, իսկ վերջին ձևերը չեն հոլովվում»¹: Սակայն, ինչպես երևում է վերը բերված օրինակներից, անկախ թվի կարգի ձևաբանական դրսևորումների զանազանությունից շարահյուսական թվային համաձայնությունն իրականանում է նույն սկզբունքով:

Իմաստային թվով-քերականական թվով համաձայնությունը դրսևորվում է այն դեպքում, երբ գլխավորի մեջ գործածված բառը, որին կապվում է երկրորդականը, քերականորեն դրսևորվող թվի կարգ չունի, սակայն իմաստով արտահայտում է եզակիություն կամ հոգնակիություն: Այդպիսի բառեր են, օրինակ՝ *ոչ մեկը, բոլորը* դերանունները, որոնք չունեն իրար քերականորեն հակադրվող եզակի և հոգնակի ձևեր, սակայն իմաստով դրանցից առաջինը եզակիություն է արտահայտում, երկրորդը՝ հոգնակիություն: Դա դրսևորվում է, օրինակ, ենթակայի պաշտոնում գործածվելիս, որի դեպքում նրանց հետ գործածվում են համապատասխանաբար եզակի և հոգնակի ստորոգյալներ, ինչպես՝ *Ոչ մեկը չեկավ: Բոլորը գնացին*: Նույն ձևով էլ դրսևորվում է հարաբերական դերանունների համաձայնությունը նրանց հետ, ինչպես՝ *Թող ոչ մեկը, ով չի կարող անել դա, իզուր այնտեղ չգնա: Եկել էին բոլորը, ովքեր պետք է մասնակցեին մրցույթին*: Այսինքն՝ եզակիության իմաստ արտահայտող բառերին համաձայնությամբ կապակցվող հարաբերական դերանունները դրվում են քերականական եզակի թվով, հոգնակիության իմաստ արտահայտող բառերին համաձայնությամբ կապակցվող դերանունները՝ քերականական հոգնակի թվով: Գոյականներից իմաստով, այսինքն՝ ոչ քերականորեն հոգնակիություն են արտահայտում *-ենք, -անք, -ոնք, -ունք* ածանցներով կազմված այն բառերը, որոնք

¹ Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Երևան, 2002, էջ 179:

ցույց են տալիս ընտանիք, խումբ, գերդաստան, ինչպես՝ *Գևորգենք, Հակոբենք* և այլն (*Համաձայն էին միայն Հակոբենք, որոնք տեղյակ չէին վերջին իրադարձություններին*): Քերականորեն անեզական բառերը, որոնք ժամանակակից արևելահայերենում հիմնականում *-եր, -ներ* ձևայիններով կազմված տեղանուններ են (օրինակ՝ *Ալպեր, Կարպատներ*), ըստ էության չեն ընկալվում որպես հոգնակի, և նրանց համաձայնությամբ կապակցվող հարաբերական դերանունները դրվում են եզակի, օրինակ՝ *Հեռվում երևում էր միայն Ալպերը, որի գագաթները անհետանում էին մշուշում*: *Շամիրամի կախովի այգիները, որը համարվում է աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը, չի պահպանվել*:

Իմաստային թվով-քերականական թվով համաձայնությունը չի դրսևորվում հավաքական գոյականների և հարաբերական դերանունների կապակցման դեպքում, ինչպես՝ *Հրապարակում կանգնած էր բազմությունը, որը սպասում էր մի նոր լուրի*: Այս իրողությունը միանգամայն հասկանալի ու բացատրելի է: Հավաքականների մի մասը ունի թվի քերականական կարգ, ինչպես՝ *ժողովուրդ-ժողովուրդներ, գորք-գորքեր* և այլն, ուստի նրանց եզակի ձևերի հետ համաձայնությամբ կապակցվող միավորները դրվում են եզակի, իսկ հոգնակի ձևերի հետ՝ հոգնակի: Եվ նույնիսկ բուն հավաքականները, որոնք հոգնակի թիվ չունեն, քերականորեն գիտակցվում են որպես եզակի ձևեր: Սա ցայտուն դրսևորվում է *հավաքական գոյական ենթակա-եզակի ստորոգյալ* կապակցության դեպքում (օրինակ՝ *Ճողովուրդը սպասում էր*): Թեև բակառությամբ հնարավոր է նաև հոգնակի ստորոգյալ, բայց դա համարվում է շեղում:

Պետք է ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ թվային համաձայնությունը իրականանում է ոչ միայն հարաբերական դերանվան և այն բառի միջև, որին լրացնում ու կապակցվում է երկրորդականը, այլև այդ բառի լրացման ու հարաբերական դերանվան միջև, ինչպես՝ *Անցավ մի քանի ընթացք, որոնք ժամեր թվացին*: Այս դեպքում ևս դրսևորվում է *իմաստային թվով-քերականական թվով* համաձայնությունը, որը, սակայն, դրսևորվել է հոգնակիության իմաստ ունեցող *մի քանի* դերանվան և *որ* հարաբերականի միջև, այլ ոչ թե եզակի թվով դրված *ընթացք* գոյականի և դերանվան (իհարկե հնարավոր է նաև *ընթացքներ* ձևի կիրառումը՝ *Անցան մի քանի ընթացքներ, որոնք ժամեր թվացին*): Սա ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ համաձայնության ընդգրկման սահմանները ավելի լայն են, քան սովորաբար ներկայացվում է:

Բազմակիության-քերականական թվով համաձայնությունը դրսևորվում է տարբեր կապակցություններում, ինչպես նաև բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում: Ինչպես *ենթակա-ստորոգյալ, բացահայտիչ-բացահայտյալ* կապակցությունների դեպքում բազմակիությունը իմաստային առումով համարժեք է դառնում հոգնակիությանը, այնպես էլ բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում գերադաս

նախադասության մեջ եղած բազմակի միավորների և հարաբերականի միջև դրսևորվում է հետևյալ կապը. հարաբերականը հոգնակի թվով է դրվում՝ համաձայնելով բազմակիությանը, ինչպես՝ *Եկել էին նկարիչը, քանդակագործը, ճարտարապետը, որոնք պետք է կատարեին աշխատանքը*:

Արևմտահայերենում բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում եղած համաձայնությունը հիմնական հատկանիշներով չի տարբերվում արևելահայերենում գործող օրինաչափություններից: Օրինակ՝ *Ծանոթ ձայներ էին անոնք շատ ծանոթ մարդերու, որոնք բարձրաձայն կխոսեին Սասնո բարբառով* (Ս. Միմոնյան)¹: *Անոնց աթոռներ հրավցուցին Պելավա Հակոյին երկու տղաքր, որոնք եկեր էին միասին* (Ս. Միմոնյան, 488): *...վեճին մասնակից կնե Եպրաքսե հանրմին ձագուկները, որոնք պարզ բանվորներ են կաշմբուռն* (Շ. Շահնուր, 33): *Մեկը այն գաղափարներեն, որոնք մարդս կմղեն հանկարծական գործունեության* (Շ. Շահնուր, 41): *Այս անարգանքեն զատ շենքին կոթնցուցած էին նաև երկու հսկա գերաններ, որոնք սալաքարերեն մեկնելով՝ կնետվեին մինչև երկրորդ հարկ* (Շ. Շահնուր, 45): *Սսկե հետո պատահեցան մեկ քանին այն սովորական դեպքերուն, որոնք անխուսափելիորեն կհալածեն գաղթականները* (Շ. Շահնուր, 48): *Ինձի կյովեր թե ճամփուն երկայնքին որաներու դեզեր էին անոնք, որոնք շարժվելով, շարժվելով կառաջանային շարունակ* (Հ. Մնձուրի, 70):

Այսպիսով՝ բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցման դեպքում ժամանակակից արևելահայերենում և արևմտահայերենում դրսևորվում է թվային համաձայնության երեք ենթատեսակ՝ *քերականական թվով-քերականական թվով, իմաստային թվով-քերականական թվով, բազմակիությանը-քերականական թվով*: Սա ընդհանուր օրինաչափությունն է, սակայն հնարավոր են նաև անհամաձայնության դեպքեր: Թվային անհամաձայնություն լինում է տարբեր պատճառներով:

Ինչպես նշվել է, բարդ նախադասության բաղադրիչների կապակցության ժամանակ համաձայնությունը դրսևորվում է այն դեպքում, երբ դրանք կապակցվում են *որ, ով, ինչ, ինչպիսի, որպիսի* հարաբերականներով: Սրանցից *ով* դերանունը հոգնակի ձև ունի միայն ուղղական հոլովում՝ *ովքեր*, իսկ մյուս հոլովների համար գործածվում են եզակիի հոլովաձևերը՝ *ում-ումից-ումով*: Հետևաբար այն բոլոր դեպքերում, երբ բաղադրիչ նախադասությունները կապակցվում են *ով* դերանվան թեք հոլովաձևերով, հարաբերյալի միջոցով համաձայնություն չի կարող դրսևորվել, ինչպես՝ *Նրան, ումից հեռացել էր, հանդիպեց տարիներ անց: Նրանց, ումից հեռացել էր, հանդիպեց տարիներ անց*: Բերված նախադասություններից առաջինում *նրան* և *ումից* բառաձևերը գործածվել են եզակի թվով, իսկ երկրորդում՝ *նրանց* բառաձևը՝

¹ Միյուրքահայ պատմվածք (կազմող Գ. Սևան, առաջաբանը և կենսագրականները՝ Վ. Գաբրիելյանի), հ. 1, Երևան, 1984, էջ 488: Այստեղի մյուս օրինակները ևս բերված են նույն գրքից, ուստի փակագծերում նշվում են միայն հեղինակների անունները և էջերը:

հոգնակի, իսկ *ուսից* բառաձևը՝ միակ՝ եզակի ձևով: Թվում է, թե առաջին դեպքում առկա է համաձայնությամբ կապակցում, սակայն այդ դեպքում էլ պետք է կապակցությունը անհամաձայնությամբ համարել, քանի որ գործածվել է *ուսից* միակ հնարավոր ձևը, այլ ոչ թե համաձայնության պահանջով այն դրվել է եզակի թվով: Սա զուտ քերականական պատճառով դրսևորվող անհամաձայնություն է, քանի որ առաջ է գալիս քերականական անհրաժեշտ ձևի բացակայությունից: Արևմտահայերենում *ույլ*-ը ընդհանրապես չի հոլովվում, և գործածվում են *որ*-ի ձևերը: Հետևաբար վերն ասվածները վերաբերում են միայն արևելահայերենին:

Ույ դերանունը երբեմն անհամաձայն է մնում նաև ուղղական հոլովով գործածված ինելու դեպքում, երբ ունի թե՛ եզակի, թե՛ հոգնակի ձևեր: *Ույ* դերանվան՝ ուղիղ ձևում անհամաձայն մնալու պատճառներից մեկը Գ. Գարեգինյանը համարում է թարգմանության ազդեցության գործոնը: Նա գրում է. «Ռուսերենի ազդեցությամբ, ուր *кто* դերանունը հոգնակի ձև չունի, և երկրորդականի ստորոգյալը այդ պատճառով գերազանցապես եզակի է դրվում, թարգմանական գրականության մեջ հանդիպում են *ույլքեր* դերանվան փոխարեն *ույ* դերանվան գործածության դեպքեր, ինչպես՝ Նա կրում էր նույն համազգեստը, ինչ *նրանք*, *ույ* պաշտպանում էր Լենինգրադը»¹:

Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման դեպքում թվային անհամաձայնություն ամենից շատ դրսևորվում է *որ* հարաբերականով կապակցվելու դեպքում: Դրա պատճառները մի քանիսն են: Ստ. Պալասանյանը գրաբարի վերաբերյալ նշում է. «Պատահում է որ ուղղական հոլովով *որ* յարաբերականը ամեն հոլովի տեղ է բռնում, և շատ տեղ իրանից յետոյ պետք եղած հոլովով մի դերանուն է աւելացվում. այս ձևը աշխարհաբարի մեջ էլ է երևում»²: Այսինքն՝ աշխարհաբարում առկա այս իրողությունը պատմական հիմքեր ունի: Գ. Ջահուկյանը *որ* հարաբերականով կապակցվող որոշիչ երկրորդականներում *որ* դերանվան կիրառությունները քննելիս գրում է. «...որպես երկրորդական նախադասության ենթակա հանդես գալիս այն կարող է չհամաձայնել («Այն մարդիկ, որ...»), ընդ որում հոգնակի հարաբերյալի դեպքում երկրորդական նախադասության ստորոգյալը համաձայնում է ոչ թե հարաբերականի, այլ հարաբերյալի հետ, այսինքն՝ դրվում է հոգնակի թվով. հմմտ. «Այն մարդիկ, որ սովորել են շողոքորթել...»³: Սակայն պետք է նշել, որ թվային անհամաձայնություն կարող է դրսևորվել նաև այն դեպքերում, երբ *որ*-ը ենթակա չէ, ինչպես՝ *Մենք կարդացինք այն գրքերը, որ բերել էր ընկերս*: Այս նախադասության մեջ *որ*-ը ուղիղ խնդիր է, սակայն

¹ Գարեգինյան Գ., նշվ. աշխ., էջ 145:

² Պալասանյան Ստ., Գործնական քերականություն հայերեն լեզուի, հատոր երկրորդ, Համաձայնություն, Թիֆլիզ, 1869, էջ 80:

³ Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 542:

դարձյալ անհամաձայնություն է դրսևորել: Այսինքն՝ պետք է մի փոքր հավելում կատարել Գ. Ջահուկյանի բնորոշմանը. *որ*-ը անհամաձայնություն կարող է դրսևորել, երբ գործածվում է ուղիղ՝ ուղղական-հայցականի ձևով: Մրա պատճառները պայմանավորվում են լեզվի պատմական զարգացմամբ: *Որ* հարաբերականի իմաստային և քերականական զարգացումների վերաբերյալ ուշագրավ դիտարկում է կատարում Ն. Պառնասյանը. «...երբ գրաբարյան հայցական հոլովի *զ* նախդիրը կորչում է, և անհամաձայնության ժամանակ հարաբերականը հայցական հոլովով օգտագործելու դեպքում կորցնում է նաև իրեն հատուկ հոլովական ձևը, նրա և որոշյալի կապը թուլանում է. միաժամանակ մթագնվում է նրա՝ երկրորդական նախադասության անդամ լինելու գաղափարը: Դրա հետևանքը լինում է այն, որ *որ*-ը այդ դեպքում դադարում է հարաբերական դերանուն գիտակցվելուց և վեր է ածվում շաղկապի, ծառայելով միայն որպես գլխավոր և երկրորդական նախադասությունները կապակցելու ձևական միջոց: Այս երևույթը մեծ տարածում է գտնում աշխարհաբարում, որտեղ արդեն որոշ տիպի որոշիչ երկրորդական նախադասություններ միանում են գլխավորին միայն *որ* շաղկապով»¹: Հիշենք, որ այս իրողությունը հատկապես ընդլայնվում է միջին հայերենում: Երևույթի նախահիմքերն ու պատճառները հիմնավոր ներկայացված են, սակայն հարցի առնչությամբ կա մի տարակարծություն. արդյո՞ք մի շարք դեպքերում *որ*-ը պետք է համարել շաղկապ: Ն. Պառնասյանը բերում է այսպիսի օրինակներ. *Դրանք հավանաբար համհարզներ էին, որ կարգադրություններ էին անում այս ու այն գործիմբի մասին*: Դրանից հետո գրում է. «Այստեղ *որ*-ը հարաբերական դերանուն չէ, այդ երևում է նրանից, որ այն իր թվով չի համաձայնում նաև երկրորդական նախադասության ստորոգյալի հետ»²: Պետք է նշենք, որ մեր կարծիքով այստեղ *որ*-ը հարաբերական դերանուն է. այն պարզապես թվով չի համաձայնել *համհարզներ* գոյականին: Իսկ ստորոգյալը այդ դեպքում համաձայնում է գլխավորում գործածված այն բառին (կամ նրա լրացմանը), որին լրացնում է երկրորդականը: Վերջինիս մասին, ինչպես տեսանք վերև արված մեջբերման մեջ, նշում է Գ. Ջահուկյանը: Խոսելով *որ* հարաբերականի անհամաձայն մնալու մասին՝ Գ. Գարեգինյանը բերում է այսպիսի օրինակ՝ *Ինձ ոչ թե սենյակն էր հետաքրքրում, այլ նրանք, որ պիտի դուրս գային*, և իրավացիորեն նշում է. «Ժամանակակից հայերենում այս երևույթը տարածված է ոչ միայն ենթակա, այլև ստորոգելիական վերադիր, հատկացուցիչ, որոշիչ, խնդիր երկրորդականների կապակցության դեպքում: Այս կառույցում ուղղական հոլովով դրված և ենթակայի պաշտոն վարող *որ* դերանունը *որ* շաղկապից տարբերվում է նրանով, որ այն կարելի է փոխարինել *որոնք* դերանվամբ: Շաղկապ

¹ Պառնասյան Ն., նշվ. աշխ., էջ 44:

² Նույն տեղում, էջ 47:

համարելու դեպքում պետք է ընդունենք, որ երկրորդականը կամ *անենթակա* է, կամ էլ զեղչված ենթակայով (*նրանք*) նախադասություն: Սակայն այդ «զեղչված» ենթական ոչ մի կերպ հնարավոր չէ վերականգնել..., քանի որ *որ* բառը, դերանուն լինելով, արդեն իսկ զբաղեցրել է ենթակայի շարահյուսական դիրքը¹: Կարծում ենք՝ հիմնավորումը միանգամայն ճիշտ է: Բերենք ևս մեկ փաստարկ, որ նման կիրառություններում *որ*-ը պետք է դերանուն համարել: Եթե հենց բերված օրինակները փոփոխենք այնպես, որ կարիք լինի *որ*-ը դնելու թեք հոլովներով, անմիջապես կփոխվի նաև նրա թիվը, քանի որ, ինչպես նշվել է, անհամաձայնությունը դրսևորվում է միայն ուղիղ ձևերում: Այսպես՝ *Պրանք հավանաբար համհարզներ էին, որոնցից կարգադրություններ էինք ակնկալում այս ու այն գործիմբի մասին* նախադասության մեջ *որ*-ը դրվել է հոգնակիով, այսինքն՝ առկա է թվային համաձայնություն: Ի դեպ, *որ* դերանունը ենթակայի կամ ուղիղ խնդրի պաշտոններում եզակի թվով հաճախ գործածում են նաև առանց հոդի, երբ հոդի կարիքը կա, ինչպես՝ *Այն մարդը, որ(ը) եկել էր*:

Այս ամենի հիման վրա կարելի է ասել, որ այն դեպքերում, երբ երկրորդական նախադասությունը կապակցվում է *որ* հարաբերականով, որը դրվում է ուղղական-հայցականի ձևով, *որ*-ը կարող է թվով անհամաձայն մնալ, թեև դա խրախուսելի ձև չէ: Այդպիսի կիրառությունները թերևս արդարացված են չափածո խոսքում, որտեղ կան տաղաչափությանն առնչվող գործոններ:

Արևմտահայերենում էլ հաճախ են հանդիպում անհամաձայնության դեպքեր, ինչպես՝ *...ամբողջ հոգիովս կատեն այդ գագանները, որ ձեզ ջարդեցին* (Շ. Շահնուր, 47): *Պատահեր, որ անձրև չգար, երաշտ ըլլար, դարձյալ հյուսիսի հովերը, որ շարունակ կփչեին, չէին թողուր, որ հասկերը կանխահասորեն չորնային, կաճեցնեին, կլեցնեին զանոնք* (Հ. Մնձուրի, 69):

Որ հարաբերականը անհամաձայն է մնում նաև այն դեպքում, երբ նրանով կապակցվող նախադասությունը տրամաբանական շեշտ արտահայտելու գործառույթ ունի: Շարադասությանն առնչվող հարցեր քննելիս Մ. Աբեղյանը գրում է. «Մի առանձին տեսակի շրջում կազմվում է ավելադրությամբ, որով արտահայտությունն ավելի է գորանում: Գլխավոր շեշտն ունեցող բառերը, ենթակա, խնդիր թե պարագա, դրվելով խոսքի սկզբում՝ իրանց ետևից առնում են *եմ* բայը համապատասխան դեմքով և կազմում մի ավելադրական խոսք, որի ետևից ընկնում է բուն խոսքը *որ* հարաբերականով կապված և սովորաբար կանոնավոր շարադասությամբ: Օրինակ՝ փոխանակ ասելու՝ Ես եմ համբերում, ասվում է՝ Ես եմ որ համբերում եմ²: Ահա նման դեպքերում *որ*-ը մեծ մասամբ դրվում է եզակի թվով և պարտադիր առանց *ը* հոդի, ինչպես՝ *Այդ մարդիկ են, որ օգնել են քեզ*: Նման կառույցները Ա. Այտընյանը

¹ Գարեգինյան Գ., նշվ. աշխ., էջ 148:

² Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 538:

Ֆրանսերենի ազդեցության հետևանք է համարում. «Բայց գաղղիացի օտար ոճ է ատոր շատ յաճախութիւնը, մանավանդ հոլոված անուանց առջեւ. ինչպէս այս խօսքին մէջ. Ռուսիոյ *սահմաններէն է որ* այդ փախստականները հոս հասան»¹:

Հնարավոր է, որ երկրորդական նախադասության մէջ կրկնվի գլխավորում եղած այն բառը, որին լրացնում է երկրորդականը: Այդ դեպքում թվային համաձայնություն լինում է կրկնվող բառերի միջև, իսկ *որ*-ը մնում է անհամաձայն, ինչպէս՝ *Նա պահարանը լցրեց այն գրքերով, որ գրքերով պետք է պարապէր*: Եթէ երկրորդականում չկրկնվեր *գրքերով* բառաձևը, ապա պետք է *որ* հարաբերականը հոգնակի թվով դրվեր՝ *Նա պահարանը լցրեց այն գրքերով, որոնցով պետք է պարապէր*:

Երբ գերադաս նախադասության մէջ գործածված բառը, որին լրացնում է երկրորդականը, ունի մեկից բարձր թվական լրացում և դրված է եզակի թվով, ապա հարաբերականը դրվում է հոգնակի թվով, ինչպէս *Եկան չորս մարդ, որոնք բերել էին անհրաժեշտ գործիքները*:

Երկրորդական նախադասությունների կապակցման դեպքում համաձայնություն չի գործում նաև այն դեպքում, երբ երկրորդականը լրացնում է գերադասի մէջ եղած կոչականին, ինչպէս՝ *Աշակերտնէ՛ր և ծնողնէ՛ր, որ նստած եք առաջին շարքում, բարձրացե՛ք երկրորդ հարկ*: Այս իրողությունը նույնն է գրաբարում, միջին հայերէնում և արևմտահայերէնում:

Հնարավոր է նաև, որ եզակի թվով բառին լրացնող երկրորդականը կապակցվի հոգնակի հարաբերյալով: Դա լինում է այն դեպքերում, երբ այդ բառը հավաքական նշանակություն ունի: Այսինքն՝ գործում է բակառություն², օրինակ՝ *Եկել էր աշակերտների մի մասը, որոնք բերել էին իրենց աշխատանքները*:

Ինչպէս տեսնում ենք, անհամաձայնությունը դրսևորվում է տարբեր դեպքերում և տարբեր պատճառներով:

Այսպիսով՝ գրաբարում, միջին հայերէնում, արևելահայերէնում և արևմտահայերէնում բարդ նախադասության բաղադրիչների կապակցության ժամանակ հարաբերական դերանվան և հարաբերյալի կամ այն բառի միջև, որին լրացնում է երկրորդականը, գործում է թվային համաձայնություն: Այդ համաձայնությունը գործում է *ենթակա, ստորոգելի, գոյականական անդամի լրացում, բայական անդամի խնդիր լրացում* երկրորդականների կապակցման դեպքում: Հաճախ հանդիպում են անհամաձայնության դեպքեր, որոնց պատճառները տարբեր են:

¹ **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզվի, Երևան, 1987, էջ 197:

² Տե՛ս **Վերդյան Բ.**, Բարդ ստորադասական նախադասության շարահյուսություն, Երևան, 1970, էջ 300-301:

Арташес Саркисян – *Согласование в числе в сложных предложениях в армянском языке*

В армянском языке при соединении компонентов сложноподчиненных предложений может проявляться согласование в числе. Оно проявляется между местоимениями, соединяющими компоненты сложноподчиненного предложения, и теми словами главного предложения, которые дополняет второстепенное предложение. Но согласование возможно и между местоимением и дополнением этого слова. Согласование в числе между компонентами сложноподчиненного предложения проявляется в древнеармянском, среднеармянском, восточно- и западноармянских языках.

Artashes Sarkisyan – *Numerical Agreement in Composite Sentences in Armenian*

In Armenian the clauses of composite sentences may agree in number. It is mainly displayed between the connecting pronoun and the word in the main clause which is modified by the secondary clause. But the agreement is also possible between the connecting pronoun and the modifier of that word. Numerical agreement between the clauses of composite sentences is typical to Grabar, Middle Armenian, Eastern Armenian and Western Armenian.

ԱՐԴՅՈ՞Ք ՍՔՈԼԱՍՏԻԿԱԿԱՆ ԷՐ XIV ԴԱՐԻ
ՀԱՅ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր – սքոլաստիկա, սքոլաստիկական մեթոդ, համեմատական մեթոդ, «քրիստոնեացված» Արիստոտել, միջնադարյան հայ փիլիսոփայություն, Տաթևի դպրոց, բնական իմացություն, շնորհական իմացություն

Միջնադարյան հայ, մասնավորապես XIV դարի փիլիսոփայության գնահատման հետ կապված կարևոր խնդիրներից է այն, թե այդ փիլիսոփայությունը եղե՞լ է սքոլաստիկական, դրանում Արիստոտելի փիլիսոփայությունը «քրիստոնեացվե՞լ» է, թե՞ ոչ¹: Խորհրդային փիլիսոփայապատմական գրականության մեջ արմատավորված էր դեռևս Վերածննդի ու լուսավորական դարաշրջանից եկող խիստ բացասական դիրքորոշում և արհամարհական վերաբերմունք ընդհանրապես կրոնական և մասնավորապես միջնադարյան (հայրաբանական ու սքոլաստիկական) փիլիսոփայության նկատմամբ: Դա դրսևորվում էր նաև այն բանում, որ ըստ էության չէր խրախուսվում միջնադարյան հոգևոր մշակույթի ու փիլիսոփայության ուսումնասիրությունը: Անհավատալի է, բայց փաստ, որ խորհրդային շրջանում միջնադարյան արևմտաեվրոպական փիլիսոփայության վերաբերյալ առաջին ամբողջական ուսումնական ձեռնարկը լույս է տեսել 1979 թվականին²: Խորհրդային փիլիսոփայական գրականության մեջ սքոլաստիկա, սքոլաստիկական փիլիսոփայություն ասելով հասկացվում էր տերտերականություն, խավարամտություն, մտքի անպտղություն ու ամլություն, «կենդանի ոգու» բացակա-

¹ Հնդվածում սքոլաստիկայի հարցը դիտարկվում է XIV դարի հայ փիլիսոփայության մեջ, որովհետև ըստ իս այս դարում է սքոլաստիկան որպես մտակեցվածք, փիլիսոփայման կերպ ու իմացության մեթոդ ամբողջական ու լիարժեք ձևով դրսևորվել նախ Հայաստանում և հարակից երկրներում ստեղծագործած լատին (կաթոլիկ) քարոզիչների, այնուհետև հայ մտածողների ուսմունքներում: Նախորդ դարերի հայ փիլիսոփայությունը և աստվածաբանությունը որոշ իմաստով զարգացել են իրարից անկախ, չեն «խառնվել» միմյանց գործերին, ուստի սքոլաստիկական մտածելակերպը, փիլիսոփայության և աստվածաբանության համադրման, փիլիսոփայության հիման վրա աստվածաբանական համակարգ ստեղծելու փորձեր գրեթե չեն եղել կամ թույլ են դրսևորվել: Եթե հայ հետազոտողները լատին մտածողների փիլիսոփայությունը միանշանակ գնահատում են որպես սքոլաստիկական, ապա Տաթևի դպրոցի մտածողների նկատմամբ անում են վերապահումներ՝ նրանց փիլիսոփայությունը չհամարելով սքոլաստիկական, ավելին, կարծելով, որ դա ուղղված էր լատին մտածողների սքոլաստիկական փիլիսոփայության դեմ:

² Տե՛ս **Соколов В. В.**, Средневековая философия, Учеб. пособие для филос. фак. и отделени ун-тов, М., 1979:

յություն, ձևապաշտություն, հեղինակագործություն, դոգմատիզմ և այլն: Բնականաբար, այսպիսի պայմաններում, երբ սքոլաստիկական փիլիսոփայությունը ներկայացվում էր խիստ բացասական գույներով, հայ մշակույթի ու փիլիսոփայության պատմաբանները հնարավորինս պիտի խուսափեին միջնադարյան հայ փիլիսոփայությունը սքոլաստիկական որակելու մտքից: Բացի դրանից, միջնադարը ուսումնասիրելու իրենց ընտրությունը արդարացնելու համար նրանք ստիպված էին «առաջադիմական» ու «մատերիալիստական» միտումներ փնտրել ու գտնել միջնադարյան հայ փիլիսոփաների ուսմունքներում: Օրինակ, Վ. Կ. Չալոյանը իր «Հայոց փիլիսոփայության պատմություն» աշխատությունում միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ առանձնացնում էր «աշխատավոր ժողովրդի փիլիսոփայություն», «շահագործող դասակարգերի առաջադեմ խավերի փիլիսոփայություն» ենթազույգումները, որոնցում պարզապես ներկայացնում էր այդ շրջանի (X-XV դարերի) անխտիր բոլոր փիլիսոփաներին¹: Իսկ Գ. Գրիգորյանը առանձին քննարկել է այն հարցը, թե «Հայ միջնադարում ինչպես է արտահայտվել մատերիալիզմը»²: Սրանք հետազոտական կաղապարներ էին, որոնց շրջանակներում հայ փիլիսոփա-պատմաբանները փորձում էին անաչառորեն լուսաբանել հայ փիլիսոփայական մտքի զարգացման ընթացքն ու յուրահատկությունները: Թեև հայ փիլիսոփա-պատմաբանների կիրառած մեթոդաբանությունը նույնն էր, այդուհանդերձ միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ սքոլաստիկայի լինել-չլինելու հարցում նրանց միջև կային տարածայնություններ: Վ. Չալոյանը ոչ միայն մերժում էր միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ սքոլաստիկայի գոյությունը, այլև կարծում, որ հայ մտածողները (Հովհան Ռոտունեցին, Գրիգոր Տաթևացին) պայքարում էին արևմտյան սքոլաստիկայի ներկայացուցիչների դեմ: Գնահատելով Տաթևի դպրոցի փիլիսոփայությունը՝ նա նշում է, որ «Տաթևի դպրոցի ծաղկմանը նպաստեց նաև Արևմուտքի սխոլաստիկայի դեմ մղված պայքարը, սխոլաստիկա, որը Հայաստանում տարածվել էր այսպես կոչված ունիտորների՝ հռոմեական և հայկական եկեղեցիների միավորման այդ կողմնակիցների շարժման համեմատ»³: Տաթևի դպրոցի ներկայացուցիչները պայքար էին մղում «Արևմուտքի սխոլաստիկայի» դեմ, Հայաստանում և հարակից երկրներում բնավորված կաթոլիկադավան մտածողների դեմ, ընդ որում, այդ պայքարը չէր սահմանափակվում կրոնի շրջանակներով, քանի որ տաթևացիները օգտվում էին նաև ոչ կրոնական բնույթի փիլիսոփայական նյու-

¹ Չալոյան Վ. Կ., Հայոց փիլիսոփայության պատմություն, Երևան, 1975, էջ 316-418: Այս գիրքը սկզբնապես լույս է տեսել ռուսերեն՝ տե՛ս Чалоян В. К., История армянской философии, Ереван, 1959:

² Գրիգորյան Գ. Հ., Միջնադարյան հայ փիլիսոփայության հանգուցային հարցերի շուրջ, Երևան, 1987, էջ 40-46:

³ Չալոյան Վ. Կ., Հայոց փիլիսոփայության պատմություն, էջ 392:

թից՝ անտիկ աշխարհի դասական և հայկական ուշ հելլենիզմի փիլիսոփայությունից: Ըստ Վ. Չալոյանի՝ Տաթևի դպրոցի ներկայացուցիչները դոմինիկյան միաբանության դեմ մղած պայքարում հանդես էին գալիս իբրև հայ եկեղեցու ջատագովներ, նրա դոգմաների պաշտպաններ և արևմտյան սքոլաստիկայի դեմ նրանց պայքարը առաջադիմական էր, քանի որ «նրանք պաշտպանում էին Հայաստանի ազգային շահերը, նրա մշակույթի ինքնակայությունը և ինքնուրույնությունը»: Վ. Չալոյանը չի նկատում իր մտքերում առկա հակասությունները. ա) եթե հայ մտածողները հայոց եկեղեցու ջատագովներ ու դրա դոգմաների հիմնավորողներ ու պաշտպաններ էին, ապա նրանք պետք է առնվազն լինեին սքոլաստիկական փիլիսոփայության ներկայացուցիչներ, սքոլաստիկական մտածելակերպի կրողներ, որովհետև սքոլաստիկական հենց բանականության միջոցով Ս. Գրքի ճշմարտությունների և եկեղեցական վարդապետության սկզբունքների հիմնավորումն է: Բ) Եթե հայ մտածողների պայքարը միաբանականների դեմ «առաջադիմական բնույթ ուներ», ապա ազգային-եկեղեցական «շահերի պաշտպանությունը» որևէ կապ չունի սխոլաստիկական կամ այլ կարգի մտածելակերպի հետ: Ինչպես սքոլաստիկական փիլիսոփայությունը չէր խանգարում լատին մտածողներին պաշտպանելու կաթոլիկ, այնպես էլ հայ մտածողներին՝ հայոց եկեղեցու շահերը:

Ավելի լայն համատեքստում հակառակ տեսակետն էր պաշտպանում Հ. Գաբրիելյանը, ըստ որի՝ «Լուսավորչական եկեղեցու ջատագովները (նկատի ունի նաև Վ. Չալոյանին ու Ս. Արևշատյանին – Ս. Զ.) աշխատել և աշխատում են ապացուցել, թե իբր և՛ Որոտնեցին, և՛ Տաթևացին, լինելով պապականության հակառակորդներ, չեն ազդվել Արևմտյան Եվրոպայի սխոլաստիկայից և, մանավանդ, կաթոլիկության ներկայացուցիչներից: Պատմական փաստերը բոլորովին այլ բան են ասում»²: Հ. Գաբրիելյանը ցույց է տալիս, որ տաթևցիները օգտվել են Հայաստանում և հարևան երկրներում բնավորված և կրթալուսավորական ու գիտական գործունեություն ծավալած կաթոլիկ առաքյալների աշխատություններից: Նա կասկած չունի, որ հայ մտածողների փիլիսոփայությունը եղել է սքոլաստիկական: Օրինակ, վերլուծելով ու գնահատելով Որոտնեցու հայացքները, Հ. Գաբրիելյանը անում է հետևյալ եզրակացությունը. «Որոտնեցին ընդհանուր աշխարհայեցողության հարցերում դեռ միջնադարյան մակարդակից վեր չի բարձրանում և սխոլաստիկական նրա աստվածաբանության հիմնական մեթոդն է»³: Այս հարցում թեև Հ. Գաբրիելյանը քննադատում է նաև Ս. Արևշատյանին⁴, սակայն վերջինս չի ժխտել, օրինակ, Հովհան

¹ Նույն տեղում, էջ 393:

² Գաբրիելյան Հ. Գ., Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Երևան, 1958, էջ 159:

³ Նույն տեղում, էջ 164:

⁴ Հ. Գաբրիելյանի քննադատությունը թերևս վերաբերում է այն բանին, որ Ս. Արևշատյանը փորձում է հիմնավորել այն միտքը, թե տաթևցիները չեն ազդվել Հայաստանում և հարակից երկրներում բնավորված կաթոլիկ սքոլաստիկ մտածողներից:

Որոտնեցու¹ և Գրիգոր Տաթևացու փիլիսոփայության սքոլաստիկ բնույթը², իսկ ավելի ուշ շրջանի աշխատություններում գործածել է նաև «ուշ հայկական սքոլաստիկա» արտահայտությունը. «Արիստոտելի ուսմունքը եկեղեցադոգմատիկական, դավանաբանական կարիքներին հարմարեցնելու գործում իրենց կաթոլիկ ընդդիմախոսներին չէին զիջում նաև ուշ հայկական սքոլաստիկայի ներկայացուցիչները: Աշխարհայացքային բնույթի առանցքային հարցերում նրանց հայացքներում երևում են, ինչպես վկայում են մեզ հասած տեքստերը, ապշեցուցիչ նմանություն և միաբանություն»³:

Իսկապես, ինչպե՞ս կարող է միջնադարյան, հատկապես հասուն շրջանի փիլիսոփայությունը չլիներ սքոլաստիկական, նամանավանդ եթե միջնադարում, կրոնական գաղափարախոսության միահեծան իշխանության պայմաններում փիլիսոփայման օրինական այլ ձև գրեթե բացառվում էր, եթե սքոլաստիկական միջնադարյան մտքի զարգացման օրինաչափ փուլն էր, եթե սքոլաստիկական ինքնին փիլիսոփայության հեղինակության բարձրացման վկայություններից էր և այլն: Միջնադարում սքոլաստիկայի ի հայտ գալը առաջադիմական երևույթ էր, աստվածաբանության և փիլիսոփայության փոխհարաբերության նոր մակարդակ, փիլիսոփայության կարգավիճակի օրինականացման, Ս. Գրքի ճշմարտությունների մեկնաբանության ռացիոնալ ձև, իմացության սուբյեկտի գիտակցության մեջ յուրահատուկ հեղաշրջման սկիզբ: Եթե բանականության միջոցով հնարավոր է հիմնավորել Հայտնության ճշմարտությունները, ստեղծել «բանականացված հավատք», ապա նշանակում է, որ բանականությունը արժեքավոր գործիք է աստվածիմացության գործում, նշանակում է մարդը իր կարողություններով ի վիճակի է հասկանալու Հայտնության ճշմարտությունները: Այլ խոսքով՝ սքոլաստիկական բարձրացում է փիլիսոփայության հեղինակությունը, «կախվածությունների մշակույթի» (միջնադարում ամեն ինչ կախված էր եկեղեցուց, հոգևոր ոլորտում՝ աստվածաբանությունից) համատեքստում օրինականացում նրա կարգավիճակն ու հավակնությունները: Իսպանացի փիլիսոփա Օրտեգա-ի-Գասետի կարծիքով՝ բանականության նմանատիպ արժևորումը փոխակերպում է քրիստոնեական կյանքի կառուցվածքը. «...մարդը, որը ոչ վաղ անցյալում նվաստացված էր, սկսում է ինքնահաստատվել, հավատալ իր սեփական գորություններին: Եվ եթե, մի կողմից, նա կարիք է զգում հավատի միջոցով գերբնական պայծառացման, ապա, մյուս կողմից, հանգում է այն համոզման, որ հավատն իր հերթին կարիք է զգում մարդու կողմից լուսավորման: Հավատքի ներսում արմատա-

¹ «Որոտնեցին, այնուամենայնիվ, չկարողացավ դուրս գալ սխոլաստիկայի շրջանակներից և չփորձեց հակադրել փիլիսոփայությունը աստվածաբանությանը...»: Տե՛ս **Արևշատյան Ս. Ս.**, Հովհան Որոտնեցի // «Հայ մշակույթի նշանավոր գործիչները (V-XVIII դարեր)», Երևան, 1976, էջ 404:

² Տե՛ս **Արևշատյան Ս. Ս.**, *Философские взгляды Григора Татеваци*, Երևան, 1957, с. 110:

³ **Արևշատյան Ս. Ս.**, *К истории философских школ средневековой Армении (14 в.)*, Երևան, 1980, с. 42.

վորվում է մարդկային բանականությունը: Հայտնությունը, Աստծո խոսքը կարիք են զգում այն բանի, որ դառնա աստվածային Բանի մասին մարդկային գիտություն: Այդ գիտությունը սքոլաստիկական աստվածաբանությունն է»¹:

Իրականում ի՞նչ է միջնադարյան սքոլաստիկական փիլիսոփայությունը և ի՞նչ դեր է խաղացել միջնադարյան մշակույթի համակարգում: Առանձնացնենք սքոլաստիկական փիլիսոփայության երեք հիմնական նշանակություն. ա) սքոլաստիկական (դպրոցային) փիլիսոփայությունը եկեղեցու կողմից վերահսկվող համալսարաններում և բարձրագույն դպրոցներում ստեղծված փիլիսոփայություն է: Այս իմաստով հաճախ սքոլաստիկական են համարում առհասարակ միջնադարյան փիլիսոփայությունը, թեև սքոլաստիկայի բուն պատմությունը Եվրոպայում սկսվում է IX դարից: բ) Սքոլաստիկական իմաստասիրման մի եղանակ է, որում բանականությունը, տրամաբանությունը և փիլիսոփայությունը օգտագործվում են՝ հիմնավորելու և համակարգելու Հայտնության ճշմարտությունները, կրոնաաստվածաբանական և դավանաբանական սկզբունքները: Այս իմաստով միջնադարում փիլիսոփայությունը ծառայել է աստվածաբանությանը և համարվել աստվածաբանության աղախիհը: գ) Սքոլաստիկական մի մտածելակերպ է, որը հենվում է հեղինակությունների վրա, իր բնույթով դոգմատիկ է, կտրված իրականությունից, այն անտեսում է փորձի տվյալները, գործառու է վերացական հասկացություններով ու դեդուկտիվ մտահանգումներով, շեշտում բառերի տարբերությունների ու նրբությունների նշանակությունը և այլն: Եթե առաջնորդվենք վերոգրյալ չափանիշներով, ապա XIV դարի հայ, մասնավորապես տաթևցիների փիլիսոփայությունը միանշանակ սքոլաստիկական էր, որովհետև ա) այդ փիլիսոփայությունը ստեղծվել էր եկեղեցուն կից դպրոցում՝ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականների կողմից հիմնադրված ու վերահսկվող կառավարվող Տաթևի համալսարանում, բ) այդ փիլիսոփայությունը օգտագործվում էր՝ հիմնավորելու քրիստոնեական կրոնի և հայոց եկեղեցու վարդապետության սկզբունքները, գ) միջնադարյան հայ մտածողների փիլիսոփայման կերպը, մեկնաբանման ու շարադրման մեթոդը սքոլաստիկական էին, այսինքն՝ հեղինակագոր, դոգմատիկ, գրքային: Նույնիսկ նրանց աշխատությունների բովանդակությունն ու կառուցվածքը համապատասխանում էին եվրոպական փիլիսոփայության մեջ տարածված սքոլաստիկական հանրահայտ «հավաքումներին»: Օրինակ, Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը հանրագիտարանային մի աշխատություն է, որն իր բովանդակությամբ, նյութի ընդգրկունությամբ, կառուցվածքով, հարց ու պատասխանների շարադրման եղանակով, ուսուցման մեթոդիկայով, մինչև իսկ իր «ձիաբեռ» քառյակում նմանվում է սքոլաստիկական հանրահայտ «հավաքումներին»: ««Հարցմանց գիրքը»,– գրում է Մ. Օրմանյանը,– թե ոճով և թե պարունակությամբ համա-

¹ **Ортега-и-Гассета Х.**, Избранные труды, М., 2000, с. 363-364.

հաւասար կերպարան և արժէք ունի միջին դարերու հռչակեալ լատին աստուածաբաններուն, Թովմաս Աքուինացիի, Ալբերտուս Մուպեցիի և Սկոտոս Էրինացիի...գործերուն հետ, հանգիտակշիռ առաւելութիւններով և համանման թերութիւններով»¹: «Հավաքումների» կամ հավաքաբանական (բանաքաղածո) բնույթ ունեին Հովհան Ռոտունեցու և Մատթեոս Ջուղայեցու աստվածաբանական-իմաստասիրական ճառերն ու քարոզները:

Ինչպէս հայ, այնպէս էլ եվրոպական սքոլաստիկական փիլիսոփայութիւնը քննարկում էր կրոնաաստվածաբանական դրույթներին (Աստծո կեցության, արարչագործության, նախախնամության, մարմնավորման, ս. Երրորդության և այլն), հավատի և բանականության, աստվածաբանության և փիլիսոփայության, ընդհանուրի բնույթի (ունիվերսալիաների), հոգու և մարմնի, կամքի ազատության, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերակցությանը առնչվող հիմնահարցեր: Թե՛ արևմտաեվրոպական և թե՛ հայ միջնադարյան սքոլաստիկական փիլիսոփայության մեջ կենտրոնականը հավատի, աստվածաբանության, հոգևոր փորձի և բանականության, փիլիսոփայության, ռացիոնալ գիտելիքի հարաբերակցության հարցն էր: Սքոլաստիկական հստակորեն իրարից տարանջատում է բնական (բանական կամ բնական քննության) և վերբնական (հավատի տեսության, շնորհական) գիտելիքի ձևերը, ցուցանում բնական գիտելիքի սահմանները և հնարավորությունները: Բնական և շնորհական տեսությունները ծագում են միևնույն աստվածային աղբյուրից, սակայն կատարում են ի վերուստ տրված տարբեր գործառույթներ: Հայ մտածողները, իբրև սքոլաստիկ աստվածաբաններ, կարևորում են բանական քննության դերը ինչպէս աշխարհաճանաչողության, այնպէս էլ աստվածիմացության և աստվածաբանական գիտելիքի համակարգման գործում: Բնական քննությունը վերաբերում է երկրային իրողություններին և ինքնին չի բացահայտում վերնագույն ճշմարտություններ, բայց դա իմացության անհրաժեշտ փուլ է և նպաստում է հայտնութեանական ճշմարտությունների հասկացմանն ու յուրացմանը: Գրիգոր Տաթևացու կարծիքով՝ «Իսկ շնորհական իմաստութիւն՝ է լոյս հաւատոյն պայծառացեալ ի լոյս բնական իմացականիս մերոյ: Ջոր օրինակ՝ լոյսն արեգական խառնի ընդ բնական լուսոյ աչաց զգալոյ. նոյնպէս իմանալի լոյս շնորհացն՝ ծագէ ի միտս մարդկան. և խառնի ընդ բնական լոյս իմացութեանս մերոյ. և նովաւ տեսանէ միտս մեր գհանդերձեալ կեանսն...»²: Այսպիսի դիրքորոշումը թույլ է տալիս կրոնաաստվածաբանական հարցերի քննարկման ժամանակ պարտադիր հաշվի նստել «արտաքին» իմաստասերների կարծիքների հետ: Օրինակ, դիտարկելով երկնքի հարցը, Ռոտունեցին գրում է. «Բայց նախ զայս ինչ հետազօտեսցուք, թէ արտաքին իմաստասերքն յաղագս սորա զմի՞ ունեին

¹ Օրմանյան Մ., Ազգապատում, հ. 2, Կ. Պոլիս, 1914, էջ 2029:

² Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան որ կոչի Ձմերան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 173:

դիտաւորութիւն, թէ այլ և այլ, և ապա յեկեղեցական կարծեաց զճշմարիտն արտադրեսցուք»¹: Այս ճանապարհով սքոլաստիկան փորձում է համադրել աշխարհիկ ու հոգևոր, փիլիսոփայական ու աստվածաբանական գիտելիքները: Ընդ որում, ինչպէս Թովմա Աքվինացի էր նշում, աստվածաբանությունը իր դրույթները ստանում է ոչ թէ ուրիշ գիտություններից, այլ անմիջականորեն Աստծուց Հայտնության միջոցով: Իսկ դիմում է այլ գիտություններին ոչ թէ այն պատճառով, որ ինքնաբերաբար ու լրիվ չէ կամ դրանցից կախված է, այլ որ դրանց միջոցով իր ուսմունքը ավելի դյուրին դարձնի հասկացման համար: Վերբանական իրողությունների ճանաչողությունը ավելի հեշտ է սկսել այն առարկաներից, որոնք նախապէս ուսումնասիրվում են բնական քննության կողմից²:

Հետաքրքիր է նշել, որ հայ միջնադարյան փիլիսոփայության սքոլաստիկական լինել-չլինելու հարցը կապված է նաև հայ և արևմտաեվրոպական փիլիսոփայությունների համեմատության հետ: Առանց համեմատության (գուգորդության, բաղդատության) հնարավոր չէ պատկերացնել ցանկացած կարգի գիտական, ի մասնավորի փիլիսոփայապատմական հետազոտություն: Համեմատությունը ճանաչողական մի հնարք է, մեթոդ, որի օգնությամբ բացահայտում ենք համեմատվող առարկաների և երևույթների ընդհանրություններն ու տարբերությունները: Պատահական չէ, որ հաճախ ասում են, թէ «ամեն ինչ ճանաչվում է համեմատության մեջ»: Ուստի ճիշտ, դիպուկ համեմատությունը հետազոտական նպատակին հասնելու նախապայմաններից է: Սակայն համեմատությունը ունի իր ճշգրտության սահմանները և միշտ չէ, որ կարող է «խփել նշանակետին»: Նման դեպքում սովորաբար ասում են՝ «համեմատությունը կաղում» է, ավելի վատ դեպքերում նաև՝ «համեմատությունը կաղում է երկու ոտքով»: Արդյունավետ համեմատություն անցկացնելու համար նախ հարկավոր է գտնել համեմատելիները (անտեղի ու անիմաստ է համեմատել անհամեմատելիները, այսինքն՝ գրեթէ ընդհանրություն չունեցող առարկաները), երկրորդ, անհրաժեշտ է ըստ ամենայնի ուսումնասիրել համեմատվող առարկաները և երևույթները, պարզել դրանց ինքնութենական հատկությունները, երրորդ, առաջին հերթին պետք է համեմատել առարկաների և երևույթների էական, բնորոշ կողմերը, ինքնութենական հատկությունները՝ հաշվի առնելով դրանց տեղը, դերը, գործառույթներն ու նշանակությունը իրենց պատմամշակութային միջավայրում

¹ «Եռամեծի եւ երիցս երջանկի վարժապետին իմոյ Յովհաննու Ռրոտնէցոյ սասցեալ ի յարհնութիւն որակերտ շինուածոյ տաճարին եւ զանկակատանն առաքելական աթոռոյ վանիցն Ստաթէի՝ որ է գլուխ եւ աթոռ Միւնէաց վիճակին, ի բանն, որ ասէ. «Տէր ի տաճար սուրբ իւրում, Տէր յերկինս յաթոռ իւրում», **Ս. Հովհան Ռրոտնէցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր (քննական բնագրերը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մինասյանի), Ս. Էջմիածին, 2009, էջ 244:

² Տէ' u **Фома Аквинский**, Сумма теологии, т. 1, ч. 1, вопрос 1, раздел 5-2, Киев, 2002:

և այլն: Ինչպես վերը նշվեց, Վերածննդի դարաշրջանի հումանիստները, լուսավորիչներն ու մարքսիզմի դասականները, առանց լրջմիտ ուսումնասիրության, արևմտաեվրոպական սքոլաստիկական փիլիսոփայությանը տվել են ծայրահեղ բացասական գնահատականներ: Իսկ հայ մշակույթի և փիլիսոփայության պատմաբանները, ուսումնասիրելով միջնադարյան հայ հոգևոր ժառանգությունը, տեսնում էին, որ «հեղինակությունների» ու դասականների կողմից տրված գնահատականները ոչ միշտ են համապատասխանում իրականությանը, որ միջնադարում կային «լուսավոր», մարդասիրական, առաջադիմական երևույթներ, որ միջնադարյան հայ մտածողները պաշտպանել են գիտական տեսակետից ուշագրավ գաղափարներ: Մակայն անհամեմատ կցկտուր տեղեկություններ ունենալով արևմտաեվրոպական մշակույթի և փիլիսոփայության մասին՝ հայ մշակույթի և փիլիսոփայության պատմաբանները, խախտելով համեմատության կանոնները (համեմատում էին լավ և վատ ուսումնասիրված երևույթներ), անում էին ոչ ճիշտ հետևություններ: Օրինակ, միջնադարյան հայ մշակույթի գիտակ Լ. Խաչերյանը, համեմատելով հայ և եվրոպական համալսարաններն ու դրանցում դասավանդվող փիլիսոփայական առարկաները, գրում է. «Ի տարբերություն եվրոպական համալսարանների, մեր դպրությունը անտիկ փիլիսոփայական մտածողությունը ներկայացնելիս և վերլուծելիս իր ամբողջ վեհությամբ ու խորությամբ է քննել այն, ավելացնելով նաև իր սեփական ազատախոհ ընդհանրացումներն ու դրույթները: Այս առումով ոչինչ չի կարող զուգադրվել Եզնիկի կենսահաստատ փիլիսոփայական խոհականությունն ու ընդհանրացման համապարփակությունը ներկայացնող այն մեծարժեք աշխատությանը, որը կոչվում է «Եղծ աղանդոց», և որով Գլաձորի համալսարանականները փիլիսոփայել էին սովորում»¹: Մի քանի էջ հետո նա շարունակում է նույն ոգով գրել. «Գլաձորի համալսարանում Տրամաբանության դասընթացի ձեռնարկները **նույն էին**, ինչ եվրոպական համալսարաններինը. բայց մի վերապահությամբ, որ արեցինք փիլիսոփայական դասընթացների համեմատության ժամանակ. **մեր դպրությունը անտիկ մտածողությունը առավել հարազատ և ամբողջական է ներկայացրել՝ սեփականի անկաշկանդ և ազատախոհական ներդրումով, քան եվրոպական համալսարաններինը**, որոնք, ինչպես ասվեց, անտիկ մտածողներին «**քրիստոնեացնում**» էին՝ սխալաստիկ վերամշակմամբ ու մատուցմամբ: Այս կարևոր հանգամանքը անտեսել կամ մոռանալ չի կարելի: Բավական է հիշել, որ Եվրոպայում Արիստոտելի հեղինակությունը ընդունվել է ոչ բոլոր ժամանակներում: Եղել են նաև ժամանակաշրջաններ, երբ բացարձակապես արգելվել է Արիստոտելի ուսմունքը եվրոպական համալսարաններում»²: Անշուշտ, Լ. Խաչերյանի այն պնդումը,

¹ **Խաչերյան Լ. Գ.**, Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դարեր), Երևան, 1973, էջ 105:

² Նույն տեղում, էջ 124:

Թե «մեր դպրությունը անտիկ փիլիսոփայական մտածողությունը ներկայացնելիս և վերլուծելիս իր ամբողջ վեհությամբ ու խորությամբ է քննել այն, ավելացնելով նաև իր սեփական ազատախոհ ընդհանրացումներն ու դրույթները» խիստ վիճահարույց է և չհիմնավորված: Նախ, անհասկանալի է, թե ի՞նչ պետք է հասկանալ «իր **ամբողջ վեհությամբ ու խորությամբ է քննել**» կամ «**առավել հարազատ և ամբողջական է ներկայացրել**» արտահայտությունները: Դրանք գիտական բնորոշումներ չեն, որովհետև հնարավոր չէ ո՛չ ստուգել (վերիֆիկացնել), ո՛չ սահմանագծել և ո՛չ էլ փաստերով ցույց տալ: Երկրորդ, երբ ասվում է «ավելացնելով նաև իր **սեփական ազատախոհ ընդհանրացումներն ու դրույթները**», ապա դրանք պետք է ի ցույց հանել, և թվարկել հայ մտածողների առաջադրած նորամուծությունները եվրոպական մտածողների համեմատությամբ: Երրորդ, Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ը իսկապես մեծարժեք գործ է, բայց՝ ա) հարկավոր է փաստերով ցույց տալ, թե դա ինչ ազդեցություն է ունեցել Գլաձոր-տաթևյան դպրոցի մտածողների փիլիսոփայական հայացքների վրա, բ) Կողբացու քննարկած հարցերը բնորոշ էին միջնադարյան փիլիսոփայության զարգացման ջատագովական ու հայրաբանական փուլին, մինչդեռ սքոլաստիկական փիլիսոփայությանը այդ հարցերից զատ հետաքրքրում էին նոր հարցեր, գ) այն աղբյուրները, որոնցից օգտվել էր Կողբացին, շրջանառվում էին նաև միջնադարյան Եվրոպայում: Բացի դրանից եվրոպացի սքոլաստիկները հենվում էին լատինալեզու ջատագովների ու հայրաբանության ներկայացուցիչների, հատկապես Օգոստինոս Երանելու, Սեվերին Բոեցիուսի և այլոց ծանրակշիռ ու բազմաբնույթ տեսական ժառանգության վրա: Չորրորդ, վերոգրյալ վիճահարույց կամ չհիմնավորված պնդումներից Լ. Խաչերյանը եզրակացնում է, որ Եվրոպայում «անտիկ մտածողներին **քրիստոնեացնում**» էին՝ սխոլաստիկ վերամշակմամբ ու մատուցմամբ», որ Եվրոպայում ոչ միշտ են ընդունել Արիստոտելի հեղինակությունը (ենթադրվում է, որ Հայաստանում տեղի է ունեցել հակառակը): Իսկապես, Եվրոպայում սքոլաստիկական փիլիսոփայության ծաղկումը կապված էր այն բանի հետ, որ անտիկ մտածողների, առավելապես Արիստոտելի փիլիսոփայությունը **քրիստոնեացվում** էր, «մկրտվում» էր քրիստոնեական ավագանում, այսինքն՝ օգտագործվում էր հիմնավորելու համար Հայտնության ճշմարտությունները և կաթոլիկ եկեղեցու վարդապետության սկզբունքները: Առանց Արիստոտելի փիլիսոփայության հնարավոր չէ պատկերացնել եվրոպական սքոլաստիկական փիլիսոփայության ոսկեդարը: Թեև կաթոլիկ եկեղեցին դժվարությամբ հաշտվեց «արիստոտելյան կորպուսի» ներթափանցման և արիստոտելյան փիլիսոփայության ռացիոնալիստական ուղղվածության հետ, սակայն ստիպված էր տեղի տալ և որդեգրել «քրիստոնեացման» տարբերակը, որովհետև Արիստոտելի փիլիսոփայության որոշ մեկնաբաններ, հանձինս լատինական ավեռոիզմի, արդեն կասկածի տակ էին դնում եկեղեցու վարդապետության որոշ հիմնարար սկզբունքներ:

Միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ Արիստոտելը նույնպես հեղինակություն էր, և հայ, հատկապես XIV դարի մտածողները նրա փիլիսոփայության դրույթներն ու հասկացություններն օգտագործում էին հիմնավորելու համար կրոնաաստվածաբանական և եկեղեցական վարդապետության սկզբունքները: Տաթևցիները, հետևելով լատին մտածողներ Բարդուղիմեոս Բոլոնիացուն և Պետրոս Արագոնացուն, գործածում էին Արիստոտելից եկող և միջնադարում Թովմա Աքվինացու կողմից վերաձևակերպված Աստծո կեցության տիեզերաբանական ու նպատակաբանական ապացույցներ՝ հիմնված պատճառի, շարժման, սկզբի, միակի, անհրաժեշտության և պատահականության, հնարավորության և ներգործության, կեցության աստիճանների համեմատության և գոյավորի նպատակահարմարության բնագանցական դրույթների վրա: Դրանք միասին վերցրած վկայում են բանականությամբ Աստծո կեցության հիմնավորման և գոյի ռացիոնալիստական կառուցվածքի ու փորձնական ճանապարհով դա ճանաչելու արիստոտելյան սկզբունքների մասին: Օրինակ, Որոտնեցին օգտագործում է չորս պատճառների մասին արիստոտելյան ուսմունքը՝ հիմնավորելու համար անպատճառ Գոյի՝ Աստծո գոյությունը: Ըստ նրա՝ իրար հետ փոխկապակցված նյութական, տեսական (ձևական), ներգործական (շարժողական) և վախճանական պատճառները «ոչ միշտ լինին պատճառ, այլ երբեմն լինի իմն խափանումն ի պատահարէ՝ իմեմնէ: Վասն որոյ հարկիմք զանփոփոխ պատճառն բոլորիցս գտանել՝ զԱստուած, որ է Նա անշարժ պատճառ չորից պատճառացն...»¹: Իրավացի էր Գ. Գրիգորյանը, երբ հայ մտածողների նման ձգտումը (բանականությամբ աստվածաշնչյան դրույթների հիմնավորումը) գնահատում էր որպես առաջադիմական երևույթ²: Միջնադարում դիմել արիստոտելյան փիլիսոփայությանը նշանակում էր արժևորել բանականությունը ու բարձրացնել նրա հեղինակությունը, համադրել արիստոտելյան գաղափարները քրիստոնեական վարդապետության հետ, այսինքն՝ միասնություն տեսնել հավատի և բանականության, հավատի տեսության ու «բնական քննության» միջև: Այսպիսի մոտեցումը օրինական հիմք էր ստեղծում, որպեսզի ռացիոնալ գիտելիքը օգտագործվի նաև կրոնաաստվածաբանական շրջանակից դուրս:

Միջնադարյան հայ մտածողների համար Արիստոտելը իսկապես հեղինակություն էր, բայց դա չի նշանակում, թե նրանք ընդունում էին թե՛ Ստագիրացու և թե՛ եկեղեցու վարդապետ հեղինակությունների բոլոր դրույթներն

¹ «Յովհաննու Որոտնեցոյ տիեզերալոյս բաբունապետի արարեալ ի բանն Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Թ սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած. և Աստուած էր բանն... Ամենայն ինչ նովաւ եղև», **Սուրբ Յովհան Որոտնեցի**, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, Քննական բնագրերը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Մինասյանի, Ս. Էջմիածին, 2009, էջ 41:

² Գրիգորյան Գ. Հ., նշվ. աշխ., էջ 12-13:

ու մեկնաբանությունները¹: Հովհան Ռոտունեցին հստակորեն ձևակերպել է փիլիսոփայական ու կրոնական ուսմունքների հետ վերաբերվելու բանաձևը. «Հարկ է մեզ ընտրողություն առնել և որ ըստ շաղաց Աստուածաշունչ գրոց ընթանայ՝ ընդունել, իսկ որ արտաքոյ է ի շաղաց Աստուածաշունչ գրոց՝ ոչ ընդունել, թէպէտ ասողն մեծ ոք իցէ, զի ասէ Արիստոտել, թէ սիրելի է այր և սիրելի է ճշմարտութիւն. երկուց ելոց սիրելեաց՝ մանաւանդ սիրելի է ճշմարտութիւն»²: Օրինակ, Ռոտունեցին մերժում է անտիկ փիլիսոփաների այն ուսմունքները, որոնք չեն ընդունում արարչագործության գաղափարը կամ պաշտպանում են աշխարհի հավերժության դրույթը: Ըստ նրա՝ այս հարցում մոլորվում է նաև Արիստոտելը, երբ ասում է՝ «ոչ եղեալ գաշխարհս յԱստուծոյ, այլ յաւիտենից»³: Ռոտունեցուն երկրորդում է Գրիգոր Տաթևացին, ըստ որի՝ եթե մարգարէները և առաքյալները «գամենայն ճշմարիտ խօսեցան», ապա իմաստասերները «բազում ինչ խօսեցան ճշմարիտ և բազում սուտ և թիւր իմացան», ուստի՝ «պարտ է մեզ զճշմարիտ ասացեալս իմաստնոցն ընդունիլ. և որ ընդդէմ խօսին վարդապետաց եկեղեցոյ ունայն և սուտ համարիլ»⁴: Սա նշանակում է, որ «մեր դպրությունը անտիկ փիլիսոփայական մտածողությունը ներկայացնելիս և վերլուծելիս» ոչ թե իր «ամբողջ վեհությամբ ու խորությամբ է քննել այն», այլ ընտրողաբար, այսինքն՝ վերցրել է այն, ինչ համահունչ էր Ս. Գրքի հետ, իսկ ինչը դեմ էր՝ միանշանակ մերժել է:

Մքոլաստիկան, բացի փիլիսոփայման եղանակ լինելուց, մշակութային-քաղաքակրթական երևույթ էր: Ուստի թե՛ սքոլաստիկային և թե՛ Արիստոտելի «քրիստոնէացման» երևույթներին պետք է նայել նաև միջնադարյան մշակույթի և եվրոպական քաղաքակրթության պատմության մեջ դրանց խաղացած դերի տեսանկյունից: Արիստոտելին և անտիկ մյուս մտածողներին (Պլատոն, Պլտինոս, Պրոկլէս և այլք) «քրիստոնէացնելով»՝ սքոլաստիկան սկսում է անտիկ փիլիսոփայության ու գիտության ներմշակութազման, անտիկ փիլիսոփայական ավանդույթների վերականգնման գործ-

¹ Հեղինակագրությունը բնորոշ է սքոլաստիկային, բայց դա չի նշանակում, թե միջնադարյան մտածողները այնքան էին կաշկանդված հեղինակությունների մտքերով, որ միայն կուրորեն հետևում էին նրանց և չէին ստեղծագործում՝ արտահայտելով իրենց ինքնուրույն կարծիքները: Ս. Ավերինցեր իրավամբ գտնում է, որ սքոլաստիկան չէր լինի ստեղծագործական շրջան մտքի պատմության մեջ, եթե հեղինակությունների տեքստերում գտներ միայն պատրաստի պատասխաններ և ոչ թե հարցեր, միտքը աշխուժացնող մտային դժվարություններ (տե՛ս **Аверинцев С. С.**, *Схоластический метод // Новая философская энциклопедия в 4-х томах*, т. 3, М., 2010, с. 684-686):

² «Յովհաննու Ռոտունեցոյ ասացեալ ի բան մարգարէին Դավթի, որ ասէ. «Ի սկզբանէ Տէր զերկիր հաստատեցեր և գործք ձեռաց քոց երկինք են», **Սուրբ Հովհան Ռոտունեցի**, նշվ. աշխ., էջ 161:

³ «Յովհաննու Ռոտունեցոյ տիեզերալոյս բարունապետի արարեալ ի բանն Աւետարանին ըստ Յովհաննու, որ ասէ. «Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած. և Աստուած էր բանն... Ամենայն ինչ նովա եղէ», **Ս. Հովհան Ռոտունեցի**, նշվ. աշխ., էջ 46:

⁴ **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան, որ կոչի Ամառան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 72:

ընթացը: Շնորհիվ սքոլաստիկայի՝ եվրոպական մշակույթի պատմության մեջ «չխզվեց ժամանակների կապը»¹, այսինքն՝ սքոլաստիկան, միջնադարի հավատապաշտական, իռացիոնալիստական ու միստիկական մտայնության գերիշխանության պայմաններում կարողացավ անտիկ գիտափիլիսոփայական մի շարք ավանդույթներ փոխանցել Վերածննդի և Նոր ժամանակի մշակույթին: Գիտության պատմության մասնագետները նշում են, որ միջնադարյան գիտության նշանակալից առանձնահատկություններից էր տեսական հարցերի քննարկման սքոլաստիկական մեթոդը: «Սքոլաստիկան, դիտարկված գիտության տեսական ինքնագիտակցման կայացման համատեքստում, ներկայանում է որպես ռացիոնալ հիմքի վրա գիտելիքի համակարգ ստեղծելու չափազանց լուրջ և ուսուցողական փորձ»²:

В последних числах декабря 1914 г. в г. Карс был организован областной комитет по оказанию помощи беженцам (Отделение Главного Кавказского Комитета) под председательством Военного Губернатора, Полковника Подгурского. В состав этого Комитета были приглашены как представители административных учреждений, так и общественных организаций. Со стороны Армянского Благотворительного Общества вошли в этот Комитет 3 члена правления. Ввиду громоздкости Областного Комитета, по предложению Уполномоченного Главного Кавказского Комитета С. С. Арутюнова, было решено на заседании 7 января 1915 г., для более продуктивной помощи беженцам, организовать из членов Комитета Исполнительную Комиссию, на которую возложили: 1) организацию помощи беженцам, 2) регистрацию беженцев и 3) экономическое обследование пострадавшего населения.

В состав Исполнительной комиссии входили 9 членов, из коих 3 от Армянского Благотворительного О[бщест]ва, 2 – от Мусульманского Благотворительного Общества, один представитель Греческого Благотворительного О[бщест]ва, остальные – члены Областного Комитета.

Так как Армянское Благотворительное Общество в Карсе оказывало самостоятельно помощь беженцам, Областной Комитет на заседании от 7 января постановил, для более планомерной работы в оказании помощи беженцам, предложить Армянскому Благотворительному О[бщест]ву объединиться с Карским Областным Комитетом. Армянское Благотворительное О[бщест]во изъявило свое согласие и вошло в тесную связь с Карским Областным Комитетом, имея своих представителей как в Областном Комитете так и в Исполнительной комиссии. Исполнительная комиссия в первое время своей работы выказала энергичную деятельность: 1) произвела регистрацию беженцев; 2) открывала на путях следования беженцев питательные пункты; 3) раздавала пособие деньгами и натурой; 4) расселяла их по разным пунктам вне района военных действий; 5) водворяла беженцев на своих старых местах и т.д.

В этих действиях Исполнительной комиссии главную помощь оказывало Армянское Благотворительное О[бщест]во, которое приняло на себя обслуживание интересов беженцев – турецкоподданных армян, проживающих в то время в Карсской области, числом до 25.000 чел[овека]; от Областного Комитета это Общество получало только денежную помощь.

Полная регистрация беженцев была закончена к 25 февраля 1915 г., и к этому числу было в Карсской области беженцев-русскоподданных из Ольтинского и Ардаганского округов и Сарыкамышского района:

в г. Карсе 4640 греков, 1542 армянина

в Карском участке – 720 русских; 4210 греков, 2654 армянина.

в Зарушадском уч[астке] – 620 русских, 2470 греков, 1020 армян.

в Шурагельском уч[астке] 510 русских, 1915 греков, 4345 армян.

в Хорасанском уч[астке] 315 греков, 350 армян, 62 мусульманина.

Итого было беженцев – 25673 человека.

Турецкоподданных армян было: в г. Карсе 6.244 чел[овека], в Карском округе 9.330 ч[еловек], в Кагызмане 998 и в Кагызманском округе 10.250 [человек]; итого было 26.811 чел[овек]. Русскоподданные беженцы с марта 1915 г., по наступлении заметного успокоения, стали возвращаться на свои места. На долю турецкоподданных армян в марте с.г. выпало новое испытание. По распоряжению

военных властей беженцы из г. Карса, крепостного района и селений, расположенных по железной дороге на расстоянии 25 верст, были выселены в Борчалинский уезд. Ввиду отсутствия достаточных средств и сотрудников, пришлось лицам, ведающим выселением беженцев, испытать большие затруднения.

Организация выдворения беженцев из указанных районов была возложена на Армянское Благотворительное Общество. Выселение было закончено 10-го апреля 1915 года. Денежная помощь беженцам оказывалась средствами, получаемыми от Главного Кавказского Комитета.

К первому августа 1915 г. от Главного Кавказского Комитета было получено 218.600 руб[лей].

Кроме того, в Карсский Областной Комитет поступило:

- 1) Пожертвований, собранных в пределах Карсской области 6.230 р[ублей] 32 к[опейки]
- 2) От «Союза Городов» 4.000 р[ублей]
- 3) От разных лиц греческой национальности и в пользу греков-беженцев 6.871 р[убль] 31 к[опейка]
- 4) От разных мусульман в пользу мусульман, пострадавших от войны 9.312 р[ублей]

Итого 26.413 р[ублей] 63 к[опейки]

А всего к 1-му августа для беженцев поступило 245.013 р[ублей] 63 к[опейки].

Армянское Благотворительное Общество из своих средств за этот период времени израсходовало на беженцев 17.394 р[убля] 46 коп[еек] деньгами и, помимо этого, раздало постели, теплые вещи, чай, сахар, мыло и другие необходимые вещи.

Обращаясь к вопросу, насколько достаточна была помощь, оказываемая беженцам в Карсской области, надо признаться, эта помощь, на мой взгляд, была самая минимальная, т.к. выдаваемый паек едва хватал на насущный хлеб. Главная тягость содержания беженцев легла на местное население, которое давало беженцам помещения, топливо и др. необходимые предметы, потребные для самого незавидного существования.

Областной Комитет в среднем тратил на одного беженца следующее: с 15 декабря 1914 г. по 1 марта 1915 г. выдано было 52.484 беженцам – 51.230 р[ублей], что составляет менее 50 коп[еек] в месяц на одного беженца. В марте на то же количество беженцев израсходовано 50.000 руб[лей], причем из этой суммы на выселение беженцев израсходовано 18.000 рублей.

В апреле выдано 9.000 беженцам 18.000 руб[лей], в среднем 2 рубля на одного.

В общем беженцы в Карсской области до 1-го ноября с.г. на пропитание получали не более 1 р[убля] 50 к[опеек] – 2 руб[ля], на человека. Обслуживание турецкоподданных беженцев Исполнительной комиссией было возложено на Армянское Благотворительное О[бществ]о, которое получило одновременно на этот предмет 107.000. Деньги эти расходовались по распоряжению Правления Общества, причем отчеты об израсходованной этой сумме Обществом представлены в Областной Комитет.

После выселения беженцев из Карсской области беженцев, в полном смысле этого слова, осталось очень мало.

Русскоподданные беженцы, вернувшись на свои места, встретили у себя дома одно разорение: все оставленное имущество после поспешного бегства было разграблено. Дома были сожжены или разрушены. Для поддержания их существования, хотя бы на первое время, на местах из средств Областного Комитета стали оказывать им помощь.

Во многих селениях от недоедания стали развиваться всякие эпидемические заболевания, главным образом, тиф. Помощь на местах оказывалась недолго. По разъяснениям Главного Кавказского Комитета лица, водворенные на своих старых местах не подводили под понятие «беженец», а потому предлагалось прекратить им выдачу денег из беженских средств и продовольствовать их из продовольственных сумм, отпущенных казною в размере 700.000 рублей. Кипучую деятельность в оказании помощи местному мусульманскому населению проявило Бакинское Мусульманское Благотворительное Общество¹.

В Ардаганский и Карсский Округа с июля месяца стали возвращаться в свои селения мусульмане, ушедшие в Турцию вместе с турецкими войсками. Таких пришедших обратно мусульман было большое количество. Мусульманское Благотворительное Общество открыло для них во многих селениях питательные пункты, организовало медицинскую помощь, приобрело хозяйственный скот, выхлопотало выдачу пайка из продовольственного капитала и др.

Обслуживание греков-беженцев, ввиду отсутствия организованной общественной греческой силы, приняло на себя как Армянское Благотворительное О[бщест]во, так и Исполнительная Комиссия. В первое время автор настоящего доклада был занят исключительно обслуживанием интересов греков-беженцев. Вообще надо заметить, что греки к печальной участи своих сородичей проявили непростительную индифферентность.

В июле с.г., когда беженский вопрос в Карсской области считался урегулированным, неожиданно для всех из пределов Турции нахлынула новая волна беженцев. Вид и положение беженцев было ужасное. Вся масса этих голодных, изможденных и истрадавших людей устремилась в г. Карс. Быстро организовали первоначальную помощь. Затем их расселили по селениям Карсской области.

В настоящее время в Карсской области армян-беженцев из Турции 15.970 душ, которые проживают в следующих участках:

1. Карсский участок 2.821
2. Саганлугский 2.165
3. Шурагельский 1.938
4. Зарушадский уч[асток] 259

Итого в Карском округе – 7.183.

В м. Ардагане проживает 378 беженцев, в Ольтинском округе армян-беженцев нет по официальному донесению Начальника округа.

Кагызманский округ.

1. В Нахичеванском уч[астке] 1220

¹ Это общество было основано в 1905 г., целью которого было оказание помощи бедным мусульманам. Его председателем был Г. З. Тагиев.

2. в Кагызмане 470

3. в Хорасанском уч[астке] 1283

Итого 2973

В Басене турецком¹, в местности, завоеванной русскими войсками, проживает 3.525.

До 1-го октября с.г. беженцев обслуживали учреждения, описанные выше, с изданием же нового закона 30-го августа с.г. положение вещей изменилось в следующем: 28 октября с.г. Военный Губернатор Карсской области созвал совещание из представителей местных правительственных учреждений и мусульманского Благотворительного Общества, Армянского Центрального Комитета и Греческого Благотворительного Общества.

По открытии заседания Губернатор заявил, что настоящее совещание создано на основании закона 30-го августа и впредь будет именоваться «Карским Областным Комитетом по оказанию помощи беженцам». Затем Губернатор огласил телеграмму Помощника Наместника Петерсона о том, что обслуживание беженцев переходит в исключительное ведение администрации. Заметив на этом совещании отсутствие представителей местного Армянского О[бществ]а, я, как уполномоченный Тифлисского Армянского Центрального Комитета, заявил свой протест по этому поводу, выразив пожелание, чтобы состав вновь организуемого Комитета был бы дополнен, хотя бы приглашением представителей местного армянского благотворительного Общества, которые очень много сделали для беженцев и которые компетентны во всех вопросах о беженцах.

Деятельность Областного Комитета в настоящем своем составе едва ли будет продуктивна и едва ли сумеет разрешить целесообразно вопросы касательно беженцев, так как в состав этого комитета в большинстве входят лица мало компетентные в этих вопросах и обремененные своими служебными делами. На этом заседании было решено организовать окружные комитеты при непременно участии в этих комитетах представителей Армянского Благотворительного О[бществ]а, причем при раздаче денег беженцам также обязательно участие представителя этого Общества.

Паек определили на каждого беженца без различия возраста в размере 15 коп[еек] в день. Первая раздача денег администрацией по Карсскому округу происходила в первых числах ноября и выдавалась за октябрь месяц полностью. Для ускорения и упрощения раздачи денег со всего Карсского участка были призваны беженцы в г. Карс, где происходила раздача денег.

Такая система раздачи денег нечеловечна и возмутительна. На это обстоятельство мною было обращено внимание местной администрации, которая обещалась в будущем деньги раздавать на местах пребывания беженцев.

Надо сознаться, что местная администрация достаточно бесцеремонно обращается с интересами беженцев, сознательно или несознательно старается умалять их человеческое достоинство. Недавно один из полицейских в г. Карс сделал рас-

¹ Согласно Берлинскому трактату 1878 г., Россия вернула Османской империи, помимо 40 деревень Басена, Алашкертскую долину, завоеванную во время русско-турецкой войны 1877-1878 гг. Из них формируется новая административная единица – Хорасанский район Кагзванского округа Карсской области, который также называют «Русским Басеном». Под властью Османской империи остаются 98 деревень Басена, которые получают название «Турецкого Басена».

поряжение, чтобы беженцы не смели проходить по некоторым улицам города, несмотря на то, что по этим улицам свободно гоняли гурты скота. Еще более возмутителен факт, имевший место недавно в Карсском округе. В начале настоящего года, в сел[е] Кякялы Саганлугского участка, по распоряжению высшей администрации были поселены беженцы-армяне в числе 800 душ. Селение это было оставлено ушедшими в Турцию курдами. Недавно курды эти, в числе 60 человек, вернувшись из Турции, стали требовать через Мусульманское Благотворительное О[бщест]во выселения армян-беженцев из своего селения. Администрация без предупреждения учреждений, обслуживающих беженцев, приказала беженцам немедленно выселиться, несмотря на то, что беженцы эти обзавелись на зиму всем необходимым.

Пришлось выступить в защиту беженцев, уговорить курдов жить совместно с беженцами с условием уплаты им определенной платы за их помещения. Курды согласились, получив 800 руб[лей], сделка эта была оформлена и вопрос считался исчерпанным. Несмотря на все это, через некоторое время беженцам-армянам администрацией вновь было приказано выселиться в 24 часа куда угодно. Только заявление самих курдов кякяцев, что они ничего не имеют против армян-беженцев и желают совместно с ними жить, приостановило суровое распоряжение начальника округа, пославшего стражников с нагайками для приведения в исполнение своего приказа. Пособие, выдаваемое ныне беженцам по закону 30 августа, более обеспечивает их, чем было до сих пор. Необходимо только принять меры, чтобы представители Армянского Благотворительного О[бщест]ва принимали активное участие в губернских и окружных комитетах для всестороннего обслуживания интересов беженцев. Администрация, будучи занята непосредственно своими прямыми служебными обязанностями, едва ли в состоянии будет уделять время многосложным интересам беженцев и, по моему мнению, ограничится только голой раздачей денег.

Помимо выдачи пайка беженцам, необходима для них организация врачебной помощи, открытие питательных пунктов, чайных, приютов, выдача постелей, теплых вещей, урегулирование вопроса о жилищах, топлива и т.д.

Для целесообразности обслуживания всех этих вопросов необходимо, во-первых, иметь в каждой области или губернии уполномоченных из интеллигентных и авторитетных лиц, совершенно свободных от других занятий, чтобы иметь возможность совместно с уполномоченными, назначенными от правительства, оказывать помощь беженцам, регулировать всевозможные спорные вопросы на местах, участвовать в заседаниях областных или губернских комитетов и др.

2. В распоряжение этих уполномоченных надо предоставить достаточное количество сотрудников.

3. Иметь общий наказ уполномоченных.

4. Центральный комитет должен иметь неослабную связь с провинциальными отделениями Благотворительного Общества и своими уполномоченными и давать им директивы по вопросам их деятельности.

5. Не оставлять без ответа и рассмотрения все доклады и ходатайства, получаемые из разных мест.

6. Добиться того, чтобы администрация относилась к участию беженцев без различия национальности терпимо и проявляло бы к ним человеческие отношения.

7. Добиться того, чтобы администрация, без участия органов, обслуживающих интересы беженцев, не разрешала бы самостоятельно никаких спорных вопросов, возникающих между беженцами и местным населением на почве экономических отношений, как-то: вопросы выселения из селений, из помещений, взыскание денег и др.

8. Желательно, чтобы высшая правительственная власть, ведающая беженцами, сделала Циркулярное распоряжение местной администрации с указанием: 1) порядка осуществления на практике закона 30 августа (для однообразного применения такового); 2) доброжелательного отношения к беженцам; 3) порядка рассмотрения спорных вопросов касательно беженцев и 4) оказания содействия уполномоченным от разных общественных организаций, обслуживающих интересы беженцев.

9. Уплачивать местному населению определенную наемную плату за помещения, занимаемые беженцами (до настоящего времени беженцы проживают бесплатно).

10. Устроить мучные склады для снабжения беженцев мукою, иначе в скором будущем ни за какие деньги нельзя будет беженцам приобретать муки.

11. В местах скопления беженцев открыть питательные пункты, поручив это опытным в этом деле лицам.

12. Раздать немедленно теплые вещи и постели, отсрочка приведет к гибели и заболеванию многих беженцев.

13. Организовать медицинскую помощь; почти полное отсутствие таковой в Карсской области.

14. Организовать выдачу натурою топлива отпуском из казенных лесов или приобретением такового на местах (кизьяк).

Только при этих условиях можно быть гарантированным, что интересы беженцев достаточно будут охраняемы.

[Г[ригорий] Дзамоев] [подпись]

НАА, ф. 28, оп. 1, д. 378, л. 21-25 (подлинник, машинопись).

**Նինետա Աղաւյան – Փաստաթղթեր Կովկասի Հայոց Բարեգործական
ընկերության գաղթականներին ցուցաբերած օգնության պատմությունից
(1915 թ. հունվար, նոյեմբեր)**

Առաջին համաշխարհային պատերազմի հաջողությունները և անհաջողությունները մեծ խուճապ առաջացրին ռուս-թուրքական, ռուս-պարսկական սահմանամերձ շրջաններում և Արևմտյան Հայաստանում՝ ստիպելով տասնյակ հազարավոր մարդկանց անցնել Այսրկովկասի առավել ապահով երկրամասեր: Գաղթականներին օգնություն ցուցաբերելու նպատակով պատերազմի տարիներին ստեղծվեցին բազմաթիվ գաղթականական կոմիտեներ, որոնց թվում էր Կովկասի Հայոց Բարեգործական ընկերությունը, որը վերակառուցվում է պատերազմի պահանջներին համապատասխան: Հրատարակվող փաստաթղթերը տեղեկություններ են հաղորդում Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության նախագահ Սամսոն Հարությունյանի և դրան կից ստեղծված Հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Գրիգորի Չամոնի (Չամոնյանի) կողմից գաղթականներին ցուցաբերած օգնության մասին:

Nineta Adamyan – *Documents Concerning the History of Aid to Refugees Provided by Armenian Benevolent Society in the Caucasus (January, November 1915)*

The successes and failures of the First World War caused great panic in the Russian-Turkish and Russian-Persian border regions and in Western Armenia, forcing tens of thousands of people to move to safer regions of the South Caucasus. Many refugee committees were established to provide assistance to refugees during the war, the Armenian Benevolent Society of the Caucasus being one of them, which was reconstructed in accordance with the requirements of the war. The published documents provide information on the assistance provided to the refugees by the Chairman of the Armenian Benevolent Society in the Caucasus Samson Harutyunyan and the Plenipotentiary of the affiliated Armenian Central Committee Gregory Dzamoyan.

Հրաչիկ Միրզոյան, Հայ գրքի և գրատպության պատմության փիլիսոփայական անդրադարձներ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, 396 էջ

Վերջին շրջանում առիթ ունեցանք նշելու հայ գրատպությանը նվիրված երեք հոբելյան՝ ստեղծման 500-ամյակը, Ոսկան Երևանցու ծննդյան 400-ամյակը և հայերեն Աստվածաշնչի առաջին ամբողջական հրատարակության 350-ամյակը: Այս նշանակալից իրադարձությունների շրջանակում հրատարակվեց փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Միրզոյանի հոդվածների ժողովածուն:

«Ինչպես ծնվեց այս գիրքը» ներածականում հեղինակը նշում է, որ ժողովածուում տեղ են գտել տասնամյակների ընթացքում գիտական տարբեր պարբերականներում լույս ընծայված հայագիտական և փիլիսոփայական մտքի պատմությանը նվիրված ուսումնասիրություններ, ընտրանքային հոդվածներ: Թեև դրանց մի մասը տասնամյակների վաղեմություն ունի, սակայն դրանցում նկատելի է ժամանակաշրջանի ու նյութի ընդհանրություն, ինչը արդարացնում է նման ձևաչափով ժողովածուի լույսընծայումը: XVII-XVIII դարերում փիլիսոփայական միտքը արտացոլված էր ինքնուրույն և թարգմանական գրքերում, և այս գաղափարը տարրալուծված է գրախոսվող ժողովածուի երեք բաժիններում:

Առաջին բաժնի հոդվածներն ու հրապարակումները նվիրված են Ոսկան Երևանցուն և նրա գրահրատարակչական գործունեության բազմակողմ քննությանը: Այս կամ այն չափով նրա հետ առնչվում են նաև Առաքել Դավրիժեցուն, Միմեոն Ջուղայեցուն և Ոսկան Երևանցու կրտսեր եղբայր Ավետիս Երևանցուն վերաբերող ուսումնասիրությունները: Այսպես օրինակ՝ «Առաքել Դավրիժեցու պատմության առաջին հրատարակության մասին» հոդվածում ցույց են տրվում Ոսկան Երևանցու «տպագրական արվեստի, գիտելիքների և աշխարհըմբռնման» առանձին մանրամասները: Այդ նպատակով Հ. Միրզոյանը համեմատել է Առաքել Դավրիժեցու պատմության ձեռագիր և տպագիր օրինակները և պարզել, որ Ոսկան Երևանցին ձեռքի տակ ունեցել է նրա երկի նախնական տարբերակը, 1669 թ. տպագրելիս «կուռ շարադրանք ստանալու համար» որոշակիորեն միջամտել է հեղինակային բնագրին և այն ձերբագատել «սնահատավատության հատվածներից», կատարել որոշակի հավելումներ ու լեզվական փոփոխություններ:

Ոսկան Երևանցուն և նրա ավագ ընկեր Միմեն Ջուղայեցուն նվիրված հոդվածում ճշգրտվում են գաղափարական, փիլիսոփայական և դավանաբանական ըմբռնումներին վերաբերող մի շարք հարցեր. ըստ էության վիճարկվում են Կարապետ եպս. Ամատունու «Ոսկան վրդ. Երևանցի և իր ժամանակը» գրքում տեղ գտած որոշ դրույթներ ու տեսակետներ: Ի դեպ՝ Շ. Միրզոյանի գրչին է պատկանում «Միմեն Ջուղայեցի» մենագրությունը (1971), որը վկայում է այս հարցերում հեղինակի քաջատեղյակության մասին: Նշված հոդվածում նա եզրակացնում է, որ Ոսկան Երևանցին ու Միմեն Ջուղայեցին ոչ թե հակամարտել են, ինչպես ներկայացրել է Կարապետ եպս. Ամատունին, այլ ընդհակառակը՝ բարեկամական հարաբերություններ են ունեցել, որոնցից ածանցվում է նաև նրանց գիտական միակամությունը:

Հոդվածներից երկուսը վերաբերում են Ոսկան Երևանցու «Յաղագս միութեան և միաւորութեան...» փիլիսոփայական երկին, որը սկզբնապես տպագրվել է իբրև Առաքել Դավրիժեցու պատմության ԾԸ գլուխ: Շ. Միրզոյանը նախ հրատարակել է այս երկի բնագիրը, այնուհետև դրա ռուսերեն ու աշխարհաբար թարգմանությունները:

Ուշագրավ է Առաքել Դավրիժեցու պատմության ձեռագրերում օձագալար պատկերի մեկնաբանությունը «Ինքնալրացում կամ մեկ նկարի պատմություն» հոդվածում: Նրա պատմության ձեռագիր օրինակներում պահպանվել են մինչ այդ ուշադրության չարժանացած՝ օսմանյան սուլթանների հերթագայությունը ցույց տվող օձագալար պատկերի տարբերակներ, որոնք թվարկում են 18 սուլթանների՝ սկսած Օսման առաջինից: Հեղինակի իրավացի կարծիքով, միայն այս գծապատկերը բավական է հերքելու թուրքական պատմագրության «այն անհերթ թեսակետը, որ իբր հայ ժողովուրդը դարեր շարունակ վայելել է թուրք իշխանավորների «հայրական» վերաբերմունքը, որ իբր հայերի ու թուրքերի միջև ոչ մի թշնամանք չի եղել, ուստի 1915 թ. կատարվածի համար իբր մեղավոր են ոչ թե երիտթուրք մարդակերները, այլ նրանց գազանություններին գոհ դարձած հայ նահատակները» (էջ 79):

«Ոսկանապատումի» մեկ այլ հրապարակմամբ Շ. Միրզոյանն ապացուցում է, որ Առաքել Դավրիժեցու պատմության տպագիր օրինակում ԾԷ գլխի հեղինակը ինքը՝ Ոսկան Երևանցին է և ներկայացրել է իր ինքնակենսագրությունը: Ընդ որում այն «չի դարձել կենսագրական փաստերի սուսկական շարադրանք, այլ իրենից ներկայացնում է հրապարակախոսական մի փայլուն պամֆլետ՝ ուղղված իր ժամանակի ու հետագա դարերի գիտության ու լուսավորության թշնամիների դեմ» (էջ 84), որը, ինչպես եզրակացնում է հեղինակը, «պահպանողական ուժերի դեմ պայքարի թափով» նմանվում է Պատմահոր Ողբին: Նման ընդհանրացումների համար անհրաժեշտ է նաև ժամանակի պատմական, մատենագրական, ձեռագրական ամբողջ պատկերի իմացություն, որն ինքնին պահանջում է բազմաթիվ գիտակարգերի իմացություն, որն ակնհայտ է գրքի որևէ հոդվածն ընթերցելիս:

Մեկ այլ հոդվածում պատմաբանասիրական փաստերով Հ. Միրզոյանը Ոսկան Երևանցու եղբորը՝ Ավետիս Դլիճենց Երևանցուն է վերադարձնում տպագրիչի (և ոչ թե սուկ վաճառականի) համբավը, որը մինչև 1663 թ. տպագրել է հինգ անուն գիրք: «Հենց միայն այն փաստը, որ այսօր հայ գրքի մատենագիտության մեջ գործածվում է «Ավետիսի տառեր» հասկացությունը, ինքնին վկայում է այդ մարգում նրա ունեցած անուրանալի վաստակի մասին», - փաստում է հեղինակը (էջ 119):

Ոսկան Երևանցու գիտական բոլոր դրույթներն ամփոփված են գրական-հրապարակախոսական «Գրական թերթում» 2014 թ. տպագրված «Ոսկան Երևանցու դասերը» խորագրով կուռ հոդվածում: Իր գործին և գրատպությանը՝ Ոսկան Երևանցու անձնագոհ ու անշահախնդիր նվիրումը նկատի ունենալով՝ Հ. Միրզոյանը գրում է. «Ո՛ւր էր, թե մերօրյա եթե ոչ հայագրի բոլոր գործարարները, ապա նրանցից թեկուզ ոմանք ապրեին ու գործեին ոսկանաբար կամ սկսեին մտածել նրա օրինակին հետևելու մասին» (էջ 101):

Ժողովածուի երկրորդ մասը՝ «Ձանագանք» վերտառությամբ, ամփոփում է հեղինակի փիլիսոփայական, քերականագիտական, եկեղեցու պատմությանն առնչվող ինը հոդված: Կարելի է կարծել, թե դրանք բովանդակային սերտ կապ չունեն թե՛ միմյանց և թե՛ Ոսկան Երևանցու հետ, բայց իրականում ներքին բովանդակությամբ դրանք շաղկապված են մեկը մյուսին, և դա առաջին հերթին XVII-XVIII դարերում հայ մտքի վերազարթոնքն է մեր գրավոր մշակույթի գրեթե բոլոր ոլորտներում: Ընդգծելով դրա կարևորությունը՝ Հ. Միրզոյանը թե՛ գրախոսվող ժողովածուում և թե՛ մի շարք այլ առիթներով այդ ժամանակաշրջանը ներկայացնում է որպես «հոգևոր վերելքի ու վերածնունդի» նոր շրջան հայ մշակույթի մեջ (էջ 133):

Բայց մինչ այդ դարին հասնելը գրքում բերված է Դավիթ Անհաղթի «Սահմանք»-ի գնահատման շուրջ հոդվածը՝ փիլիսոփայական մի հրապարակում, ուր ցայտուն դրսևորված է փիլիսոփայության պատմության՝ Հ. Միրզոյանի իմացության նշաձողը: «Անհաղթը հայ իրականության մեջ խաղացել է նույն դերը, ինչ Արիստոտելը համաշխարհային իրականության մեջ», - նշում է նա (էջ 123), իսկ ելակետային այս դրույթից հետո անդրադառնում հետևյալ հարցադրմանը. «Ինչու է Անհաղթը գրել իր այս աշխատությունը՝ վերնագրելով այն «Սահմանք» (էջ 125), որն ամբողջ միջնադարում հայ իրականության մեջ փիլիսոփայական ամենից կարևոր դասագիրքն էր: Հոդվածում տրված են Հովհաննես Իմաստասերի (XI-XII դդ.), Վանական վարդապետի (XIII դար), Առաքել Սյունեցու (XIV-XV դդ.)՝ «Սահմանքի» մեկնաբանություններն այդ հարցի առնչությամբ, որոնք քաղված են ձեռագրական սկզբնաղբյուրներից: Տարբեր մեկնաբանություններից է այն, որ ի թիվս Դավիթ Անհաղթի նշված երկը գրելու դրդապատճառների՝ երկրորդական դեր չի խաղացել ազգասիրական՝ հայ իրականության մեջ փիլիսոփայական տեսությունները ներմուծելու մղումը:

Հովհաննես Ջուղայեցու «Գիրք սրբազնագործութեան» երկին նվիրված հոդվածը քրիստոնեության բարոյափիլիսոփայական սկզբունքների համադրությունն է: Առհասարակ այս բաժնում և այլուր շատ են XVII դարի հեղինակներին նվիրված հրապարակումները, որոնք, երկրորդենք՝ Հ. Միրզոյանը ներկայացնում է որպես «նոր վերածնունդի» արդյունք:

Այստեղ մատնանշենք սույն ժողովածուի արժանիքներից ևս մեկը. վերլուծություններից գատ ընթերցողին են մատուցվում միջնադարյան պատմագրական ու փիլիսոփայական արժեք ներկայացնող մի շարք բնագրեր, այդ թվում՝ Հովհաննես Ջուղայեցու «Համառօտ տրամաբանութիւնը», «Քերականութիւնը», Մ. Գրքի Միխիթար Մեբաստացու տպագրությանը նվիրված՝ Հովսեփ Ջուղայեցու գրչին պատկանող անտիպ գրախոսականը և այլն:

Ի դեպ՝ հարկ է նշել, որ Հովսեփ Ջուղայեցու «Քննիկոնը», որի մասին գրում է Հ. Միրզոյանը, և որը պարսկահայերի և առհասարակ Իրանի պատմության ուշագրավ երկերից է, մեր համոզմամբ, կարիք ունի նորովի հրատարակության: Պահպանված հինգ ձեռագրից երկուսը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, որոնցից օգտվել է հեղինակը, ևս երկուսը՝ Նոր Ջուղայում, մեկը՝ Անթիլիասի ձեռագրատանը:

Հայ եկեղեցու պատմության մի կնճռոտ խնդրի քննություն է Հակոբ-Եղիազարյան հակամարտությանը նվիրված հոդվածը: 1693 թ. Նոր Ջուղայում տպագրված մեկական էջանոց երկու փաստաթղթերի քննությամբ Հ. Միրզոյանը սրբագրում է գիտական մի փաստ և նշում, որ «Յաղագս կարգի կաթողիկոս ձեռնադրութեան» գրությունն ընդունվել է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ և ուղղված է Եղիազար Այնթապցու կողմից հակաթոռ կաթողիկոսություն հիմնելու քայլերի դեմ: Ի դեպ, հայագիտության մեջ մինչ այդ հակառակ կարծիքն է իշխել, ըստ որի՝ դրանք իբր ուղղված են եղել Հակոբ Ջուղայեցու դեմ:

Հ. Միրզոյանն անդրադառնում է նաև «Էփիմերտե» ժողովածուին և այն նորովի գնահատելու ու արժևորելու փորձ կատարում: Նա կարծում է, որ մասնավորապես քաղաքական բնույթի գուշակությունները «կարող են հուսալի աղբյուր ծառայել այս կամ այն պատմաշրջանի սոցիալական դասի ու դասակարգի, ազգի ու ժողովրդի հասարակական-քաղաքական տրամադրությունները, երազանքները ու ձգտումները բացահայտելու համար» (էջ 161):

Գրքի երրորդ բաժինը ընդգրկում է 1966 թվականից մինչև մեր օրերը տպագրված ինը գրախոսություն: Դրանց թեմատիկան և բովանդակությունը ևս առնչվում են փիլիսոփայության պատմությանն ու տրամաբանությանը, հայ հնաստիպ գրքին: Գրախոսությունները նվիրված են Էդ. Հարությունյանի «Հայ փիլիսոփայական միտքը XIX դարի առաջին կեսին» (1965) և «Դեղուկտիվ տրամաբանության տեսության հարցեր» (1972) գրքերին, Ի. Ս. Նարսկու «Հակասությունների խնդիրը դիալեկտիկական տրամաբանության մեջ» (1969) և «Դիալեկտիկական տրամաբանության և տեսության հարցեր» (1969)

ռուսերեն մենագրություններին, Ս. Արևշատյանի «Փիլիսոփայական գիտության ձևավորումը հին Հայաստանում. V-VI դդ.» (1973), Ռ. Իշխանյանի «Հայ գրքի պատմություն» (հ. Ա, 1977) ուսումնասիրություններին, ինչպես նաև «XVI-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը» (1989) ժողովածուին:

Հեղինակի քննական գրախոսությունները հաճախ պարունակում են բանավիճային հարցադրումներ. նա չի վարանում բարձրացնել գիտական հրատապ խնդիրներ կամ բարձրաձայնել դրանց մասին: Օրինակ՝ ճշգրիտ փաստերի միջոցով նա հուշում է, որ Հովհաննես Մրքուզը տարիքային բերումով չէր կարող Աստվածատուր Սալթանյանի ուսուցիչը լինել, ինչպես ներկայացրել է Հովհ. Ղուկասյանը «Բոգդան Սալթանով» պատմավեպում: Այս և այլ անճշտություններից խուսափելու համար առաջարկվում է նախապես կազմակերպել մասնագիտական քննարկումներ:

«Մովետահայ բառարանագրության հրատապ խնդիրը» գրախոսության մեջ հեղինակը կոնկրետ օրինակներով և հղումներով վեր է հանում տասնամյակներ շարունակ լայնորեն գործածված ռուս-հայերեն քառահատոր բառարանի (1954-1958) և Արարատ Ղարիբյանի միահատոր բառարանի բացերը՝ նշում, որ դրանք չեն «արտահայտում ռուսաց գրական լեզվի զարգացման ներկա մակարդակը» (էջ 340), իսկ Ա. Ղարիբյանի բառարանն ուղղակի «չունի գործնական արժեք» (346): Դժվար չէ պատկերացնել, թե իր ժամանակին՝ 1977 թ., կարծրատիպերի դեմ ուղղված ինչպիսի համարձակ պնդումներ էին թե՛ այդ մտքերը և թե՛ Հ. Միրզոյանի առաջարկությունը՝ հեղինակային խմբի միջոցով ստեղծել ռուս-հայերեն նոր՝ առավել կատարյալ բառարան: Ի դեպ, տողատակում նա նշում է. «Ցավոք առայժմ սայլը տեղից չի շարժվել» (էջ 349):

Ի՞նչն է հատկանշական Հ. Միրզոյանին: Նախ և առաջ այն, որ բոլոր բաժիններում կարելի է գտնել գիտական որոշակի նորույթ պարունակող դրույթներ: Նա նյութերը սեփական քննությամբ քաղել է ձեռագիր և տպագիր մեծաթիվ սկզբնաղբյուրներից, ուստի և հողվածներում արված գիտական հարցադրումները փաստական հիմք ունեն: Ժողովածուի տարբեր հրապարակումներում տեղ գտած եզրակացություններն ու ընդհանրացումները հիմնականում անհերքելի են և անառարկելի, որոնք ոչ թե վարկածային պնդումներ են, այլ ունեն բնագրային հստակ վկայակոչումներ: Ահա մեկ օրինակ. երբ հեղինակը նշում է, թե Առաքել Դավրիժեցին իր պատմությունը ավարտելուց հետո է ավելացրել ՕԵ գլուխը, դա ապացուցում է նրանով, որ այն առկա է Մաշտոցի անվան Մատենադարանի՝ 1663 թ. ընդօրինակված թիվ 1773 ձեռագրում, բայց չկա ո՛չ 1666 թ. արտագրված թիվ 1772 ձեռագրում և ոչ 1669 թ. ոսկանյան հրատարակության մեջ: Ընդ որում՝ ձեռագրում այն նախորդում է գրչի հիշատակարանին և զբաղեցնում 420բ-431բ էջերը: Հետևաբար, այն հավելել է անձամբ Առաքել Դավրիժեցին, որը նախապես պայմանավորվել է գրչի հետ՝ այդ էջերը թողնել դատարկ:

Գրքի ևս մեկ կարևոր բնութագիր. եթե Հ. Միրզոյանը վստահ է իր ճշմարտացիությանը, ապա չի վարանում հայտնել դա՝ անգամ բանավեճի մեջ մտնելով բնագրի հեղինակի հետ: Այդպես է, օրինակ, նույն Առաքել Դավրիժեցու պարագայում, երբ նա պնդում է, թե Ոսկան Երևանցու միջամտությունները «գրքին ավելի կատարյալ և գիտական տեսք են տվել» (էջ 17): Ըստ այդմ՝ քննարկվող ժողովածուն աչքի է ընկնում ձեռագրագիտության փաստերը ներառելու առումով, որոնց միջոցով մասնավորապես գիտությանն ի ցույց են դրվել Առաքել Դավրիժեցու ձեռագիր պատմության և ոսկանյան հրատարակության միջև առկա որոշակի տարբերությունները և այլ ուշագրավ փաստեր:

Ներկայացնենք մեկ-երկու՝ մեր համոզմամբ գրքի որակի բարձրացմանը միտված դիտարկումներ: Ժողովածուն մեծապես կշահեր, եթե օժտված լիներ գրականության և հատուկ անունների ցանկերով, քանզի հեղինակը գրում է տասնյակ գործիչների մասին, առավել ևս XVII դարի հայ մշակույթի գրեթե բոլոր գործիչներին հաճախ անդրադառնում է եզակի փաստերով կամ մեկնաբանություններով:

Վերջին շրջանում նկատելի են Ոսկան Երևանցուն լատինամետության բնութագրից դուրս բերելու փորձեր՝ հենվելով նրա գրահրատարակչական և թարգմանական գործունեության, նամակների լեզվի և այլ փաստերի վրա: Փոխարենը հեղինակը նրան համարում է «լատինաբանության ակնառու հետևորդներից» (էջ 26), մինչդեռ փաստերը հուշում են, որ նա եղել է առավելագույնը դրա ազդեցության կրողը, այլ ոչ թե «ակնառու հետևորդը», ինչպիսին կարելի է համարել Վարդան Հունանյանին, Հովհ. Կոստանդնուպոլսեցուն և այլոց:

Հոդվածների տպագրության ժամանակագրական հերթականությունը խստորեն պահպանելու պատճառով Հովհ. Ջուղայեցուն նվիրված երկու տարբեր հոդվածներ ընդմիջարկվել են մեկ այլ՝ «Էփիմերտի» մասին հոդվածով: Նույն կերպ Ոսկան Երևանցու «Միութին և միաւորութիւն...» երկի աշխարհաբար թարգմանությունը զետեղվել է գրաբար բնագրից և ռուսերեն թարգմանությունից հեռու:

Վերջում նշենք, որ հայագետների սեղանին է դրվել բազմաբնույթ նորույթներ, փաստեր, ճշգրտումներ պարունակող հոդվածների արժեքավոր ժողովածու, որը մեծապես օգտակար է հայ փիլիսոփայության պատմության, գրահրատարակության, XVII-XVIII դարերի հայ մտքի, բանասիրության, եկեղեցու պատմության և այլ ոլորտների մասնագետների համար:

ՆՈՐԱՅՐ ՊՈՂՈՍՅԱՆ

Նիկոլայ Հովհաննիսյան, Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը: Քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Երևան, Ռամկավար ազատական կուսակցության հրատարակություն, 2016, 84 էջ

Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության նախաձեռնությամբ ու աջակցությամբ լույս տեսավ անվանի արևելագետ, միջազգայնագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Նիկոլայ Հովհաննիսյանի գրախոսվող աշխատությունը, որի մեծ արդիականություն ունեցող թեման հայ և օտարազգի արևելագետների ուշադրության կենտրոնում է¹: Սակայն այս պարագայում նա հետապնդել է մեկ այլ նպատակ՝ ոչ միայն և ոչ այնքան ներկայացնել քրդերի մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը, որքան դիտարկել քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, հանդես եկել որոշակի նկատառումներով և առաջարկություններով: Ըստ այդմ՝ այն ունի ոչ միայն տեսական և գիտական, այլև գործնական ու քաղաքական ծանրակշիռ արժեք և նշանակություն:

Աշխատությունը բաղկացած է ինդրի էությունն ու շրջանակները հստակեցնող ներածությունից և քրդական գործոնի որոշակի հիմնախնդիրներին նվիրված երեք գլխից, որոնցից յուրաքանչյուրը ուսումնասիրվող թեման դիտարկում է տարբեր հարթություններում և տարաբնույթ տեսանկյուններից, միաժամանակ որպես մեկ-միասնական ամբողջություն ներկայացնում հեղինակի գիտականորեն հիմնավորված մոտեցումները քրդական գործոնի հարցում:

Ն. Հովհաննիսյանը նախ քննարկում է քուրդ-հայկական հարաբերությունների խնդիրը քուրդ մտավորականի դիտանկյունից՝ հիմք ընդունելով իրաքցի պատմաբան, գիտությունների դոկտոր, Բաղդադի համալսարանի պրոֆեսոր Քամալ Մազհար Ահմադի հեղինակած և դեռևս 1977 թ. արաբե-

¹ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբին, Երևան, 1989, *նույնի*՝ Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008, **Պողոսյան Մ.**, Քրդերը և Հայկական հարցը, Երևան, 1991, **Поладян А.**, Курды в VII-X веках (по арабским источникам), Ереван, 1987, **Հովհաննիսյան Ն.**, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, 2004, **Gezgin R., Kocman S., Konuk M.** (ed.), *Hrant Dink'in Katline 2015 Perspektifinden Bakmak*, Ankara, 2014:

րեն լույս ընծայած «Քրդստանն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» աշխատությունը¹: Ներկայացնելով նրա հայեցակարգային մոտեցումը հայ-քրդական հարաբերություններին և Հայոց ցեղասպանությանը, ինչպես նաև դրան քրդերի մասնակցությանը առնչվող հարցերին, Ն. Հովհաննիսյանը առանձնացնում է քրդական հայեցակարգում առկա չորս սկզբունքային մոտեցումներ:

Առաջին. քրդական հասարակության մեջ կային որոշակի ազդեցիկ և տիրապետող սոցիալական խավեր և ուժեր՝ ցեղային ավագանին, կալվածատերերը, աշիրաթների առաջնորդները, աղաները, զինվորականները, օսմանյան պետության շահերը սպասարկող պաշտոնյաները, հոգևոր առաջնորդները և այլք, որոնք բաժանում էին սուլթան Աբդուլ Համիդ II-ի «Հայկական հարցը հայերին ոչնչացնելու ուղիով լուծելու» տեսակետը և, ըստ այդմ, գործուն մասնակցություն ունեցան այդ քաղաքականության իրականացմանը՝ դրանում ներգրավելով նաև քրդական անասնապահ-քոչվորական զանգվածներին և հողագործներին:

Երկրորդ. ըստ Քամալ Ահմադի՝ հայ-քրդական հարաբերություններում առկա հակասությունները երկու ժողովուրդների զարգացման տարբեր մակարդակների անհամատեղելիության հետևանքն էին: Հայերը զարգացման բարձր մակարդակ ունեին և մուտք էին գործել կապիտալիստական հարաբերությունների ասպարեզ, իսկ քրդերը զարգացման ցածր մակարդակի վրա էին և դեռևս խարխափում էին ֆեոդալական-ցեղային հարաբերությունների ոլորտում:

Երրորդ. կարևորվում է նաև այս ժողովուրդների տարբեր կրոններ դավանելու հանգամանքը՝ հայերը քրիստոնեությունը ընդունել էին դեռևս 301 թ., իսկ իսլամը դավանող քրդերը հայտնի էին իրենց մոլեռանդությամբ:

Չորրորդ. օսմանյան կառավարությունը և վերնախավը, չարաշահելով քրդական վերնախավի՝ հայերին կողոպտելու, նրանց հաշվին հարստանալու ցանկությունները, ինչպես նաև ահաբեկելով նրանց միայն քրդերի տիրապետության ներքո գտնվող տարածքներում հայկական անկախ պետության ստեղծման հեռանկարով, քրդերին դարձրին հլու-հնազանդ կամակատարներ Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում (էջ 21-22):

Հետաքրքրական է, որ դեռևս XX դարի սկզբներին խնդրո առարկա մի շարք դրույթներ շրջանառվել են նաև հայ իրականության մեջ: Մասնավորապես ՀՅԴ հիմնադիրներից Քրիստափոր Միքայելյանը թե՛ հայ-քրդական դաշինքի ձևավորման և թե՛ քրդական վտանգի չեզոքացման ուղղությամբ արված քայլերի ձախողումը բացատրում էր հետևյալ պատճառներով.

- 1) հայերն ու քրդերը գտնվում էին զարգացման տարբեր մակարդակների

¹ Qamal Mazhar Ahmad, Qurdistan fi harbi al-alamiya al awal, Baghdad, 1977.

վրա, ինչը նրանց խորթացրել էր միմյանցից, 2) մեծ դեր ունեցան նաև քրդերին հայերի դեմ լարելու օսմանյան կառավարության քաղաքականությունն ու կրոնական գանազանությունը¹:

Սակայն մեր կարծիքով, առանձնահատուկ կարևորություն է ներկայացնում այն փաստը, որ պատմական այդ փուլում քրդերի շրջանում հիմնականում բացակայում էին համաքրդական ընկալումներն ու համազգային ինքնությունը, իսկ փոխարենը գերիշխում էր ցեղային ինքնությունը: Առնույդ Թոյնբիին այս առնչությամբ հետևյալ դիտարկումն է կատարում. «Քրդերի ազգային շարժումը կարող էր դրսևորվել թուրքերին, արաբներին, անգլիացիներին կամ որևէ այլ օտարին հակադրվելու ձևով: Մինչդեռ բացառելով քրդական ծագում ունեցող այն փոքրաթիվ անձանց, որոնք բնակություն էին հաստատել Պոլսում կամ Արևմուտքում... քրդական համազգային դաշնակցության գործնական գիտակցությունը շատ թույլ էր: Քրդերի մեծամասնության քաղաքական հորիզոնը դեռևս սահմանափակվում էր ցեղերի և նրանց հակամարտության շրջանակներում և բավական կենսունակ լինելով հանդերձ՝ ամբողջությամբ մնաց ոչ թե համապետական, այլ անհատական հոգեբանության շրջանակում»²:

Ն. Հովհաննիսյանը քննարկում է Հայոց ցեղասպանության գործընթացում քրդական գործոնի դերակատարության խնդրին անդրադարձած արաբ գիտնականների տեսակետները ևս ու առանձնացնում երկու կարևոր դիտարկումներ.

- Արաբական միջավայրում է ստեղծվել տարրդունակ «Արմենոցիդ» եզրույթը, որը կոչված է բնորոշելու հայերի՝ որպես ցեղատեսակի, էթնոսի ամբողջական ոչնչացումը, և որի հայերեն համարժեքը «հայասպանություն» արտահայտությունն է: Այս եզրույթը առաջադրել և հենվելով Ռաֆայել Լեմկինի շրջանառած «գենոցիդ» եզրույթի վրա՝ գիտական շրջանառության մեջ է դրել լիբանանցի արաբ իրավաբան Մուսա Պրանսը, որը գտնում էր, որ «Արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդն է»:
- Արաբ պատմաբանները (Ֆուադ Հասան Հաֆիզը, Մամիր Արբաշը, Սալիհ Չահր ալ Դինը և ուրիշներ) համոզված են, որ 1915 թ. հայերի հետ տեղի ունեցած իրադարձությունները ոչ թե սովորական ջարդեր էին, այլ «ցեղասպանություն», որը նրանք դիտարկում են իբրև «20-րդ դարի սև էջ» (էջ 43-44):

Ամբողջացնելով արաբ հեղինակների ուսումնասիրությունների ընդհանուր պատկերը, Ն. Հովհաննիսյանը ուրվագծում է Հայկական հարցում ուժերի դասավորության և դրանցից յուրաքանչյուրի գործառույթի հստակ

¹ Տե՛ս Միքայելյան Քր., Հեղափոխականի մտքերը, Ժնև, 1906, էջ 113-114:

² Toynebee A. J., Survey of International Affairs, London, 1927, p. 479-480.

սխեման. «Թուրքեր (իշխանություններ)՝ դահիճներ-քրդեր և չերքեզներ՝ դահիճների կամակատար ջարդարար օգնականներ, հայեր՝ զոհեր և արաբներ՝ զոհերի, հայերի, որպես բախտակից ժողովրդի պաշտպաններ» (ընդգծումը հեղինակինն է – Վ. Պ.) (էջ 31):

Այնուհետև Ն. Հովհաննիսյանը ոչ միայն դիտարկում է քրդական գործոնի ներգործության աշխարհաքաղաքական-տարածքային սահմանները, վերլուծում «Հայկական հարցը քրդական հարց է» տեսադրույթը, այլև հանդես գալիս քրդական հարցում և Արևմտյան Հայաստանի հիմնախնդիրների կարգավորման տեսակետից հայաստանյան հայեցակարգ մշակելու առաջարկով:

Դեռևս 1910-1914 թթ. կովկասյան և պոլսահայ մամուլում շրջանառվում էր «Հայկական հարցը քրդական հարց է» ձևակերպումը: Հեղինակը ներկայացնում է դրա հետևյալ մեկնաբանությունը. «XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին քրդերի դիրքերն այն աստիճան էին ամրապնդվել Արևմտյան Հայաստանում, որ այստեղ որևէ փոփոխություն, որը կշոշափեր քրդերի, հատկապես նրանց կառավարող վերնախավի շահերը, կթուլացներ նրանց դիրքերը և կարող էր ամրապնդել հայերի անվտանգությունը, անհնար էր իրագործել առանց քրդերի համաձայնության: Քրդերը, հասկանալի է, հենց այնպես չէին զիջի իրենց դիրքերը հոգուտ հայերի... Ահա այսպիսի պայմաններում ասպարեզում հայտնվեց այն տեսակետը, որ հայկական հարցի լուծումը կապված է և կախված է քրդական հարցի լուծումից: Հայերի կամ հայկական հարցը լուծելու համար անհրաժեշտ էր նախևառաջ լուծել քրդերի հարցը» (էջ 53-54): Հետևաբար, նրա կարծիքով, «Հայկական հարցը քրդական հարց է» բանաձևը պետք է հասկանալ և մեկնաբանել միայն ու միայն այդ իմաստով (էջ 54):

Ն. Հովհաննիսյանը նկատում է, որ «Հայաստանը... երբևիցե չի ունեցել որևէ հայեցակարգ քրդական հարցում՝ Արևմտյան Հայաստանի հիմնախնդիրների կարգավորման տեսակետից», թեև «քրդերի մասնակցությամբ իրագործվեց Հայոց ցեղասպանությունը, և նրանք դարձան Արևմտյան Հայաստանի հիմնական բնակիչները» (էջ 59): Հիշյալ համատեքստում նա հանդես է գալիս իր որոշակի գործնական նկատառումներով և առաջարկություններով:

Կարելի է որոշակի գուգահեռներ անցկացնել Ն. Հովհաննիսյանի թե՛ գրախոսվող և թե՛ դեռևս 1997 թ. ԱՄՆ-ի Մերիլենդի համալսարանի հրատարակած «Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը և դրա կարգավորման տարբերակները»¹ վերտառությամբ նրա աշխատությունների միջև: Հեղինակի ձեռագիրն ու ոճը մշտապես առանձնանում են տեսական ու գործնական

¹ Sté u **Оганесян Н.**, Нагорно-Карабахский конфликт и варианты его решения // «Этнополитические конфликты в Закавказье: их истоки и пути решения», Мериленд, Центр международного развития и конфликтологии Мерилендский университет, 1997, с. 92-121:

հարթությունների և հակամարտությունների քաղաքական կարգավորման այլընտրանքային մոդելների համադրմամբ: 1997 թ. նա նախ ներկայացնում էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության էությունն ու կարևորությունը, քննարկում հիմնախնդրի պատմաաշխարհագրական և էթնոմշակութային գործոնները, վերլուծում հակամարտության փուլերն ու զարգացման դինամիկան և սահուն անցում կատարելով գործնական մոտեցումների դաշտ՝ առաջ քաշում հակամարտության քաղաքական լուծումների հնարավոր տարբերակները.

- Ադրբեջանական տարբերակ,
- Ղարաբաղյան տարբերակ և ԼՂՀ դիրքորոշում,
- Հայաստանի Հանրապետության դիրքորոշում,
- Տարածքների փոխանակում,
- Ասոցացված պետություն,
- Մինթեգային տարբերակ,
- Կիպրական մոդել,
- Անկախության տարբերակ,
- Չեչենական մոդել:

Քրդական գործոնին նվիրված այս աշխատությունում ևս, գիտականորեն հիմնավորելով իր դիրքորոշումը, հեղինակը խնդիրը քննարկում է գործնական դաշտում և լուսաբանում քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի և Հայ դատին առնչվող խնդիրների լուծման հայկական հնարավոր հայեցակարգի շրջանակներում:

Կարևորելով վերոհիշյալ՝ գործնական հարթությունում Արևմտյան Հայաստանի հիմնախնդրի կարգավորման հնարավոր տարբերակների մշակումը, Ն. Հովհաննիսյանը կրկին համակողմանիորեն դիտարկում է իր իսկ առանձնացրած մի քանի տարբերակներ.

- արևմտահայերի վերադարձ իրենց բնակավայրեր,
- տարածքային ինքնավարություն,
- մշակութային ինքնավարություն,
- ֆինանսական-նյութական փոխհատուցում՝ որպես միջանկյալ տարբերակ,
- իդեալական՝ Արևմտյան Հայաստանի անկախության կամ Հայաստանի Հանրապետությանը միավորվելու տարբերակ:

Անտարակույս, Ն. Հովհաննիսյանի աշխատությունն ունի միջազգայնագիտական ու քաղաքագիտական կարևոր նշանակություն, քանզի հայ-քրդական հարաբերությունների հնարավոր զարգացումներն անմիջականորեն առնչվում են Հայաստանի անվտանգության շահերին և Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնային հիմնախնդիրներին: Մասնավորապես հայ-քրդական հարաբերությունները հաճախ դիտարկվում են Հայաստանի և Թուրքիայի միջև առկա հիմնախնդիրների, Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացի, արցախյան

հակամարտության և թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական գործակցության համատեքստում:

Նիկոլայ Հովհաննիսյանի աշխատությունը, անկասկած, օգտակար կլինի դիվանագետների, միջազգայնագետների, քաղաքագետների և ընթերցող հասարակության լայն շրջանների համար: Լինելով գիտական հետազոտություն և կարևոր ներդրում ժամանակակից հայ արևելագիտության բնագավառում, այն կարող է հաստատուն հիմք դառնալ քրդական գործոնին ու հայ-քրդական առնչություններին նվիրված հետագա ուսումնասիրությունների համար: Ցանկալի է, որ սույն աշխատությունը թարգմանվի նաև անգլերեն և ռուսերեն:

ՎԱՀԸԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Շիրակ Թորոսյան, Ծովային ելքի հիմնահարցը Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունում 1919-1920 թթ., Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017, 233 էջ

Անկախության ձեռքբերումից հետո Հայաստանի առաջին Հանրապետությունը հայտնվել էր բազում մարտահրավերների առջև: Խնդիրը միայն այն չէր, որ անհրաժեշտ էր նորանկախ պետությունը պաշտպանել թշնամիներից և արդյունավետ միջոցներ ձեռնարկել նրա անվտանգությունն ապահովելու համար: Հրատապ ու անհետաձգելի հարցեր էին բանակաշինության, պետական կառույցների, արդյունավետ դիվանագիտական ծառայության ստեղծումը, զարգացման հետագա հեռանկարների մշակումը և այլն: Մանուկ հանրապետության ղեկավարները այդ գերխնդիրների թվին էին դասում նաև փոքր տարածքի վրա կծկված երկրի ընդարձակման, ինչպես նաև ծովային ելք ձեռք բերելու հարցերը՝ որպես երկրի կենսունակությունն ապահովելու կարևորագույն պայման: Ուստի բնավ պատահական չէ, որ ծովային ելքի հարցը դարձել էր հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկը, որը առաջին հանրապետության պատմության չհետազոտված կամ թերի ուսումնասիրված հիմնահարցերից է:

Հետևաբար միջազգայնագետ-պատմաբան Շիրակ Թորոսյանի սույն աշխատությունը լրացնում է այդ բացը: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է շուրջ երկու տարի՝ 1919 թ. հունվարից մինչև 1920 թ. ընկած ժամանակահատվածը, որը լի էր վերելքներով ու վայրէջքներով, հաղթական ու ողբերգական բուռն իրադարձություններով: Գիրքը շարադրված է հարուստ աղբյուրների, գրականության և մամուլի վկայություններով, ինչպես նաև այդ ժամանակահատվածում տարածաշրջանում ծավալվող միջազգային հարաբերությունների բարդ և խճողված խնդիրների համատեքստում:

Ծովային ելքի իրավունքը՝ որպես պետությունների անքակտելի իրավունքներից մեկը, իր արտացոլումն է գտել Առաջին համաշխարհային պատերազմից հետո ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի հրապարակած հայտնի «14 կետերում»: Դրանց հիման վրա Ազգերի լիգան ընդունել էր համապատասխան որոշում ծովեզրեք չունեցող պետությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ: Սակայն այդ որոշումը անկատար ու թերի էր, ձևակերպումները՝ անորոշ: Ինչպես հայտնի է, ծովեզրեք չունեցող պետությունների իրավունքները հստակորեն ձևակերպվեցին և ամրագրվեցին միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ ՄԱԿ-ի «Ծովային իրավունքի» կոնվենցիայով:

Ուշագրավ է նշել, որ դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի եզրափակիչ փուլում Հայաստանի համար ծովային ելքի կարևորությունը գիտակցել են մեծ պետությունները, ինչպես նաև Հայաստանի ճակատագրով մտահոգված առանձին պետական, հասարակական ու անհատ գործիչներ: Այդ գաղափարի իրագործման ջատագովների առաջին շարքերում, անկասկած, եղել է ԱՄՆ-ը՝ ի դեմս նախագահ Վուդրո Վիլսոնի: 1918 թ. հոկտեմբերի 14-ին կոնգրեսական Էդվարդ Լիթթլը ԱՄՆ-ի Կոնգրեսի քննարկմանն է ներկայացնում մի բանաձև, որտեղ նշվում էր, որ «հայ ժողովուրդը իրավունք ունի լինելու ազատ և անկախ, ծովային ելք ունեցող պետություն»: Այդ նույն ժամանակներում Հայաստանի ծովային ելքի հարցը ընդգրկված էր նաև պատերազմում հաղթանակած Եռյակ համաձայնության պետությունների քաղաքական քննարկումների օրակարգում:

